Տպագրված է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության
«Ապահով զինվորներ՝ անվտանգ Հայաստանին»
ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է
նիդեռլանդական IKV Pax Christi կազմակերպության աջակցությամբ:

© 2013, «Խաղաղության երկխոսություն» ՀԿ

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, 2002,
ք. Վանաձոր; Մյասնիկյան 12, բն. 40, «ԽԵ» գրասենյակ;
Հեռ.՝ +374 (322) 21340;
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632
Էլ. փոստ՝ ekhachatryan@peacedialogue.am;
mailbox@peacedialogue.am
URL: http://www.peacedialogue.am;
http://www.safesoldiers.am

Վանաձոր 2013

«Ապահով զինվորներ՝ անվտանգ Հայաստանին» նախաձեռնության նպատակն է՝ դադարեցնել մարդու իրավունքների խախտման դեպքերը ԶՈՒ-ում, բարձրացնել ոչ միայն Հայաստանի, այլ նաև այն պաշտպանող զինվորների անվտանգությունը:

Նյութում տեղ գտած կարծիքները և ձևակերպումները պատկանում են հեղինակներին և կարող են չհամընկնել IKV Pax Christi կազմակերպության մոտեցումների և ընկալումների հետ:

ՀՀ զինված ուժերում խաղաղ պայմաններում զոհված զինծառայողների գործերով
նախաքննության և դատաքննության ընթացքում վերհանված խախտումների դեպքերի վերլուծություն

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԵՐՀԱՆՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հեղինակներ՝
Ռուբեն Մարտիրոսյան
(Հելսինկյան ընկերակցության փորձագետ)
Լալա Ասլիկյան
(«Բանակն իրականում» նախաձեռնությունն)

Խմբագրակազմ՝

Էդգար Խաչատրյան,
Վահագն Անտոնյան,
Արտաշես Սերգոյան,
Անի Դերձյան
(անգլերեն տարբերակի թարգմանություն)

Տպագրված է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության «Ապահով զինվորներ՝ անվտանգ Հայաստանին» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է նիդեռլանդական IKV Pax Christi կազմակերպության աջակցությամբ:

IKV PAX CHRISTI

Նյութում տեղ գտած կարծիքներն ու ձեւակերպումները պատկանում են հեղինակներին եւ կարող են չհամընկնել IKV Pax Christi կազմակերպության մոտեցումների եւ ընկալումների հետ:

ՀՀ զինված ուժերում խաղաղ պայմաններում զոհված զինծառայողների գործերով նախաքննության եւ դատաքննության ընթացքում վերհանված խախտումների դեպքերի վերլուծություն

Հեղինակներ՝

Ռուբեն Մարտիրոսյան
(Հելսինկյան ընկերակցության փորձագետ)

Լալա Ասլիկյան
(«Բանակն իրականում» նախաձեռնություն)

Խմբագրակազմ՝

Էդգար Խաչատրյան,
Վահագն Անտոնյան,
Արտաշես Սերգոյան,
Անի Դերձյան
(անգլերեն տարբերակի թարգմանություն)



Հեղինակների կողմից

«**Խաղաղության երկխոսություն**» հասարակական կազմակերպությունը **IKV Pax Christi** նիդեռլանդական կազմակերպության աջակցությամբ իրականացվող իր «**Ապահով զինվորներ՝ անվտանգ Հայաստանին**» երկամյա ծրագրի շրջանակներում հանդես եկավ այս գրքույկի տպագրման նախաձեռնությամբ: Սույն վերլուծությունը պատրաստված է ՀՀ բանակում կատարված սպանությունների, դրանցով կատարված նախաքննության ու դատաքննության ընթացքում թույլ տրված խախտումների, սպանությունների՝ հանցավոր ճանապարհով կոծկումների հիմնական մեխանիզմների մասին, հիմնված է բանակային 22 գործերի ուսումնասիրության վրա, որոնց նկարագրությունները տրված են վերլուծության վերջում՝ ներփակված հավելվածում*: Բանակային գործերի պրակտիկայում տարածում և կիրառություն ստացած արատավոր երևույթներն ու հնարքներն ուրվագրող այս ուսումնասիրությունը օրենսդրական առաջարկություններ մշակելու և առաջարկելու նպատակ չունի: Այն ավելի շուտ նկարագրում, դասակարգում, սահմանում և անվանում է պատկան մարմինների կողմից որդեգրած ապօրինությունների զինանոցը, դրանց կատարման եղանակների, միջոցների ու գործիքների պաշարներն ու օրինաչափությունները՝ դրանք վերհանելու, ընկալելի ու տեսանելի դարձնելու, պատճառահետևանքային կապը գտնելու եւ հանրությանը ներկայացնելու մտադրությամբ:

Հեղինակները կարևորում են նման հետազոտության գոյությունը, քանզի հենց այդ մեխանիզմներն են, որ նպաստում են բանակային հանցագործություններն ապօրինաբար կոծկելու պրակտիկայի կատարելագործմանը, նպաստում անպատժելիության մթնոլորտի ամրապնդմանն ու հարատևմանը, երաշխավորում մեղսագործների շարունակական վերարտադրությունը:

Վերլուծության հեղինակներից Լալա Ասլիկյանը «Բանակն իրականում» քաղաքացիական նախաձեռնության ակտիվ անդամներից է՝ շարժման ստեղծման առաջին իսկ օրերից, իսկ Ռուբեն Մարտիրոսյանը 2004 թվականից աշխատում է Հելսինկյան ընկերակցությունում՝ որպես բանակային դեպքերի փորձագետ: 1995-1998թթ. հիմնադրել և կառավարել է «Զինվորի պաշտպանության կոմիտեն»: Ռուբեն Մարտիրոսյանը հանդիսացել և հանդիսանում է բանակային մի շարք սպանությունների գործերով շահերի պաշտպան: 1998-2000թթ. աշխատել է ՀՀ ՊՆ-ում՝ որպես Վերահսկիչ-վերստուգիչ հանձնաժողովի արտակարգ դեպքերով բաժնի պետ: 2000-2004 թթ. հանդես է եկել տասնյակից ավելի բանակային սպանությունների գործերով՝ որպես տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ:

---

* *Վերլուծության մեջ այս կամ այն դեպքից բերված դրվագի համարը համապատասխանում է «Հավելվածում» գործերի համարակալման հետ:*

Ցանկ

Ներածություն

Քաղաքականության սերտաճումը
բանակի հետ --- 6

Կոռուպցիան և ոչ կանոնադրային
հարաբերությունները --- 6

Զուտ ուղղահայաց կարգավորումների
ախտանիշները --- 7

Մարդու իրավունքների պաշտպանության
գործուն մեխանիզմների բացակայությունը և
անպատժելիության մթնոլորտը --- 7

ԼՂՀ ՊԲ և ՀՀ ԶՈՒ
փոխհարաբերությունները --- 9

Նախաքննական փուլ

Հանցագործության անհիմն որակում --- 10

Չի քննվում այլ տարբերակներ ընդհանրապես,
չնայած ակնառու հակասություններին և
անհեթեթություններին --- 14

Դեպքի վայրի փոփոխում --- 20

Դեպքի վայրի ոչնչացում --- 22

Չեն կատարվել անհրաժեշտ քննչական
գործողություններ դեպքի ժամանակը
պարզելու համար --- 23

Իրեղեն ապացույցների հետ կապված՝ չեն կատարվում
անհրաժեշտ քննչական գործողությունները --- 24

Իրեղեն ապացույցների ոչնչացում --- 28

Իրեղեն ապացույցների կեղծում --- 29

Իրեղեն ապացույցներն ուշացմամբ և, այդ իսկ
պատճառով էլ, փոփոխված են կցվում գործին --- 32

Փաստերի անտեսում --- 33

Չեն կատարվում գործողություններ՝ քննության
ժամանակ հայտնաբերած կանոնակարգի
խախտումները վերհանելու վերաբերյալ ---
Մատնահետքեր --- 35

Ռազմական ոստիկանությունում վկաների
անօրինական պահում --- 37

Կեղծ ցուցմունքներ տալու
հարկադրանք, կորզում --- 41

Ծառայողական քննություն --- 44

Վկաների, ամբաստանյալների խոշտանգում --- 44

Վկաների ցուցմունքները հաշվի չեն առնվում,
իսկ որոշ վկաներ անգամ չեն հարցաքննվում --- 45

Անհավանական խոստովանություններ --- 51

Վկաների ցուցմունքների ակնհայտ ուղղորդում --- 52

Վկաների ցուցմունքների ոչնչացում --- 55

Զինվորների հանդեպ շանտաժ --- 55

Որպես մեղադրյալ չեն ներգրավվում --- 56

Նախաքննական մարմինը գործը կասեցնելուց հետո
ցուցմունք է վերցրել վկայից --- 57

Դատաբժշկական եզրակացությունների կեղծում/
նենգափոխում --- 57

Դատաբժշկական փորձագիտական
եզրակացությունների հետևությունները հաշվի չեն
առնվում, դրանց շուրջ քննություն չի կատարվում --- 59

Դատաբժիշկը չի կատարել անհրաժեշտ
գործողություններ --- 61

Դատաբժշկական եզրակացության
կեղծում --- 63

Դատաբժշկական եզրակացության
հետևությունների անտեսում --- 63

Ռազմական բժիշկների կողմից տրված
ախտորոշումների անտեսում՝ դատաբժշկական
փորձագիտական եզրակացություններ գրելիս --- 64

ՀՀ Առողջապահության նախարարության
Հանրապետական դատական բժշկության
գիտագործնական կենտրոնում վարվող արատավոր
կադրային քաղաքականությունը --- 64

Բուժում իրականացնող բժշկի ներգրավումը
հանձնաժողովային փորձաքննության մեջ --- 64

Դատաբժշկական փորձաքննության մեջ չեն նշվում
բոլոր վնասվածքները --- 65

Անկախ փորձաքննության մերժում
նախաքննական մարմնի և
դատարանի կողմից --- 66

Դատահոգեբանական եզրակացությունը հակասական
է, և կրկնակի փորձաքննություն չի նշանակվում --- 66

Քրեական գործով չեն կատարվել հանցագործության
բացահայտման առումով խիստ կարևոր
նշանակություն ունեցող անհրաժեշտ այլ
փորձաքննություններ, որոնց արդյունքները կարող են
էապես հակասել կեղծ նախաքննությանը --- 68

Ակնհայտ ծեծի հետքերը թաքցնելու
համար վերցվում են բազմաթիվ
վկաների ցուցմունքներ --- 69

Դատախազի ցուցումները չեն կատարվել
կամ կատարվել են զգալի ուշացմամբ --- 70

Կողմերի հայտարարությունները
հանցագործությունների մասին քննում
են այն անձինք, ում կողմից արվել է
հանցագործությունը --- 70

Գրեթե բոլոր գործերով նախաքննական
մարմինը, տուժող կողմի միջնորդությունների
հետ կապված, կամայականություններ է
դրսևորում --- 71

Սեռական բռնությամբ կամ
գործողությամբ ահաբեկելը --- 72

Տուժողի իրավահաջորդ ոչ ոք
չի ճանաչվել --- 72

Տուժողի իրավահաջորդին չեն տեղեկացրել
գործի ընթացքի մասին --- 72

Տուժողի հարազատները հնարավորություն չեն ունեցել
ծանոթանալ գործի նյութերի հետ --- 73

Տուժողի հարազատներին չեն տեղեկացրել գործին
առնչվող դատական նիստերի մասին --- 73

Տուժողի հարազատներին դատախազության
աշխատակիցները գումար են առաջարկել --- 74

Տուժողի իրավահաջորդի ահաբեկում --- 74

Տուժողի հանդեպ բռնության կիրառում --- 74

Քննիչի դեմ քրեական գործի հարուցման
մերժումը --- 74

Քննական փուլ

Դատապաշտպանի անգործություն --- 75

Անցանկալի վկաներին դատարան չհրավիրելը --- 76

Դատավճռի հիմքում ընկած է միմիայն
ինքնախոստովանական ցուցմունքը՝ առանց այլ
ապացույցների --- 76

Դատաքննության ընթացքում հանցագործության
մասին հայտարարությունները չեն քննվում --- 77

Դատավճիռը խմբագրում է դատաքննության
տվյալները --- 78

Դատարանն ընտրովի է մոտենում ապացույցներին՝
դատական վերջնական ակտ կայացնելիս --- 78

Մեղադրյալին կալանավորելու մասին որոշում
կայացնելու միջնորդության մերժում --- 79

Մեծամասամբ, կիրառված
պատիժները մեղմ են կամ
կիրառվում է համաներում --- 80

Դատաքննության ընթացքում անտեսվում են քրգործի
համար կարևոր նշանակություն
ունեցող փաստերը --- 80

Դատարանը գործը քննում է
փաթեթով --- 81

Ակնհայտ համագործակցություն
դատավորի և դատախազի միջև --- 82

Եզրակացություններ

Եզրակացություններ --- 83

Հավելվածներ

Դեպքերի նկարագրություն --- 85

Ներածություն

Վերջին տարիների ընթացքում բանակում կատարված սպանությունները հասարակության լայն շրջանների ուշադրության ներքո են: Չնայած դրան, դրանք շարունակվում են, այլ արատավոր երևույթներն էլ՝ խորանում: Անդրադառնանք դրանցից մի քանիսին, որոնք միմյանց հետ կապված են, գտնվում են պատճառահետևանքային կապի մեջ:

Քաղաքականության սերտաճումը բանակի հետ

Բանակն անմիջականորեն կախվածության մեջ է քաղաքական գործընթացներից: Բանակի գեներալիտետը սերտորեն առնչվում է քաղաքականություն-բիզնես արատավոր մեխանիզմին և յուրաքանչյուր ընտրության ժամանակ ու դրանից հետո էլ այն գործիք է հանդիսանում իշխանությունների ձեռքին: Նաեւ սրա արդյունքում է, որ իշխանություն-գեներալիտետ-զինվոր հարաբերությունները կարգավորվում են ոչ թե ըստ կանոնակարգի, այլ հանցավոր աշխարհի օրենքներով:

Կոռուպցիան և ոչ կանոնադրային հարաբերությունները

Համաձայն իրավապաշտպանների կողմից տարիներ շարունակ արված դիտարկումների՝ բանակը հանդիսանում է կոռումպացված համակարգի ճյուղերից մեկը, որտեղ զինծառայողների միջև գործում են ոչ կանոնադրական փոխհարաբերություններ: Տարբեր աստիճաններ ունեցող զինվորական հրամանատարներ ձգտում են հավելյալ եկամուտ ստանալ շարքային զինծառայողների հաշվին. նրանց առաջարկում, ստիպում են որոշակի կաշառք վճարել կարճատև կամ երկարատև արձակուրդ գնալու դիմաց, առաջարկում են վճարել «տաքուկ տեղերում»՝ որպես գրագիր, համակարգչային օպերատոր, պահեստապետ, հագուստի պահեստում հսկիչ ծառայելու համար, զգալի գումարներ ծախսել զորամասի այս կամ այն կարիքները հոգալու համար, փող վճարել հոսպիտալում բուժօգնություն ստանալու դիմաց եւ այլն: Համատարած երևույթ է ժամկետային զինծառայողներից օրենքով հասանելիք աշխատավարձերի կորզումը: Վերադաս սպաները ստիպում են զինվորներին ստորագրել աշխատավարձի ստացման փաստաթղթում, սակայն հասանելիք փողը նրանց չի վճարվում: Ըստ դիտարկումների՝ այս գումարները զորամասի մասշտաբով հասնում են հսկայական թվերի, որոնք այնուհետեւ փոխանցվում են բարձրաստիճան սպաներին:

Զինվորական բարձրաստիճան սպաներն իրենց հանրային ելույթներում խոստովանում են, որ զորամասերի հրամանատարներն առավել հաճախ կոծկում են զորամասերում կատարված մանր և միջին հանցագործությունները, որպեսզի պատրանք ստեղծեն, թե իրենց զորամասերում կարգապահությունը գտնվում է բարձր մակարդակի վրա: Նման գործողությունները նպաստում են զորամասերում անպատժելիության մթնոլորտի ձևավորմանն ու, ի վերջո, հանգեցնում առավել ծանր հանցագործությունների, այդ թվում՝ նաեւ սպանությունների: Այս երևույթին էապես նպաստում է ՀՀ ՊՆ քննչական ծառայության, ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության և ՀՀ զինվորական դատախազության

գործունեությունը: Այս մարմինները, սերտաճած լինելով, միմյանց փոխլրացնելով, հաճախ կոծկում են հանցագործությունները. դիտավորյալ սպանությունները ներկայացվում են որպես ինքնասպանություններ, անզգուշությամբ կատարված սպանություններ կամ դժբախտ պատահարներ... Մարտական հենակետերում կատարված սպանությունները հաճախ ներկայացվում են որպես հակառակորդի կողմից կատարված սպանություններ: Այս երեք օղակների «համագործակցությամբ» կատարվող գործողությունների անօրինական շղթան հնարավոր է դառնում այս երեքի միջև իրական ստուգումների եւ վերահսկողության բացակայության և հանցավոր փոխկախվածության պայմաններում:

Արդյունքում, սպանությունները չեն բացահայտվում, քանի որ դեպքի վայրը, մահվան առաջացման պատճառներն ու գործիքները կեղծվում են, նախաքննությունն ընթանում է՝ հենվելով կեղծ փաստերի վրա, և հանգում է եզրակացությունների, որոնք չեն համապատասխանում դեպքերի իրական ընթացքին: Վերջին՝ եզրափակող օղակը հանդիսացող դատարանում էլ խախտվում են արդար դատաքննության բազմաթիվ կանոններ (օր.՝ որպես ապացույց են ընդունվում ապօրինի ճանապարհով ձեռք բերված փաստերը) և կայացվում է դատավճիռ (եթե կայացվում է), որը չի արտացոլում իրականությունն ու համապատասխան պատիժ սահմանում մեղավորների համար՝ մեղավորների փոխարեն դատապարտելով անմեղ մարդկանց:
Ըստ էության, բանակի սպայակազմի կողմից շարքային զինծառայողների ծեծը, խոշտանգումներն ու նվաստացումները կրում են համատարած և պարբերական բնույթ: Նման դեպքերը սովորաբար ի հայտ են գալիս սպանության գործերով կատարված նախաքննությունների ընթացքում, քանի որ առավել հաճախ հենց ծեծն ու խոշտանգումն են նախորդում սպանություններին: Բացառություններ կարելի է համարել, թերեւս, այն դեպքերը, երբ ծեծն ու խոշտանգումները բերում են ծանր հետևանքների՝ «ընդամենը» զինվորների հաշմանդամության:

Զուտ ուղղահայաց կարգավորումների ախտանիշները

Հայկական բանակն իրենից ներկայացնում է կառույց, որը, խիստ ուղղահայաց գործառույթներ ունենալով հանդերձ, կոռումպացված է, թերեւս, ինչպես և այլ հասարակական ինստիտուտները Հայաստանում: Սակայն, բանակի պարագայում, այդ ուղղահայաց և խիստ գաղտնի պահվող հարաբերություններն առավել նպաստավոր են կոռուպցիոն ռիսկերի բարձրացման և ոչ կանոնադրային, ոչ օրինական հարաբերությունների հաստատման համար: Այս համակարգը, որը պետք է ժողովրդավարական հասարակության մի մասնիկը լիներ, խորհրդային տոտալիտար ժամանակներից ի վեր, կարծես, շատ չի փոխվել: Այն իր մեջ ի սկզբանե պարունակում է ախտանիշներ, որոնք հնարավոր է վերացնել միայն հորիզոնական հարաբերությունների ներդրմամբ և դրանց հետագա ամրապնդմամբ:

Մարդու իրավունքների պաշտպանության գործուն մեխանիզմների բացակայությունը և անպատժելիության մթնոլորտը

Համաձայն ՀՀ ԶՈՒ կարգապահական կանոնադրության՝ զինծառայողներն ունեն հստակ սահմանված իրավունքներ եւ պարտականություններ: Դրանում նշված են բոլոր այն մեխանիզմները, որոնց օգնությամբ զինծառայողը կարող է պաշտպանել իր

իրավունքները: Սակայն, ըստ էության, դրանք չեն գործում: Դրա փոխարեն բոլոր զորամասերում գործում են, այսպես կոչված, չգրված կամ «գողական օրենքներ», որոնց ամրապնդվելու համար պարարտ հող է հանդիսանում օրենքի անկատարությունն ու հակասականությունը:

Օրինակ, եթե նշված օրենքում գրված է («Գլուխ 5, կետ 116, 117»), որ վերադասի կողմից բռնություն կիրառելու կամ ցանկացած այլ խախտումների դեպքում ստորադասը պետք է օրենքով սահմանված կարգով այդ մասին զեկուցի բռնություն գործադրողից ավելի բարձր պաշտոն զբաղեցնող անձի, ապա իրականության մեջ նա դա չի կարող անել, քանի որ, լավագույն դեպքում, նշված վերադասը պարզապես հաշվի չի առնի զեկույցը: Վատագույն սցենարի դեպքում հանդուգն զինծառայողը կարող է պարզապես տուժել: Բացի այդ, համաձայն կարգապահական կանոնադրության, տարբեր պաշտոններ ունեցող պետերից յուրաքանչյուրն իրավունք ունի իր լիազորությունների սահմաններում իր ենթակային ենթարկելու կարգապահական մեկուսացման:

Առավելագույն մեկուսացման կարող է ենթարկել զորամասի հրամանատարը՝ մինչև տասն օր ժամկետով: Փաստաթղթի այս կետն էապես հակասում է ՀՀ Սահմանադրությանը, համաձայն որի՝ «անձը կարող է ազատությունից զրկվել միայն դատարանի՝ ուժի մեջ մտած որոշմամբ»:

Ասելով, որ բանակը և այն հսկող երեք հիմնական կառույցները՝ ՀՀ զինդատախազությունը, ՀՀ ՊՆ քննչական ծառայությունը և ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանությունն ամբողջապես կոռումպացված մարմիններ են, պետք է նշել նաև, որ անկախությունից ի վեր յուրաքանչյուր զորամաս, այդ թվում նաև՝ շրջանային զինկոմիսարիատները, ռազմական հոսպիտալները փոխհամաձայնեցված ամենամյա կաշառք են տալիս նշված մարմիններին: Նման պայմաններում երկու կողմերը՝ զորամասն ու հսկող մարմինը, ձեռք են բերում փոխադարձ պայմանավորվածություն: Այս պայմանավորվածությունը հանգեցնում է նրան, որ զինծառայողը չի կարող վերադաս սպայի դեմ որևէ բողոք ներկայացնել: Տեսականորեն կարող է, բայց գործնականում այն որևէ արդյունք չի ունենա: Հասկանալով դա՝ դեռևս 1988թ. ՀՀ պաշտպանության նախարարը հրաման արձակեց յուրաքանչյուր զորամասում տեղադրել փոստարկղ, որտեղ զորամասի ժամկետային զինծառայողներն ու ցածրաստիճան սպայակազմը կարող էին գրել իրենց բողոքները, հայտնել զորամասում տեղի ունեցած այս կամ այն հանցագործության մասին՝ միաժամանակ երաշխիք ունենալով, որ նույն հրամանի համաձայն այս փոստարկղները կնքվում էին ՀՀ ՊՆ վերահսկողության աշխատակիցների կողմից, ովքեր ամիսը երկու անգամ պարտավոր էին հանել փոստարկղերի պարունակությունը, ստուգել դրանցում նշված բողոքներն ու դրանց տալ օրենքով սահմանված ընթացք: Ըստ էության, սա չգործեց այն պատճառով, որ զորամասի հրամանատարները, կաշառելով նույն վերահսկողության աշխատակիցներին, պարզում էին բողոքի բովանդակությունն ու այն ներկայացնող անձի ինքնությունը:

Արատավոր երևույթներին խորապես նպաստում է նաեւ զինծառայողների ցածր իրավագիտակցությունը, սպայական կազմի կողմից անպատրաստվածությունը նման հարցերում: Մարդու իրավունքների և անձի հանդեպ հարգանքի մշակույթի ներդրման վերաբերյալ պետական մոտեցման բացակայությունն իրականում ուղղված է զինծառայողների շրջանում ոչ կանոնադրային հարաբերությունների առավել ամրապնդմանը:

ԼՂՀ ՊԲ և ՀՀ ԶՈՒ փոխհարաբերությունները

Առանձնակի ուշադրության է արժանի այն փաստը, որ ՀՀ-ից զորակոչված զինվորների մի զգալի մասն իրենց ծառայությունն են իրականացնում ԼՂՀ-ում: Այս դեպքում օրենքի և օրինականության տեսակետից բազմաթիվ խոչընդոտներ են առաջանում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ այս զինծառայողները, մեկնելով ԼՂՀ, ծառայում են ոչ թե ՀՀ ՊՆ, այլ ԼՂՀ ՊԲ զորամասերում, այսինքն, փաստացի, այլ պետության բանակում: Ըստ ՀՀ Սահմանադրության 8.2 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության անվտանգությունը, պաշտպանությունն ու տարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը: Մեկ այլ հակասություն է այն, որ ԼՂՀ-ում գործում է ՀՀ զինվորական դատախազությունը և ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանությունը, ՀՀ ՊՆ քննչական ծառայությունը և Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանը: Այս կառույցներին իրավունք է վերապահված կալանավորել, մեղադրանք ներկայացնել և դատել ԼՂՀ քաղաքացիություն ունեցող զինծառայողներին. այլ կերպ ասած՝ Հայաստանն իրավունք է ստանում արդարադատություն իրականացնելու այլ պետության տարածքում՝ այլ պետության քաղաքացիների նկատմամբ: Վերը նշված փաստերը գործնականում հաճախ դառնում են իրավական հակասությունների պատճառ:

Ստորև բերվում են նախաքննական և դատաքննական փուլերում խախտումների մեխանիզմների նկարագրությունն ու դրանց պատճառների հետազոտությունը՝ հիմնված քսաներկու գործերի վերլուծությունների վրա: Այս նկարագրությունները կազմված են իրավապաշտպանների և տուժող կողմի կազմած միջնորդությունների և այլ փաստաթղթերի հիման վրա: Բերված են այն օրինակները, որոնք առավել ցայտուն են ներկայացնում այդ մեխանիզմները:



Նախաքննական փուլ

Քրեական գործ հարուցելու մասին որոշումը հաճախ կազմված է լինում թերի, կեղծիքներով: Քրեական գործի հարուցման մասին որոշումն արդեն իսկ իր հիմքում ուղղորդող է: Բացի այդ, որոշումը կարող է և ընդհանրապես չտրամադրվել տուժող կողմին, չնայած սա հակասում է օրենքին: Հսկող դատախազը, ըստ օրենքի, պարտավոր է ծանոթ լինել այդ որոշմանն ու անհրաժեշտության դեպքում շտկել, միջամտել, ինչը գործնականում տեղի չի ունենում: Ըստ քր. դատ. օր.-ի՝ գործող քննիչը պարտավոր է կողմերին ծանոթացնել գործով կայացված բոլոր որոշումների պատճեներին: Ընդ որում, օրենքում հստակ սահմանված չէ՝ կարո՞ղ են, արդյոք, կողմերը պահանջել և ստանալ որոշումների պատճեները: Այս հարցը թողնված է քննիչի հայեցողությանը: Վերջինս, որպես կանոն, որոշ գործերով ոչ մի որոշման պատճե կամայականորեն չի տրամադրում, որոշ գործերով՝ տրամադրում է ոչ միայն որոշման պատճեները, այլև՝ գրեթե բոլոր ցուցմունքները, բոլոր նյութերը: Դա կախված է նրանից, թե որքանով են այդ փաստաթղթերը հակասում կոնկրետ գործով նախաքննությանը:

-15- Որոշման մեջ նշվում է «վնասվածք», այլ ոչ թե «վնասվածքներ» բառը, նշվում է նաև, որ դրանք Ա.Աբրահամյանը ստացել է «անհայտ անձի» կողմից, այսպիսով, բացառվում է վարկածը, որ, հնարավոր է, դա կատարված լինի «անհայտ անձանց» կողմից:

-6- Սպանությունից մեկուկես տարի անց դեռևս տուժող կողմին չի ներկայացվել քրեական գործ հարուցելու վերաբերյալ որոշումը՝ չնայած բազմաթիվ դիմում բողոքներին ՊՆ ՔԾ, զինդատախազություն, ՊՆ-ին, ՀՀ գլխավոր դատախազին:

Հանցագործության անհիմն որակում

Բանակում զինվորների գերակշիռ մասն սպանվում է հրազենով, և դրանք, իրենց հերթին, մեծամասամբ, դիտավորյալ սպանություններ են: Սակայն նախաքննական մարմինը, հիմնականում, դիտավորյալ սպանությունները ներկայացնում է որպես ինքնասպանություններ, հակառակորդի կողմից կրակոց(ներ)-ի արդյունքում կատարված սպանություններ, զենքի հետ անզգույշ վարվելու հետևանքով կատարված կրակոցներից առաջացած մահվան դեպքեր, մահ հիվանդությունից: Նույնիսկ այն դեպքերում, երբ այդ գործերը չեն բացահայտվում նույն նախաքննական մարմնի հանցագործ քննության արդյունքում, դրանք մտնում են փակուղի և կասեցվում են, կատարվածը չի վերաորակվում, եթե նույնիսկ այդ ընթացքում ձեռք են բերվում անհերքելի փաստեր, որ խոսքը գնում է դիտավորյալ սպանության մասին: Բոլոր այն գործերում, որոնցում դատաբժիշկը եզրակացություն է տվել սպանությունից առաջ տուժողի հանդեպ կիրառված բռնության, տարբեր մարմնական վնասվածքների մասին, նախաքննական մարմինը դրանց վրա անգամ ուշադրություն չի դարձնում, քանի որ դա, որպես կանոն, կհանգեցնի հակասության՝ նրանց կողմից առաջ քաշված կեղծ վարկածի հետ:

-20- Դեպքի կապակցությամբ քրեական գործ անմիջապես չի հարուցվել, քանի որ, ըստ նախնական պաշտոնական վարկածի, Խաչատուր Մելիքյանը զոհվել էր ադրբեջանցիների

հետ սահմանակցող մարտական հենակետում՝ վերջիններիս կողմից արձակված հրազենային կրակոցից: Ավելին, ԼՂՀ նախագահի կողմից Խ. Մելիքյանը հետմահու պարգևատրվել էր արիության շքանշանով: Մարտի 16-ին զինդատախազությունը փաստերի ճմշման տակ ստիպված եղավ հարուցել թիվ 91001105 քր. գործ, ըստ որի 2005թ.-ի մարտի 15-ին, ժամը 23:00-ի սահմաններում, զինծառայող Միշա Դումիկյանը, խախտելով հերթապահության կանոնները, գնացել է թիվ 145 դիրքի N5 դիտակետը, պահանջել է հերթապահ Դիլանյանին ամրակցված ԱԿ 74 թիվ 2445696 ինքնաձիգը և այն նրանից ստանալուց հետո, երեք մեկական, այնուհետև՝ մեկ կրակահերթ ուղղելով N4 դիտակետի ուղղությամբ, անզգուշությամբ սպանել է Մելիքյանին: Գործով չկա որևէ փաստ, որ կստիպեր հակառակորդի կողմից կատարված սպանության վարկածն առաջ քաշել: Տուժողի իրավահաջորդի բազմաթիվ հարցումներին, թե ի՞նչ փաստաթղթի հիման վրա է ԼՂՀ Նախագահը Խ. Մելիքյանին պարգևատրել արիության շքանշանով, քանի որ նա, իբր, սպանվել է հակառակորդի գնդակից, ոչ մի պատասխան չի տրվել: Բացի այդ, սպանությանը նախորդած ժամանակահատվածում և դրանից հետո, ըստ Դումիկյանի և վկաների ցուցմունքների, բոլոր գործողությունները վկայում են այն մասին, որ Դումիկյանը նախապես մանրակրկիտ ծրագրել է Խ. Մելիքյանի սպանությունը, նույն օրը ցերեկը գողացել է փամփուշտները, դեպքից առաջ ապօրինաբար վերցրել է իր գնդացիրը, գողացված փանփուշտները դրել է գրպանը, ապօրինաբար գնացել է հենակետ, ապօրինաբար պահանջել է Դիլանյանից վերջինիս ինքնաձիգը, սպանել է Խ. Մելիքյանին, ինչից հետո Դիլանյանի զենքի պակասող փամփուշտները լրացրել է իր գրպանում գտնվող փամփուշտներով: Քննություն չի կատարվել Խ. Մելիքյանի մարմնի վրա հայտնաբերված բազմաթիվ մարմնական վնասվածքների վերաբերյալ: Քննիչը միտումնավոր հարց չի տվել դատաբժշկին, թե գլխի շրջանում հրազենային վնասվածք ստանալուց հետո որքա՞ն ժամանակ անց է վրա հասել Խ. Մելիքյանի մահը: Մինչդեռ մարմնական վնասվածքների նկարագրությունը պարզ ցույց է տալիս, որ Խ. Մելիքյանը մահացել է նշված վնասվածքները ստանալուց անմիջապես հետո: Ավելին, քննիչը չի կատարել որևէ քննություն մահից առաջ կես ժամվա ընթացքում Խ. Մելիքյանի օգտագործած խմիչքի վերաբերյալ, ինչի մասին նշում է դատաբժիշկը:

Վերաքննիչ դատարանը, չկարողանալով հարցաքննության հրավիրել գործով առանցքային վկաներին, ի վերջո իր վճռով Առաջին ատյանի դատարանի վճիռը թողեց անփոփոխ:

- 18- Դեպքին հաջորդած առաջին օրերին Զինվորական դատախազությունն իր պաշտոնական տեղեկագրում նշում է, թե իբր մահվան պատճառը "սրտի պայթյունն է": Ավելի ուշ խոստովանում, որ կատարվածն սպանություն է, քանի որ, ըստ դատաբժշկական փորձաքննության, հանգուցյալ Ղարախանյանի ներքին օրգաններում հայտնաբերվել ու հանվել էր 7.62 տրամաչափի գնդակ:

-16- Չնայած բազմաթիվ վնասվածքներին, քերծվածքներին, որոնք պատճառվել են կենդանության օրոք (սահմանափակ մակերես ունեցող առարկա(ներ)ով, մահվանից կարճ ժամանակ (վայրկյաններ) առաջ, որոնք վկայում են դիտավորյալ սպանության մասին), մինչ օրս գործը քննվում է ինքնասպանության վարկածով: Ձերբակալվել է մեկ զինծառայող՝ Վարյանին ինքնասպանության հասցնելու մեղադրանքով: Դիահերձման ավարտից հետո, ի պատասխան ՀՀ ՊՆ ՔԾ ՀԿԳ բաժնի պետ Յու. Բաղալյանին ուղղված Հելսինկյան ասոցիացիայի փորձագետ Ռ. Մարտիրոսյանի հարցին, թե ինչու՞ է Տիգրան

Վարյանի բացահայտ սպանությունը որակվել որպես ինքնասպանություն, Յու. Բաղալյանը պատասխանեց, որ եթե իրենք դեպքը ներկայացնեն որպես սպանություն, իսկ հետո պարզվի, որ դա ինքնասպանություն է, ապա սպանվածի ծնողներն իրենց չեն հավատա, և իրենք ուղղակի ստիպված են առաջ քաշել նախնական՝ ինքնասպանության վարկածը:

-13- Դիտավորյալ սպանությունը ներկայացվել է որպես դժբախտ պատահար: Չնայած Ն. Գալստյանի մարմնի տարբեր մասերում առկա կապտուկներին, քերծվածքներին և արյունազեղումներին, Գորիսի կայազորի քննչական բաժինը եկել է եզրահանգման, որ Ն. Գալստյանը կատարել է գողություն և մահացել է հենց գողության պահին: Ավելին, տուժողի հայրը հայտնել էր նախաքննական մարմնին իր ունեցած տեղեկությունները որդուն սպանող անձանց վերաբերյալ, սակայն դրանք, ըստ էության, քննության առարկա չեն դարձել: Գործով ձեռք բերված այլ փաստերը նույնպես հակասում են այս վարկածին, սակայն նախաքննական մարմինը, դրանք անտեսելով, գործը կարճել է:

-7- Միակողմանի նախաքննության օգնությամբ քննչական մարմինը ձգտում է ակնհայտ սպանությունը ներկայացնել որպես ինքնասպանություն՝ կախվելու միջոցով:

Սպանության վարկածը հիմնավորվում է.

ա. հանգուցյալի վրա դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերված, բութ առարկայով հասցված մարմնական վնասվածքներով,

բ. հանգուցյալի պարանոցի շրջանում հայտնաբերված 2 ճմլման ակոսների առկայությամբ:

Այս երկրորդ փաստը վկայությունն է այն բանի, որ Վ. Մուրադյանին նախ խեղդել են և հետո միայն բարձրացրել կախաղան: Բացի այդ, չնայած նախաքննական մարմինն «ապացուցված է համարել», թե իբր Վ. Մուրադյանին հասցրել են ինքնասպանության, մինչ օրս գործում չկան կասկածյալներ կամ կալանվածներ:

-9- Իրականում, կատարվածը դիտավորյալ սպանություն է և «ինքնասպանություն» է դարձել միակողմանի և կեղծ նախաքննության արդյունքում, քանի որ չեն բացատրվում բազմաթիվ վերքերի և վնասվածքների առաջացման մեխանիզմները:

-6- Ըստ գործի տվյալների՝ 18.04.2012թ-ին «Խուբան 5» մարտական հենակետում Զորիկ Մարգարյանն ստացել է մահացու հրազենային վնասվածք, իսկ մեկ այլ զինծառայող՝ Կարեն Մովսիսյանը՝ հրազենային վնասվածք ծնկի շրջանում: Գործով քննիչ Հ. Գ. Մարգարյանն ապացուցված է համարել, որ իբր հակառակորդը մոտեցել է մարտական հենակետին ու գետնատնակի դռնից դեպի աջ գտնվող խրամուղու կողմից անկանոն կրակահերթեր արձակել գետնատնակի ուղղությամբ: Գնդակները դիպել են խրամուղու երկու կողմերով ձգվող փայտյա հենասյուներին, գետնատնակի դռանը, իսկ դրանցից մեկը դիպել է շարքային Զորիկ Մարգարյանի գլխին, որի հետևանքով վերջինս մահացել է, իսկ մյուսը՝ շարքային Մովսիսյանի ոտքին: Սակայն, ինչպես նշում է քննիչը գործը կասեցնելու վերաբերյալ իր 18.10.2012թ.ի որոշման մեջ, վկաներից և ոչ մեկը նման փաստ, նման վարկած առաջ չի քաշում, վկաներից և ոչ մեկը հակառակորդ չի տեսել:

Այսպես, գործով վկա Կ. Մովսիսյանի ցուցմունքով, 2012թ. ապրիլի 18-ին, ժամը 10:50-ի սահմաններում ինքը գտնվելիս է եղել գետնատնակի դիմաց՝ ընկերոջ, Ռաֆայել Մինասյանի և Զ. Մարգարյանի հետ միասին: Այդ ժամանակ գետնատնակից դեպի աջ ձգվող խրամուղու կողմից կրակահերթ է հնչել, ինքը նկատել է, որ շարքային Զ. Մարգարյանն ընկել է գետնին, որ նրա գլխից արյուն է հոսել, հասկացել է, որ մահացել է, իսկ քիչ անց էլ տեսել է, որ ինքը նույնպես ոտքի շրջանում հրազենային վիրավորում է ստացել:

Գործով վկա Ռ. Ալավերդյանի ցուցմունքով, 10:00-ին ինքն ընդունել է կրակակետի դիտորդի պարտականությունն ու ծառայություն է իրականացրել թիվ 7 կրակակետում: Ժամը 10:50-ի սահմաններում կարճ կրակահերթի ձայն է լսել, ապա քիչ անց հասկացել է, որ ինչ-որ լուրջ բան է պատահել, քայլել է դեպի գետնատնակի կողմ ու երբ հասել է լիցքաթափման վահանակի մոտ, գետնատնակի դիմաց տեսել է գետնին ընկած Զ. Մարգարյանին: Այսինքն, սահմանը հսկող զինծառայողը չի տեսել սահմանն իբր խախտած հակառակորդին, թույլ է տվել, որ նա գա, մտնի մարտական հենակետի տարածք և կրակահերթ արձակի: Բացի այդ, «սահման խախտողն» անարգել եկել, մտել է տարածք, կատարել հանցագործությունն ու, որևէ դիմադրության չհանդիպելով, անվնաս հեռացել է: Ի դեպ, հակառակորդը որպես կանոն մեկ անձից բաղկացած դիվերսիոն խումբ չի ուղարկում:

Գործով վկա կրտսեր սերժանտ Ռ. Մինասյանի ցուցմունքի համաձայն՝ ինքը ծառայել է «Խուբան 05» մարտական հենակետում, սակայն պարբերաբար հանցագործություն կատարելով, լքել է իր հենակետը և եկել «Խուբան 015»: Դեպքի օրը ժամը 10:50-ի սահմաններում ինքը Զ. Մարգարյանի և Կ. Մովսիսյանի հետ գտնվել է գետնատնակի դիմաց: Այդ ժամանակ մեկ այլ զինծառայող՝ Ա. Գասպարյանը, եղել է գետնատնակի դիտորդ և գտնվել է հերթապահության համար նախատեսված տաղավարում՝ գետնատնակի մուտքից դեպի ձախ: Այդ պահին գետնատնակից դեպի աջ ձգվող խրամուղու կողմից կրակահերթ է հնչել, ինքն իրեն անմիջապես գցել է գետնին, ապա նկատել, որ կրակոցներից մեկից հետո Մարգարյանը ընկել է գետնին, որ նրա գլխից արյուն է հոսել, ինչից նա հասկացել է, որ Զ. Մարգարյանը մահացել է:

Նմանատիպ ցուցմունք է տալիս նաև Ռ. Մինասյանի կողմից հիշատակված, գետնատնակի մոտ հերթապահող Ա. Գասպարյանը: Նա ևս չի տեսել կրակողին, միայն լսել է կրակոցների ձայն: Այսպիսով, գործով չկա ոչ մի ապացույց, որ կրակողը հակառակորդն է: Իր այս վարկածը քննիչը հիմնավորել է միայն նրանով, որ իր ձեռքի տակ եղել է երկու իրեղեն ապացույց՝ գնդակ, որոնք նա ուղարկել է ձգաբան փորձագետին, հինգ մարտական հենակետերի զինծառայողներին ամրակցված ինքնաձիգների հետ մեկտեղ, և փորձագետը տվել է եզրակացություն, համաձայն որի ներկայացված ապացույց գնդակներից և ոչ մեկն արձակված չէ ներկայացված ինքնաձիգներից: Գործը կասեցնելու որոշումը բողոքարկելով՝ տուժողի իրավահաջորդը միջնորդել է, որպեսզի փորձագետին ուղարկվեն նաև գումարտակի տնօրինությանը հանձնված մյուս մարտական հենակետերի զինծառայողների ինքնաձիգները՝ հատկապես սպաների, որոնք առավել մեծ հնարավորություն ունեին դիրքից դիրք տեղաշարժվելու: Իր 04.07.2011թ. գրության մեջ զինդատախազ Գ. Կոստանյանը մերժել է տուժողի այս միջնորդությունը՝ առանց հիմնավորման: Հասկանալի չէ, թե ինչու է կասկած առաջացել, որ կարող էին Զ. Մարգարյանին սպանել նշված հենց հինգ հենակետերի զինծառայողներին ամրակցված

ինքնաձիգներից, և ինչու չէր կարող սպանված լինել այլ ինքնաձիգներից:
Մեկ այլ կարևոր նկատառումն այն է, որ հակառակորդը չէր կարող կրակել գետնատնակի դռան վրա, քանի որ այդ դուռը պետք է լիներ հակառակորդի հակառակ կողմում, այլ ոչ թե հակառակորդի տեսադաշտում:

-5- Քրեական գործը կասեցնելու որոշման մեջ քննիչը գրում է. «Նախաքննության ընթացքում ընդհանուր առմամբ հարցաքննվել է 88 անձ, սակայն հնարավոր չի եղել պարզել, թե ինչպե՞ս և ի՞նչ հանգամանքներում է մահացել Ա. Հակոբյանը»: Այս դրույթին պետք է անդրադառնային վերադասները, որ եթե քննիչները կատարվածի մասին ոչինչ չգիտեն, ապա ինչի՞ց եզրակացրեցին, որ կատարվածը ինքնասպանություն է և ինչո՞ւ են այս բոլոր տասներկու տարիների ընթացքում քննել միմիայն միեւնույն՝ ինքնասպանություն վարկածը: Սակայն այս գործը կասեցվել է:

-4- Նախաքննական մարմինը եկել է հետևության, որ Ա. Ղազարյանի մահվան պատճառը նրա գլխուղեղի հիվանդությունն է, որ նրա հանդեպ բռնություն չի գործադրվել և որ նրա մահվան մեջ մեղավոր անձինք չկան: Նման հետևության գալով՝ քննիչ Ս. Ս. Գասպարյանը 15.07.2011թ. քրգործը կարճել է՝ մեղավոր անձանց բացակայության պատճառաբանությամբ՝ չնայած ոչ վիրահատական վնասվածքների առկայությանը, որոնք որևէ կերպ չեն բացատրվել:

-3- Դեպքն ինքնասպանություն որակելիս՝ քննիչը հիմնվել է միմիայն զինվորների տված ցուցմունքների վրա՝ հաշվի չառնելով այս ցուցմունքներին հակասող բազմաթիվ փաստերը: Ձգտելով դեպքը ներկայացնել որպես ինքնասպանություն՝ քննիչն ու նրա վերադասները մինչ օրս չեն քննել այն կարևորագույն փաստերը, որոնք հակասում են վերոհիշյալ կեղծ վարկածին: Դրանք ի հայտ են եկել դեպքի վայրի զննությամբ հայտնաբերված մի խումբ իրեղեն ապացույցներից և մի շարք փորձագիտական եզրակացություններից:

Չեն քննվում այլ տարբերակներ ընդհանրապես՝ չնայած ակնառու հակասություններին և անհեթեթություններին

Չնայած նախաքննության ընթացքում տարբեր փորձաքննությունները հակասության մեջ են մտնում նախնական տվյալների հետ, սակայն գործն ու մեղադրանքը մնում են անփոփոխ: Եթե դատարանն օբյեկտիվ դատաքննություն կատարի և վերհանի նշված հակասություններն ու կոնկրետ հանցագործության փաստերը, ապա միաժամանակ ստիպված պետք է լինի միջնորդել, որպեսզի դրանց շուրջ կատարվի քննություն: Գործերից և ոչ մեկով չկա նախադեպ, երբ դատարանը հարթել է նշված հակասությունները, ինչպես նաև երբեւէ չի միջնորդել, որպեսզի դրանց շուրջ կատարվի լրացուցիչ քննություն:

-13- Համաձայն դեպքի վայրի զննության արձանագրության (գործի հատոր 1, թերթ 3)՝ բենզինի հորը դատարկ էր, այնտեղ կար ընդամենը «տեղ-տեղ» 2.5 սմ բարձրությամբ բենզին: Ստացվում է, որ ըստ քննիչի ու նրա վերադասների՝ Նարեկ Գալստյանը ցանկանում էր բենզին գողանալ մի հորից, որում բենզին չկար: Եթե նա իրոք ցանկանար բենզին գողանալ, և այն էլ նման հանդուգն ձևով, հերթապահի աչքի առաջ (սա արդեն ոչ թե գողություն է, այլ ավազակային հարձակում), ապա կգողանար ոչ թե այն հորից,

որտեղ բենզին չկար, այլ, բնականաբար, այն հորից, որում պահվում էր զորամասի բենզինը: Եթե նույնիսկ ենթադրենք, որ Նարեկ Գալստյանն անտեղյակ էր, ապա, մտնելով հորի մեջ, պետք է հասկանար, որ այն դատարկ է և անմիջապես դուրս գար այնտեղից: Ավելին, Նարեկ Գալստյանը հորին է մոտեցել իբր ռետինե խողովակն ուսին գցած: Նրա ձեռքին ոչ մի իր չի եղել: Այսպիսի ցուցմունք է տվել միակ ականատես վկա Ավետիս Ավետիսյանը:

Այսպես, ըստ Ավետիսյանի ցուցմունքի (գ.հ. 1, թ. 22-25), Նարեկ Գալստյանը, բարձրանալով բենզինի հորի վրա, հագել է հակագազ և մտել հորի մեջ: Ինչու՞: Ըստ վկայի՝ բենզին հափշտակելու նպատակով: Այդ դեպքում ինչու է Նարեկ Գալստյանը՝

ա. ռետինե խողովակը թողել դրսում
բ. ինչպե՞ս էր նա բենզին հափշտակել հորից, եթե այնտեղ բենզին չկար,
գ. ինչո՞վ պետք է «գողը» բենզին լցներ,
դ. ինչի՞ մեջ պետք է «գողը» բենզին լցներ, եթե նա իր ձեռքին ոչինչ չուներ:

Միակ առարկան հակագազն էր, որն իբր նրա գլխին էր: Սա գիտակցելով՝ քննիչը չի էլ փորձում պարզել, թե որտեղի՞ց հորի մեջ հայտնվեց չարաբաստիկ հակագազը: Հակագազները զորամասի տարածքում ընկած չեն լինում, դրանք պահվում են զինանոցներում կամ այլ համապատասխան շինություններում: Ու՞մ էր պատկանում հակագազը, ո՞վ էր այն տվել Նարեկ Գալստյանին: Նարեկ Գալստյանի ինչի՞ն էր պետք հակագազը: Ո՞ր դեպքերում էին (ըստ կանոնակարգի) զինծառայողներին հակագազներ տրվում: Ինչո՞ւ վկա Հակոբջանյանը չի տեսել հակագազը Նարեկ Գալստյանի մոտ, եթե իրոք այն վերջինիս էր պատկանում: Վկան այս հարցին չի կարողանում պատասխանել. Նարեկ Գալստյանի հետ հորին մոտենալիս տեսել է վերջինիս ուսին գցած խողովակը, իսկ հակագազը՝ ոչ: Բացի այդ, Նարեկ Գալստյանն օրեր անց պետք է զորացրվեր և, ինչպես ցանկացած զինվոր, այսպես ասած, «օրերն էր հաշվում», սակայն հանկարծ իբր կատարում է մի արարք, որի պատճառով կարող էր ենթարկվել քրեական պատասխանատվության: Հանուն ինչի՞: Իր նույն ցուցմունքում վկա Ա. Ավետիսյանն (կրկին քննիչի թելադրանքով) ասում է, թե իբր Նարեկ Գալստյանի «խոսքերով», նրան փող էր հարկավոր՝ տուն գնալու համար: Եթե դա համապատասխաներ իրականությանը, ապա Նարեկ Գալստյանը.

ա. ոչ թե դատարկ ձեռքերով կմտներ բենզինի դատարկ հորի մեջ, այլ բենզին կհաներ սեփական մեքենայից,
բ. կամ կմտներ այն հորը, որում բենզին կար:

Վկա Ա. Ավետիսյանը քննիչի ճնշման տակ տալիս է ակնհայտ կեղծ ցուցմունք, ինչն անուղղակիորեն հերքվում է մեկ այլ վկայի ցուցմունքով: Իր ցուցմունքում վկա Վարշամ Բեգլարյանը (գ.հ. 1, թ. 131-132) պատմում է, որ Նարեկ Գալստյանի հետ հանդիպել է դեպքից ժամեր առաջ (մայիսի 9–ին, ժամը 15:00-16:00–ի սահմաններում), զրուցել է Նարեկի հետ, սիգարետ խնդրել: Նարեկը կատարել է ծառայակցի խնդրանքը, տվել սիգարետը, ինչպես նաև՝ 200 դրամ, որպեսզի Վարշամը մի տուփ սիգարետ գնի ու ծխի: Հասկանալի չէ, թե ընկերոջը գումարով օգնելուն պատրաստ, միայն տուն վերադառնալու մասին երազող Նարեկ Գալստյանին ինչու՞ հանկարծ փող հարկավոր եղավ:

-9- Համաձայն Մանուկյանի դիակի թիվ 978/52 դատաբժշկական եզրակացության՝ հանգուցյալի դիակի վրա, գլխի ճակատային մասում ստացած հրազենային վնասվածքից բացի, հայտնաբերվել են նաև «ձախից կզակի շրջանի սալջարդ վերք», «ձախ ուսահոդի, աջ թիակի աջ նախաբազուկ-դաստակային հոդի, աջ դաստակի 5-րդ մատի շրջանների քերծվածքներ, որոնք առաջացել են մահվանից ոչ շատ առաջ»: Փաստորեն, այս փաստը պարզորոշ ցույց է տալիս, որ Մանուկյանին սպանել են ծեծելուց և խոշտանգելուց անմիջապես հետո՝ մի քանի րոպե կամ մի քանի վայրկյան տարբերությամբ: Մինչդեռ ո՛չ նախաքննական մարմինը, ո՛չ 3 ատյանի դատարանները հաշվի չեն առել այս կարևորագույն հանգամանքը: Ըստ նախաքննական տվյալների՝ մահվանից առաջ Մանուկյանի դեմքին բռունցքով հարվածել է զ/մ-ի նախկին հրամանատար Գեղամ Հրանտիկի Ասատրյանը: Այս կերպ են քննիչները հիմնավորել Մանուկյանի կզակի ձախ մասում հայտնաբերված սալջարդ վերքը: Սակայն հաշվի առնելով, որ վերքն ունի 1,5×0,2սմ չափսեր և 0,4սմ խորություն՝ կարող ենք միանշանակ պնդել, որ այն չէր կարող հանդիսանալ բռունցքի հարվածի հետևանք: Եվ բացի այդ, նշված դրվագը ոչ մի կերպ չի բացատրում, թե ի՞նչ մեխանիզմով են առաջացել վերը նշված մյուս մարմնական վնասվածքները:

-9- Սպանության մասին է վկայում նաև թիվ 092428 դատաձգաբանական-դատահետքաբանական եզրակացությունը, համաձայն որի՝ Ս. Մանուկյանին ամրակցված թիվ 368460 ինքնաձիգի վրա մատնահետքեր չեն հայտնաբերվել: Գործում նշված հանգամանքներում մատնահետքերը կարող էին ոչնչացնել կամ քննիչը, կամ մարդասպանը: Դեպքին նախորդած ժամերին Ս. Մանուկյանից խլել և կոտրել են նրան պատկանող SIEMENS տեսակի բջջային հեռախոսը: Նախաքննական մարմինն «այդպես էլ չի կարողացել պարզել, թե ովքեր են կոտրել նշված հեռախոսը»: Չի կատարվել ոչ մի քննչական գործողություն՝ պարզելու համար վերջին օրերի (հատկապես՝ վերջին օրվա) ընթացքում նշված հեռախոսից կատարված մուտքային և ելքային զանգերի վերաբերյալ:

-5- Գործով վկա Տեր-Խաչատրյանի ցուցմունքի համաձայն՝ զինծառայողներ Գ. Հովհաննիսյանը և Ա. Ծահբազյանը Արման Հակոբյանին ծեծել են՝ նրան մեղադրելով, որ հենց նրա ցուցմունքի պատճառով են դատապարտվել Գագիկ Կոստանյանը և Գևորգ Գևորգյանը: Նախաքննական մարմինը չի քննել այս վարկածը, կամ չի ցանկացել քննել և պարզել, թե որքանով են վերոհիշյալ զինծառայողների մեղադրանքները համապատասխանում իրականությանը:

-3- Քննիչը բոլոր մանրամասներով, հայհոյանքներով համեմված ներկայացնում է շուրջ 7 ամիս առաջ տեղի ունեցած մի անհեթեթ, անիմաստ պատմություն, սակայն չի կարողանում պարզել, թե դեպքից առաջ ե՞րբ, որտե՞ղ և ու՞մ հետ է Տ. Համբարձումյանն օգտագործել ոգելից խմիչք, ինչը հիմնավորվում է թիվ 610/19 դատաբժշկական փորձագիտական եզրակացությամբ: Քննիչը պարզել է, թե որ ամսի ո՛ր օրը, ո՛ր ժամին, ո՛ր զինվորը ինչ է ասել, ինչ հայհոյանք է տվել, սակայն չի պարզել, թե դեպքից կարճ ժամանակ առաջ ովքե՞ր են Տ. Համբարձումյանին հասցրել վերոհիշյալ փորձաքննությամբ հայտնաբերված մարմնական վնասվածքները: Չի պարզվել, թե սպանությունից առաջ ո՞ւմ հետ է բախվել հանգուցյալը, և ո՞րն է եղել նրա կողմից՝ զորամասը լքելու պատճառը: Դեպքը ներկայացնելով որպես ինքնասպանություն՝ քննիչը մինչ օրս անկարող է ներկայացնել ինքնասպանության կատարման մեխանիզմը:

-3- Դատաբժշկական փորձաքննությամբ պարզվել է, որ Տ. Համբարձումյանի դիակի գլխի և պարանոցի շրջանում ամբողջապես բացակայում են մաշկը և մկանային հյուսվածքները: Ու սա այն դեպքում, որ հանգուցյալի դիակը հայտնաբերվել է գոտկատեղից վերև գրեթե մերկ՝ միայն մեկ անթև շապիկով: Քրգործով կատարված իրեղեն ապացույցների դատաբժշկական թիվ 289 փորձագիտական եզրակացությամբ պարզվել է, որ Համբարձումյանի մարմնի նշված հատվածները հոշոտվել են շան կողմից: Նախաքնական մարմինը չի կարողանում պատասխանել այն հարցին, թե ինչպե՞ս կարող էին շները հոշոտել գլուխը, պարանոցը և բացարձակապես անվնաս թողնել հագուստից զուրկ ուսերն ու ձեռքերը:

-1- Դեպքից հետո քննիչը հայտնաբերել է Ա. Նազարյանի ինքնաձիգի թվով 3 պահունակները՝ 90 փամփուշտով: Միաժամանակ տեղազննության ժամանակ (գ.հ.1, թ.7-26) զննել է Ա. Նազարյանին ամրակցված թիվ 1093977 ինքնաձիգը և պարզել, որ պահունակում առկա է 29 փամփուշտ, իսկ ևս մեկը գտնվում է ինքնաձիգի փողի մեջ: Այսպիսով, բոլոր այն 120 փամփուշտները, որոնք Ա. Նազարյանը ստացել է մարտական հենակետ մեկնելիս, իրենց տեղում են: Ոչ մի փամփուշտ կրակված չէ: Նշված պայմաններում ասել, թե Ա. Նազարյանն ինքնասպան է եղել իր ինքնաձիգով, դա ընդամենը մերկապարանոց հայտարարություն է: Ինչու՞ պետք է Ա. Նազարյանն ինքնասպան լիներ «ձախ» փամփուշտով, Ա. Նազարյանի ինչի՞ն էր պետք ավելորդ փամփուշտը: Մի՞թե նրա մոտ առկա թվով 120 փամփուշտները բավարար չէին ինքնասպանություն գործելու համար: Նախաքննական մարմինը ողջ նախաքննության ընթացքում բացարձակապես քննություն չի կատարել՝այս հակասությունը հարթելու նպատակով: Պետք էր կատարել լրացուցիչ քննություն, պարզելու համար, թե ո՞վ է սպանել Ա. Նազարյանին, ու՞մ զենքով է սպանվել Ա. Նազարյանը և որտեղի՞ց են վերցրել փամփուշտը: Նախաքննության ժամանակ տեսնելով այս հակասությունը՝ քննիչը պարտավոր էր կասկածի տակ վերցնել մարտական հետակետի զինվորների, զինծառայողների և նույն հենակետում գիշերող գումարտակի հրամանատարի ԱՀՏԱԳ տեղակալ Հակոբ Մանուկյանի պնդումները, թե իբր.

ա. Ա. Նազարյանն ինքնասպան է եղել,
բ. Ա. Նազարյանն ինքնասպան է եղել իր ինքնաձիգով:

Այնինչ, քննիչը հավատում է այս վարկածին և սկզբից ևեթ, կատարվածը որակելով որպես ինքնասպանություն, մինչև վերջ քննում է միմիայն այս վարկածը:
Ըստ օրենքի, քննիչը պարտավոր էր փորձաքննության ներկայացնել մարտական հենակետում առկա բոլոր զենքերը՝ պարզելու համար, թե վերջին մաքրումից հետո ո՞ր զենքից է կրակոց արձակվել: Մինչդեռ քննիչը, կոպտորեն չարաշահելով իր պաշտոնական դիրքը, իրեն վերագրելով փորձագետ-ձգաբանի գործառույթներ, «իրականացնում է» մարտական հենակետի ինքնաձիգների ձգաբանական փորձաքննություն և «հանգում եզրակացության», թե իբր հենակետում առկա ոչ մի զենքից վերջին մաքրումից հետո կրակոց չի արձակվել (գ.հ.1,թ. 27-28): Սա աղաղակող անօրինականություն է՝ ուղղված գործի հանգամանքները կոծկելուն, որը սակայն համապատասխան գնահատականի չարժանացավ ո՛չ վերադաս դատախազության կողմից, ո՛չ էլ գործով դատավոր Ս. Մարդանյանի կողմից:

-2- Նախաքննությանը համահունչ՝ Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանը

(դատավոր՝ Համլետ Դավթյան) կայացրել է մեղադրական վճիռ՝ ապացուցված համարելով, թե իբր գործով անցնող ամբաստանյալները՝ թիվ 46677 զորամասի զինծառայողներ Վիլիելմ Ենգիբարյանը, Հրանտ Կարապետյանն ու Ռոբերտ Բաղալյանը հունվարի 23-ին և դրան հաջորդող օրերին հարվածել, հայհոյել ու նվաստացրել են իրենց գումարտակի զինծառայող Թորգոմ Սարուխանյանին, ինչի հետևանքով վերջինս 12.02.2011թ.-ին, գտնվելով պահակային ծառայության մեջ, ժամը 14:35-ի սահմաններում իրեն ամրակցված ԱԿ 74 տեսակի թիվ BE 303806 ինքնաձիգով ինքնասպան է եղել՝ կրակելով իր վրա՝ կրծքավանդակի շրջանում: Սույն գործով տուժող կողմի համար կարևորագույն փաստը գործով կատարված դատաբժշկական փորձաքննության եզրակացությունն է: Գործով դիակի արտաքին զննությունը կատարած թիվ 186/10 դատաբժշկական եզրակացության հեղինակ Ա. Դալլաքյանը միանձնյա պատասխանել է հրազենային կրակոցի հեռավորությանը առնչվող հարցին, ինչի իրավունքը չուներ: Ավելին, այս հարցի շուրջ նա տվել է հակասական եզրակացություն, համաձայն որի՝ Թ. Սարուխանյանին սպանել են հեռվից արձակած ընդհուպ կրակոցով: Այսպես, մեջբերում ենք. «Սարուխանյանի դիակի դատաբժշկական փորձաքննության ժամանակ հրազենային վնասվածքի շրջանում կրակոցի լրացուցիչ գործոնների առկայություն, այն է՝մրի, այրվածքի, ինչպես նաև կիսաայրված կամ այրված վառոդի հատիկներ չեն հայտնաբերվել, հետևաբար՝ կրակոցը կատարվել է տվյալ զենքին բնորոշ կրակոցի լրացուցիչ գործոնների ազդեցության սահմաններում»: Սույն նախադասության մեջ կան երկու՝ միմյանց հակասող տվյալներ: Դատաբժշկի ներկայացրած փաստերը վկայում են, որ կրակոցը կատարվել է հեռու տարածությունից, այսինքն՝ կատարվածը սպանություն է: Ասվածը հասկանալի դարձնելու համար մեջբերում ենք մի հատված Ծոթա Վարդանյանի «Դատական բժշկություն» դասագրքից. «Կրակոցի լրացուցիչ գործոնները: Կրակոցի ժամանակ բացի գնդակից, փողաբերանից դուրս են թռչում լիցքաթափման և այլ մասնիկներ, որոնք մարդու մարմնի վրա թողնում են հետքեր, նույնիսկ վնասվածքներ: Կրակոցի լրացուցիչ գործոններից են օդը, գազերը, բոցը, մուրը, վառոդի հատիկները և օտար մասնիկները (քսուք, ժանգ, մետաղի մանր մասնիկներ և այլն): Այդ գործոնները առաջանում են վառոդի այրման և քայքայման հետևանքով, ուստի հիմնականում կապված են նրա քանակի և որակի հետ»[1]:

Մինչդեռ նույն նախադասության վերջում Ա. Դալլաքյանը գալիս է իր ներկայացրած փաստերին էապես հակասող եզրակացության՝ իբր կրակոցը կատարվել է մոտ տարածությունից: Հենց այս հակասական փաստաթղթի վրա էլ հիմնվելով՝ ինչպես նախաքննական մարմինը, այնպես էլ դատարանը դեպքը որակել են որպես ինքնասպանություն, այն դեպքում, երբ դատաբժշկի ներկայացրած փաստերը միանշանակ վկայում են, որ Թ.Սարուխանյանին սպանել են: Չնայած դատարանում տուժող կողմը բազմիցս անդրադարձավ այս հակասությանը, սակայն դատավոր Դավթյանը, անդրադառնալով դրան, նույնությամբ արտագրել է փորձագետի գրածը՝ չհարթելով հակասությունը և հարկ չհամարելով փորձագետին հրավիրել դատարան ու հարցաքննել: 12.06.2013թ. նիստում գործով մեղադրող դատախազ Սարդարյանին բացարկ հայտնելիս տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչն անդրադարձավ այս

1. *Ծ.Ա. Վարդանյան, Կ. Նազարեթյան. Դատական բժշկություն Երևան 1995թ. էջ 196*

հակասությանը՝ այն դիտելով որպես բացարկի հիմքերից մեկը: Դատախազ Սարդարյանը հայտարարեց դատարանին, թե իբր սույն փորձաքննության հետ կապված որևէ խնդիր չկա, բոլոր խնդիրները հարթված են: Սակայն, ո՛չ նախաքննության ընթացքում, ո՛չ առաջին ատյանի դատարանում փորձագետ Ա.Դալլաքյանն իր տված թիվ 186/10 դատաբժշկական փորձագիտական եզրակացության շուրջ չի հարցաքննվել, և նշված հակասությունը չի հարթվել:

-2- Ըստ էության, քրեական գործում չկա որևէ ուղղակի կամ, թեկուզ, անուղղակի ապացույց, որը կվկայեր Թորգոմ Սարուխանյանի ինքնասպանության մասին: Նման ապացույց ձեռք չբերվեց նաև դատարանում: Վկաներից և ոչ մեկը չի տեսել Թորգոմ Սարուխանյանին ինքնասպանություն գործելիս: Այսպես, ըստ գործով վկա կապիտան Մեսրոպ Մարգարյանի ցուցմունքի (գ.հ.1, թ. 33-36)՝ առաջինը դեպքի վայր է գնացել ինքը: Դիակը տեսնելով՝ ինքն անմիջապես հասկացել է, որ կատարվածն ինքնասպանություն է, քանի որ Թ. Սարուխանյանի հագուստի վրա կար պատռվածք և ինքնաձիգի ապահովիչը գտնվում էր բաց վիճակում՝ մեկահատ կրակոցների դիրքում (ռեժիմում):

Բայց ցանկացած ադեկվատ անձնավորություն, տեսնելով կրծքավանդակից կրակված և մահացած անձին, ավելի շուտ ենթադրում է, որ նրան սպանել են, քան, որ նա ինքնասպանություն է գործել: Վկան չի պարզաբանում, թե ի՞նչը իրեն տարօրինակ թվաց Սարուխանյանի հագուստի պատռվածքի վրա, ի՞նչը հուշեց, որ այդ պատռվածքը վկայում է ինքնասպանության մասին: Ինչ վերաբերվում է ինքնաձիգի ապահովիչի դիրքին, ապա դատելով դեպքի վայրում կատարված լուսանկարներից, ինքնաձիգն ընկած էր ձախ կողմում և կապիտանը ապահովիչի դիրքը չէր կարող տեսնել: Կարող էր տեսնել միմիայն այն դեպքում, երբ զենքն իր ձեռքը վերցներ:

Այս նույն հարթության մեջ պետք է դիտել նաև այն, որ Մ. Մարգարյանն ըստ էության ոչնչացրել է դեպքի վայրը՝ այնտեղից վերցնելով գետնին ընկած Թ. Սարուխանյանի լուսանկարները, զինգրքույկի կազմը և իբր Թ. Սարուխանյանի գրությունը՝ ինքնասպանություն գործելու վերաբերյալ: Նա այս ապացույցները տարել էր զորանոց և իր ծառայակից Թաթուլ Հայրապետյանին ցուցում տվել, որպեսզի վերջինս դրանք ներկայացնի քննիչին՝ ասելով, թե իբր դրանք գտել է զորանոցից: Ո՛չ նախաքննական մարմինը, ո՛չ էլ դատավոր Դավթյանն այս կարևոր փաստի շուրջ չցանկացան քննություն կատարել: Դատարանը հիմք է ընդունել Մարգարյանի այն պատճառաբանությունը, թե իբր նա դա արել է, որպեսզի «իր վրա խոսակցություն չլինի» (դատավճիռ, թ.14): Ինչպես ՀՀ ՊՆ, այնպես էլ ԼՂՀ ՊԲ յուրաքանչյուր զորամասի յուրաքանչյուր սպա ծանոթանում և ստորագրում է համապատասխան հրահանգ այն մասին, որ ինքը, գտնվելով դեպքի վայրում, իրավունք չունի այնտեղ որևէ իրի ձեռք տալ և, առավել ևս, որևէ իր վերցնել: Միաժամանակ սպան նախազգուշացվում է, որ նման արարքի համար ինքը կենթարկվի քրեական պատասխանատվության: Այն, որ կապիտան Մարգարյանը կատարել է վերը նշված անօրինական գործողությունները, իսկ հետո փորձել է գողացածը պարտակել, ցույց է տալիս սույն գործով նրա շահագրգռվածությունը: Նախաքննական մարմինը քրեական պատասխանատվության չի ենթարկել Մարգարյանին: Նշենք նաև, որ նա հանդիսանում էր Սարուխանյանի վաշտի հրամանատարը: Չնայած դատարանում ինչպես տուժող կողմը, այնպես էլ ամբաստանյալներ Հրանտ Կարապետյանն ու Ռոբերտ Բաղալյանը միջնորդեցին, որպեսզի կապիտան Մարգարյանը դատակոչվի

(ամբաստանյալները նշեցին, որ իրենք շատ հարցեր ունեն տալու իրենց կապիտանին), սակայն նախագահողը հարկ չհամարեց նրան դատակոչել, քանի որ Մարգարյանը դիմում էր ուղարկել դատարանին, նշելով, որ գործով այլ ասելիք չունի և նպատակահարմար չի գտնում դատարան գալ:

-22- Ըստ պաշտոնական վարկածի՝ 2001թ. հոկտեմբերի 30-ին, ժամը 21:00-ի սահմաններում, Վայք քաղաքում տեղակայված զորամասի գումարտակի շտաբի պետի աշխատասենյակում Կարեն Սարգսյանը սեղանի վրայից վերցրել է գումարտակի հրամանատարին պատկանող «Մակարով» մակնիշի, փամփուշտներով լիցքավորված ատրճանակը, իջեցրել է ապահովիչը, այն բերել է մարտական վիճակի, փողն ուղղել Արայիկ Ավետիսյանի վրա և սեղմել ձգանը, ինչի հետևանքով անզգուշորեն սպանել է Արայիկ Ավետիսյանին: Հարուցվել է քրեական գործ ՔՕ 259.1 հոդվածի գ կետի հատկանիշներով. "անփույթ վերաբերմունք ծառայության նկատմամբ, որն առաջացրել է ծանր հետևանքներ": Գործը, Վայոց Ձորի առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններից երեք անգամ ուղղարկվել է լրացուցիչ քննության: Նախաքննությունն իրականացվել է դատախազության տարբեր քննիչների կողմից, արարքը վերաորակավորվել է որպես սպանություն: Ներկայումս քրեական գործի վարույթը կասեցված է՝ սպանություն կատարող անձին չհայտնաբերելու, անհայտության պաճառաբանությամբ:

Նախնական վարկածով, մեղադրանք է առաջադրվել համածառայակից Կարեն Սարգսյանին, սակայն սպանվածի մոր՝ Անահիտ Մկրտչյանի կողմից վերադասության կարգով բողոքարկումների արդյունքում, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, որից հետո, նախաքննության մարմնի կողմից կայացվել է որոշում քրեական գործի վարույթը կասեցնելու մասին: Սույն քրեական գործով, սակայն, այլ հոդվածներով դատապարտվել են գումարտակի հրամանատար Միհր Ստեփանյանը, հրամանատարի տեղակալ Սամվել Հովսեփյանը և գումարտակի գրագիր Սարգիս Մխեյանը:

Գործում առկա են բազմաթիվ հակասություններ և հանցավոր բացթողումներ: Չնայած Արայիկ Ավետիսյանի գլխի հատվածի ոչ հրազենային վնասվածքների առկայությանը՝ վարույթն իրականացնող մարմինը պատշաճ կերպով չի կարողացել պարզել առաջացած վնասվածքների պատճառը: Բացի այդ, նախաքննության մարմինը որևէ կերպ չի անդրադարձել Միհր Ստեփանյանի կողմից Արայիկ Ավետիսյանից գումար պահանջելու հարցին, մինչդեռ այլ վկաները նույնպես ցուցմունք են տվել, որ հրամանատարը գումար է պահանջել: Հիմնական չպարզված հանգամանքներից մեկը, իրեղեն ապացույց ճանաչված զենքի գնդակի տրամաչափը, չի համապատասխանում տուժողի գլխի գանգաթաղի կոտրվածքի տրամաչափին, այսինքն՝ սպանել են ուրիշ զենքով:
Քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը՝ «սպանություն կատարող անձը հայտնի չլինելու պաճառաբանությամբ», ակնհայտորեն անհիմն է, քանի որ սպանությունը կատարվել է 9 քմ մակերեսով տարածքում, 5 հոգու ներկայությամբ:

Դեպքի վայրի փոփոխում

Հաճախ նախաքննական մարմնին նպատակահարմար չէ ցույց տալ դեպքի վայրը, քանի որ այն

ա. հակասում է կեղծ վարկածին,
բ. հուշում է, որ այդ վարկածն անհիմն է,
գ. գտնվում է այնպիսի տեղում, որ գործով անցնող բոլոր վկաները կամա թե ակամա պետք է տեսած լինեին սպանությունը, ինչն անցանկալի է քննիչի համար:

Առավել հարմար է ներկայացնել հեռավոր մի վայր, որտեղ անցուդարձ չկա և «տրամաբանական» դարձնել այն, օրինակ, որ, նախ, զինվորը հենց ինքնասպան է եղել և, որ ոչ ոք դա չի տեսել:

-5- Նախաքննական մարմինն ապացուցված է համարել, որ Արմանին սպանել են ՀԱԿ-ում հերթապահություն կատարելու պահին, մինչդեռ թիվ 27110002 հետքաբանական փորձաքննության համաձայն՝ սպանության պահին տղայի աջ ոտքին եղել է ներբանի վրա դաջված "ՊՆ 1999", իսկ լեզվակի վրա թանաքով գրված «Արմեն, ԺՕԳ» գրառումներով սպորտային կոշիկ և նույն ոտքին՝ գուլպա, իսկ ձախ ոտքի կոշիկը և գուլպան նախաքննական մարմնի կողմից այդպես էլ չեն հայտնաբերվել: Այս փաստը հիմք ընդունելով՝ նախաքննական մարմինը պետք է պատասխաներ առնվազն հետևյալ հարցերին՝

ա. Ինչպե՞ս կարող էր Արման Հակոբյանը սպորտային կոշիկներով իրականացնել պահակային ծառայություն:
բ. Եթե Հակոբյանը ինքնասպանություն է գործել, ապա որտե՞ղ են նրա ձախ սպորտային կոշիկն ու գուլպան:
գ. Ինչ գործ ուներ Ա. Հակոբյանի ոտքին «Արմեն, ԺՕԳ» գրառմամբ սպորտային կոշիկը:

Նախաքննական մարմինը չի կատարում դա բացահայտելու համար անհրաժեշտ գործողությունները:

-1- 2010թ. հուլիսի 27-ին, դեպքից մոտ 1 ժամ 25 րոպե անց, զորամասից Գլխավոր շտաբ և ՊՆ է ուղարկվել օպերատիվ տեղեկագիր (գ. հ. 5, թ.56), համաձայն որի Ա. Նազարյանը ինքնասպանություն է գործել մարտական հենակետի խրամատում: Այնուհետև, սակայն, ինչ-ինչ պատճառներով քննիչին «դուր չի եկել» խրամատը և ընտրվել է դեպքի նոր վայր՝ հենակետի տարածքում, բարձունքի վրա գտնվող ժայռաբեկորը, որին նստած վիճակով հենվելով, իբր, Ա. Նազարյանը ձեռքին եղած ինքնաձիգի փողը ուղղել է դեպի բերանը և ինքնասպան եղել: Ողջ ծաղրանքը կայանում է նրանում, որ քննիչի կողմից նշված հանգամանքներում՝ գլուխը ժայռաբեկորին հենած վիճակում ինքնասպան լինելու դեպքում, այդ նույն ժայռաբեկորի վրա պարտադիր պետք է մնային արյան, ոսկրաբեկորների և ուղեղանյութի մասնիկներ, քանի որ հրազենային վնասվածքը միջանցիկ էր, գնդակը դուրս էր եկել սպայի գլխի ձախակողմյան-ծոծրակային շրջանում: Սակայն, դեպքի վայրի զննությամբ ժայռաբեկորի վրա ոչ մի հետք չի հայտնաբերվել: Դեպքից ամիսներ անց, գործով նոր քննիչ Լ. Պետրոսյանի նախաձեռնությամբ, կատարվում է դեպքի վայրի մի նոր (թվով 3-րդ) զննություն: Զննության ընթացքում քննիչը արձանագրում է, թե իբր ժայռաբեկորի վրա հայտնաբերվել են «արնանման հետքեր», սակայն քննիչը, չարաշահելով իր պաշտոնական դիրքը, խախտելով քր. դատ. օր.-ի նորմերը, իր հայտնաբերած արյան հետքերից նմուշներ չի վերցրել, չի

փաթեթավորել, չի առգրավել և դրանք փորձաքննության չի ուղարկել: Այսինքն՝ այդպես էլ չի պարզվել, թե արդյո՞ք դրանք արյան հետքեր են, մարդու՞, թե՞ կենդանու արյուն է, եթե մարդու, ապա ո՞ր խմբին է պատկանում և կարո՞ղ էր արդյոք լինել Ա. Նազարյանի արյունը:

Նման պարագաներում քննիչի գրածը որևէ ապացուցողական նշանակություն չունի: Ավելին, քննիչն ընդամենը փորձում է պատրանք ստեղծել, թե, իրոք, դեպքի վայրը հենց նշված ժայռաբեկորն է, ինչն իրականությանը չի համապատասխանում: Դատարանում որպես վկա ցուցմունք տալիս, գործով նախկին քննիչ, վկա Լ. Պետրոսյանը հայտարարեց, որ իր կողմից կազմված տեղազննության արձանագրությունը ապացուցողական որևէ նշանակություն չունի, ընդհանրապես ոչ մի իմաստ չունի, ոչինչ չի նշանակում: Այսինքն, երևում է քննիչի մտադրությունը՝ ամեն գնով ցույց տալ, թե իբր հենց ժայռաբեկորն է հանդիսանում դեպքի վայրը: Տուժող կողմը միջնորդեց այս փաստաթղթի համար միջնորդել ՀՔԳԾ-ին, որպեսզի Լ. Պետրոսյանի հանդեպ հարուցվի քր. գործ պաշտոնական դիրքի չարաշահման համար: Սակայն դատավոր Ս. Մարդանյանը այս միջնորդությունը թողել է անպատասխան:

Անհրաժեշտ էր լրացուցիչ քննությամբ պարզել, թե ո՞վ է ՀՀ ՊՆ բանակի գլխավոր շտաբ ուղարկված հաղորդագրության հեղինակը, ո՞վ է վերջինիս ուղարկել այդ հաղորդագրությունը: Պետք էր հարցաքննել զ/մ-ի 27.07.2010թ.-ի հերթապահին, առգրավել և զննել զ/մ-ի հուլիս ամսվա հերթապահության մատյանը: Ինչը չի արվել:

-19- Գործում առկա է դեպքի վայրի լուսանկար, որը զննելիս դեպքին առնչվող ոչինչ չի հայտնաբերվել, ի դեպ, այն, որ դեպքի վայրը չի պարզվել, քննիչը նշել է իր կողմից կազմված տեղեկանքում:

Դեպքի վայրի ոչնչացում

Որպես կանոն նախաքննական մարմինը ոչնչացնում է դեպքի վայրը՝ այնտեղից վերցնելով և պարտակելով իրեղեն ապացույցները, որոնք ուղղակի մատնացույց են անում մարդասպանին, կամ առնվազն ապացուցում են, որ տեղի ունեցածն սպանություն է: Առավել հաճախ փոխվում են զենքերը, պարկուճները, և այլն: Նման խարդախությունների շնորհիվ քննիչը հնարավորություն է ստանում այս կամ այն զինվորին մեղադրանք ներկայացնել ոչ թե իրեղեն ապացույցների հիման վրա, այլ միմիայն վկաների ցուցմունքով: Տրամաբանությունը հետևյալն է. իրեղեն ապացույցներ ճանաչված իրերն ավելի ուշ հնարավոր չէ փոխել, մինչդեռ վկաներից կարելի է ստանալ ցանկալի կեղծ ցուցմունքներ: Որքան քիչ են իրեղեն ապացույցները, այնքան քննիչի համար դյուրին է գործը ցանկալի հունով տանելը, այս կամ այն զինվորին սպանության մեջ մեղադրելը, հետագայում՝ անհրաժեշտություն առաջանալու դեպքում, մեկ այլ զինվորին մեղադրելը, և այլն:

-20- Հայտարարված դեպքի վայրը հակասում է գործով բերված ապացույցներին, սակայն չեն հարցաքննվել վկաները կամ վկաների ցուցմունքը հաշվի չի առնվել, քննություն չի արվել վայրի տարբեր վարկածներ հետազոտելու համար:

Չեն կատարվել անհրաժեշտ քննչական գործողություններ դեպքի ժամանակը պարզելու համար

Որպես կանոն, բոլոր սպանության գործերով դեպքի ժամը քննիչների կողմից հանցավոր կերպով փոխվում է: Գրեթե միշտ նշվում է ավելի ուշ ժամ, ինչը թույլ է տալիս քննիչին.

ա. կոծկել այն գործողությունները, որոնք, որպես կանոն, մարդասպանները կատարում են դեպքից հետո՝ իրենց հանցագործությունը թաքցնելու նպատակով,
բ. իրականում տեղի ունեցածը թաքցնել և առաջ քաշել կեղծ վարկածներ,
գ. ապահովագրել իրենց հնարավոր վտանգներից, այսինքն, եթե բացահայտվի որ, ենթադրենք, ժամը 04:00-ին տեղի է ունեցել կռիվ, որին հաջորդել է սպանությունը, քննիչը կարող է արդարանալ, որ, քանզի, ըստ վկաների ցուցմունքների, դեպքը տեղի ունեցել ժամը 09:00-ին, ինքը մանրակրկիտ քննություն չի կատարել կռվի ժամի իրադարձությունների շուրջ և անփութորեն բաց է թողել այս փաստը:

-13- Քրեական գործի հարուցման որոշման մեջ (գ. հ. 1, թ.1) նշվում են երկու տարբեր ժամեր և հակասությունը շարունակվում է մինչև նախաքննության ավարտը և այդպես էլ չի հարթվում: Բացի այդ, քննիչը վկաներին չի տալիս ժամանակի հետ կապված կարևոր ու անհրաժեշտ հարցեր:

-5- Համաձայն դիակի դատաբժշկական թիվ 762/4 եզրակացության՝ դատաբժիշկ Արսեն Բաբայանն Արման Հակոբյանի մարմնի վրա հայտնաբերել է «քթի, մեջքի, պարանոցի աջ կողմնային մակերեսի, ձախ նախաբազկի, ձախ դաստակի 4-րդ մատի, աջ զստոսկրի, հետույքի, աջ և ձախ ազդրերի վերին երկրորդականների, աջ սրունքի միջին երրորդականի, աջ սրունք-թաթային շրջանների բազմաթիվ քերծվածքներ, աջ ուսային հոդի շրջանի քերծվածք և արյունազեղում, որոնք պատճառվել են բութ առարկաների ներգործությամբ՝ մահվանից 12-24 ժամ առաջ»: Նախաքննական մարմինն ապացուցված է համարել, որ այս վնասվածքներն Արման Հակոբյանին են հասցրել Գարիկ Հովհաննիսյանը՝ «Պիսր» մականունով և Արշակ Շահբազյանը՝ «Բիձա» մականունով, սեպտեմբերի 23-ին՝ ժամը 20:00-ի սահմաններում: Պետք է ենթադրել, որ գործով քննիչներ Խաչատրյանը և Հրաչ Այվազյանը, ինչպես նաև նրանց վերադասները, չեն տիրապետել թվաբանություն առարկային, քանի որ ըստ դատաբժշկի՝ Հակոբյանին դաժան խոշտանգման են ենթարկել սեպտեմբերի 24-ին, ժամը 04:00-ից մինչև նույն օրը ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում, այսինքն՝ 8-20 ժամ ավելի ուշ, քան տեղի է ունեցել քննիչների կողմից նշված ծեծը և հետևաբար այդ վնասվածքները չէին կարող առաջանալ նշված ծեծի հետևանքով: Այսպիսով՝ նախաքննական մարմինը չի պատասխանել այն կարևորագույն հարցերին, թե ովքե՞ր, որտե՞ղ և ի՞նչ պատճառով են ծեծել ու խոշտանգել Արման Հակոբյանին՝ դատաբժշկի կողմից նշված ժամանակահատվածում: Չէին էլ կարող այս փաստը ներկայացնել, քանի որ այդ դեպքում սպանությունն ինքնաբերաբար կբացահայտվեր:

-1- Դեպքի վայրի զննության արձանագրության մեջ նշվում է, որ այն կազմվել է 28.07.2010թ.-ին: Զննությանը զուգահեռ Canon ֆոտոխցիկով լուսանկարվել է դեպքի վայրը և դիակը՝ դեպքի վայրում: Սա բացահայտ կեղծիք է, քանի որ սպանության օրը՝ հուլիսի

27-ին, ժամը 15:00-ի սահմաններում Բերդ քաղաքի հիվանդանոցում կատարվել է Նազարյանի դիակի արտաքին զննություն և նույն օրը նրան տեղափոխել ենք Երևան: Ավելին, նույն օրը՝ հուլիսի 27-ին, դիակը տեղափոխելու ճանապարհին նրանց դիմավորել են սպանվածի հարազատները, և սպաներից մեկը ցույց է տվել իր բջջայինի մեջ պահպանված դեպքի վայրում դիակի լուսանկարը: Հետևություն. քննիչի կամ այլ իրավապահ մարմնի թույլտվությամբ զորամասի սպաները կատարել են ապօրինի լուսանկարում: Մինչ օրս մերժվել և մերժվում են տուժողի իրավահաջորդի կողմից դեպքի վայրում և գործով կատարված այլ լուսանկարների կրկնօրինակներն իրեն տրամադրելու միջնորդությունները՝ պատճառաբանելով նախաքննության գաղտնիությունը: Ստացվում է, որ այդ գաղտնիությունը միայն տուժող կողմի համար է:

Իրեղեն ապացույցների հետ կապված՝ չեն կատարվում անհրաժեշտ քննչական գործողություններ

Գրեթե բոլոր գործերում քննիչները փորձաքննության չեն ուղարկում այս կամ այն իրեղեն ապացույցը (ապացույցները), որոնց հիման վրա տրված եզրակացությունները կարող են էապես հակասել իրենց կեղծ նախաքննությանը: Հաճախ նման իրերը նույնիսկ չեն ճանաչվում որպես իրեղեն ապացույցներ:

-5- Փորձաքննության մեջ նշվում է. փորձագետին ներկայացված պաշտպանական գույնի բաճկոնի ներսի մակերեսին (աստառին) կատարված է «ՈՒՊԱԳ, ՊԵՏՐՈՍՅԱՆ Է. Ռ.» գրառումը: Նախաքննական մարմինն աչքերը փակում է նաև այս փաստի վրա, մինչդեռ փաստերի համադրումը քննիչներին պետք է զարմացնի, քանի որ ըստ այդ փաստերի՝ Արման Հակոբյանը չուներ ո՛չ գլխարկ, ո՛չ կոշիկներ, ո՛չ բաճկոն: Նրա բոլոր հագուստները պատկանել են այլ զինվորների, ինչն առավել քան կասկածելի է: Գործով քննիչները պարտավոր էին պարզել, թե ով է Է. Ռ. Պետրոսյանը և ինչու է նրա բաճկոնը, ըստ նախաքննական մարմնի, հայտնվել Հակոբյանի հագին, և ի վերջո որտե՞ղ են Հակոբյանի գլխարկը, զինվորական կոշիկները, բաճկոնը և մյուս հանդերձանքները:

-5- Գործով քննիչը դեպքի վայրից հայտնաբերել և փորձագետին է ուղարկել մի սրվակ՝ անհայտ բաղադրությամբ: Համաձայն թիվ 154 դատաքիմիական փորձագիտական եզրակացության՝ սրվակի մեջ առկա քսուքում հայտնաբերվել է ծծումբ: Քննիչները այդպես էլ չեն պարզել, թե, ծծմբից բացի, էլի ի՞նչ նյութեր էին պարունակվում նշված քսուքում: Որքա՞ն տոկոս էր կազմում ծծումբը տվյալ բաղադրության մեջ, այն թու՞յն էր, թե՞ դեղամիջոց, վտանգավո՞ր էր կյանքի համար, թե՞ ոչ, որտեղի՞ց է հայտնվել դեպքի վայրում, ո՞ւմ է պատկանել, ի՞նչ նպատակով է անձն իր մոտ պահել այդ քսուքը, բերել դեպքի վայր: Այս հարցերից ոչ մեկին նախաքննական մարմինը չի պատասխանել: Պատասխանը պետք է տա լրացուցիչ քննությունը, որի ընթացքում վերոհիշյալ քսուքը պետք է ուղարկել լրացուցիչ փորձաքննության: Ավելացնեմ, որ մեր ունեցած տվյալներով, ծծումբը համարվում է խիստ թունավոր նյութ, կենցաղում չի գործածվում, դեղատներում վաճառքի ենթակա չէ:

-2- Դեպքի վայրի զննությամբ պարզվել է, որ Թորգոմի կողքին ընկած են եղել նրա ձմեռային ձեռնոցները, ձախ ոտքի տակ՝ ինքնաձիգը, իսկ աջ ձեռքի տակ՝ նրա սվին-դանակը: Այս բոլոր փաստերը վկայում են այն մասին, որ կրակոցից առաջ Թորգոմի ձեռքին եղել է ոչ թե ինքնաձիգը, այլ սվին դանակը, որով զինվորը փորձել է պաշտպանվել

հարձակվող(ներ)ից: Միաժամանակ հասկանալի է, որ եթե սպանությունից առաջ Սարուխանյանի աջ ձեռքին սվին դանակ էր, ուրեմն նա ոչ մի կերպ չէր կարող ինքնասպան լինել: Նշենք նաև, որ նա աջլիկ էր: Եթե Թ. Սարուխանյանը ինքնասպան լիներ, ապա զենքը պետք է գտնվեր կրծքավանդակի շրջանում կամ ոտքերի արանքում, մինչդեռ դեպքի վայրի լուսանկարներից պարզորոշ երևում է , որ զենքը գտնվում է Սարուխանյանի աջ ոտքի տակ և, որ այն կարող էր այդ դիրքում դնել միայն գործով մինչ օրս չհայտնաբերված երկրորդ անձը, ամենայն հավանականությամբ՝ մարդասպանը: Այն փաստը, որ Թորգոմ Սարուխանյանի լուսանկարները, զինգրքույկի կազմը և արյան խմբի էմբլեմը հայտնաբերվել են դիակից մի քանի մետր հեռավորության վրա, վկայում են, որ մահվանից առաջ պայքար է եղել Թորգոմի և անհայտ անձանց միջև: Հակառակ դեպքում անտրամաբանական է, որ Թորգոմը մահվանից առաջ իր գրպաններից հաներ լուսանկարներն ու զինգրքույկի կազմը և նետեր իր շուրջ բոլորը:

-13- Ո՛չ դեպքի վայրում, ո՛չ Նարեկ Գալստյանի ավտոմեքենայի մեջ զինվորական հագուստ չի հայտնաբերվել, սակայն քննիչը բերել և լուսանկարել է Նարեկ Գալստյանի զինվորական համազգեստը (գ.հ 1, թ. 10, լուսանկար №11): Ըստ վկա Ավետիսյանի ցուցմունքների՝ համազգեստը դեպքի պահին եղել է Նարեկ Գալստյանի հագին, իսկ թե ե՞րբ, ու՞մ կողմից է այն հանվել, պարզ չէ: Գործով անհայտ է մնում համազգեստի հետագա ճակատագիրը: Ըստ օրենքի, քննիչը պարտավոր էր այն զննել, ճանաչել իրեղեն ապացույց և ուղարկել փորձաքննության, ինչը չի արել:

-12- Անդրանիկի հարազատների պնդմամբ՝ քննիչը հաշվի չի առել, որ Անդրանիկի հագին եղել է ձմեռային բաճկոն՝ «բուշլատ» եւ ձմեռային զինվորական տաբատ, որոնք անհետացել են եւ չեն ուղարկվել փորձաքննության: Քննիչը չի կատարել օրենքով նախատեսված քննչական գործողությունները՝ բուշլատը հայտնաբերելու և փորձաքննության ուղարկելու ուղղությամբ:

-7- Իրեղեն ապացույց պարանի վրա անզեն աչքով հայտնաբերվել են արյան հետքեր, սակայն նախաքննական մարմնի կողմից փորձագետը, իբր, չի կարողացել պարզել արյան խումբը՝ բացատրելով նրանով, թե արյունը բավականաչափ չի եղել փորձաքննություն կատարելու համար, ինչը կեղծ է, քանի որ անզեն աչքով տեսանելի է, նշանակում է՝ բավարար քանակությամբ է:

-9- Դեպքի պահին սպանվածի վրա եղած հագուստները չեն ուղարկվել փորձաքննության՝ ո՛չ դատաձգաբանական-դատահետքաբանական, ո՛չ դատաքիմիական-դատակենսաբանական՝ ո՛չ նախաքննական, ո՛չ էլ դատաքննական փուլում:

-3- Տ. Համբարձումյանի դիակի հայտնաբերման օրը հանգուցյալի հայրը, գալով դեպքի վայր, զորամասի մոտակայքում նկատել է գերմանական հովվաշուն, որը զբոսնում էր զինվորների ուղեկցությամբ: Զինվորներին տված հարցերից Բենիկ Համբարձումյանը պարզել է, որ շունը պատկանում է նույն զորամասի հրամանատար Գ. Մարգարյանին: Հաշվի առնելով, որ թիվ 289 փորձաքննությամբ Տ. Համբարձումյանի հագուստների վրայից հայտնաբերվել է թվով 3 շան մազ ՝ տուժող կողմը 28.08.2011թ.-ին միջնորդել է, որպեսզի հրամանատարի հովվաշնից վերցվեն մազի նմուշներ և դրանք համեմատվեն իրեղեն ապացույց ճանաչված անհայտ շան մազերի հետ: Տուժող կողմի միջնորդությունը մերժվեց քննիչի N 1204 (առ 13.09.2011թ.) անհեթեթ որոշմամբ, որտեղ նշվում է, թե ՀՀ

ՊՆ 54809 զ/մ-ի տարածքում որևէ մեկի կողմից շուն չի պահվում և որ. «զ/մ-ի հրամանատար Գ. Մարգարյանի շունը ընտանի է, պահվում է նրա տանը, նույնիսկ շան հետ խաղում է նրա երեքամյա դուստրը, իսկ շունն առանց որևէ մեկի ուղեկցության տնից դուրս չի գալիս»:

-1- Շուրջ մեկ տարի տևած նախաքննության ընթացքում քրեական գործով այդպես էլ չէր կատարվել կարևորագույն փորձաքննություններից մեկը. Ա. Նազարյանի զինվորական հագուստները, որոնք եղել են նրա հագին մարմինը հայտնաբերելու պահին, չէին ուղարկվել դատաքիմիական-դատակենսաբանական փորձաքննության: Հետեւաբար, փորձաքննությամբ հաստատված չէ, թե արդյո՞ք արնանման հետքերը արյո՞ւն էին, Նազարյանի՞ արյունն էին, եւ ամենակարեւորը՝ ուրիշ մարդու արյան հետքեր կայի՞ն նրա հագուստի վրա, թե՞ ոչ:

Նախաքննության այս բացը շտկելու համար տուժող կողմը դատարանում հանդես եկավ դատաքիմիական-դատակենսաբանական փորձաքննություն նշանակելու մասին միջնորդությամբ՝ դատարանի ուշադրությունը հրավիրելով հետևյալ փաստերի վրա.

ա. մինչ օրս հայտնի չէ՝ կա՞ն արդյոք Ա. Նազարյանի հագուստների վրա արյան հետքեր և որտե՞ղ են դրանք տեղակայված,

բ. դատարանում Ա. Նազարյանի հագուստների զննությունից պարզ դարձավ, որ հանգուցյալի տաբատի վրա, հետևի հատվածում եւս, արնանման հետքեր չկան, մինչդեռ դատելով դեպքի վայրում դիակի լուսանկարներից, նման հետքեր անպատճառ պետք է լինեին, քանի որ արյունը, հոսելով Նազարյանի վերնաշապիկի և ներքնաշապիկի վրայով, պետք է կուտակվեր հենց տաբատի հետին հատվածում,

գ. կետ 2-ում նշվածը վկայում է այն մասին, որ սպանությունից հետո Նազարյանի դիակի դիրքը փոխված է:

Ա. Նազարյանի դիակի դատաբժշկական փորձաքննություն կատարելու վերաբերյալ որոշման մեջ գործով քննիչ Մադաթյանը պարտավոր էր փորձագետին ուղղել նաև հետևյալ հարցը. կա՞ն արդյոք փաստեր, որոնք կվկայեին մահվանից հետո հանգուցյալի դիակի տեղափոխման կամ դիրքի փոփոխության մասին: Քննիչը նման հարց չի ուղղել փորձագետին, վերջինս չի անդրադարձել այս խնդրին, և այս հարցը մնացել է չհետազոտված:

դ. Ա. Նազարյանի դիակի տեղաշարժման մասին են վկայում նաև դիակի դատաբժշկական թիվ 704/34 եզրակացության տվյալները: Ըստ այս եզրակացության՝ Ա. Նազարյանի որովայնի խոռոչում և ստամոքսում արյան կուտակումներ չեն հայտնաբերվել: Մինչդեռ, եթե Ա. Նազարյանը գտնվեր այն դիրքում, որն առկա է դեպքի վայրի դիակի լուսանկարներում, ապա առնվազն նրա ստամոքս պետք է ծորալով լցվեր մեծ քանակությամբ արյուն: Յուրաքանչյուր հասուն անձ ունենում է 5-7լ արյուն, այնինչ դեպքի վայրի զննումը կատարած քննիչ Ս. Մադաթյանը արյան մեծ կուտակումներ չի արձանագրել:

Արտակ Նազարյանի հարազատները, ծանոթանալով քննիչի տրամադրած

լուսանկարներին դեռեւս 2010թ. օգոստոսին, փաստում են, որ Նազարյանի գլխարկի վրա եղել է պատռվածք, սակայն նրա վրա արյան տեսանելի հետքեր չեն եղել, ինչի մասին տուժողի իրավահաջորդը ցուցմունք է տվել դատարանում: Նախաքննության ավարտին ներկայացված գլխարկը ամբողջությամբ թաթախված է եղել արնանման նյութի մեջ: Այս ամենը հաշվի առնելով՝ տուժող կողմը միջնորդել էր Դատարանին Ա. Նազարյանի հագուստները, այդ թվում նաև՝ ներքնազգեստը, կոշիկները, գլխարկը և գուլպաները ուղարկել դատաքիմիական-դատակենսաբանական փորձաքննության՝ պարզելու համար.

ա. կա՞ն արդյոք հագուստի վրա արյան հետքեր, թե՞ ոչ: Եթե այո, ապա ի՞նչ խմբի են պատկանում, կարո՞ղ էին արդյոք պատկանել Ա. Նազարյանին, հագուստի ո՞ր մասում են դրանք տեղակայված: Կա՞ն արդյոք արյան հետքեր, որոնք չեն պատկանում Ա. Նազարյանին;
բ. Կա՞ն արդյոք հագուստի վրա փսխվածքի հետքեր;
գ. Կա՞ն արդյոք հագուստի վրա ուղեղանյութի հետքեր;
դ. Կա՞ն արդյոք Ա. Նազարյանի գուլպաների վրա բուսականության հետ շփման հետքեր;
ե. Ինչպիսի՞ ա՛յլ հետքեր կան Ա. Նազարյանի հագուստի վրա;
զ. Ելնելով գործում առկա դեպքի վայրում դիակի լուսանկարներից՝ կարելի՞ է արդոք ասել, որ դիակը սպանությունից հետո տեղաշարժվել է. եթե ոչ, ապա հնարավո՞ր էր արդյոք, որ արյունը մեծ ծավալով ներծծվեր վերնաշապիկի և ներքնաշապիկի մեջ, սակայն չներծծվեր տաբատի հետին մասում: Հաշվի առնենք, որ Ա. Նազարյանի արյունը ամբողջապես դուրս էր եկել մարմնից. համաձայն փորձագետի՝ ո՛չ որովայնի խոռոչում, ո՛չ ստամոքսում արյուն չի հայտնաբերվել:

Այս չափազանց կարևոր միջնորդության լուծումը դատարանի կողմից հետաձգվեց՝ դրան խորհրդակցական սենյակում վերջնական դատական ակտ կայացնելիս անդրադառնալու համար, որն, ըստ էության, միջնորդության քողարկված մերժում էր, քանզի անհասկանալի էր՝ խորհրդակցական սենյակում գործը քննող դատավոր Ս. Մարդանյանն ի՞նքն էր կատարելու փորձաքննությունը, եթե գտներ, որ միջնորդությունը հիմնավոր է և նման փորձաքննությունն՝ անհրաժեշտ: Դատավճռում, ինչպես եւ կանխատեսվում էր, դատարանը մերժել է այս միջնորդությունը՝ գործում առկա ապացույցները բավարար համարելով վերջնական դատական վճիռ կայացնելու համար:

-1- Նախաքննության մարմինը Ա. Նազարյանի զրահաբաճկոնն առգրավել, սակայն զննության չէր ենթարկել և փորձաքննության չէր ուղարկել: Դատաքննության ընթացքում, հետազոտելով Ա. Նազարյանի զրահաբաճկոնը, տուժող կողմը նրա վրա հայտնաբերեց հրազենային կրակոցին բնորոշ վնասվածքի հետքեր: Այդ կապակցությամբ միջնորդություն ներկայացվեց Ա. Նազարյանի զրահաբաճկոնն ուղարկել դատաձգաբանական-դատահետքաբանական փորձաքննության՝ պարզելու համար.

ա. կա՞ն արդյոք Ա. Նազարյանի զրահաբաճկոնի վրա հրազենային վնասվածքի հետքեր;
բ. կա՞ն արդյոք Ա. Նազարյանի զրահաբաճկոնի վրա մեխանիկական վնասվածքների հետքեր, եթե այո՝ դրանց տեղակայումը, առաջացման մեխանիզմը:

Այս միջնորդությունը դատարանի կողմից անհիմն մերժվեց:

Իրեղեն ապացույցների ոչնչացում

Նախորդ ենթավերնագրի ներքո նկարագրվածին համահունչ, նախաքննական մարմինը ոչնչացնում է այն իրեղեն ապացույցները՝ հագուստ, արյուն, գնդակ, պարկուճ, որոնք կարող են խոչընդոտել կեղծ նախաքննություն կատարելուն:

-19- Քրեական գործում դիակի զննում կատարելու արձանագրության մեջ արձանագրված է, որ Ա. Հայրապետյանի հագին գտնվող տաբատը, գոտին, գուլպաները, հողաթափերը վերցվել են քննիչ Յու. Դանիելյանի կողմից՝ դիակի զննում կատարելիս, սակայն հետագայում, բացի շապիկից, թվարկած մյուս իրերն անհետացել են և գործով իրեղեն ապացույց չեն ճանաչվել:

-8- Բջջայինի հետ կապված՝ շատ կարևոր է Վարդան Ադիբեկյանի ցուցմունքը (գ.հ.2, թ.61-62), որում սպանվածի եղբայրը հայտնում է, որ վերջին անգամ Ալբերտն իրեն զանգահարել է 23.02.2012թ. ժամը 01:08-ին՝ ոչ իր հեռախոսից: Այդ ժամանակ նա եղբորից խնդրել է իր բջջայինի մեջ գումար լիցքավորել: Ըստ Վարդանի՝ «…փողը նրան ժամանցի համար էր անհրաժեշտ, ինչ-որ աղջկա հետ խոսելու համար»:

Ըստ Վարդանի պատմածի՝ սպանությունից որոշ ժամանակ անց քննիչ Սարգիս Մադաթյանը ինչ-որ ճանապարհով պարզել էր, որ Ալբերտի ծառայակիցները Վարդանին են ուղարկել Ալբերտի բջջայինը և, գալով Ադիբեկյանների տուն, պահանջել է իրեն տալ նշված բջջայինը և այդ բջջայինի մեջ ու Ալբերտի մոտ եղած քարտերը՝ իբր քննություն անելու նպատակով: Նա կազմել է արձանագրություն բջջայինի ու քարտերի առգրավման վերաբերյալ՝ բացատրելով տան երկու անդամներին և երկու իրավաբան հյուրերին, որ պետք է նշված քարտերը վերծանի: Ավելի ուշ նա Վարդանին վերադարձրել է Ալբերտի բջջայինն առանց քարտերի: Հատկանշական է, որ գործում չկա ո՛չ նշված առգրավման արձանագրությունը, ո՛չ որևէ հեռախոսահամարի վերծանում: Ակնհայտ է, որ քննիչը կատարել է հանցագործություն. ոչնչացրել է կարևոր փաստեր, որոնք կարող էին ապացուցել, որ սպանությունը կատարել է իր ծառայակից Գոռ Խաչատրյանը, ինչի մասին ցուցմունք է տվել Իգնատ Ենգիբարյանը: Համոզված կարելի է ասել, որ Ալբերտն ուզում էր բջջայինով խոսել այն աղջկա հետ, ով նրան Գոռի բջջայինին, Գոռի և Ալբերտի odnoklass-niki.ru կայքի միասնական էջին հաղորդագրություն էր ուղարկել: Չմոռանանք նշել, որ թե՛ Իգնատի նշած վեճն ու կռիվը և թե՛ Ալբերտի զանգը եղբորը եղել են նույն գիշերը (Իգնատը ժամը չի ճշտել՝ գիշերը, թե երեկոյան), 1-2 ժամ տարբերությամբ: Բնականաբար, Մադաթյանն Ալբերտի եղբորն արված զանգի շուրջ և աղջկա հետ կապված ոչ մի քննություն չի կատարել, քանի որ դա կարող էր պատճառ դառնալ, որ բացահայտվեր իրական մարդասպանը:

-1- Տեղազննության արձանագրության մեջ քննիչը նշում է, թե իբր սպանության գործիք հանդիսացած ինքնաձիգը գտնվում է մահացածի ոտքերի արանքում՝ փողը բերանի մեջ: Քննիչը պարտավոր էր զենքը զգուշությամբ փաթեթավորել, առգրավել և ուղարկել դատաձգաբանական-դատամատնահետքաբանական փորձաքննության: Դրա փոխարեն նա, զենքը ձեռքը վերցնելով, կատարում է մի շարք գործողություններ՝ լիցքավորում, լիցքաթափում, փորձարարական կրակոց, ինքնաձիգից պահունակի անջատում և այլն:

Այս կերպ նա ոչնչացնում է սկզբնական մատնահետքերը: Զավեշտալին այն է, որ ըստ փորձագետի թիվ 25101003 եզրակացության, ինքնաձիգի վրա մատնահետքեր չեն հայտնաբերվել: Իսկ սա նշանակում է, որ քննիչը ոչնչացրել է բոլոր՝ այդ թվում և իր մատնահետքերը: Այս հարցով պետք է հարցաքննել գործով քննիչ Մադաթյանին՝ պարզելու համար, թե ինչով էին պայմանավորված նրա ապօրինի գործողությունները:

-1- Դատաբժշկական թիվ 704/34 եզրակացությանը կից գրության մեջ (գ.հ. 5, թ.188) եզրակացության հեղինակ, դատաբժիշկ Ադամյանը նշում է, որ եզրակացությանը կից ուղարկում է դիակի թվով 19 լուսանկարները, սակայն քրգործում տեղ են գտել դրանցից միայն 16-ը: Նախաքննական մարմինը, խախտելով օրենքը, իրեն իրավունք է վերապահել 3 լուսանկար թաքցնել քննությունից, ինչը քրեորեն պատժելի հանցանք է: Լրացուցիչ քննությամբ պետք է պահանջել լուսանկարների բնօրինակները, պարզել, թե որոնք են քր. գործից պակասողները և լրացնել: Ինչը չի արվել: Դատարանում որպես վկա ցուցմունք տալու կանչված, դատաբժշկական եզրակացության հեղինակ Վիգեն Ադամյանը հայտարարեց, թե իբր իրականում եղել է 16 լուսանկար, սակայն ինքը սխալմամբ գրել է 19:

Իրեղեն ապացույցների կեղծում

Գրեթե միշտ դիտավորյալ սպանությունն ինքնասպանություն ներկայացնելիս՝ քննիչն ստիպված է լինում փոխել իրեղեն ապացույցները՝ դրանց տեղը դնելով կեղծ ապացույցներ: Առավել հաճախ փոխվում են զենքերը և, զուգահեռաբար, կրակված պարկուճները, դրանց տեղը դրվում են սպանվածի զենքն ու նրանից քննիչի կողմից ապօրինաբար կրակված ու վերցված պարկուճը, ինչը վեր է ածվում հիմնավոր ապացույցի, թե իբր զինվորն ինքնասպան է եղել:

- 19- Համաձայն 18.05.2008թ.-ի կայացրած որոշման (գ. հ. 1, թ. 33) գնդակը 22.05.2008թ.-ին Երևանից առգրավվել և 26.05.2008թ.-ին մուտք է եղել Ստեփանակերտի քննչական բաժին (հատ. 1, թ. 44), սակայն գնդակը ստանալուց երկու օր առաջ՝ 24.05.2008թ.-ին (հատ. 1, թ. 49) քննիչ Յու. Դանիելյանը ինչ-որ գնդակ ուղարկում է կրկին Երևան՝ փորձաքննության:

-4- Ըստ վկա Տոնոյանի ցուցմունքի (գ.հ.2, թ.58)՝ Ա. Ղազարյանի «հին կոմուֆլյաժ համազգեստը մնացել էր առաջին գծի մարտական դիրքում»: Այս ցուցմունքը բացարձակապես վստահություն չի ներշնչում. զինվորներն իրենց հետ փոխանորդ հագուստ չեն տանում հենակետ, եթե նրանք իրենց համազգեստը փոխում են, ապա միայն զորամասում: Դրանից հետևում է, որ անհայտ անձինք միտումնավոր փոխել են տղայի իրական համազգեստը, քանի որ դրանց վրա առկա են եղել բռնության և, ինչու չէ, նաև արյան հետքեր: Այս հակասության շուրջ ընդհանրապես քննություն չի կատարվել, տղայի իրական, այսպես կոչված, «հին» համազգեստը չի հայտնաբերվել և չի զննվել: Այս հակասության շուրջ անհրաժեշտ է կատարել խորացված քննություն:

-8- Դեպքի վայրի զննությամբ (գ.հ.1, թ.8-9) քննիչ Ս.Մադաթյանը հայտնաբերել է ԱԿՄ տեսակի ՊԳ-490 համարի ինքնաձիգը՝ մեկ պահեստատուփով, այն փաթեթավորել է և առգրավել: Նրա գործընկեր Մարգարյանը այս նույն ժամանակ կատարել է մարտական հենակետի զինծառայողներին ամրակցված զենք-զինամթերքի ստուգում (գ.հ.1, թ.33-34),

համաձայն որի՝ հանգուցյալ Ա.Ադիբեկյանի ինքնաձիգը (ԱԿՄ տեսակի, 3A-04260 համարի) դեպքի ժամանակ գտնվել է գետնատնակում, դրանից վերջին մաքրումից հետո կրակոց չի արձակվել: Պարզվել է նաև, որ տեղում են նրան տրված բոլոր 4 փամփշտատուփերը՝ 120 փամփուշտներով: Նախաքննական մարմինն ապացուցված է համարել, որ Ալբերտ Ադիբեկյանն ուշացումով է գնացել դիտակետ, միայն այն բանից հետո, երբ «Հակոբասար» է ելել վաշտի հրամանատար, կապիտան Նարեկ Նամալյանը: Ըստ վկաներից մեկի ցուցմունքի՝ այդ պահին, վախենալով կապիտանից, Ադիբեկյանը գաղտագողի՝ գետնատնակից վերցրել է վերը նշված ՊԳ-490 համարի զենքը, որն ամրակցված էր նրա համածառայակից Տարոն Մարտիկյանին և գնացել դիտակետ: Զենքի ստուգման արձանագրության մեջ նշվում է նաև, որ Իգնատ Ենգիբարյանին ամրակցված ԱԿՄ տեսակի թիվ ԳՄ-1971 համարի ինքնաձիգի փողի շուրջ կա մուր և որ նրան պատկանող փամփուշտներից 1 հատը պակասում է: Սույն 2 ինքնաձիգները՝ դեպքի վայրից հայտնաբերված Տարոն Մարտիկյանի ինքնաձիգը և ենթադրյալ մարդասպան Իգնատ Ենգիբարյանի ինքնաձիգը, ուղարկվել են փորձաքննության: Համաձայն թիվ 04601203 փորձագիտական եզրակացության՝ 2 ինքնաձիգից էլ կրակոց է արձակվել: Սակայն տարօրինակն այն է, որ մինչ Տարոն Մարտիկյանի ինքնաձիգը փորձագետին ուղարկելը քննիչ Մադաթյանը նրա վրայից ապօրինաբար հանել ու պարտակել է պահեստատուփը, ինչի արդյունքում ներկայումս հնարավոր չէ պարզել, թե պահեստատուփից քանի կրակոց էր արձակվել:

-8- Զենքերի հետ կապված մեկ այլ հակասություն նախաքննական մարմնին ուղղակի մտցնում է փակուղի: Համաձայն գործով վկա Տարոն Մարտիկյանի ցուցմունքի՝ դեպքից շուրջ 8 ժամ առաջ՝ ժամը 05:30-ին, ուտել-խմելուց հետո Ա.Ադիբեկյանը և Իգնատ Ենգիբարյանը, վերցնելով իրենց զենքերը, ուշացումով գնում են դիտակետ՝ մարտական հերթապահություն իրականացնելու: Նրանց հետ մեկտեղ գետնատնակից դուրս է գալիս նաև ծառայակիցը՝ Աբրահամ Հովհաննիսյանը՝ առանց զենքի: Վայրկյաններ անց դրսից լսվում են մենահատ կրակոցների, իսկ այնուհետև՝ կրակահերթի ձայներ: Դրանից անմիջապես հետո, ըստ վկայի, լսվում է Ա.Ադիբեկյանի ձայնը, ով գոռում է՝ տղերք, մի վախեցեք, մենք ենք: Հակասությունը կայանում է հետևյալում. ինչպես նշեցինք, դեպքից հետո զենք-զինամթերքի ստուգմամբ քննիչ Մարգարյանը պարզել է, որ Ա. Ադիբեկյանի զենքից կրակոց չի արձակվել, իսկ Իգնատ Ենգիբարյանի զենքից արձակվել է մեկ կրակոց, որով էլ նա իբր սպանել է Ադիբեկյանին: Հարց՝ ժամը 05:30-ի սահմաններում ու՞մ զենքից են արձակվել նշված կրակոցներն ու կրակահերթը: Նշենք, որ քննիչը բացառում է՝ ա. հենակետի զինվորներից որևէ մեկի կողմից զենքի մաքրումը, բ. կրակված փամփուշտների փոխարեն պահեստատուփերի մեջ նոր փամփուշտների լիցքավորումը: Երկրորդ դեպքում անհասկանալի է դառնում, թե ինչո՞ւ հենակետի որևէ զինվորի մոտ փամփուշտի պակասորդ չկա: Մինչդեռ քննիչ Մադաթյանն ապացուցված է համարում, որ գիշերը կրակահերթ է արձակել հենց Ա. Ադիբեկյանն՝ իրեն ամրակցված զենքից՝ չնայած գործով ականատեսի նման ցուցմունք չկա: Սա ոչ միայն չի հարթում նշված հակասությունը, այլ ավելի է խորացնում այն, քանի որ նախաքննական մարմինն ապացուցված է համարում, որ.

ա. Ա. Ադիբեկյանի զենքից կրակված չէ,
բ. Ա. Ադիբեկյանի զենքից կրակված է:

Հասկանալով սա՝ քննիչ Մադաթյանը ձգտում է կոծկել գործի այս դրվագը: Այսպես,

վկաներից երեքը ցուցմունք են տալիս, թե իրենք գիշերային կերուխումից անմիջապես հետո պառկել են, քնել և կրակոցի ձայներ, իբր, չեն լսել: Առավել հետաքրքիր է Իգնատ Ենգիբարյանի ցուցմունքը, ով ըստ ցուցմունքների, ականատես-վկա է գիշերային կրակոցների կամ հենց ինքն է կրակել: Քննիչը գիշերային կրակոցների վերաբերյալ նրան ընդհանրապես հարց չի տալիս (գ.հ.1, թ.67-73): Հետաքրքիր է նաև վկա Աբրահամ Հովհաննիսյանի ցուցմունքը (գ.հ.1, թ.112), ով նշված դեպքի շուրջ ասում է. «...Խմելուց հետո շարքային Ա. Ադիբեկյանը ինչ-որ ինքնաձիգով» և վերջ: Այսինքն՝ քննիչն Աբրահամին ստիպել է գրել, թե իբր Ա. Ադիբեկյանն այս ժամին մեկ այլ զինվորի ինքնաձիգով է կրակոցներ արձակել, սակայն ի վերջո հասկանալով, որ դա իրեն չի փրկի, հատվածի կեսը ջնջել է, կեսը թողել՝ չգիտես ինչո՞ւ (գ.հ.1, թ.110-112): Այս նույն ցուցմունքում քննիչն ակնհայտորեն ոչնչացրել է ցուցմունքի մի տպագիր հատված՝ 7 տող: Այսինքն՝ քննիչը վտանգ է տեսել այդ տողերում, դրանք ջնջել է և դրանց փոխարեն պատճենել նախորդ 7 տողերն ու դրանք տեղադրել ջնջված տողերի փոխարեն. նույն յոթ տողերը երկու անգամ կրկնվում են ցուցմունքի մեջ: Չնայած վկա Աբրահամ Հովհաննիսյանը ցուցմունքի վերջում գրել է, որ ընթերցել է այն, սակայն բնականաբար չի ընթերցել, քանի որ հակառակ դեպքում չէր գրի, որ ընթերցել է այդ անհեթեթությունները, անհոդաբաշխ բառերն ու կրկնվող տեքստը: Քննիչը ձգտել է ամեն կերպ մոռացության տալ գիշերային կրակոցների հետ կապված կարևոր փաստը, սակայն դա նրան չի հաջողվել: Ամբաստանյալի պաշտպան Շարբաթյանի հարձակումից հետո սույն կայազորային քննչական բաժինը ղեկավարող Լոռու կայազորի զինդատախազ Թևան Միրզաբեկյանը, վախեցած իր և իր ենթակաների հանցագործությունից, իրեն ապահովագրելու նպատակով գրավոր ցուցում է տալիս նախաքննական մարմնին (գ.հ.2, թ.168-169), որում, մասնավորապես, ասվում է. «Դատաձգաբանական փորձաքննության եզրակացությամբ հիմնավորվել է, որ, ինչպես Ի. Ենգիբարյանին, այնպես էլ Ա. Ադիբեկյանին ամրակցված ինքնաձիգերից վերջին մաքրումից հետո կրակոցներ է արձակվել: Նախաքննությամբ տվյալներ են ձեռք բերվել նաև այն մասին, որ 2012թ-ի փետրվարի 22-ի՝ լույս 23-ի գիշերը կազմակերպված խնջույքից հետո կրակոցներ են արձակվել, սակայն ստուգմամբ փամփուշտների պակաս չի արձանագրվել, և մինչ օրս էլ չի պարզվել, թե ո՞վ է կրակել, ինչպե՞ս է փամփուշտների քանակը լրացվել և ի՞նչ հանգամանքներում և ո՞ւմ կողմից է կրակոցներ արձակվել Ա. Ադիբեկյանի ինքնաձիգից»: Նախ նշենք, որ դատախազ Թ. Ն. Միրզաբեկյանը կա՛մ անգրագետ է, կա՛մ հանցագործ. ավելի շուտ՝ թե՛ մեկը և թե՛ մյուսը, քանի որ, ինչպես արդեն նշեցինք.

ա. գ.հ.1, թ.33-34-ում հայերեն լեզվով գրված է, որ Ադիբեկյանի ինքնաձիգից կրակված չէ,

բ. դատաձգաբանական փորձաքննության է ուղարկվել ոչ թե Ա. Ադիբեկյանին, այլ, ինչպես և նշել ենք, Տարոն Մարտիկյանին ամրակցված ինքնաձիգը:

Մնացածը համապատասխանում է իրականությանը, սակայն նախաքննական մարմինն այդպես էլ չի կատարել հսկող դատախազի ցուցումը (որ ի դեպ, հավասարազոր է հրամանի) և չի պարզել վերը նշված հանգամանքները: Չնայած դրան՝ նույն դատախազը հաստատել է մեղադրական եզրակացությունը և այն ուղարկել դատարան: Ի դեպ, Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանը՝ ի դեմ դատավոր Ռաֆիկ Մելիքյանի, կայացրել է հանցավոր վճիռ. Իգնատ Ենգիբարյանին ազատազրկման է դատապարտել 10 տարի ժամկետով՝ նրան մեղավոր ճանաչելով Ա. Ադիբեկյանի սպանության մեջ:

-1- Դեպքի վայրի զննությամբ, գործով քննիչ Մադաթյանը հայտնաբերել, զննել, լուսանկարել և առգրավել է դեպքի վայրից հայտնաբերված N «78-09» պարկուճը (գ.հ.1, թ. 7-26): Ավելի ուշ նա նշված պարկուճն իր որոշմամբ ուղարկել է դատաձգաբանական փորձաքննության: Սակայն, ինչպես երևում է N 25101003 (առ 17.08.2010թ.) դատաձգաբանական եզրակացությունից, փորձագետը ստացել է այլ՝ «60-78» համարի պարկուճ: Նման պայմաններում փորձագետը պարտավոր էր կա՛մ կասեցնել փորձաքննությունը, կա՛մ առնվազն արձանագրություն կազմել նշված օրինախախտման վերաբերյալ և այն ուղարկել համապատասխան մարմիններին: Սակայն փորձագետը չի արել ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը:

Իրեղեն ապացույցները ուշացմամբ և, այդ իսկ պատճառով էլ, փոփոխված են կցվում գործին

Շատ դեպքերում քննիչները, անտեսելով «տուժող» հասկացողությունը, արհամարելով տուժողին, չվախենալով օրենքից, ոչնչացնում են այս կամ այն իրեղեն ապացույցը, և միայն հազվադեպ դեպքերում, երբ տուժող կողմը պահանջում է այդ ոչնչացված ապացույցը ներկայացնել իրեն և փորձաքննությանը, քննիչը ստիպված է լինում գործին կցել կեղծ ապացույցներ:

-19- Որպես իրեղեն ապացույց քրեական գործին է կցվել Անդրանիկին պատկանող, սակայն զորամասում գտնվող հագուստը, ընդ որում՝ համեմատելով անդրավարտիքի զննության և փորձաքննության ուղարկված անդրավարտիքի արձանագրությունները, կրկին ապացուցվում է, որ դրանք փոփոխման են ենթարկվել՝(հատ 1, թ. 188) նշված է, որ անդրավարտիքի վրա խոնավությունից տեղ-տեղ հետքեր են երևում և զգացվում է խոնավության հոտ: Այն կոճկվում է 3 կոճակներով և զսպանակով, որոնք բոլորն առկա են: Իսկ փորձագետը, նկարագրելով անդրավարտիքը, նշում է, որ անդրավարտիքը կոճկվում է 4 կոճակներով և մետաղյա կեռիկով, որոնք առկա են, այն օգտագործված է, աղտոտված: Այն, որ դա դեպքի պահին Անդրանիկի հագին գտնվող տաբատը չէ, ապացուցվում է նաև նրանով, որ դրա վրա եթե ոչ արյան, ապա գոնե հողի հետք պետք է լիներ:

-7- Նախաքննական մարմինը ապացուցված է համարել, թե իբր աթոռակը, որի օգնությամբ կախվել է Մուրադյանը, բերվել է հենց նրա կողմից, սակայն դրա հարթ մակերեսի վրա վերջինիս մատնահետքերը չեն հայտնաբերվել:

-21- Պարզ չէ, իրեղեն ապացույց համարվող զինվորական հագուստը իրականում պատկանե՞լ է Օհանջանյանին, թե՞ ոչ: Մահվան հաջորդ օրը՝ առավոտյան, Գեղարքունիքի ՌՈ աշխատակիցը զորամասի տարածքում հայտնաբերել է Օհանջանյանի զինվորական վերնաշապիկը՝ պատառոտված վիճակում: Չարաշահելով իր պաշտոնական դիրքը՝ ՌՈ աշխատակիցը կատարել է հագուստի զննություն և լուսանկարում: Քննիչ Գ. Մանուկյանը սույն վերնաշապիկը փորձաքննության չի ուղարկել: Դեպքից շուրջ երկու ամիս անց միայն տուժող կողմի բազմաթիվ բողոքներից հետո քննիչը փորձաքննության է ուղարկել մի զինվորական համազգեստ՝ ներկայացնելով այն որպես Օհանջանյանինը: Այս համազգեստն Օհանջանյանին չէր կարող պատկանել, ինչն ակնհայտ է դառնում քր. գործում առկա ՌՈ աշխատակցի արձանագրությունից և դրան կից ներկայացված լուսանկարներից: Այսպես.

ա. դատելով փորձագիտական եզրակացությունում առկա համազգեստի լուսանկարներից՝ փորձագետին ուղարկված համազգեստը նոր է, առանց վնասվածքների, մինչդեռ Օհանջանյանի իրական հագուստը պատառոտված էր, փոշոտ (գործում առկա է համապատասխան լուսանկար),

բ. Օհանջանյանի կազմվածքին համապատասխանում էր 52 չափի համազգեստ, մինչդեռ քննիչը փորձագետին էր ուղարկել 46 չափի համազգեստ:

Փաստերի անտեսում

Բոլոր այն դեպքերում, երբ գործում առկա փաստերը հակասում են նախաքննության վարկածին, սակայն դրանք արդեն անհնարին է պարտակել, մեխանիկորեն գործից հանել՝ նախաքննական և դատաքննական մարմինները ուղղակիորեն անում են հնարավոր ամեն ինչ, որպեսզի դրանք արժեզրկեն և անտեսեն: Այլ կերպ ասած՝ փոշիացնեն դրանց ապացուցողական նշանակությունը:

-9- Նախաքննական մարմինն անտեսել է մի կարևորագույն փաստ. դեպքի վայրից 16 մ հեռու երկաթյա դարպասների վրա հայտնաբերվել են Ս. Մանուկյանի արյան հետքերը: Թե ո՞րն է դրանց առաջացման մեխանիզմը, այդպես էլ չի պարզվել: Այս փաստը մեզ բերում է միանշանակ եզրակացության, որ Մանուկյանին սպանել են հենց այստեղ՝ դարպասների դիմաց, քանի որ համաձայն նույն դատաբժշկական փ/ե-ի՝ գլխի շրջանում ստացած վնասվածքներից հետո Մանուկյանը չէր կարող ինքնուրույն շարժումներ անել:

-5- Նույն փորձաքննությունից պարզ է դառնում, որ քննիչը փորձագետին է ներկայացրել ոչ թե Արմանի գլխարկը, այլ մեկ այլ գլխարկ, որի վրա առկա է «ВАЧО, ДШБ, 2000թ.» գրառումը: Նախաքննական մարմինը գնահատական չի տվել և խորացված քննություն չի կատարել նաև այս փաստով. ինչու՞ պետք է Արմանի գլխին լիներ այլ զինվորի գլխարկ, որտե՞ղ էր նրա գլխարկը:

-5- Գործով իրեղեն ապացույց ճանաչված, սպանության գործիք հանդիսացող N1181849 ինքնաձիգն ամրակցված չի եղել տուժողին: Քր. գործով կայացված որոշումներից պարզ չի դառնում, թե ու՞մ է պատկանել նշված ինքնաձիգը: Նախաքննական մարմինը խորացված քննություն չի կատարել այս կարևորագույն փաստի շուրջ՝ չնայած նրան, որ ինքնաձիգի տիրոջ անձը պարզելով, կարելի է գտնել հավանական մարդասպանին: Բնականաբար, հենց ինքնաձիգի տերն է սպանել Արման Հակոբյանին և (կամ) այն երրորդ անձը, ում նա նույն նպատակով փոխանցել է իր զենքը: Հենց սա է պատճառը, որ զենքի վրայից մատնահետքերը ոչնչացվել են: Նախաքննական մարմինը չի կատարել օրենքով սահմանված գործողությունները՝ զենքի հետ կապված մանրամասները պարզելու և մարդասպաններին գտնելու ուղղությամբ:

-8- Համաձայն թիվ 04611203 դատաձգաբանական փորձագիտական եզրակացության (գ.հ.2, թ. 143-146)՝ Ա. Ադիբեկյանի շապիկի ձախակողմյան հատվածը թևատակից 16 սմ երկարությամբ պատռված է: Նախաքննական մարմինն այս փաստի շուրջ քննություն չի կատարել: Չի պարզել, թե արդյո՞ք այն չի պատռվել Ադիբեկյանի և Գոռ Խաչատրյանի կռվի արդյունքում կամ մեկ այլ կռվի պատճառով: Դրա վրա ուշադրություն չեն դարձրել նաև առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները:

-1- Դեպքից հետո քննիչը հայտնաբերել է Ա. Նազարյանի ինքնաձիգի թվով 3 պահուսակները՝ 90 փամփուշտով: Միաժամանակ, տեղազննության ժամանակ (հ. 1, թ. 7-26) գտնել է Ա. Նազարյանին ամրակցված թիվ 1093977 ինքնաձիգն ու պարզել, որ պահուսակում առկա է 29 փամփուշտ, ևս մեկը գտնվում էր ինքնաձիգի փողի մեջ: Այսպիսով, բոլոր այն 120 փամփուշտները, որոնք Ա. Նազարյանը ստացել է մարտական հենակետ մեկնելիս, իրենց տեղում են: Ոչ մի փամփուշտ կրակված չի եղել: Հետեւաբար Նազարյանը չէր կարող ինքնասպան եղած լինել, այն էլ՝ սեփական զենքով: Պարզված չէ, թե ու՞մ զենքով է սպանվել Ա. Նազարյանը: Փորձաքննության չեն ներկայացվել մարտական հենակետում առկա բոլոր զենքերը՝ պարզելու համար, թե վերջին մաքրումից հետո ո՞ր զենքից է կրակոց արձակվել: Դրա փոխարեն քննիչը, կոպտորեն չարաշահելով իր պաշտոնական դիրքը, իրեն վերագրելով փորձագետ-ձգաբանի գործառույթներ, տեղում կատարել է ինքնաձիգների փողաբերանների տեսողական զննություն եւ եզրակացրել, թե իբր հենակետում առկա ոչ մի զենքից վերջին մաքրումից հետո կրակոց չի արձակվել (հ.1, թ. 27-28): Ա. Նազարյանի ինքնասպանության վարկածը հիմնականում հիմնված է թիվ 12 «Ղոզլու» մարտական հենակետի զինծառայողների՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքների վրա: Դատաքննության ընթացքում ամբաստանյալներ Հ. Կիրակոսյանը և Ա. Հովհաննիսյանը ցուցմունքներ տվեցին, որ Բերդ քաղաքի ռազմական ոստիկանության բաժանմունքում պահվելու ընթացքում իրենց և այլ զինծառայողների նկատմամբ կիրառվել է բռնություն, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք: Վկա Արման Մնացականյանն իրեն ազատազրկման մեջ պահելը գնահատել է որպես ճնշում: Այս հայտարարությունների կապակցությամբ ՀՀ ՊՆ ՀԿԳ քննչական բաժնում նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, քանի որ բռնությունների և նվաստացումների հեղինակ ռազմական ոստիկանության աշխատակիցները հերքել են որևէ զինծառայողի նկատմամբ որևէ անօրինական գործողություն կատարելու հանգամանքը:

-1- «Ղոզլու 12» մարտական հենակետի բոլոր զինծառայողները, տվել են ակնհայտ կեղծ ցուցմունքներ՝ մերժելով այն փաստը, որ իրենք եղել են նշված սպանության ականատեսները: Նրանց ցուցմունքների կեղծ լինելը ապացուցվում է խծուծների դատաձգաբանական թիվ 25201003 փորձագիտական եզրակացությամբ, համաձայն որի՝ 7 (յոթ) զինծառայողների՝ Գարեգին Սայադյանի, Արման Մնացականյանի, Հայկ Նազարյանի, Արթուր Մկրտչյանի, Ադիբեկ Հովհաննիսյանի, Մխիթար Մխիթարյանի և Հարութիկ Կիրակոսյանի դեմքերի տարբեր մասերից վերցված խծուծներում հայտնաբերվել են կրակոցի լրացուցիչ գործոնների արգասիքների մեջ մտնող պղնձի մետաղացման հետքեր, որոնք վկայում են այն մասին, որ Ա. Նազարյանի վրա կրակոցի արձակման պահին նրանք եղել են դեպքի վայրում, այլ կերպ ասած՝ ականատես վկաներ են: Քննիչները չեն հարցաքննել սույն եզրակացության հեղինակներին, եզրակացությունից հետեւություններ չեն արվել մեղադրական եզրակացությունում:

Հաշվի առնելով նշված փաստի կարևորությունը՝ տուժող կողմը միջնորդել է դատակոչել ու հարցաքննել թիվ 25201003 փորձագիտական եզրակացության հեղինակներին՝ պարզաբանելու համար, թե մարդու մարմնի վրա որքա՞ն ժամանակ կարող են պահպանվել կրակոցի արգասիքները, ինչպե՞ս են դրանք հեռացվում, ինչքա՞ն ժամանակում, սակայն այս միջնորդությունը նույնպես դատարանի կողմից անհիմն մերժվել է՝ հղում կատարելով քննիչ Լ. Պետրոսյանի ցուցմունքներին, որոնք, սակայն, չեն կարող հավակնել դատաձգաբանի մասնագիտական գնահատական լինելուն եւ, հետեւաբար, ընդունվել որպես այդպիսին:

-2- Գործում առկա է մի թղթի կտոր, որն իբր գրված է Թ. Սարուխանյանի կողմից և որում իբր վերջինս խնդրում է իր մահվան մեջ ոչ մեկին չմեղադրել: Դեպքից կարճ ժամանակ անց, ծանոթանալով այս թղթի կտորի պարունակությանը, Լենա Սարուխանյանը հայտարարեց, որ դա իր որդու ձեռագիրը չէ, սակայն նախաքննական մարմինը մինչև վերջ այս թղթիկը ներկայացնում է որպես ապացույց: Այս թղթի կտորը քննիչը փորձագետին է ուղարկել օրենքի խախտումով, քանի որ այն ըստ օրենքի չի առգրավվել, չի զննվել և պարզ չէ, թե ի՞նչ պայմաններում է պահվել 1 ամիս և ինչպե՞ս է հայտնվել քննիչի մոտ:

-21- Ըստ քրեական գործի նյութերի՝ մահը վրա է հասել ժամը 23:00-ի սահմաններում: Սակայն, երբ նույն զորամասում ծառայող զինվորներից մեկի մայրը հանդիպել է Օհանջանյանի ծնողներին, նա հայտնել է, որ օգոստոսի 30-ին ժամը 21:00-21:10-ի սահմաններում զորամասից զանգահարել է իր որդին ու հայտնել, որ Տիգրանը մահացել է: Հետագայում արդեն նախկին զինծառայողը հերքել է նման զանգի գոյությունը, սակայն Օհանջանյանի ծնողների պահանջով հրապարակվել է նրա հեռախոսից տվյալ օրը կատարված զանգերի ցուցակը, ինչը և հաստատել է մոր հետ ունեցած խոսակցության փաստը: Այս հանգամանքին նախաքննական մարմինը չի ցանկանում անդրադառնալ, քանի որ դեպքի իրական ժամը ներկայացնելու դեպքում գործով բոլոր վկաների ցուցմունքները կկորցնեն արժանահավատությունը:

Չի կատարվում գործողություններ քննության ժամանակ հայտնաբերած կանոնակարգի խախտումները վերհանելու վերաբերյալ

-5- Մեջլումյանի ցուցմունքից պարզվում է, որ 2000թ.-ի սեպտեմբերի 25-ին, ժամը 03:00-ի սահմաններում ճաշարան են մտել Վ. Մխիթարյանը և Ա. Հակոբյանը, ինչից հետո ինքը՝ Մեջլումյանը, և Ա. Անդրեասյանը ճաշարանից գնացել են շտաբ՝ իրենց զենքերը հանձնելու նպատակով: Այս ցուցմունքից բխում են մի խումբ կարևոր հարցեր՝ կապված ներքին զինվորական կանոնակարգի հետ, որոնց շուրջ քննություն չի կատարվել: Այսպես. չի պարզվել, թե ի՞նչ իրավունքով են Մեջլումյանն ու Անդրեասյանը զենքով մտել ճաշարան: Չի պարզվել, թե ո՞վ է եղել այս ժամապահների վերակարգի պետը, որո՞նք պետք է լինեին պետի պարտականությունները նշված զինծառայողների հերթապահության ավարտից հետո: Ինչու՞ նրանց ոչ ոք չի ուղեկցել, ինչու՞ ոչ ոք չի հրամայել, չի պարտադրել նրանց հերթապահության ավարտից անմիջապես հետո հանձնել զենքերը, որտե՞ղ էին գտնվում այս պահին ճաշարանի, դասակի, վաշտի և գումարտակի պատասխանատուները, հերթապահները:

-5- Իր ցուցմունքում վկա Հունան Ծավարշյանը նշում է, որ սեպտեմբերի 25-ին, ժամը 03:00-ի սահմաններում գնացել է շտաբ, ստացել ինքնաձիգը, որից հետո դուրս է եկել և, գնալով ավտոպարկ, ընդունել այստեղի ժամապահությունը: Ժամապահությունն ընդունելուց հետո և մինչև կրակոցը լսել է մոտ 7-8 հոգու ոտնաձայներ, բայց ոչ ոքի դեմքը չի տեսել և ոչ ոքի հետ չի խոսել: Նախաքննական մարմինն այդպես էլ չի պարզել, թե ովքե՞ր էին վկա Ծավարշյանի կողմից նշված 7-8 զինծառայողները, ի՞նչ գործ ունեին նրանք գիշերվա այդ ուշ ժամին դրսում: Միաժամանակ մենք Ծավարշյանի ցուցմունքից հասկանում ենք, որ նա խախտել է ներքին մարտական հերթապահության կանոնակարգը. նա իրավունք չուներ առանց վերադասի ուղեկցության ստանալ զենք, ինքնուրույն գնալ ավտոպարկ և ստանձնել այնտեղի ժամապահությունը:

Մատնահետքեր

Քրեադատավարական պրակտիկայում որևէ անձի կատարած հանցագործության թիվ մեկ ապացույցը սպանության գործիք հանդիսացող սառը զենքի կամ հրազենի վրա հանցագործի մատնահետքերի հայտնաբերումն է: Այս հանգամանքով պայմանավորված՝ կոռումպացված նախաքննական մարմինը, որը, սպանությունները կոծկելով, դրանք ներկայացնում է որպես ինքնասպանություններ, կամ, իրական հանցագործին ազատ արձակելով, սպանությունը բարդում է այս կամ այն անմեղ զինվորի վրա, չի կարող թույլ տալ, որպեսզի սպանության գործիքի վրա պահպանվեն հանցագործություն կատարած անձի մատնահետքերը: Սրանով է պայմանավորված այն փաստը, որ շատ դեպքերում սպանության գործիքի վրա մատնահետքեր չեն լինում, կամ դրանք չեն հայտնաբերվում. սա խոսուն վկայություն է այն բանի, որ գործով կատարվում է ակնհայտ կեղծ քննություն: Վերջին տասը տարիների ընթացքում հայտնի չէ թեկուզ մեկ դեպք, երբ սպանության գործիքի վրա հայտնաբերվեն մատնահետքեր և այդ փաստը դրվի մեղադրանքի հիմքում:

-5- Համաձայն N23870003 դատաձգաբանական-դատահետքաբանական՝ զենքի ու գլխարկի փորձաքննության «Մատնադրոշմային հետազոտություն» կետի՝ սպանության գործիք հանդիսացող N1181849 ինքնաձիգի և նրա պահունակի վրա մատնահետքեր չեն հայտնաբերվել: Այս փաստը արժանի իրավական գնահատականի չի արժանացել նախաքննական մարմնի կողմից:

-3- Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել է «РАПИРА» ածելի, որով, ըստ քննիչի, Տ. Համբարձումյանը ինքնասպան է եղել՝ կտրելով իր ձախ ձեռքի արյունատար անոթները: Թիվ 24661102 դատահետքաբանական փորձաքննության մեջ ասվում է. «փորձաքննությամբ ներկայացված ածելու վրա պապիլյար գծանախշերի հետքեր (մատնահետքեր) չկան»: Մատնահետքերի բացակայությունը վկայում է այն մասին, որ դրանք ոչնչացվել են կա՛մ մարդասպանի, կա՛մ նախաքննական մարմնի կողմից: Այն փաստը, որ մինչ օրս գործով չկան կասկածյալներ և մեղադրյալներ, ցույց է տալիս, որ առավել մեծ հավանականությամբ՝ մատնահետքերը ոչնչացվել են հենց նախաքննական մարմնի կողմից:

-8- Դեպքի հաջորդ իսկ օրը՝ 24.02.2012թ.-ին, քննիչ Մադաթյանը քննչական հանձնարարություն է տալիս երևանյան իր գործընկերներին, որպեսզի հանգուցյալ Ա. Ադիբեկյանից վերցնեն մատնահետքեր (գ.հ.1, թ.39/1): Բնականաբար այս մատնահետքերը պետք է համեմատվեին դեպքի վայրում հայնաբերված, սպանության պահին՝ իբր Ա.Ադիբեկյանի ձեռքին գտնվող ՊԳ-490 ինքնաձիգի վրա ենթադրաբար առկա մատնահետքերի հետ: Սակայն քննիչը մատնահետքաբանական փորձաքննություն չի նշանակում և ընդհանրապես վերը նշված զենքի շուրջ որևէ քննություն չի կատարում: Այսպիսով, անհայտ են մնում այն հարցերի պատասխանները, թե արդյո՞ք ՊԳ-490 ինքնաձիգը սպանության պահին եղել է հանգուցյալի ձեռքին, եթե այո, ապա ու՞մ վրա է կրակել Ա. Ադիբեկյանը, կրակե՞լ է արդյոք, եթե նա չի կրակել, ապա իրականում ո՞վ է կրակել, ո՞ւմ մատնահետքերն էին զենքի վրա: Ասվածը կարևորվում է նրանով, որ, համաձայն Իգնատ Ենգիբարյանի ցուցմունքի, ինքը, մոտ տարածությունից կրակոցի ձայն լսելով, արագ մոտեցել է թիվ 1 դիտակետին, տեսել հրազենային վնասվածք ստացած, գետնին ընկած Ա. Ադիբեկյանին, ինչից հետո կրակել է օդ, որպեսզի ընկերներին դեպքի վայր մոտենալու ազդանշան տա: Տարօրինակն այն է, որ թե՛ դեպքի օրը և թե՛ դրանից

օրեր անց վկաները «չեն կարողանում» վերհիշել, թե դեպքի պահին քանի՞ մենահատ կրակոցի ձայն են լսել, և բոլորն անխտիր նշում են՝ «մեկ կամ երկու»: Ակնհայտ է, որ առաջին իսկ օրը կատարվել է ևս մեկ հանցագործություն. դեպքի վայրից ոչ մի պարկուճ չի հայնաբերվել, ինչի համար քննչական գործողություններ չեն կատարվել:

-1- Փորձագետ-մատնահետքաբանը Արտակ Նազարյանի զենքի և փամփշտատուփի վրա որևէ մատնահետք չի հայտնաբերել, ինչն ակնհայտ ապացույցն է նրա, որ մատնահետքերը սրբվել են մարդասպանի կամ քննիչի կողմից: Սա, մի շարք փաստերի հետ միաժամանակ, համատեղ վերլուծելիս, ցույց է տալիս, որ Արտակ Նազարյանն ինքնասպան չի եղել, և որ նրա ինքնաձիգը չի հանդիսացել սպանության գործիք: Ինչպես մեղադրող Հ. Հարությունյանը, այնպես էլ գործով երկրորդ քննիչ Լ. Պետրոսյանը, դատարանում հայտարարում էին, որ մատնահետքեր հայտնաբերվել են, սակայն՝ համեմատության համար ոչ պիտանի: Նրանք ընդամենը շահարկում էին փորձագետի գրած տերմինը. այն է՝ զենքի վրա նույնացման համար պիտանի որևէ մատնահետք չի հայտնաբերվել, հայտնաբերվել են միայն յուղի հետքեր:

-2- Համաձայն թիվ 07941103 դատաձգաբանական փորձագիտական եզրակացության՝ ո՛չ Թ. Սարուխանյանի՝ սպանության գործիք հանդիսացող ինքնաձիգի, ո՛չ ամրացված փամփշտատուփի և ո՛չ էլ սվին դանակի վրա մատնահետքեր չեն հայտնաբերվել: Դրանից հետևում է, որ կա՛մ այդ երկու զենքերի վրայից մատնահետքերը ոչնչացրել է մարդասպանը, կա՛մ մատնահետքերը ոչնչացրել է նախաքննական մարմինը՝ սպանությունն «ինքնասպանություն» որակելու նպատակով:

Ռազմական ոստիկանությունում վկաների անօրինական պահում

Ըստ ՀՀ Սահմանադրության, անձին ազատությունից կարելի է զրկել միմիայն դատարանի՝ ուժի մեջ մտած դատավճռով: Սակայն, զինդատախազությունը, ՔԾ, ՌՈ մարմինները կոպտորեն խախտում են օրենքը և յուրաքանչյուր հանցագործության դեպքում իրենց ցանկությամբ N թվով վկաներ են բերում և կալանքի տակ պահում ՌՈ-ում: Սույն հետազոտության մեջ նշված բոլոր գործերով դեպքերից հետո ականատես վկաները կամ, եթե դա տեղի է ունեցել մարտական հերթապահության ընթացքում, ապա մարտական հենակետի ողջ անձնակազմը, ապօրինաբար տեղափոխվում է ՌՈ և պահվում մեկուսարանում այնքան ժամանակ, որքան դա անհրաժեշտ է քննիչ-ոստիկաններին՝ վկաների վրա ճնշում գործադրելու և նրանցից ցանկալի ցուցմունքներ կորզելու համար: Այս մեթոդը կիրառվում է անպայման, բոլոր գործերում: Միայն այս մեթոդով են նրանք կարողանում իրենց համար ցանկալի, իրականությանը հակասող կեղծ ցուցմունքներ կորզել վկաներից և կոծկել սպանության գործերը: Նկատենք նաև, որ նման պայմաններում վերանում է «վկա» հասկացությունն այն իմաստով, որով տրվում է օրենքի մեկնաբանությունը: Այսինքն, ազատությունից զրկված, ծեծված, խոշտանգված, նվաստացված զինվորը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ տուժող: Նշենք նաև, որ վկայի պատմածներն, ըստ օրենքի, կարելի է ցուցմունք ճանաչել միայն այն դեպքում, երբ վերջինս դրանք տվել է առանց որևէ ճնշման՝ անկաշկանդ: Ենթադրել, որ կալանքի տակ գտնվող անձն անկաշկանդ է՝ ուղղակի անհեթեթություն է: Մինչդեռ, բոլոր գործերով դատավորները քննության չեն առնում վկաների պատմածներն այն մասին, որ իրենց տարել և պահել են ՌՈ-ի մեկուսարաններում: Դրա հետ մեկտեղ, եթե, այնուամենայնիվ, վկան ասում է, որ իր վրա ճնշում է գործադրվել, դատավորները անտեսում են այս

հայտարարությունը և օրենքի համաձայն անմիջապես համապատասխան մարմիններին այս հայտարարությունը փոխանցելու փոխարեն՝ լռեցնում են վկային, հարցնում, թե արդյո՞ք այս պահին անկաշկանդ է, թե՞ ոչ, և, քանի որ վկաները ասում են այո, իրենք անկաշկանդ են, առաջարկում են նրանց պատմել ճշմարտությունը: Սակայն, երբ վկան փորձում է պատմել ճշմարտությունը, դատավորները նրան կրկին լռեցնում են և տեղեկացնում, որ իրենց դատաքննական ցուցմունքը չի համապատասխանում նախաքննական ցուցմունքին, այսինքն, երկու ցուցմունքներից մեկը կեղծ է, և անկախ նրանից, թե որն է կեղծ, նրանք կպատժվեն կեղծ ցուցմունք տալու համար: Վկաները, չունենալով իրավական կրթություն, պարզունակ մտածողությամբ եզրակացնում են, որ եթե հայտարարեն, որ իրենց ոստիկանությունում ծեծել են, ապա որևէ կերպ դա չեն կարողանա ապացուցել, կհայտնվեն է՛լ ավելի ծանր իրավիճակում և այս պարզ պատճառով չեն համարձակվում ասել իրականությունը՝ այն որ իրենց դաժանորեն ծեծել, խոշտանգել են:

Սա մի ամբողջական բացահայտ հանցագործ շղթա է, առանց որի նախաքննական մարմնի համար չափազանց դժվար կլիներ գործերը կոծկել: Բոլոր այն դեպքերում, երբ կողմերից մեկը դատարանում հանդես է գալիս այս հանցագործության դեմ բողոքով, նախաքննական մարմինը կամ մեղադրող դատախազը հայտարարում են, թե իբր զինվորներին կալանավորել են ոչ թե քննչական մարմինները՝ դատախազի ցուցումով, այլ իբր Զ/Մ-ի հրամանատարը, և ներկայացնում են դա «ապացուցող» կեղծ տեղեկանքներ՝ հետին թվով գրված, առանց ծառայական քննության արդյունքների, թե կոնկրետ ի՞նչ հանցանք է կատարել այս կամ այն զինվորը: Ասենք, որ անհավանական է, որ նույն օրը եւ նույն ժամին տասից ավելի զինվորներ կատարեն ծանր հանցանք, ինչի համար նրանց պետք էր զրկել ազատությունից՝ առանց քննություն կատարելու:

-13- 2008 թ.-ին Նարեկ Գալստյանի հարազատներին տեղեկացրել են, որ սպանության գործով թվով 7 վկաներ կամ կասկածյալներ տարվել ու պահվել են Գորիսի ռազմական ոստիկանությունում: Սա երևում է նաև շարքային զինծառայող վկաների ցուցմունքներից: Սակայն գործում չկա ոչ մի պաշտոնական փաստաթուղթ այն մասին, թե կոնկրետ որքա՞ն զինծառայող է տարվել ու պահվել Գորիսի ռազմական ոստիկանության մեկուսարանում, չկան նրանց անուն-ազգանունները, չի նշվում, թե ի՞նչ ժամկետով են նրանք պահվել այնտեղ: Այսպիսով, կա՛մ նրանք ապօրինի են պահվել ռազմական ոստիկանությունում, ինչը քրեորեն պատժելի հանցանք է, կա՛մ զորամասի հրամանատարին ներկայացված պահանջագրերի երկրորդ օրինակը ոչնչացվել է. քննիչը վկաներին բերման ենթարկելու համար պարտավոր է պահանջագիր ներկայացնել զորամասի հրամանատարին, որի մեկ օրինակը մնում է հրամատարի մոտ, իսկ մյուսը՝ պարտադիր կցվում է քր. գործին:

-11- Էդվարդ Ալավերդյանի սպանությունից հետո նրա համածառայակիցներից ոմանց տեղափոխել են Ստեփանակերտի ՌՈ բաժին և շուրջ 10 օր պահել անազատության մեջ: Ըստ ԼՂՀ ՊԲ հրամանատար Մ. Հակոբյանի տեղեկանքի՝ սույն գործով 7 անձինք 10 օր շարունակ պահվել են Ստեփանակերտի ՌՈ բաժնի մեկուսարանում: Միաժամանակ, նշված զինծառայողներից զատ, ՌՈ-ում է պահվել ևս շուրջ 10-15 զինծառայող, ում թիվն ու ինքնությունը պարզել հնարավոր չեղավ:

-8- Ըստ Տավուշի ՌՈ բաժանմունքի պետի տեղակալի ցուցմունքի՝ Իգնատ Ենգիբարյանին

ՌՈ են բերել ու մեկուսարանում պահել զորամասի հրամանատարի հրամանի համաձայն, քանի որ Իգնատը խախտել էր մարտական հերթապահության կանոնները: Սակայն, գործում չկա համապատասխան գրություն նշվածի վերաբերյալ: Եվ, բացի այդ, պարզ չէ, թե կոնկրետ ի՞նչ զանցանք է կատարել Ենգիբարյանը: Միաժամանակ, սա ոչ մի կերպ չի համընկնում այն փաստի հետ, որ ՌՈ են բերել հենակետի բոլոր ժամկետային զինծառայողներին և էլի այլ զինվորների՝ այլ դիրքերից:

-1- Դատաքննության ընթացքում ապացուցվեց, որ գործով վկաներ Արման Մնացականյանը, Արթուր Մկրտչյանը, Արտակ Հովհաննիսյանը, Հայկ Նազարյանը և այլոք 23 օր շարունակ պահվել են Տավուշի մարզի Բերդ քաղաքի ՌՈ բաժանմունքի մեկուսարանում՝ կալանված վիճակում: Տուժող կողմը միջնորդեց քրեական գործ հարուցել նախաքննական մարմնի նկատմամբ՝ անձին ազատությունից ապօրինաբար զրկելու հոդվածով, քանի որ, ըստ ՀՀ Սահմանադրության, անձին կարելի է կալանքի տակ պահել միմիայն դատարանի ուժի մեջ մտած դատավճռի համաձայն: Զորամասի նախկին հրամանատարը դատախազի միջնորդությամբ ներկայացավ դատարան և հայտնեց, որ այդ բոլոր զինծառայողներին կալանավորել են իր հրամանով՝ 5-23 օրով, քանի որ նրանք բոլորը խախտել են մարտական հերթապահության կանոնները: Տուժող կողմի հարցին, թե կոնկրետ ի՞նչ կանոններ են խախտել նշված անձինք և որտե՞ղ են հրամանատարի ծառայողական քննության նյութերը, որոնց հիման վրա կալանավորվել են զինծառայողները, հրամանատարը պատասխանել է, որ ինքը կատարել է բանավոր քննություն և նյութեր չկան: Փաստորեն, ոստիկանությունը առանց գրավոր հիմքի կալանավորել է անձանց, ինչը քրեորեն պատժելի արարք է:

-8- Վկաներից ցուցմունքները վերցվել են օրենքի խախտումով: Վկաներին պահել են Բերդ քաղաքի ՌՈ-ում: Այս փաստը կոծկելու նպատակով՝ քննիչները գրում են, թե իբր վկային հարցաքննել են Բերդ քաղաքում, թե կոնկրետ որտեղ, չեն նշում, ինչը անօրինականություն է: Ավելին, ցուցմունքը գրել է քննիչը, իսկ հետո ստիպել, որպեսզի զինվորներն այն ստորագրեն:

-2- Դատարանում որպես վկա հարցաքննված Սևակ Ավանեսյանը հրաժարվեց իր նախաքննական ցուցմունքից՝ հայտարարելով, որ դրանք իրենից կորզվել են բռնության և ահաբեկման ճանապարհով: Համաձայն Ս. Ավանեսյանի ցուցմունքի՝ Ստեփանակերտի ՌՈ բաժին են տարվել Թ. Սարուխանյանի դասակի բոլոր 24 ժամկետային զինծառայողները: Իրեն և իր ծառայակից ընկերներին 10 օր պահել են ՌՈ-ում՝ կալանքի տակ: Առաջին 4-5 օրերի ընթացքում իրեն հարցաքննել են 8-10՝ իրեն անհայտ անձինք, ստիպել են կեղծ ցուցմունք տալ իր անմեղ ընկերների դեմ: Այս ընթացքում նշված անձինք իրենից կորզել են 4-5 ցուցմունք:

Նշենք սակայն, որ թիվ 91000511 քր. գործում կա Ս. Ավանեսյանի տված ընդամենը մեկ ցուցմունք: Դեռ առաջին ատյանի դատարանում ընթացող քննության ժամանակ տուժող կողմը, հենվելով Ս. Ավանեսյանի՝ վերը նշված ցուցմունքի վրա, հաղորդում տվեց նախաքննության ընթացքում նախաքննական մարմնի կատարած հետևյալ հանցագործությունների մասին.

ա. ապօրինաբար անձին ազատությունից զրկելը,
բ. վկային կեղծ ցուցմունք տալուն պարտադրելը,

գ. վկային ահաբեկելը, ծեծելն ու խոշտանգելը,
դ. փաստաթղթերի պարտակումը, ոչնչացումը,
ե. խմբակային հարցաքննությունը, հարցաքննողների կողմից հարցաքննվողին իրենց անձը չներկայացնելը:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 6-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների նախաքննությունը (ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքի 149, 150, 1541, 1542 հոդվածներով) կատարում են հատուկ քննչական ծառայության քննիչները: Սակայն օրենքի խախտումով սույն փաստով հետաքննությունը հանձնարարեցին ՀՀ ՊՆ ՔԾ թիվ 1 կայազորային քննչական բաժնին:

Ըստ 05.10.2012թ.-ի N1287 գրության՝ տուժողի հաղորդման հիման վրա քննություն է կատարվել ՀՀ ՊՆ թիվ 1 կայազորային քննչական բաժնի քննիչ Ն. Ավետիսյանի կողմից, որն էլ իր որոշմամբ մերժել է քրեական գործի հարուցումը՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ: Քննիչ Ավետիսյանն իր որոշման 3-րդ էջում գրում է. «...Պահակային ծառայություն կրելու կանոնները խախտելու համար 2011թ.-ի փետրվարի 12-ին թիվ 46677 զորամասի հրամանատարի հրամանով ենթարկվել է կարգապահական տույժի՝ 10 օր կալանքի, և տեղափոխվել է Ստեփանակերտի ՌՈ բաժնի կարգապահական մեկուսարան»: Խոսքը գնում է Սևակ Ավանեսյանի մասին: Մինչդեռ նույն Սևակ Ավանեսյանն իր ցուցմունքում նշել է, որ իր հետ միասին ՌՈ են տարվել նաև իրենց դասակի բոլոր 24 զինծառայողներն, ովքեր 10 օր պահվել են ՌՈ մեկուսարանում: Այս մասին վերոհիշյալ նյութերում ոչինչ չի ասվում: Հարց. արդյո՞ք այդ նույն օրը, այդ նույն ժամին բոլոր 24 զինվորները խախտել էին պահակային ծառայություն կրելու կանոնները:

-1- Ըստ 21127 զորամասի նախկին հրամանատար Սեյրան Ղազարյանի հրամանների քաղվածքների, մեկուսացման գրությունների, թիվ 91 հրամանագրքի, մեկուսարանում պահվողների թիվ 123 հաշվառման մատյանի, ինչպես նաև ՀՀ ՊՆ 21127 զորամասի հրամանատար, գնդապետ Հ. Ամիրխանյանի՝ դատարանին հասցեագրված, «գաղտնի» նշումով 20.10.2012թ. թիվ 0147 գրության՝ հրամանատարի հրամանով Ա. Նազարյանի սպանությունից հետո «ներքին ծառայության կանոնագրքի կանոնները խախտելու համար» 6-23 օրով կալանավորվել է 14 զինծառայող: Նշված զինծառայողները ՀՀ ՊՆ 21127 զորամասի հրամանատար Ս. Ղազարյանի կողմից ենթարկվել են «մեկուսացում և պահում կարգապահական մեկուսարանում» տեսակի կարգապահական տույժի՝ ՀՀ կառավարության 1996 թվականի օգոստոսի 12-ի թիվ 247 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնադրության հիման վրա: Մինչդեռ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով»:

Նույն երաշխիքները սահմանում է նաև Մարդու իրավունքների և հիմնարար

ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածը: ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: ՀՀ ՊՆ 21127 զորամասի հրամանատար Ս. Ղազարյանը իրավասու չէր վերը նշված զինծառայողներին ազատությունից զրկել՝ մեկուսացնել կարգապահական մեկուսարանում, քանի որ նա գործել է ոչ թե օրենքի հիման վրա, օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում, ինչպես պահանջում են ՀՀ Սահմանադրությունը և ՀՀ միջազգային պարտավորությունները, այլ ղեկավարվել է վերջիններիս չհամապատասխանող ՀՀ Զինապարտության մասին օրենքով:

Կեղծ ցուցմունքներ տալու հարկադրանք, կորզում

Քննիչները հաճախ վկաներից կեղծ ցուցմունքներ են կորզում խաբեությամբ՝ հիմնականում երկու ճանապարհով.

ա. վկան պատմում է մի բան, քննիչը արձանագրում է մեկ ուրիշ բան, այնուհետև վկային հրամայում է ցուցմունքի վերջում գրել, թե իբր ինքը ծանոթացել է գրվածին, գրվածը ճիշտ է և ստորագրել՝ թույլ չտալով, իրականում, որպեսզի վկան ընթերցի գրածը,

բ. լինում են դեպքեր, երբ քննիչը վկայի ցուցմունքը ոչնչացնում է, տեղը գրում է նոր ցուցմունք՝ կեղծելով վկայի ձեռագիրը, գրում և ստորագրում է նրա փոխարեն և այն կցում գործին:

Սովորաբար նման վկաներին քննիչը չի դատակոչում:

-13- Գործով ապացուցված է, որ սպանությունից մոտ 30-60 րոպե առաջ Նարեկ Գալստյանը զանգահարել է տուն, քրոջը և հայտնել, որ իր համաքաղաքացի և ընկեր Վլադիմիր Ալավերդյանի հետ միասին, իր ավտոմեքենայի մեջ նստած, վեճի է բռնվել («ռազբորկա» է անում) մի խումբ տղաների հետ: Միաժամանակ Նարեկը քրոջը հարցրել է հարևան Վալոդիկի հեռախոսի համարը (տե՛ս Արևիկ Գալստյանի ցուցմունքը՝ գ.հ. 2, թ. 15-17): Եղբոր ակնարկներից կռահելով, որ նրան վտանգ է սպառնում, Արևիկն առաջարկել է արթնացնել հորը, որպեսզի եղբայրը նրան պատմի իր խնդրի մասին, սակայն Նարեկը մերժել է և ասել, որ քույրը հորն արթնացնի միայն այն դեպքում, եթե ինքն առաջիկա կես ժամվա ընթացքում նորից չզանգահարի: Նարեկն այդպես էլ չի զանգահարել:
Նարեկ Գալստյանը ֆիզիկապես շատ ուժեղ էր, ըմբշամարտիկ, արեւելյան մարտարվեստի սպորտի վարպետի կոչում ուներ, ագրեսիվ էր, պատրաստ էր «կոկորդ կրծել», եթե որևէ մեկը փորձեր իրեն նեղացնել: Պատահական չէ, որ զորամասում նա կրում էր «Խախտ» (խախտված բառից) մականունը: Այն փաստը, որ Նարեկն ստիպված էր զանգել տուն և հայտնել իր խնդրի մասին, վկայում է, որ նա անկարող էր դիմակայել իր դիմաց կանգնած թշնամիներին, որոնք մեծաթիվ էին (4-ից ավելի):
Գործով առկա փաստերը վկայում են այն մասին, որ Նարեկի կողմից նշված «ռազբորկան» կապված էր նրա քրոջ՝ Արևիկի հետ: Բոլոր «ռազբորկա» անողները Վանաձոր քաղաքից էին և, Արևիկի բարոյական նկարագրին անդրադառնալով, ձգտում էին նվաստացնել՝ «կոտրել» Նարեկին: Ամենայն հավանականությամբ, վանաձորցիներն ունեին

տեղեկություններ, որոնք ինչ-որ ճանապարհով (դա պետք է պարզի նոր նախաքննությունը) ստացել էին Նարեկի հարևան Վալոդիկից: Այս ամենը պարզելով՝ քննիչ Հակոբջանյանը Արևիկից ցուցմունք վերցնելիս շանտաժի է ենթարկում նրան և պահանջում հրաժարվել նախկինում հորը պատմածից: Իր ցուցմունքում Արևիկ Գալստյանը նշում է, թե եղբայրը «ռազբորկայի մասին իրեն ոչինչ չի պատմել և որ դա իր հարազատների կողմից հորինված է...»: Սա քննիչ Հակոբջանյանի կողմից ցինիզմի վառ դրսևորում է, պաշտոնական դիրքի չարաշահում, ճարահատյալ կեղծիք, որպեսզի կոծկվի սպանության անհերքելի փաստը: Արևիկ Գալստյանին այս ցուցմունքը թելադրելիս, քննիչը հաշվի չի առել այն փաստը, որ Նարեկ Գալստյանի ծնողներն այդ ամենի մասին լսել են իրենց դստրից: Խոսակցության պահին նրանք քնած են եղել և, եթե Արևիկը նրանց չհայտներ եղբոր զանգի մասին, վերջիններիս մտքով էլ չէր անցնի, որ սպանությունից առաջ Նարեկը զանգահարել է տուն:

Նարեկի հարազատները մի քանի տասնյակ դիմում-բողոքներում զինդատախազությանը տեղեկացրել են, որ սպանությունից ժամեր անց, մայիսի 10-ի առավոտյան իրենց տուն է զանգել Նարեկի ընկեր Վլադիմիր Ալավերդյանը, սպանվածի հորը՝ Սասուն Գալստյանին, խնդրել է օգնել, որպեսզի ինքը 2-3 օրով գա տուն՝ Ալավերդի, քանի որ «շատ բաներ ունի պատմելու» Սասունին դեպքի մասին: Սպանությունը բացահայտելու փոխարեն քննիչը փորձել է վարկաբեկել Նարեկ Գալստյանի ծնողներին՝ նրանց ներկայացնելով որպես ստախոս և շանտաժիստ: Չնայած քննիչի ջանքերին՝ 3 կարևոր հարց այնուամենայնիվ մնում են անպատասխան.

ա. եթե Նարեկ Գալստյանը խնդիրներ չուներ, ապա ինչու՞ այդ ուշ ժամին քնած չէր:
բ. ինչո՞ւ էր այդ ուշ ժամին ցանկանում զանգահարել Վալոդիկին:
գ. Ինչո՞ւ նա չզանգեց Վալոդիկին:

Վերը նշվածից ակնհայտ է, որ Վլադիմիր Ալավերդյանը եղել է դեպքի ականատես վկան և կարող էր անչափ կարևոր փաստեր հաղորդել դեպքի վերաբերյալ:

Սակայն Հակոբջանյանը նրան հարցաքննել է միայն դեպքից 1 ամիս 8 օր անց՝ ստիպելով տալ կեղծ ցուցմունք այն մասին, որ

ա. դեպքի պահին ինքը Նարեկի կողքին չի եղել,
բ. դեպքի մասին ոչինչ չգիտի,
գ. ինքը բջջային հեռախոս չունի,
դ. ինքը Նարեկ Գալստյանի հորը զանգահարել է միայն ցավակցելու նպատակով:

Քննիչը չի տալիս ակնհայտ հարց. եթե Վլադիմիր Ալավերդյանը բջջային հեռախոս չուներ, ապա ինչպե՞ս է զանգել Նարեկի հորը, ո՞ւմ հեռախոսով:
Հարազատների բազմաթիվ դիմում-բողոքներից հետո նախաքննական մարմինը ստիպված եղավ վերծանել 094-61-79-88 հեռախոսահամարը, և վկայի կեղծիքը բացահայտվեց: Այս հեռախոսահամարը նրա մոտ է եղել ինչպես դեպքից առաջ, այնպես էլ՝ հետո: Դրանով նա զանգահարել է Նարեկի հորը՝ Սասունին, դրանով Սասունը և նրա դուստր Արևիկը զանգել են Վլադիմիրին: Մասնավորապես, 10.05.2008 թվին ժամը 16:54-

ին նա զանգել է Արևիկ Գալստյանին (գ.հ. 1, թ. 130), դեպքից առաջ և դեպքից հետո 3-ական անգամ Արևիկն է զանգել Վլադիմիրի՝ 094-61-79-88 հեռախոսահամարին:

Ակնհայտ սուտ ցուցմունք տալու համար քրեական օրենսգրքով նախատեսված է քրեական պատասխանատվություն, սակայն քննիչը չի պատժել Վլադիմիր Ալավերդյանին, քանի որ, մնում է ենթադրել, որ վերջինս կեղծ ցուցմունք է տվել հենց նրա հրամանով:

2-րդ անգամ հարցաքննելով Վլադիմիրին (գ.հ.2 թ. 18-20)՝ քննիչը չի էլ անդրադառնում այն փաստին, որ նախորդ անգամ վկան կեղծ ցուցմունք է տվել: Այժմ արդեն նոր ցուցմունքից պարզվում է, որ վերոհիշյալ 094-61-79-88 համարից բացի, վկան դեպքի օրը ունեցել է ևս երկու հեռախոսահամար:

– 20- Նույն դիակի դատաբժշկական փորձաքննությամբ Մելիքյանի մարմնի տարբեր մասերի՝ ձեռքերի, ոտքերի, կրծքավանդակի և թիկունքի վրա հայտնաբերվել են քերծվածքներ, կապտուկներ և արնազեղումներ, որոնք առաջացել են մահվանից 0-10 րոպե առաջ: Չցանկանալով արձանագրել ակնհայտ ծեծի և խոշտանգման փաստը՝ քննիչը վկաներից ցուցմունքներ է վերցրել, համաձայն որոնց.

ա. զինվորներից ոչ մեկը չէր կարող ծեծել Մելիքյանին, քանի որ վերջինս ֆիզիկապես բոլորից ուժեղ էր, ըմբշամարտիկ էր, սպորտի վարպետ,

բ. նշված վնասվածքները կարող էին առաջանալ մահամերձ Մելիքյանին վազքով դիտակետից խրամատ տեղափոխելու ճանապարհին՝ խրամուղու պատերին դիպչելու արդյունքում:

-1- Գործով վկաներ Ռաֆայել Էվոյանն ու Սմբատ Սարգսյանը դատարանում հրաժարվեցին իրենց նախաքննական ցուցմունքից ու հայտնեցին, որ գործով քննիչ Լևոն Պետրոսյանն իրենցից խաբեությամբ կորզել է կեղծ ցուցմունք. նրանք հայտնեցին դատարանին, որ քննիչը արձանագրել է ոչ թե այն, ինչ պատմել են իրենք, այլ այն, ինչն իրենք չեն ասել: Քննիչը ցուցմունքում ներկայացրել է կեղծ փաստեր, որոնց մասին վկաները տեղեկություն չեն ունեցել, չեն տեսել և չեն լսել: Քննիչը կարգադրել է իրենց ցուցմունքի տակ գրել, թե իբր ընթերցել են ցուցմունքը, գրված է իրենց բառերից, ճիշտ է, ինչի համար ստորագրել են, սակայն իրականում քննիչը նրանց չի տրամադրել հարցաքննության արձանագրությունը՝ ընթերցելու համար: Չնայած տուժող կողմը միջնորդեց, որպեսզի սույն ցուցմունքների կապակցությամբ նյութեր ուղարկվեն ՀՔԾ և օրենքով նախատեսված կարգով կատարվի քննություն, սակայն, գործով դատավոր Ս. Մարդանյանը, հետաձգելով այս միջնորդության քննարկումը, այդպես էլ չանդրադարձավ հնարավոր հանցագործությանը և առանց որևէ հիմքի որոշեց, որ նշված երկու վկաների տված ցուցմունքները «արժանահավատ» չեն: Այս որոշումն արդեն իսկ հանցավոր է, քանի որ վկաները դատարանին ստորագրություն են տվել, որ քրեական պատասխանատվության կենթարկվեն կեղծ ցուցմունք տալու համար: Դատավոր Մարդանյանը հանցավոր ճանապարհով, կատարելով պաշտոնական դիրքի չարաշահում, փաստը դիտարկել է ոչ իրավական դաշտում. տվյալ դեպքում խոսքը գնում է կոնկրետ փաստի մասին, եթե վկայի ցուցմունքը ճիշտ է, ապա պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի քննիչը, եթե ոչ, ապա վկան՝ կեղծ ցուցմունք տալու համար:

Ճառայողական քննություն

Որպես կանոն, բոլոր դեպքերից հետո տվյալ զորամասի իրավաբանի կամ այլ պատասխանատու սպայի կողմից կատարվում է ծառայողական քննություն: Սակայն, դրանք ունեն զուտ ձևական բնույթ. կամ արտագրվում են նույն զինվորի՝ ոստիկանությանը տրված ցուցմունքներից, կամ արվում են շատ մակերեսորեն ու զգուշավորությամբ, որպեսզի հանկարծ հակասություններ չառաջանան դրանց և քննիչի կատարած քննության միջև: Նշենք, որ ցանկացած դիտավորյալ սպանության դեպքում օբյեկտիվ քննության դեպքում մեծ է հավանականությունը, որ կպարզվի, որ իրենց մեղքի մեծ բաժինն ունեն զորամասի կոնկրետ սպաները՝ վաշտի հրամանատարը, գումարտակի հրամանատարը, զորամասի հրամանատարը, վաշտի, գումարտակի, գնդի օրվա պատասխանատու հերթապահերը: Հասկանալի է, որ նշված սպաները որևէ շահագռգրվածություն չունեն հանցագործությունները բացահայտելու:

-1- Արտակ Նազարյանի սպանությունից հետո, նույն օրը, Գլխավոր շտաբի բարձրաստիճան աշխատակիցներն անցկացրել են ծառայողական քննություն: Այդ պահին նրանք իրենց մոտ ունեին փաստաթուղթ՝ տրված զ/մ-ի հրամանատարի կողմից այն մասին, որ Նազարյանը ինքնասպան է եղել խրամատում: Մինչդեռ դրանից հետո անհայտ անձանց կողմից դեպքի վայրը խրամատից «տեղափոխվել» էր ժայռաբեկորի մոտ: Քննություն անցկացնող ԳԾ աշխատակիցները որևէ կերպ չէին անդրադարձել այս հակասությանը: Ո՛չ նախաքննության, ո՛չ դատաքննության ընթացքում այս հակասությունը չի հարթվել, իսկ որպես վկա դատարանում ցուցմունք տված զորամասի հրամանատարը հայտարարել է, որ պարզապես սխալվել է, չնայած որ այդ տեղեկատվությունը պարունակող երկու հեռագիր է ուղարկվել ԳԾ՝ 40 րոպե ընդմիջմամբ:

Վկաների, ամբաստանյալների խոշտանգում

-1- Այս գործով վկաներ Ադիբեկ Հովհաննիսյանն ու Հարութիկ Կիրակոսյանը դատարանում ցուցմունք տվեցին այն մասին, որ իրենց և Բերդ քաղաքի ՌՈ բաժանմունք տարված մնացած բոլոր զինծառայողներին պարբերաբար դաժան ծեծի ու խոշտանգման են ենթարկել՝ ստիպելով իրենց ընկերների դեմ տալ իրականությանը չհամապատասխանող ցուցմունքներ:

-2- Թորգոմ Սարուխանյանի սպանությունից անմիջապես հետո նրա դասակի բոլոր 24 զինծառայողներին տեղափոխել են Ստեփանակերտի ՌՈ բաժին: Այս մասին իր դատաքննական ցուցմունքում հայտնել է վկա Սևակ Արզումանյանը: Ի պատասխան տուժող կողմի հարցմանը՝ ԼՂՀ ՊԲ հրամանատարը հայտնել է, որ Սարուխանյանի սպանության հետ կպված ոստիկանություն են տարվել 17 զինծառայողներ:

-8- Հաջորդ ցուցմունքում արդեն Իգնատ Ենգիբարյանը հրաժարվում է նախորդ ցուցմունքից՝ հայտարարելով և ներկայացնելով կոնկրետ փաստեր, որ դեպքի օրն իրեն Բերդ քաղաքի ՌՈ բաժանմունք տեղափոխելուց հետո ծեծել են և ստիպել, որպեսզի նա գրի ինքնախոստովանական ցուցմունք: Իգնատ Ենգիբարյանը նախաքննության ընթացքում նշել է, որ իրեն ծեծել են, խոշտանգել, ստիպել են ասել ու գրել, թե իբր ինքն է սպանել Ա. Ադիբեկյանին: Իգնատը տալիս է կոնկրետ իրեն ծեծած, խոշտանգած անձանց անունները: Դրանք են՝ կապիտան Էդմոն Մեհրաբյանը և կապիտան Արմենակ

Ղազարյանը: Չնայած քննիչը ապացուցված է համարել, որ նման բան տեղի չի ունեցել, որ Ենգիբարյանի հետ «աշխատել են», բայց չեն ծեծել, սակայն գործում կա արձանագրություն՝ կազմված Իջևանի ՌՈ բաժնում բժիշկ Վ.Դովլաթյանի կողմից, համաձայն որի՝ Իջևանի ՌՈ ընդունվելու պահին Իգնատ Ենգիբարյանի մարմնի արտաքին զննությամբ նրա թիկունքի մասում կան վերքեր՝ սպիացած և ոչ սպիացած, թիակների վերևի, ձախ բազկի, աջ բազկի շրջանում, պոչուկի վերևի մասում՝ ձախ և աջ ձեռքերի վրա (գ.հ.3, թ.129): Այսինքն, սա ապացույց է նրա, որ իրոք զինվորին ծեծել և խոշտանգել են:

Վկաների ցուցմունքները հաշվի չեն առնվում, իսկ որոշ վկաներ անգամ չեն հարցաքննվում

Հաճախ քննիչները մեղադրական եզրակացություններում չնկատելու են տալիս վկաների ցուցմունքներում առկա կարևոր փաստերը: Հաճախ դրանց շուրջ քննություն չի կատարվում կամ կատարվում է ձևական, միտումնավոր կեղծ, ուղղորդված, մակերեսային քննություն, որով ոչնչացվում է կարևոր փաստը կամ տարբեր պատճառաբանություններով չեն հարցաքննում անհրաժեշտ վկային:

-13- Նարեկ Գալստյանի ահաբեկված ընկեր-զինծառայողները գաղտնի հաղորդել են հորը, որ նույն գումարտակի զինծառայողներ Սարգիս (Արմեն) Խուշաբյանը, Համլետ Ղազարյանը և ոմն քաղաքացիական անձ վեճ են ունեցել Նարեկ Գալստյանի հետ: Ըստ գործի նյութերի, վկա Սարգիս Խուշաբյանը իրոք ծառայել է թիվ 50869 զորամասում, Նարեկ Գալստյանի հետ միևնույն գումարտակում: Իր կցկտուր, 4 տողից բաղկացած ցուցմունքում (գ.հ. 1, թ. 154) Խուշաբյանը ժխտում է Նարեկ Գալստյանի հետ ընդհարվելու փաստը և նշում, թե նախորդ օրերին ու դեպքի օրը պառկած է եղել բուժկետում: Քննիչ Հակոբջանյանին լիովին բավարարում է այս ցուցմունք կոչվածը: Քննիչը չի ստուգում բուժկետի մատյանը, չի հարցաքննում բժշկին և այնտեղ պահվող հիվանդներին, զորամասի զինծառայողներին՝ պարզելու համար, թե կոնկրետ որտե՞ղ է եղել Խուշաբյանը դեպքից առաջ և հետո ընկած մոտակա ժամերին: Զորամասում, որտեղ յուրաքանչյուրն անում է սրտի ուզածը, գնում ուր ուզում է, ոչինչ չի խանգարում, որպեսզի Խուշաբյանը գնա ավտոհավաքակայան և «ռազբորկա» անի: Այս պնդման վառ ապացույցն է անծանոթ (անանուն) քաղաքացիական անձի հայտնվելը զորամասի «ուժեղ հսկվող» տարածքում՝ ավտոհավաքակայանում:

Բացի այդ, իր ցուցմունքներում վկա, ենթասպա Աշոտ Պողոսյանը նշում է (գ.հ. 1, թ. 32-35), (գ.հ. 1, թ. 201-204), որ դեպքի վայրում նա տեսել է բժիշկներ Վարդանին ու Լևոնին, «...թվով մոտ 10 զինվոր, ինչպես նաև մեկ քաղաքացիական հագուստով անձնավորության»: Քննիչը ողջ քննության ընթացքում «չի կարողանում» պարզել քաղաքացիական անձի ինքնությունը: Չի ուզում պարզել, թե ե՞րբ է այդ անձը ներխուժել զորամասի տարածք, ինչո՞ւ էր գիշերվա այս ուշ ժամին կանգնել բենզինի դատարկ հորի դիմաց ու հետևում, թե ինչպես են այնտեղից դուրս բերում Նարեկ Գալստյանին: Այս անձի ինքնությունը պարզելու նպատակով ոչինչ չի արել նաև ռազմական ոստիկանությունը: Ի պատասխան քննիչի հանձնարարականի՝ Գորիսի Ոստիկանության Կայազորի ՌՈ բաժնի պետ Ա. Վանյանն իր գրության մեջ (գ.հ. 2, թ. 41) նշում է, թե «ոմն քաղաքացու» որոնումներն արդյունք չեն տվել: Եվ դա այն դեպքում, երբ միայն ավտոհավաքակայանում այդ «ոմն քաղաքացուն» 10-ից ավելի մարդ է տեսել:

Քննիչը չի կարողացել գտնել ոչ միայն քաղաքացիական հագուստով անձին, այլև Համլետ Ղազարյանին: Ի պատասխան քննիչի հարցման, 50869 զորամասի հրամանատար Վ. Վարդանյանը 01.07.2008 թ.-ի իր գրությամբ հայտնում է, որ զորամասում «Համլետ Ղազարյան անունով զինծառայող չկա» (գ.հ. 1, թ. 153): Բնական է, որ չկա, քանի որ 2-րդ գումարտակի զինծառայող Համլետ Ղազարյանը մինչ այդ զորացրվել էր (ըստ տուժող կողմի): Չցանկանալով սպանությունը բացահայտել՝ քննիչը օգնում է Ղազարյանին զորացրվել, իսկ հետո սկսում է «փնտրել» նրան ու չի գտնում:

Նախաքննության օրինականությունը կասկածի տակ է դնում ոչ միայն տուժող կողմը, այլև 50869 զորամասի հրամանատարությունը: Զորամասի հրամանատարի տեղակալ Կարապետյանի կատարած ծառայողական քննության վրա հիմնվելով՝ զորամասի հրամանատար Վ. Վարդանյանն իր գրության մեջ (գ.հ. 2, թ. 195) նշում է. «...ինչ վերաբերվում է Գորիսի կայազորի քննչական բաժնի կողմից կատարված քննչական եզրակացությանը, ապա այն կատարվել է ոչ օբյեկտիվ և չի համապատասխանում իրականությանը, դա է վկայում և հստակ երևում է լեյտենանտ Գ. Մալխասյանի, շարքայիններ Ս. Դալլաքյանի և Ռ. Միսակյանի բացատրություններում»: Վեց թերթից բաղկացած ծառայողական քննության նյութերն ուղարկվել են Գորիսի կայազորի զինդատախազ Մանուշակյանին, սակայն վերջինս հարկ չի համարել այն կցել քրեական գործին, քանի որ քննիչ Հակոբջանյանը գործել է իր ցուցումով:

-13- Դեպքին հաջորդած օրերին գործով անցնող վկաները բացատրություն և ցուցմունք տալիս նշում էին, որ Նարեկ Գալստյանն «ընկել է» բենզինի հորի մեջ: Այսպես, գործով ականատես վկա Ա. Ավետիսյանն իր բացատրության մեջ (գ.հ. 1, թ. 24) նշում է, որ ինքը վաշտի ավագին ասել է, որ «Նարեկն ընկել է բենզինի հորի մեջ...»: Ըստ վկա Էդվարդ Ավագյանի (գ.հ. 1, թ. 26-27)՝ Նարեկ Գալստյանն ընկել է «բենզինի տարայի մեջ»: Ըստ վկա Ա. Պողոսյանի բացատրության (գ.հ. 1, թ. 32-35)՝ Ա. Ավետիսյանն իրեն ասել է, որ «Խախտը ընկել է բենզինի չանի մեջ...»: Նմանատիպ ցուցմունք են տվել նաև մի շարք այլ վկաներ: Բենզինի հորը ճամփեզրին գտնվող փոս չէր, որի մեջ Նարեկ Գալստյանն անզգուշորեն «ընկներ»:

-12- Անդրանիկի ծնողները դիմում-բողոքներում և ցուցմունքներում նշել են, որ իրենց որդին՝ Անդրանիկ Սարգսյանը, ծառայության վերջին ամիսների ընթացքում տարաձայնություններ է ունեցել իր վաշտի հրամանատար Վարդանյանի հետ, ով մշտապես հետապնդել, նվաստացրել և ահաբեկել է Անդրանիկին: Սակայն քննիչ Խալաթյանը չի բացահայտել ճշմարտությունն ու չի գտել Անդրանիկ Սարգսյանին մարմնական վնասվածքներ հասցրած անձին կամ անձանց:

-7- Դեպքից անմիջապես հետո Մուրադյանի մայրը հայտնել է նախաքննական մարմնին, որ որդին զորամասում ծառայելու ընթացքում, մահվանը նախորդած օրերին ականատես է եղել մի շարք անօրինականությունների: Մասնավորապես, վառելանյութի գողության: Այս մասին տեղեկություններ է ստացել հենց որդուց՝ դեպքից 4-5 օր առաջ, նրա հետ ունեցած հեռախոսազրույցի ժամանակ: Ըստ զինդատախազի հեռուստատեսային ելույթի, քննությամբ պարզվել է, որ հանգուցյալ Վալերիկ Մուրադյանը ականատես է եղել զորամասում տեղի ունեցած բազմաթիվ չարաշահումների, քննությունը շարունակվում է և մեղավորներն անպայման կպատժվեն: Սակայն, ոչ ոք մինչ օրս չի հայտնաբերվել և ոչինչ չի պարզվել:

-5- Նախաքննության ժամանակ տրված ցուցմունքներից պարզվում է, որ դեպքից հետո դեպքի շուրջ միմյանց հետ վիճել են Սարգիս Օհանյանն ու Սիմոն Մուրադյանը: Այս վեճի ժամանակ Մուրադյանն Օհանյանին առաջարկել է գնալ և ամեն ինչ «վիզ առնել»: Այլ կերպ ասած՝ Մուրադյանը Օհանյանին առաջարկել է խոստովանել իր հանցանքը, այն է՝ Արման Հակոբյանի սպանությունը: Բայց կրկին անգամ գործով շահագրգռվածություն ցուցաբերելով՝ նախաքննական մարմինն այդպես էլ խորացված քննություն չի կատարել նաև այս փաստով: Բացի այդ, ըստ Հ. Մեջլումյանի ցուցմունքի, դեպքից շուրջ կես ժամ առաջ ինքը Հակոբյանին տեսել է «զուգարան-ՀԱԿ-ճաշարան» խաչմերուկում՝ անձրևի տակ կանգնած: Նախաքննական մարմինն այդպես էլ չի պարզել կամ, ավելի ստույգ, չի ցանկացել պարզել, թե ինչո՞ւ էր Հակոբյանն այդ ուշ ժամին մեն-մենակ կանգնել անձրևի տակ ու թրջվում:

-5- Նախաքննության ընթացքում մեծ թվով վկաների տված ցուցմունքներում առկա են էական հակասություններ, որոնք այդպես էլ չեն հարթվել: Վկաները լրացուցիչ չեն հարցաքննվել բոլոր անհրաժեշտ դեպքերում, առերեսումներ չեն կատարվել, չեն ստուգվել դասակի, վաշտի, գումարտակի մատյանները, իսկ երբ պարզվել է, որ հերթապահության մատյանները կեղծվել են՝ կեղծարարներն օրենքով սահմանված կարգով չեն պատժվել, նրանց արարքին իրավական գնահատական չի տվել:

-4- Համաձայն վկաների (մասնավորապես, Ա. Պողոսյանի բացատրության), 2010թ.-ի դեկտեմբերի 15-ին, ժամը 12:00-ի սահմաններում Ղազարյանը, գտնվելով թիվ 134 մարտական դիրքում, վատ է զգացել և գլխացավի դեղ է խնդրել դիրքի ծառայողներից, սակայն վերջիններս դեղ չեն ունեցել և չեն տվել նրան: Նույն օրը, ավելի ուշ, Ա. Ղազարյանին դեղ է տվել թիվ 133 հենակետի ծառայողներից մեկը (գ.հ.1, թ.17):

Նախաքննական մարմինը չի հարցաքննել թիվ 134 և 133 հենակետերի զինծառայողներին՝ պարզելու համար, թե ինչո՞ւ էր գանգատվում Ա.Ղազարյանը, ինչի՞ց էր գանգատվում, ի՞նչ է պատմել նրանց իր առողջական վիճակի մասին, ի՞նչ են տեսել նրանք, ի՞նչ գիտեն դեպքի մասին, կոնկրետ ո՞վ և ի՞նչ դեղ է տվել Ղազարյանին և այլն:

-4- Համաձայն «տեղեկագրի» (գ.հ.1, թ.12)՝ մարտական հերթապահության մեկնելիս Ա.Ղազարյանը ստացել է ԱԿ-74 տեսակի N9276 ինքնաձիգը, մինչդեռ ինչպես երևում է զինգրքույկից, նրան ամրակցված էր ԱԿ-74 N31143503 ինքնաձիգը (գ.հ.1, թ.56): Չի պարզվել, թե կոնկրետ ի՞նչ համարի զենք էր կրում Ղազարյանը դիրքերում, ինչպիսի՞ն էր զենքը կրելու կարգը, մշտապես նրա մո՞տ էր զենքը, թե՞ ոչ, եթե ոչ, ապա որտե՞ղ էր պահվում, ինչպես նաև զենքի ճակատագիրը՝ Արթուր Ղազարյանին հիվանդանոց տեղափոխելուց հետո:

-4- Համաձայն Հադրութի հիվանդանոցի գրառման (գ.հ.1, թ.157)՝ Ա.Ղազարյանը ընդունման պահին բողոքել է ոչ միայն գլխացավից, այլև սրտխառնոցից: Վկա, բժշկուհի Նոնևա Վարդանյանն իր ցուցմունքում (գ.հ.1, թ.162) նշում է, որ Ղազարյանը հիվանդանոցում փսխել է: Ըստ վկա Տոնոյանի ցուցմունքի (գ.հ.2, թ.58)՝ Ա.Ղազարյանը փսխել է նաև 16.12.2010թ. երեկոյան մարտական դիրքերում: Ըստ զորամասի բժիշկների ցուցմունքների՝ տղան փսխել է նաև Հադրութի հիվանդանոց տեղափոխելու ճանապարհին, մեքենայի մեջ: Չնայած դրան՝ դատաբժշկական փորձաքննություն կատարելու որոշման մեջ քննիչը չի նշում այս փաստի մասին և չի հարցնում

փորձագետին, թե ո՞րն էր այս պարբերական փսխումների պատճառը: Արդյո՞ք դա չէր կարող առաջանալ գլխին ստացած ուժեղ հարվածի պատճառով, ինչը արձանագրել և ինչին, սակայն, բացատրություն չի տվել դատաբժիշկը: Սպանության վարկածն ընդհանրապես քրեական գործում կամ չի քննվել, կամ այդ քննությունը կրել է ձևական բնույթ: Այս հարցը քննիչը չի տվել նաև հանձնաժողովային փորձաքննության մասնակիցներին, և մինչ օրս դրա պատասխանը չի ստացվել:

-8- Ն. Նամալյանի հարցաքննության ժամանակ քննիչը միտումնավոր վկային չի տալիս մի շարք կարևորագույն հարցեր, որոնք կարող էին լույս սփռել գործի իրական հանգամանքների վրա: Հակասություն է առաջանում կապիտան Նամալյանի և Տարոն Մարտիկյանի ցուցմունքների միջև: Այսպես, ըստ Տ. Մարտիկյանի ցուցմունքի (գ.հ.1, թ.65-66)՝ ինքը ժամը 11:00-13:00 հերթապահել է դիտակետում: Ժամը 13:00-ին հանձնել է հերթափոխը, զենքը դրել բուրգում, գնացել ջրի մոտ՝ զինվորական համազգեստը լվանալու նպատակով: Վկան միայն կրակոցներ լսելուց և մարտական հենակետ վերադառնալուց հետո է տեսել կապիտան Նամալյանին: Մինչդեռ, ըստ Նամալյանի ցուցմունքի (գ.հ.3, թ.115-117)՝ ինքը դեպքի օրը մարտական հենակետ է եկել Ժամը 12:50-ին, անմիջապես գնացել է գետնատնակ, ստուգել փաստաթղթերը, կարգուկանոնը, վերջապես ժամը 13:10-ին ստուգման մատյանում կատարել է գրառում ու հեռացել: Այս հակասության մեջ կարևորն այն է, որ նախաքննական մարմինն ապացուցված է համարել, թե իբր հանգուցյալ Ա. Ադիբեկյանը Նամալյանի՝ դիտակետ գալուց անմիջապես հետո շուտափույթ ձևով վերցրել է Տ. Մարգարյանի ինքնաձիգն ու գաղտնի գնացել դիտակետ: Այս սուտը վկայում է այն մասին, որ.

ա. Տ. Մարգարյանի ինքնաձիգը, որը հայտնաբերվել է դեպքի վայրում, ամենևին էլ Ա. Ադիբեկյանը չի տարել,
բ. Ա. Ադիբեկյանը սպանության պահին հերթապահ չի եղել և մոտը զենք չի ունեցել,
գ. զենքը դիտակետ է տարել ոչ թե հանգուցյալը, այլ մեկ այլ՝ երրորդ անձ:

Այս հակասության շուրջ նախաքննական մարմինը քննություն ևս չի կատարել: Առկա է ևս մեկ հակասություն. իր առաջին ցուցմունքում Տ.Մարգարյանը (գ.հ.1, թ.65-66) նշում է, որ դեպքի օրը ջրի մոտ համազգեստ լվանալիս մոտ ժամը 11:20-ի սահմաններում լսել է մեկ մենահատ կրակոց: Դրանից ևս 20 րոպե անց՝ կրկին մեկ կրակոց: 5 րոպե անց լսել է 3-րդ կրակոցը, որից հետո շտապել է հենակետ: Մարտիկյանի 2-րդ հարցաքննության ժամանակ (գ.հ.2, թ.74-75) քննիչը ուղղորդված հարց է տալիս վկային, թե իբր վերջինս լսել է 2 կրակոց: Միաժամանակ, ըստ էության վկայից պահանջում է ապացուցել, որ նշված 2 կրակոցներն էլ լսվել են նրանց մարտական հենակետից: Վկան, բնականաբար, նահանջում է. ինքը «երկու կրակոցների ձայները նմանեցրել է իրար՝ կարծելով, որ երկուսն էլ իր հենակետից են լսվել, բայց քանի որ պոստից հեռու էր, չի կարող ասել հաստատապես»: Այսինքն՝ վկային քննիչն ակնհայտորեն ստիպում է ասել, թե ընդամենը մեկ կրակոց է եղել: Նշենք, որ մնացած վկաները, ովքեր ծառայում էին նույն դիրքում, նշում են, թե իբր լսել են «մեկ կամ երկու կրակոց» և ավելացնում, թե չեն կարող հաստատ ասել, ինչն ուղղակի անհեթեթ է:

-8- Իր հաջորդ ցուցմունքում Իգնատ Ենգիբարյանը նշում է, որ դեպքի նախորդ երեկոյան (ժամը չի հիշում), երբ ինքը գետնատնակում նստած շաշկի էր խաղում Ադիբեկյանի հետ,

Գոռ Խաչատրյանի բջջայինի վրա հաղորդագրություն եկավ: Նշենք, որ ըստ Ենգիբարյանի՝ Գոռն ու Ալբերտը odnoklassniki.ru կայքում ունեին ընդհանուր էջ և այդ էջից օգտվում էին Գոռի բջջային հեռախոսով: Հաղորդագրությունն ստանալուց հետո Ալբերտը Գոռին ասում է, որ հաղորդագրությունն իրեն է ուղղված և Գոռին խնդրում է իրեն տալ բջջայինը: Գոռը չի տալիս, նրանք վիճում են, միմյանց հետ կռվում, ինչի արդյունքում Ա. Ադիբեկյանի մարմնի տարբեր մասերում առաջանում են տարբեր վնասվածքներ:

Ասվածից պարզ է դառնում, որ գործում կարևոր իրեղեն ապացույց է Գոռի բջջային հեռախոսը: Թերևս սա հասկանում էր նաև քննիչ Մադաթյանը, ով ցուցում էր տվել հենակետի զինվորների մոտից առգրավել բջջային հեռախոսները: Սակայն ո՛չ Գոռ Խաչատրյանի և ո՛չ էլ Ալբերտի բջջայինները չեն առգրավվել: Ավելին, իր ցուցմունքում (գ.հ.3, թ.11-15) Գոռը նշում է, թե իբր փետրվարի 10-23-ն ընկած ժամանակահատվածում ինքը բջջային չի ունեցել: Սա ակնհայտ սուտ է, քանի որ ըստ սպանվածի եղբոր՝ Վարդանի, ով ծառայության ժամանակ ճանաչել է Գոռին, Գոռն իրեն այդ ժամանակահատվածում զանգահարել է իր հեռախոսից: Այս առումով հատկանշական է նաև Իգնատ Ենգիբարյանի և Գոռ Խաչատրյանի առերեսման արձանագրությունը (գ.հ.3, թ.101-102), որում Իգնատը պնդում է իր նախկինում տված ցուցմունքը: Ի պատասխան դրա՝ նա այլևս չի պնդում, թե ինքն իբր բջջային չի ունեցել, այլ ասում է միայն, թե իրենք Աբոյի հետ շատ մտերիմ են եղել և, մեջբերում ենք. «…բացառվում է, որ ինչ-որ sms-ի շուրջ մենք վիճաբանեինք, առավել ևս՝ իրար հարվածներ հասցնեինք: Նման բան չի եղել»: Քննիչը պարտավոր էր այս կարևորագույն հարցի շուրջ կատարել բազմակողմանի և խորացված քննություն, ինչը սակայն չի արել՝ բացահայտ ձևով ցույց տալով իր շահագրգռվածությունը:

-1- Վերադառնալով Ա. Նազարյանի դատաբժշկական հետմահու փորձաքննությամբ հայտնաբերված, սպանությունից 6 ժամ վաղեմության և սպանությունից անմիջապես առաջ պատճառված վնասվածքներին՝ նշենք, որ քր. գործը դատարան է ուղարկվել առանց այս կարևորագույն փաստերի քննման: Այսինքն. դատարան է ուղարկվել չբացահայտված սպանության գործ: Այդպես էլ քննիչները չեն պատասխանել այն կարևորագույն հարցերին, թե ովքե՞ր են սպանության գիշերը ժամը 02:00-ի սահմաններում և սպանությունից առաջ, առավոտյան 07:00-07:40-ի սահմաններում, դաժան ծեծի ենթարկել Ա. Նազարյանին: Չեն քննել, որովհետև չեն ցանկացել բացահայտել մարդասպանների խումբը: Ավելին, ըստ դատաբժշկական թիվ 704/34 եզրակացության՝ հանգուցյալի արյան և մեզի մեջ հայտնաբերվել է 1.8 պրոմիլե էթիլ սպիրտ, որը հավասար է միջին աստիճանի խմածության: Ըստ փորձագետի՝ հանգուցյալն այն խմել է սպանությունից 1-1,5 ժամ առաջ: Նախաքննական մարմինը չի ցանկացել և չի պարզել, թե որտե՞ղ և ո՞ւմ հետ է խմել լեյտենանտ Ա. Նազարյանը սպանությունից առաջ: Դա տրամաբանական է, քանի որ խոսքը գնում է մարդասպան սպաների խմբի մասին: Այս փաստի կապակցությամբ ավելացնենք, որ հանգուցյալն ուներ լյարդի հիվանդություն և ընդհանրապես խմիչք չէր օգտագործում: Սա հաստատում են գործով ցուցմունք տված բոլոր սպա վկաները՝ նշելով, որ Ա. Նազարյանն իրենց կազմակերպած խնջույքներին չէր մասնակցում: Ավելին, նրանցից ոմանք դա մեկնաբանում էին որպես Ա. Նազարյանի կողմից իրենց ցածր դասելու, արհամարհելու նշան: Այստեղից կարելի է ենթադրել, որ Ա. Նազարյանին ուղղակի ստիպել են խմել՝ կիրառելով բռնի ուժ: Դրա մասին է հուշում նաև այն փաստը, որ վերը նշված դատաբժշկական թիվ 704/34

եզրակացության մեջ նշվում է, որ զննությամբ հանգուցյալի ստամոքսում սննդամթերքի մնացորդներ չեն հայտնաբերվել, ստամոքսը եղել է դատարկ: Այս կարևորագույն փաստի առթիվ հարցաքննվել են «Ղոզլու 12» մ/հ-ում ծառայած անձանցից ընդամենը երկուսը, ովքեր (մեր համոզմամբ) քննիչի թելադրանքով գրում են, որ այդպիսի բան չի եղել, Նազարյանը չի խմել: Այսինքն՝ նրանք մերժում են անհերքելի փաստը: Սակայն քննիչը «հավատում է նրանց», քանի որ իրեն այդպես է ձեռնտու: Հենակետի զինվորներին հարցաքննելու փոխարեն, քննիչը, հեռանալով քր. գործից, քննել է Չինարի գյուղի երկու մթերային խանութների վաճառողներին, ովքեր նշել են, որ Ա. Նազարյանն իրենց խանութներից օղի չի գնել: Իրականում 19.07.2010թ.-ի վերը նշված իրադարձություններից հետո Ա. Նազարյանը գտնվում էր կապիտան Հ. Մանուկյանի և նրա կողմից հրահանգված զինվորների հսկողության տակ և չէր էլ կարող լքել մ/հ-ի տարածքը, էլ ուր մնաց օղի գներ: Եվ ինչու՞ նա պետք է օղի գներ, եթե խմող չէր: Քննիչները չեն էլ «կռահել», որ օղին «Ղոզլու 12» մ/հ կարող էին բերել այլ անձինք: Չեն էլ փորձել պարզել, թե այդ օրը մ/հ-ում ի՞նչ իրադարձություններ էին նշում գումարտակի և, ինչու ոչ, գնդի սպաները: Իրականում, եթե բացահայտվի խմիչքի հետ կապված դրվագը, ապա անմիջապես դրա շուրջ կհավաքվի սպա մարդասպանների խումբը, որը հարբելուց հետո դաժանորեն ծեծել, իսկ վերջում՝ սպանել է Ա. Նազարյանին: Ավելորդ է ասել, որ լրացուցիչ քննությամբ այս, ինչպես նաև ծեծի վերջին երկու դրվագները պետք է մանրամասն քննվեն, բացահայտվեն:

-2- Ըստ քր. գործի՝ իբր Թորգոմ Սարուխանյանը գումարտակի գաղտնիքները հայտնել է «վերևներին» և այդ իսկ պատճառով նրան ծեծել, հայհոյել և նվաստացրել են, ինչի արդյունքում Սարուխանյանն ինքնասպանություն է գործել: Սակայն, նախաքննական մարմինն այդպես էլ չի պատասխանում այն հարցերին, թե կոնկրետ ո՞ւմ է Սարուխանյանը փոխանցել գաղտնիքները, կոնկրետ ի՞նչ գաղտնիքներ է փոխանցել, կոնկրետ ո՞ւմ հետ էին այդ գաղտնիքները կապված, ե՞րբ և որտե՞ղ է գաղտնիքները փոխանցել: Ավելին, պարզ չէ, թե կոնկրետ ո՞ւմ գաղտնիքներն է փոխանցել: Մինչդեռ համաձայն Հրանտ Կարապետյանի ցուցմունքի (գ.հ.2, թ.19-24)՝ իրեն փետրվարի 7-ին իր մոտ է կանչել գումարտակի հրամանատար մայոր Ֆելիքս Ենգիբարյանը, հայտնել, որ գումարտակում կա լրտես, ով «վերևներին» ինֆորմացիա է ուղարկում գումարտակի գաղտնիքների մասին և Կարապետյանին, որպես «հեղինակություն» ունեցող զինվորի, հանձնարարել է՝ գտնել այդ «լրտեսին»: Ավելի ուշ Ֆելիքսը Հ. Կարապետյանին հայտնում է, թե ինքն առանց նրա օգնության պարզել է, թե ով է լրտեսը: Այս միջադեպերի մասին իր ցուցմունքում հայտնում է նաև Ռոբերտ Բադալյանը (գ.հ.2, թ.1-4): Ստացվում է, որ եթե վերը նշված զինծառայողներն ինքնասպանության են հասցրել Թորգոմ Սարուխանյանին, ապա դա արել են գումարտակի հրամանատարի հանձնարարությամբ, կարգադրությամբ, պահանջով ու հրամանով: Այլ կերպ ասած, եթե հիմք ընդունենք ինքնասպանության վարկածը, ապա դրա մեջ առաջին մեղավորը հենց գումարտակի հրամանատարն է: Համաձայն քրեական գործում առկա Ստեփանակերտի ՌՈ-ի գրությանը (գ.հ.2, թ.148-150)՝ «07.02.2011թ. մայոր Ենգիբարյանը կանչել է Կարապետյանին և ասել, թե եթե դու չես կարողացել իմանալ, թե ով է ձեր վաշտի «բոզը», ես իմացել եմ, սակայն անուն չի նշել»: Նույն գրության մեջ ՌՈ աշխատակից, գնդապետ Ա. Բագրատունյանը հայտնում է, որ հունվարի 16-ին Ֆելիքս Ենգիբարյանը ծեծել է Հովիկ Բարսեղյանին, իսկ դրանից օրեր անց «…մայոր Ֆ.Ենգիբարյանն իր աշխատասենյակ էր կանչել 3-րդ վաշտի ժամկետային զինծառայող Հրանտ Կարապետյանին ու ասել, որ Բարսեղյանին ծեծելու մասին իմացել են զորամասի հրամանատարությունը և իրավապահ մարմինները, ուրեմն ձեր վաշտում

«բոզ» կա, միաժամանակ հանձնարարել է նրան, որ պարզի և իրեն տեղեկացնի, թե ով է այդ զինվորը»:

Այսպիսով, պարզվում է, որ նախաքննական մարմինն ունեցել է փաստ գումարտակի հրամանատար Ֆելիքս Ենգիբարյանի կատարած հանցագործությունների մասին. Ենգիբարյանն իր ենթակա զինվորներին դրդել է հանցագործության՝ ստիպելով գտնել «լրտեսին»: Ենգիբարյանը գնացել է պաշտոնական դիրքի չարաշահման, ծեծի է ենթարկել իր ենթակային՝ սերժանտ Հովիկ Բարսեղյանին: Սակայն, նախաքննական մարմինն այս փաստերի առիթով Ֆ. Ենգիբարյանի հանդեպ քր. գործ չի հարուցել: Ըստ տուժող կողմի ունեցած տվյալների՝ Ֆելիքս Ենգիբարյանը Թորգոմ Սարուխանյանի մահվանը նախորդող 1-2 ամիսների ընթացքում մշտապես հալածել ու նվաստացրել է Սարուխանյանին: Սակայն, չնայած տուժող կողմի բազմիցս արված միջնորդություններին, որպեսզի գործով անցնող բոլոր վկաները ներկայանան դատարան և ցուցմունք տան, նախագահող Դավթյանը, բացահայտ ձևով կատարելով նախաքննական մարմնի ցուցումները, այդպես էլ մայոր Ենգիբարյանին դատարան չհրավիրեց, նա բավարարվեց միայն Ենգիբարյանի գրությունն ընթերցելով, որում վերջինս նշում էր, թե նպատակահարմար չի գտնում ցուցմունք տալ: Վերադառնալով ՌՈ բաժնի պետ Ա. Բագրատունյանի 989/725 առ 10.03.2011թ գրությանը (գ.հ.2, թ.148-150)՝ պետք է նշենք, որ այն կիսատ է (առնվազն 1 թերթ պակասում է), չկա նաև կից գրությունը, որում պետք է նշվեր, թե կոնկրետ քանի՞ էջից է բաղկացած այս փաստաթուղթը:

Անհավանական խոստովանություններ

Վկա-կասկածյալների անհավանական խոստովանականների ձեռքբերում, որոնցից սակայն նրանք հետագայում հրաժարվում են:

-15- Նախաքննական մարմինն ապացուցված է համարել, որ Վահե Հարությունյանը կարող էր առավելագույնը 5 հարված հասցնելով՝ հանգուցյալ Ա. Աբրահամյանին հասցնել 84 մարմնական վնասվածք: Բացի այդ, ապացուցված է համարվել, որ վերջինիս հագին Ա. Աբրահամյանին ծեծելու պահին եղել է 8-10 կիլոգրամանոց զրահաբաճկոն, գլխին՝ 3-4 կիլոգրամանոց սաղավարտ, ուսին՝ ինքնաձիգը, կողքից՝ կախված դաշտային պայուսակը՝ փամփշտուփերով և այլ զինվորական իրերով: Այսինքն, իբր այս վիճակում Վահե Հարությունյանը ոչ միայն կարող էր անկաշկանդ շարժվել, այլև մահացու հարվածներ հասցնել Աբրահամյանին: Չնայած Վահեն իր ցուցմունքում հայտնում է, որ Ա. Աբրահամյանը ևս իրեն մարմնական վնասվածքներ է հասցրել, սակայն նրա վրա որևէ վնասվածք չի հայտնաբերվել: Բացի այդ, կասկածյալը համոզված է, որ իրեն ոչ ոք չի տեսել, որովհետև ինքն այդ ժամանակ ոչ մեկին չի տեսել իրենց կողքով անցնելիս, որ իրենց ձայնը ոչ ոք չի լսել, քանի որ իրենք չէին գոռում, չէին աղմկում, լուռ հարվածում էին միմյանց, որ հենց իր կողմից հասցված հարվածների պատճառով է Աբրահամյանը վատացել, քանի որ իր հարվածներից 10-15 րոպե անց Վահեին տարել են գումարտակի բուժկետ, իսկ այդ րոպեների ընթացքում նրան այլևս ոչ ոք չի հարվածել: Հետագայում նա, դեպքից շուրջ 1 ամիս անց տված ցուցմունքում (գ.հ.3, թ.238-241) կտրականապես հրաժարվում է իր տված ցուցմունքից՝ հայտարարելով, որ ինքը հանգուցյալի հետ որևէ կոնֆլիկտ չի ունեցել, որևէ հարված չի հասցրել նրան: Քննիչի հարցին ի պատասխան, թե ինչո՞ւ է, այդ դեպքում, ինքն իր դեմ կեղծ ցուցմունք տվել, Վահեն պատասխանում է, որ,

երբ ինքը գտնվում էր Ստեփանակերտի ՌՈ բաժնում, ոստիկանները միայն իրեն էին կասկածում, և նման ցուցմունք է տվել «հետագա անախորժություններից խուսափելու նպատակով»:

-1- Այս գործով բոլոր վկաները մեկ մարդու պես ցուցմունք են տալիս, որ 19.07.2010թ. գալով «Ղոզլու-12» մարտական հենակետ և տեսնելով, որ կապիտան Մանուկյանը և Ա. Նազարյանը իրար հետ կռվում են, հարվածներ հասցնում միմյանց, «Լույս» հենակետի ավագ լեյտենանտ Վահագն Հայրապետյանը բաժանել է նրանց, թույլ չի տվել, որպեսզի կռիվը շարունակվի: Սակայն դեպքից շուրջ վեց ամիս անց, այն դեպքից հետո, երբ սպանված զինվորների մայրերը բողոքի ցույց կազմակերպեցին Ս. Սարգսյանի նստավայրի դիմաց և վերջինս խոստացավ նրանց, որ իր նորանշանակ զինդատախազ Գ. Կոստանյանին կհանձնարարի նրանց գործերով օբյեկտիվ քննություն կատարել, Վ. Հայրապետյանին ձերբակալեցին: Քննիչը «պարզեց», որ գործով անցնող բոլոր վկաները այս էպիզոդով սուտ ցուցմունք են տվել. իրականում Վ. Հայրապետյանը ոչ միայն չի բաժանել կռվողներին, այլ նաև իր հերթին մեկ անգամ հարվածել է Ա. Նազարյանին: Չնայած դատարանում պարզվեց, որ վկաները երկրորդ անգամ տվել են սուտ ցուցմունք, որ նրանցից յուրաքանչյուրը գտնվել է այնպիսի տեղում, որ չէր կարող տեսնել այդ հարվածը: Չնայած վկաների մի մասը դատարանում հրաժարվեց այդ ցուցմունքից, սակայն դատավոր Մարդանյանը ապացուցված համարեց այդ դրվագը և Վ. Հայրապետյանին դատապարտեց չորս տարվա ազատազրկման:

Վկաների ցուցմունքների ակնհայտ ուղղորդում

Որպես կանոն, քննիչները, քրգործերը կոծկելիս, ուղղորդում են վկաներին՝ տալով նրանց հարցեր, որոնց մեջ պարզորոշ հնչում կամ առնվազն կռահվում է պատասխանը: Առավել հաճախ կրկնվում է նույն հարցը. «Ինչո՞ւ է քո ծառայակիցը ինքնասպանություն գործել», այն դեպքում, երբ նման ապացույցներ չկան: Եզակի դեպքերում, երբ վկան ասում է, թե ինքնասպանություն չի գործել հնչում է հաջորդ հարցը. «Այդ դեպքում ո՞վ է սպանել նրան, ներկայացրու ապացույցները»: Վկան արագ կռահում է քննիչի մտադրությունը, հասկանում է, որ նույնիսկ եթե գիտի, թե ով է մարդասպանը, այդ անունը տալը խիստ վտանգավոր է: Հայտնի են դեպքեր, երբ քննիչը ազնիվ վկային ու մարդասպանին թողնում է իրար հետ միայնակ, որպեսզի իրար «հասկանան»: Ցավոք, նման դեպքերում վկաները միայն բանավոր են հայտնում այս մասին՝ հրաժարվելով ցուցմունք տալ: Էականն այն է, որ քննիչին հաջողվում է այս կամ այն ճանապարհով վկային ընդմիշտ լռեցնել:

-13- Գործի մեջ երևում է, որ գործով անցնող վկաները ուղղորդվել են քննիչի կողմից, թե իբր Նարեկ Գալստյանը զորամասում «խնդիրներ չուներ, թշնամիներ չուներ» և թե իբր ոչ ոք չէր կարող նրան սպանել՝ հաշվի չառնելով տուժող կողմի տասնյակ բողոքները, որոնցում փաստեր էին ներկայացվում նրա և զորամասի տարբեր սպաների միջև բախումների մասին: Այսպես, 2007թ. սկզբներին Նարեկ Գալստյանին զորամասը լքելու համար ծեծի էին ենթարկել երկու սպաներ (նրանցից մեկը՝ Վոլոդյա Հակոբյան): 2007թ. գարնանը Նարեկ Գալստյանին մի քանի անգամ ծեծի էր ենթարկել վաշտի հրամանատար, կապիտան Բախտիկ Ստեփանյանը: Ստեփանյանը շանտաժի էր ենթարկում Նարեկին, մեղադրում բենզինի գողության մեջ և պահանջում 18.000 դրամ գումար: Նարեկ Գալստյանը բենզին չէր գողացել և հրաժարվում էր Բ. Ստեփանյանին գումար վճարել:

Ստիպված զորամաս մեկնեցին Նարեկի հայրն ու պապիկը՝ Ջավադը: Վերջինս, բռնելով Բախտիկին, մի քանի ապտակ է հասցրել նրան, պոկել ուսադիրը և սպառնացել է նրա հանցանքի մասին հայտնել համապատասխան մարմիններին: Բախտիկն արտասվել է, Ջավադից ներողություն խնդրել ու խոստացել, որ այլևս Նարեկին մատով չի դիպչի: Քրեական գործով տված իր ցուցմունքում (գ.հ. 1, թ. 122-123) Բ. Ստեփանյանը խոստովանում է, որ ներողություն է խնդրել Ջավադ Գալստյանից, սակայն դա արել է ոչ թե մեղքի զգացումից, այլ վախից դրդված, քանի որ ինքն անմեղ է, երբեք ձեռք չի բարձրացրել Նարեկ Գալստյանի վրա: Այլ կերպ ասած՝ քննիչ Հակոբջանյանը, կրկին ներկայանալով որպես շահագրգիռ կողմ, կոծկել է նաև այս հանցագործությունը:

-8- Իր ցուցմունքում Ի. Ենգիբարյանը պնդում է, որ մարտական հենակետի ավագ Պետրոսյանը Ա. Ադիբեկյանի սպանությունից հետո զինծառայողներից և, մասնավորապես, իրենից փամփուշտ է ուզել, և նրան այդ փամփուշտը տվել է շարքային Սեյրազ Ջնդիևը: Այս երկու զինվորներն էլ ցուցմունք են տալիս, թե իբր Ի. Ենգիբարյանը սուտ է խոսում, նման բան չի եղել, սակայն նրանց այս ցուցմունքները ոչ մի կերպ չեն համապատասխանում իրականությանը, քանի որ գործով այդպես էլ պարզ չի դառնում, թե որտե՞ղ են պակասող փամփուշտները: Այսինքն՝ քննիչն ապացուցված է համարում և՛ այն, որ դեպքի առավոտյան գետնատնակի դիմաց հնչել է կրակահերթ, և՛ այն, որ մարտական հենակետից ընդամենը մեկ փամփուշտ է պակաս, որով և սպանել են Ա. Ադիբեկյանին:

-1- Քննիչը մեկ առ մեկ քննում է 3-5 օր առաջ Ա. Նազարյանի հանդեպ կատարված բռնության միջադեպը, վկաները սպառիչ ցուցմունքներ են տվել, որ Ա. Նազարյանին 29.07.2010թ.-ին ծեծի է ենթարկել գումարտակի հրամանատարի ԱՀՏԳ գծով տեղակալ Հակոբ Մանուկյանը, իսկ դրան հաջորդած օրերին՝ ևս 3 զինծառայողներ՝ Ադիբեկ Հովհաննիսյանը, Մխիթար Մխիթարյանը և Հարութիկ Կիրակոսյանը: Վկաները մեկ առ մեկ վերհիշում ու պատմում են մեղադրյալ Հ. Մանուկյանի կողմից Ա. Նազարյանին հասցված բոլոր հարվածների մասին, մեջբերում են Հ. Մանուկյանի տված բոլոր սեռական բնույթի հայհոյանքները, ողջ քր. գործը ողողելով այդ հայհոյանքներով, սակայն սպանությունից 6 ժամ առաջ և սպանությունից անմիջապես առաջ հանգուցյալի ստացած մարմնական վնասվածքների մասին (որոնք անհամեմատ ավելի շատ են և ծանր, քան 5 օրվա վաղեմության վնասվածքները) լռում են: Այլ կերպ ասած՝ գործով քննիչները արհեստականորեն ուռճացնում են սպանությունից 3-7 օր առաջ կատարված իրադարձությունները, հայհոյանքները մեջբերելով, փորձում դրանք ներկայացնել որպես շատ ծանր հանցագործություններ և փորձում են դրանցով ստվերել իրականում կատարված ծանրագույն հանցագործությունները, Ա. Նազարյանի ծեծն ու խոշտանգումը, մեծաթիվ արյունազեղումները (հեմատոմա), կապտուկները և քերծվածքները: Եթե հաշվի առնենք, որ վերջին՝ անմիջապես սպանությանը նախորդած ծեծն ու խոշտանգումներն ավարտվել են սպանությամբ, ապա կարող ենք հասկանալ նախաքննական մարմնի՝ մահվանից րոպեներ կամ վայրկյաններ առաջ տեղի ունեցած բռնությունը կոծկելու մտադրությունը: Չքննելով վերջին օրվա վերջին 6 ժամերի սարսափելի, իրենց դաժանությամբ աննախադեպ դեպքերը (որոնք ավարտվել են սպանությամբ)՝ քննիչներն արհեստականորեն առաջին պլան են մղում նախորդ օրերի դեպքերը և գալիս կեղծ եզրահանգման, թե իբր դրանց հետևանքով, դեպքերից օրեր անց Ա. Նազարյանն ինքնասպան է եղել: Նախաքննությունից պարզորոշ երևում է, որ «Ղոզլու 12» մ/հ-ի շարքային զինծառայողների բոլոր ցուցմունքներն ուղղորդված և թելադրված են

քննիչների կողմից: Այս բոլոր ցուցմունքներն, ըստ էության, ջրի երկու կաթիլի պես նման են իրար: Իրենց ձգտման մեջ քննիչները հասնում են զավեշտի: Մեղադրյալ զինվորներից յուրաքանչյուրն առանձին-առանձին ծեծում և հայհոյում է լեյտենանտ Ա. Նազարյանին, սակայն վերջինս չի համարձակվում որևէ կերպ արձագանքել այս անօրինականություններին: Ուշադրություն դարձնենք, որ այս ամենը կատարվում է մարտական հենակետում՝ իր ծառայությունն անցկացնող կապիտան Հակոբ Մանուկյանի ներկայությամբ: Հասկանալով, որ չափն անցել են՝ քննիչները փոխում են վկաների ցուցմունքները, ստիպում գրել, թե իբր հանգուցյալ Ա. Նազարյանը չէր արձագանքում, քանի որ զինվորները «կատակով» էին ծեծում նրան: Այն, որ քր. գործում բոլոր ցուցմունքները թելադրված են քննիչի կողմից, պարզորոշ նկատելի է հետևյալից. դեպքից 7 ամիս անց հանկարծ բոլոր վկաները «հիշում» են, որ իրենք նախկինում տվել են սուտ ցուցմունք՝ նշելով, թե 19.07.2010թ.-ին Հ. Մանուկյանի կանչով «Լույս» հենակետից «Ղոզլու 12» եկած հենակետի ավագ, լեյտենանտ Վահագն Հայրապետյանը, տեսնելով, որ Ա. Նազարյանը և Հ. Մանուկյանը հարվածներ են հասցնում իրար, բաժանել է նրանց: Իրենց նոր ցուցմունքով նրանք «ազնվորեն» հայտնում են քննիչին, որ Վ. Հայրապետյանը ևս Հ. Մանուկյանի հետ մասնակցել է Ա. Նազարյանի ծեծին: Նման ձևով քննիչները «զոհաբերում են» ևս մի զինծառայողի, որպեսզի դրանով իսկ է՛լ ավելի հիմնավորեն Ա. Նազարյանի ինքնասպան լինելու արհեստածին, կեղծ վարկածը: Այս նույն նպատակին հասնելու համար քննիչների թելադրանքով գործով անցնող վայ վկաները պարբերաբար, տեղի թե անտեղի, կրկնում են մեկ և միևնույն նախադասությունը. «…այս դեպքերից հետո Ա. Նազարյանը մշտապես գտնվում էր հոգեպես ընկճված վիճակում, տխուր էր և ընկճված, այնքան ընկճված էր, որ ես չեմ կարող նկարագրել»: Դրանից հետո բոլոր վկաներն անխտիր նշում են. «Մենք համոզված էինք, որ Ա. Նազարյանն ինքնասպանություն կգործի»: Իրականում նման ենթադրության համար հիմքեր չկային: Այսպես, պատմելով 19.07.2010թ.-ին տեղի ունեցած Հ. Մանուկյանի և Ա. Նազարյանի կռվի մասին, Արման Մնացականյանն իր ցուցմունքում (գ.հ.1, թ 89-103) նշում է, որ ծեծկռտուքի ժամանակ Ա. Նազարյանի քթից արյուն եկավ: Ծեծկռտուքն այդ պահին դադարեց և տուժածը գնաց աղբյուրի մոտ՝ դեմքի արյունը լվանալու: Աղբյուրից Ա. Նազարյանը վերադարձավ քարը ձեռքին և փորձեց այդ քարով հարվածել Հ. Մանուկյանին, սակայն զինվորներից մի քանիսն ու լեյտենանտ Վահագն Հայրապետյանը կանխեցին նրան: Այս միջադեպը պարզորոշ հուշում է, որ Ա. Նազարյանը մտադրություն չուներ ինքնասպան լինել, հակառակը՝ նա պատրաստ էր բռունցքներով, քարով և, ինչու չէ՝ նաեւ զենքով պաշտպանել իրեն: Դրա մասին է վկայում նաև այն փաստը, որ 26.07.2010թ.-ին կապիտան Հ. Մանուկյանն իր կամակատար Գարեգին Սայադյանին կարգադրում է Ա. Նազարյանին ամրակցված ինքնաձիգի վրայից հանել ասեղը: Իր այդ պահանջը Հ. Մանուկյանը մեկնաբանում է այն հանգամանքով, թե իբր Ա. Նազարյանը, ով շատ տխուր է և ընկճված, կարող է ինքնասպանություն գործել (գ.հ.6, թ. 149-157): Հ. Մանուկյանը կարող էր նման կերպ մեկնաբանել դեպքերի ընթացքը, քանի որ նախաքննական մարմինը բացահայտ ձևով չի լուսաբանում այն կարևորագույն դեպքերը, բախումները, որոնք նախորդել են Ա. Նազարյանի՝ զենքի վրայից ասեղը հանելու փորձին և պայմանավորված են հենց դրանցով: Իրականում դեպքերի ընթացքը և Ա. Նազարյանի անկոտրում խառնվածքը մեզ միանշանակ հուշում են, որ կապիտան Հ. Մանուկյանը վախենում էր Ա. Նազարյանից, վախենում էր, որ վերջինս, վերցնելով իր ինքնաձիգը, վրեժ կլուծի իրենից: Ինչպես տեսնում ենք, նախաքննական մարմինը, առաջնորդվելով ոչ թե իրականությամբ, այլ սեփական շահագրգռվածությամբ, կրկին անգամ գլխիվայր շրջում է փաստերը, տալիս իրականությանը տրամագծորեն հակառակ մեկնաբանություն:

-2- Նախաքննական մարմինը բոլոր վկաներին հարցաքննել է ուղղորդված՝ հիմքում դնելով ոչ թե այն հարցը, թե ի՞նչ է տեղի ունեցել Թորգոմ Սարուխանյանի հետ, այլ, թե ինչո՞ւ է Թորգոմ Սարուխանյանը ինքնասպանություն գործել: Այս կերպ, քննիչներն առաջին իսկ օրվանից արդեն ապացուցված են համարում, որ Թորգոմ Սարուխանյանն ինքնասպան է եղել: Այս հարցը քննիչները տվել են բոլոր վկաներին: Այսպես, վկա Նարեկ Ավանեսյանը (դատավճիռ, թ.8-9) ասում է, որ «...ինքը կոնկրետ չի կարող ասել, թե Թորգոմ Սարուխանյանը ինչու է ինքնասպանություն գործել, քանի որ վերջինս համածառայողների հետ, այդ թվում՝ Ռ. Բաղալյանի, Հ. Կարապետյանի և վաշտի ավագ Վ. Ենգիբարյանի հետ գտնվում էր նորմալ փոխհարաբերությունների մեջ»:

Վկաների ցուցմունքների ոչնչացում

-2- ԼՂՀ ՊԲ հրամանատար Մ. Հակոբյանն իր նույն 21.11.2012թ. N 333 գրությամբ հայտնում է, որ Թ. Սարուխանյանի սպանության կապակցությամբ ՀՀ ՊՆ Ստեփանակերտի ՌՈ բաժին են տարել թվով 17 զինծառայողի: Մինչդեռ թիվ 91000511 քրեական գործից պարզվում է, որ նշված զինծառայողներից երկուսի ցուցմունքները բացակայում են: Այս զինծառայողներն են՝ Անդրանիկ Սարգսի Եղյան (լեյտենանտ), Հրանտ Գագիկի Գասպարյան (շարքային): Ասվածից պարզ է դառնում, որ նախաքննական մարմինը, ի դեմս ՀՀ ՊՆ առաջին կայազորային քննչական բաժնի քննիչ Ա.Ապրեսյանի և նրա վերադասների, կատարել են հանցագործություն. ոչնչացրել են վերոհիշյալ զինծառայողների՝ իրենց համար անցանկալի ցուցմունքները:

Զինվորների հանդեպ շանտաժ

Բանակում կատարվող սպանությունների ճնշող մեծամասնությունն իրականացվում է ինքնաձիգների միջոցով: Ցանկացած հրազենային սպանությունից հետո, որը տեղի է ունեցել մարտական հենակետում, զինծառայողները, բնականաբար անմիջապես վազում են դեպի կրակոցի ձայնը, եթե նրանք մինչ այդ դեպքի վայրում չէին: Շատ հաճախ նրանք մինչ սպանությունն արդեն լինում են դեպքի վայրում, քանի որ բանակում կատարված սպանությունների գերակշիռ մասին նախորդում է «ռազբորկան»: Մինչդեռ, ըստ գործող մարտական հերթապահության կանոնագրքի, որը ՀՀ բանակ է ներթափանցել ԽՍՀՄ բանակից եւ այլեւս հնացած է, զինվորների շարժը հենակետերում հստակ և խիստ ձևով կարգավորվում է: Մարտական հերթապահությունը պետք է ըստ օրենքի իրականացվի երեք հերթափոխով, որոնցից յուրաքանչյուրի մեջ ընդգրկվում են համապատասխան քանակությամբ զինվորներ: Առաջին հերթափոխը, երկու ժամ դիտակետում հերթապահելուց հետո, պարտավոր է դիրքի ավագի ուղեկցությամբ վերադառնալ գետնատնակ, հանձնել զենքը և հանգստանալ: Երկրորդ հերթափոխը փոխարինում է առաջինին: Այս պահին երրորդ հերթափոխը գտնվում է արթուն վիճակում և նախապատրաստվում է իր երկժամյա հերթապահությանը: Բացի դիտակետում հերթապահող խմբից, մյուս երկու հերթափոխի զինվորները իրավունք չունեն գտնվել դրսում, թերևս, միայն բնական կարիքների համար կարող են դուրս գալ՝ դիրքի ավագի թույլտվությամբ: Մնացած ողջ ժամանակ նրանք պետք է գտնվեն գետնատնակում: Այս կանոնների խախտման համար նախատեսվում է քրեական պատիժ:
Այսպիսով, սկսելով սպանության գործով նախաքննությունը, յուրաքանչյուր քննիչ առաջին հերթին պարզում է, թե ով որտեղ է գտնվել սպանությունից առաջ, սպանության պահին և սպանությունից հետո: Արդյունքում պարզվում է, որ մարտական հենակետի

բոլոր զինվորները խախտել են օրենքը, քանի որ նրանց մի մասը դեպքից առաջ է եղել դեպքի վայրում, մյուս մասը այնտեղ է գնացել կրակոցից հետո: Այս պահից սկսած՝ քննիչն ունենում է լծակներ զինծառայողների դեմ: Որպես կանոն նա սպառնում է զինվորին դատել, ինչից հետո իր մոտ է հրավիրում կոնկրետ զինվորի ծնողին և «բացատրում» իրավիճակը, նաև հուշելով, որ ինքը կարող է ներել «հանցագործ» զինվորին՝ երկու պայմանով. ծնողը պետք է համապատասխան վերաբերմունք ցույց տա իրեն կամ օրինախախտ զինվորը պետք է կատարի իր բոլոր հրամանները՝ պետք է տա այն ցուցմունքները, որոնք պետք են քննիչին: Հաշվի առնելով, որ սա անպայման կիրառվում է բոլոր սպանությունների քրգործերով, անիմաստ է նշել առանձին-առանձին դեպքերը: Դա տեսնում ենք ցուցմունքից, բայց գրեթե ոչ մի զինվոր չի խոստովանում այդ փաստը: Եթե նույնիսկ ցուցմունք է տալիս դրա մասին դատարանում, ապա բոլոր դեպքերում դատավորն անտեսում է այդ փաստերը, քանի որ հակառակ դեպքում նա պետք է միջնորդի քրեական պատասխանատվության ենթարկել ծանր հանցագործություն կատարած քննիչներին և նրանց վերահսկողներին: Բացի այդ, զինվորները քաջ գիտակցում են, որ իրենք չեն կարող ապացուցել, որ քննիչն իրենց դրդել է կեղծ ցուցմունք տալ, նաև իրենց արդեն քննիչն ահաբեկել է և ասել, որ եթե հրաժարվեն ցուցմունքից և գործով նոր քննություն կատարվի, ապա այս անգամ քրեական պատասխանատվության կենթարկվեն մարտական հերթապահության կանոնները խախտելու համար: Եթե, ըստ քր. դատ. օր.-ի, դատարանը վկայի տված ցուցմունքը կարող է հիմք ընդունել միայն այն դեպքում, երբ վկան կաշկանդված չի եղել ո՛չ նախաքննության ընթացքում և ո՛չ էլ դատարանում ցուցմունք տալու պահին, ապա գործնականում բոլոր վկաները կաշկանդված են բոլոր փուլերում: ՌՈ տարվող և կալանքի տակ պահվող զինվորը կա՛մ չգիտի իր իրավունքները, կա՛մ չի կարող այդ իրավունքները պաշտպանել: Ասենք, որ, իրավունքների իմացությունը տվյալ դեպքում, ըստ էության, որևէ դեր չի խաղում: Եթե որևէ ծնող վարձի փաստաբան, ով սկսի օրենքի սահմանված կարգով բողոքել նախաքննական մարմնի դեմ, ապա քննիչը իր հայեցողության տակ ունենալով մնացած բոլոր զինծառայողներին (բոլոր հնարավորություններն ունի՝ ստիպելու նրանց ասել ցանկացած բան) կարող է «պատժել» այս ըմբոստ զինվորին և նրա փաստաբանին. զինվորը վկայից կդառնա մեղադրյալ, իսկ եթե մեղադրանք է առաջադրվել, այդ մեղադրանքին կգումարվեն ևս մի քանիսը: Այսպիսով, անձը ապօրինաբար զրկվում է ազատությունից՝ բերվում ՌՈ բաժանմունք, բացի դրանից նրան չի տրվում որևէ երաշխիքներ խոշտանգումներից, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու, ինչպես նաև անձի ազատության և անձի անձեռնմխելիության իրավունքի իրացման համար: Նախաքննության ընթացքում յուրաքանչյուր վկայի կամ կասկածյալի իրավունքներն այնքան շատ են ոտնահարվում, որ այդ բոլոր խախտումներն անգամ հնարավոր չէ թվարկել:

Որպես մեղադրյալ չեն ներգրավվում

Առանց բացառության, բոլոր գործերով կան զինծառայողներ, առաջին հերթին՝ սպաներ, որոնց հանցանքն ակնհայտ է, բայց նրանք քրեական պատասխանատվության չեն ենթարկվում: Դրա պատճառները հիմնականում երկուսն են.

ա. քննիչի գումարային շահագրգռվածությունը,
բ. քննիչի հրամանով թեթև հանցագործություն կատարած զինծառայողը կեղծ ցուցմունք է տալիս անմեղ ծառայակցի դեմ:

Ավելի հաճախ քննիչներն այս երկու շահերը համատեղում են: Լինում են դեպքեր, երբ քրգործի անհրաժեշտությունից ելնելով, քննիչները վկաներին ստիպում են իրենց վրա վերցնել այլ զինծառայողների կատարած հանցանքները՝ երաշխավորելով, որ դրանց համար իրենց չեն դատի:

-5- Նախաքննական մարմինն ապացուցված է համարել, որ Հակոբյանին ծեծի են ենթարկել զինծառայողներ Գարիկ Հովհաննիսյանը, Արշակ Շահբազյանը և Սերգեյ Սոլովյովը: Կատարվածը որակելով որպես ինքնասպանություն՝ նախաքննական մարմինը մինչ օրս էլ չի տեսնում ակնհայտ կապն այս անձանց արարքի և Արման Հակոբյանի ենթադրյալ ինքնասպանության միջև: Նախաքննական մարմինը պարտավոր էր նման պայմաններում վերոհիշյալ անձանց մեղադրել ՀՀ Քր. օր.-ի 110 հոդվածով (ինքնասպանության դրդում), ինչը չի արել:

Նախաքննական մարմինը գործը կասեցնելուց հետո ցուցմունք է վերցրել վկայից

-5- Համաձայն քր. գործի՝ վկա Անդրանիկ Սիմոնյանը գործով ցուցմունք է տվել այն մասին, որ ինքը դեպքից առաջ զինծառայող Սիմոն Մուրադյանին տեսել է դեպքի վայրում: Ավելի ուշ՝ քրեական գործը կասեցնելուց հետո, 07.08.06 թվականին Անդրանիկ Սիմոնյանը լրացուցիչ ցուցմունք է տվել՝ հրաժարվելով իր վերը նշված ցուցմունքից: Այն, որ նախաքննական մարմինը գործը կասեցնելուց հետո ցուցմունք է վերցրել վկայից, քր. դատ. օր.-ի կոպիտ խախտում է, պաշտոնական դիրքի չարաշահում, ինչի համար, սակայն, դրանում մեղավոր պաշտոնատար անձինք պատասխանատվության չեն ենթարկվում:

Դատաբժշկական եզրակացությունների կեղծում, նենգափոխում

Գրեթե բոլոր գործերով դատաբժիշկ-փորձագետները տալիս են լիովին իրականությանը համապատասխանող եզրակացություն: Հետագայում, քրգործը կոծկելու փուլում, փորձագետները, հարցաքննվելով որպես վկաներ, բացահայտ ձևով կեղծում են փաստերը կամ նենգափոխում դրանք: Հաճախ նրանք քննիչի պահանջով հնարավոր են համարում այնպիսի վարկածներ, որոնք իրականում անհնար են: Դա հնարավոր է դառնում այն պարզ պատճառով, որ չկա որևէ այլընտրանքային բժշկական մարմին, որը նրանց կմեղադրի սուտ ցուցմունք տալու մեջ կամ կհերքի նրանց ասածները:

- 19- Ոչնչացրեցին թիվ 90433199 քրեական գործում առկա դատաբժշկական եզրակացությունը՝ այն փոխարինելով նոր, կեղծ եզրակացությամբ, որը հիմնավորում էր կեղծ վարկածը: Արդյունքում՝ քրեական գործը մինչ օրս էլ մնում է կարճված, սպանությունը՝ չբացահայտված:
-4- Ըստ ծնողի. «Դիահերձարանից տուն տեղափոխելուց հետո մենք տեսել ենք, որ որդուս աջ ձեռքի մատերն արյունազեղված են: Մենք դա լուսանկարել ենք և կարող ենք տրամադրել Ձեր աշխատակիցներին: Մինչդեռ դատաբժիշկն իր եզրակացության մեջ նշում է (գ.հ.1, թ.189), թե իբր որդուս մարմնի վերջույթներում այտուցներ չեն հայտնաբերվել:»

-1- Դատաբժշկական փորձաքննությամբ (եզրակացություն N704-34) Ա. Նազարյանի

մարմնի տարբեր մասերում հայտնաբերվել է մի քանի տասնյակի հասնող վնասվածքներ՝ արյունազեղումներ, կապտուկներ, քերծվածքներ, որոնք, ըստ դատաբժշկի, ժամանակային առումով բաժանվում են 3 խմբի՝

ա. սպանությունից 3-5 օր առաջ
բ. սպանությունից 6 ժամ առաջ
գ. սպանությունից անմիջապես առաջ

Քննիչը բոլոր մանրամասներով քննել է 3-5 օր առաջ Ա. Նազարյանի հանդեպ կատարված բռնության միջադեպը, սակայն սպանությունից 6 ժամ առաջ և սպանությունից անմիջապես առաջ հանգուցյալի ստացած մարմնական վնասվածքների մասին (որոնք անհամեմատ ավելի շատ են և ծանր, քան 5 օրվա վաղեմության վնասվածքները) լռում է: Նոյեմբերի 14-ի նիստում ցուցմունք տվեց մեղադրողի կողմից որպես վկա դատարան հրավիրված փորձագետ, թիվ 704/34 դիակի դատաբժշկական փորձաքննության հեղինակ Վիգեն Ադամյանը.

ա. մինչ ցուցմունք տալը փորձագետը հայտարարեց, որ եզրակացությունից պետք է հանել այն մասը, որում ինքը նշել է, թե մահվանից 3-5 օր առաջ Ա. Նազարյանը ստացել է «աջ դաստակի 5-րդ մատի շրջանի քերծվածք», քանի որ ինքը սխալ է գրել,
բ. դատաբժիշկը հայտարարեց, թե ինքը լուսանկարչից ստացել է 16 լուսանկար, բայց «սխալմամբ» գրել է 19,
գ. «մահը վրա հասնելուց մինչև մոտ 6 ժամ առաջ» Ա. Նազարյանի ստացած «այտային ստորին ծնոտի անկյան և պտկաձև ելունի շրջանների քերծվածքներ, աջ բազկի շրջանի արյունազեղում» վնասվածքների վերաբերյալ հայտնեց, որ հանգուցյալը դրանք կարող էր ստանալ նաև մահվանից 8 ժամ առաջ, 1 րոպե առաջ: Ռ. Մարտիրոսյանի այն հարցին, թե ի՞նչ է նշանակում մինչև բառը և դժգոհությանը, որ նա ըստ էության տալիս է իր եզրակացությանը հակասող ցուցմունք, Ադամյանը հայտարարեց, որ Մարտիրոսյանն ընկնում է բառերի հետևից,
դ. դրան հաջորդեց մեկ այլ ցնցող հայտարարություն, համաձայն որի՝ «մահվանից ոչ շատ առաջ» արտահայտությունը նշանակում է մահվանից 3-5 օր առաջ:

Բոլոր այն քրեական գործերում, որտեղ օգտագործվում է «մահվանից ոչ շատ առաջ» արտահայտությունը, դատաբժիշկն այնուհետեւ քննիչին տված իր ցուցմունքում տալիս է միեւնույն պարզաբանումը. մահվանից րոպեներ առաջ: Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ռ. Մարտիրոսյանն այս արտահայտության վերաբերյալ հարցում է կատարել Ռուսաստանի Դաշնության դատաբժշկական փորձագիտական բյուրոյի տնօրեն պրոֆեսոր Տոմիլինին: Վերջինս մեծահոգաբար պատասխանել է հարցմանը՝ հետեւյալ կերպ.

ա. նշված արտահայտությունը բժշկական տերմին չէ,
բ. նշված կերպ պատասխանում են այն փորձագետներն, ովքեր խուսափում են հարցին կոնկրետ պատասխան տալուց,
գ. իր կարծիքով՝ այդ արտահայտությունը նշանակում է մահվանից 0-30 րոպե առաջ:

Երբ Տոմիլինի գրությունը տուժող կողմը ներկայացրեց դատավոր Սամվել Մարդանյանին, վերջինս կտրականապես հրաժարվեց այն ընդունել: Հրաժարվեց նաեւ պաշտոնական հարցում կատարել դրա շուրջ՝ նշված կամ հայաստանյան կենտրոնին: Ասենք, որ տուժող կողմը ստիպված ինքը կատարեց նման հարցում եւ առ այսօր, չնայած օրենքով նախատեսված ժամկետը սպառվել է, այդպես էլ պատասխան չի ստացել հայաստանյան կենտրոնի տնօրեն Միեր Բիշարյանից:

Դատաբժշկական փորձագիտական եզրակացությունների հետևությունները հաշվի չեն առնվում, դրանց շուրջ քննություն չի կատարվում

Գրեթե բոլոր այն գործերում, որոնցում դիտավորյալ սպանությունները ներկայացվում են որպես ինքնասպանություններ, անզգույշ սպանություններ կամ դժբախտ դեպքեր, հակասություն է առաջանում քննիչի կողմից ուղղորդված վկաների ցուցմունքների և փորձագիտական եզրակացությունների տվյալների միջև: Նման դեպքերում քննիչը կա՛մ նշանակում է կրկնակի փորձաքննություն՝ փորձագետին պատվիրելով փոխել իր եզրակացությունը, կա՛մ, ինչն առավել հաճախ է պատահում, ուղղակի անտեսում է փորձագետի գրածը:

-20- Թեպետ գործով, դիակի դատաբժշկական փորձաքննությամբ պարզվել է, որ սպանվածը մահվանից առաջ ոգելից խմիչք է օգտագործել, քննիչն ապացուցված է համարել, որ սույն մարտական հենակետում խմիչք չի եղել և ոչ ոք չի խմել: Նույնիսկ դատաբժիշկը հարցաքննվելիս պնդել է իր եզրակացության այդ կետը՝ նշելով, որ կարող է այն տրամադրել ցանկացած անկախ փորձագետի՝ համոզված, որ արդյունքը լինելու է նույնը, սակայն դա հաշվի չի առնվել:

-13- Ակնհայտ հակասություն կա դեպքի վայրի և Նարեկ Գալստյանի դիակի վրա հայտնաբերված վնասվածքների միջև: Դատաբժշկական թիվ 461/21 եզրակացության մեջ (գ.հ. թ, թ. 28-32) նշվում է, որ «…դիակի դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերվել են դեմքի, պարանոցի, իրանի վերին և ստորին վերջույթների շրջաններում մաշկի շերտազատման տեղամասեր, որոնք քիմիական այրվածքներ են, առաջացել են բենզինի և նրա գոլորշիների անմիջական ազդեցության հետևանքով…»: Դիակի կրծքավանդակի հետին-կողային շրջանում հայտնաբերվել է 45×23.5սմ չափի մաշկազերծված տեղամաս: Քիչ հավանական է, որ այս ծավալուն ամբողջական վնասվածքն առաջանար «տեղ-տեղ 2.5 սմ բարձրությամբ» բենզինի հորի մեջ ընկնելու հետևանքով: Անհասկանալի է ու տարօրինակ նաև այն, որ Նարեկ Գալստյանի մարմինը քայքայվել է թե՛ մարմնի դիմային և թե՛ հետին մասերում: Ասվածի լրացումն է վկա, զորամասի բուժծառայության պետ Վարդան Սահակյանի ցուցմունքը (գ.հ. 1, թ. 89-90): Նարեկ Գալստյանին հորից հանելուց հետո վկան սրտի անուղղակի մերսում է կատարել, ինչի արդյունքում տուժածի «բերանից (շնչուղիներից) բենզին էր թափվում»: Անհավանական է, որ այդ բենզինը Նարեկ Գալստյանի շնչուղիներում հայտնվեր բենզինի դատարկ հորում ընկած վիճակում: Կարո՞ղ էր, արդյոք, Նարեկ Գալստյանը դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերված կոնկրետ վնասվածքները ստանալ բենզինի դատարկ հորում: Քննիչը չի փորձում ճշտել, թե ի՞նչ պայմաններում կարող էր բենզինը ներթափանցել նրա շնչուղիները: Ավելին, ըստ վկա Ա. Ավետիսյանի՝ Նարեկի գլխին հակագազ կար: Հաշվի առնելով բենզինից և դրա գոլորշիներից ներքին օրգանների

(շնչուղիներ, թոք, ստամոքս) խոր քայքայումները՝ կարելի է ենթադրել, որ Նարեկ Գալստյանին բենզինի հորի մեջ գցելուց հետո փակել են հորի կափարիչը: Չի պատասխանվում նաև հարցին, թե որքա՞ն ժամանակ պետք է Նարեկ Գալստյանը մնար բենզինի հորի մեջ, որպեսզի նրա մարմնի վրա առաջանային դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերված ծանր, կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքները:

-12- ԳԾ պետ, գեներալ Յուրի Խաչատուրովի հրամանով նույն կառույցի սպաներ, գնդապետներ Ս. Աղասյանը եւ փոխգնդապետ Ա. Սարգսյանը, կատարել են ծառայողական քննություն եւ «պարզել», որ Անդրանիկ Սարգսյանի դիազննությամբ «բռնության հետքեր եւ մարմնական վնասվածքներ չեն հայտնաբերվել»: Սակայն, դեռ սպանության առաջին օրը, փետրվարի 1-ին Գորիս քաղաքում դիակի արտաքին զննության արձանագրության մեջ նկարագրված են բոլոր այն վնասվածքները, որոնք ավելի ուշ հաստատվել են դատաբժշկական զննությամբ: Այս հակասության վերաբերյալ քննություն չի կատարվել:

-12- Ըստ դատաբժշկական թիվ 112/7 եզրակացության՝ դատաբժշկական դիազննությամբ Սարգսյանի մոտ հայտնաբերվել է «...գլխի աջից վերհոնքային շրջանի և ճակատային շրջանի քերծվածքներ, կրծքավանդակի շրջանի և աջից գոտկային շրջանի քերծվածքներ, աջ և ձախ հետույքների շրջանների քերծվածքներ, որոնք պատճառվել են կենդանության օրոք՝ բութ առարկաներով, մահվանից կարճ ժամանակ առաջ...»: Քննիչ Խալաթյանը, չցանկանալով պարզել, թե ովքե՞ր, ե՞րբ, որտե՞ղ և ինչի՞ համար են Անդրանիկ Սարգսյանին հասցրել վերը նշված վնասվածքները, քննությունը տարել է կեղծ ուղով, ձգտելով «ապացուցել», թե իբր վնասվածքների առաջացման պատճառը ՈՒԱԶ տեսակի ավտոմեքենայի անհարթ մասերն են, որոնց տղան դիպել է հոսպիտալ տեղափոխվելու ճանապարհին: Քննիչը հաշվի չի առել, որ Անդրանիկ Սարգսյանի հագին եղել է ձմեռային զինվորական տաբատ և բուշլատ: Քննիչը Անդրանիկ Սարգսյանի հագուստները փորձաքննության չի ուղարկել: Դրա փոխարեն նա համոզել է դատաբժիշկ Բիշարյանին ցուցմունք տալ, թե իբր այս հեքիաթը հավանական վարկած է, և այս կերպ քննիչ-դատաբժիշկ հանցավոր խումբը կոծկել է մարմնական վնասվածքների դրվագը: Ինչ վերաբերում է մեքենայի անհարթ մասերից Անդրանիկի վնասվածքներ ստանալուն, ապա նման բան չէր կարող լինել, քանի որ նրա հագին եղել է ձմեռային բամբակյա տաբատ եւ նմանատիպ բաճկոն: Որպեսզի սուր կտրող գործիքը քերծվածքներ առաջացներ նրա թիկունքի տարբեր մասերին, այն պետք է նախ պատռեր վերոնշյալ հագուստը: Վերջինս, սակայն, «անհետացել» է: Իսկ անհետացած տաբատի արտաքին մասի վրա, ամենայն հավանականությամբ, եղել են արյան հետքեր: Բացի այդ, ԱՆ հանրապետական դատաբժշկական գիտագործնական կենտրոնի աշխատակից Բիշարյանը դատաբժշկական եզրակացության մեջ նշել է, որ Անդրանիկի մոտ հայտնաբերվել է որովայնի շրջանի ներքին արյունահոսություն, որի առաջացման պատճառների մասին, սակայն, դատաբժիշկ Բիշարյանը «լռում» է:

-7- Դատաբժշկական եզրակացության մեջ նշվում է, որ դիակի զննությամբ հայնաբերվել են 2 մարմնական վնասվածքներ, որոնք առաջացել են մահվանից 3-4 օր առաջ՝ սահմանափակ մակերեսով բութ առարկայի հարվածի հետևանքով: Նախաքննական մարմինը, չցանկանալով պարզել, թե ովքեր են նշված ժամանակահատվածում ծեծի ենթարկել Մուրադյանին, առանց համապատասխան գործողություններ անելու

հայտարարություն է անում այն մասին, թե իբր դա առաջացել է նրա աշխատանքային գործունեության արդյունքում:

-5- Խախտելով քր. օր.-ի 196-197 հոդվածները՝ դատաբժիշկ Ա. Բաբայանը չի պատասխանել քննիչի որոշման մեջ տեղ գտած թիվ 4 հարցին. «Վնասվածքները ստանալուց որքա՞ն ժամանակ հետո է վրա հասել մահը»: Սակայն, նախաքննական մարմինը չի արձագանքել այս անօրինականությանը՝ հիմք ընդունելով վկաների այն ցուցմունքները, թե իբր Ա. Հակոբյանի մահը վրա է հասել նրան հոսպիտալ տեղափոխելու ճանապարհին: Մինչդեռ, ըստ դատաբժշկի, Հակոբյանի մահվան պատճառ է դարձել առջևից ետ, վերից վար, աջից ձախ ուղղությամբ 1 հրազենային կրակոցը, որի հետևանքով Հակոբյանը ստացել է «գանգի թաղի և հիմի ոսկրերի բազմաբեկոր կոտրվածքներ, վերքային խողովակի ընթացքով ուղեղանյութի ջնջխումով, տարածում ենթակարծրենային և ենթաոստայնային արյունազեղումների, ուղեղի փորոքներում հեղուկ արյան առկայություններով...»: Դատելով այս ծանր վնասվածքներից՝ Արման Հակոբյանի մահը պետք է վրա հասներ դրանից անմիջապես հետո, սակայն ինչ-ինչ պատճառներով նախաքննական մարմնին ձեռնտու է եղել կեղծ վարկածը:

-5- Դիակի դատաբժշկական փորձաքննություն կատարելու վերաբերյալ իր որոշման մեջ քննիչ Խաչատրյանը, ներկայացնելով գործի հանգամանքները, մասնավորապես, նշում է, որ ժամապահ Արման Հակոբյանը «ինքնաձիգից կրակ է արձակել, որի հետևանքով նա տեղում մահացել է»: Մինչդեռ 11.11.2008 թվականի իր որոշման մեջ ՀՀ ՊՆ քննչական վարչության աշխատակից Ս. Հ. Սարգսյանը գրում է, որ Ա. Հակոբյանը գլխի շրջանում ստացել է հրազենային վնասվածք և հոսպիտալ տեղափոխվելու ճանապարհին մահացել: Այս կարևոր հակասության շուրջ ևս նախաքննական մարմինը խորացված քննություն չի կատարել: Գլխի շրջանում Ա. Հակոբյանի ստացած վնասվածքները վկայում են այն մասին, որ նա մահացել է տեղում՝ կրակոցից վայրկյաններ անց: Անհասկանալի է, թե ովքե՞ր և ի՞նչ պատճառով են կեղծ ցուցմունքներ տվել, թե իբր Հակոբյանը մահացել է շատ ավելի ուշ՝ հոսպիտալի ճանապարհին: Այս հարցի պարզաբանման համար քննիչը պարտավոր էր փորձագետին տալ ևս մեկ հարց. «Հրազենային վնասվածք ստանալուց հետո որքա՞ն ժամանակ անց է վրա հասել Ա. Հակոբյանի մահը»: Սակայն, քննիչն այս կարևորագույն հարցը չի տվել իր որոշման մեջ և չի հարցաքննել դատաբժիշկ Բաբայանին այս հարցի շուրջ: Մինչդեռ այս հակասությունը հուշում է, որ դեպքի վայրը ՀԱԿ-ը չի եղել և կեղծ ցուցմունքներով վկաները փորձել են արդարացնել իրենց կողմից դիակը դեպքի վայրից վերցնելու, դեպքի վայրը ոչնչացնելու հանգամանքը: Լրացուցիչ հարցաքննությամբ պետք է հարթել այս հակասությունը, լրացուցիչ հարցաքննել վկաներին, ինչպես նաև դատաբժշկին:

Դատաբժիշկը չի կատարել անհրաժեշտ գործողություններ

Լինում են դեպքեր, երբ գործը կոծկելու անհրաժեշտությունից ելնելով՝ դատաբժիշկները, խախտելով օրենքը, տալիս են թերի եզրակացություններ, շրջանցում և չեն պատասխանում քննիչի կողմից իրենց առաջադրված հարցերին, բնականաբար, վերջիններիս ցանկությամբ և պահանջով: Կամ նույն քննիչի ցուցումով չեն կատարում անհրաժեշտ գործողություններ:

-4- Համաձայն եզրակացության՝ տղայի գլխուղեղում հայտնաբերվել է ուռուցք, սակայն

ա. դատաբժշկական եզրակացությանը կից լուսանկարներում նման ուռուցք չի երևում,
բ. եթե իրոք կար նման ուռուցք, ապա դատաբժիշկը պարտավոր էր այդ ուռուցքից վերցնել նմուշ, ուղարկել փորձաքննական լաբորատորիա հետազոտման՝ պարզելու համար ուռուցքի բնույթը, ինչը նա չի արել:

-1- Թիվ 704/34 դատաբժշական փորձաքննության մեջ նշվում է, որ Ա. Նազարյանի մարմնի տարբեր մասերում հայնաբերվել են վերնամաշկից զուրկ հատվածներ: Իր եզրակացության հետևություններ բաժնում դրա հեղինակ դատաբժիշկ Ադամյանը խուսափում է տալ համար 13 հարցի կոնկրետ պատասխանը: Նա գրում է, որ հնարավոր է այդ վնասվածքներն առաջանային դիակի տեղափոխման ժամանակ: Նշենք, որ նման վնասվածքներ հայտնաբերվել են նաև դիակի արտաքին զննության ժամանակ (գ.հ.1, թ.66-73): Այս վնասվածքներն արձանագրվել են Բերդ քաղաքի հիվանդանոցին կից դատաբժշկական կենտրոնի աշխատակից դատաբժիշկ-փորձագետ Դավիթ Հարությունյանի կողմից:

Համաձայնենք, որ դատաբժիշկ Ադամյանի պատասխանը վերնամաշկից զուրկ հատվածների վերաբերյալ ոչ միայն սպառիչ չէ, այլև ընդհանրապես անհասկանալի է: Եվ դա այն դեպքում, երբ ըստ օրենքի դատաբժիշկն իրավունք չունի խուսափել քննիչի որոշման մեջ նշված հարցերին պատասխանելուց: Այս բացը լրացնելու նպատակով քննիչը հարցաքննել է դատաբժիշկ Ադամյանին: Վերջինս նշված հակասության վերաբերյալ իր ցուցմունքում (գ.հ.6, թ. 20-25) գրում է. «Ա. Նազարյանի դիակը պատգարակին դնելուց, պատգարակից իջեցնելուց և նմանատիպ գործողությունների հետևանքով, այսինքն՝ վերջույթներից բռնելու և դիակը բարձրացնելու, տեղափոխելու ընթացքում կարող էին առաջանալ նշված՝ վերնամաշկից զուրկ տեղամասերը»: Շարունակելով իր այս հանճարեղ միտքը՝ Ադամյանն ասում է. «Դրանք հետևանք են բութ առարկայով, մասնավորապես, ձեռքով դիակը բարձրացնելու ընթացքում նշված շրջաններում բռնելուն և սեղմելուն»: «Ավելացնեմ, որ Ա. Նազարյանի դիակը հայտնաբերվել է 27.07.2010թ.-ի ժամը 07:50-ի սահմաններում, այսինքն՝ արևածագից հետո և մինչև դեպքի վայրի զննության ավարտը՝ ժամը 13:55-ը շուրջ 6 ժամ այն գտնվել է արևի տակ, որը միանշանակ կնպաստեր մաշկի շերտազատմանը»: Նկատենք, որ այս հանճարեղ մտքերը ոչ միայն համոզիչ չեն, այլև ակնհայտ ստահոդ են: Այսպես, տուժող կողմը սույն խնդրով դիմել է Հայաստանում աշխատող մի շարք բազմափորձ բժիշկների, այդ թվում և պաթոլոգոանատոմների (ախտաբանական կազմախոսության մասնագետ), որոնք միանշանակ հերքել են նման պայմաններում և նշված ժամանակահատվածում նմանատիպ վնասվածքների առաջացման հնարավորությունը:

Տուժող կողմն այս հարցը պարզելու նպատակով ուսումնասիրել է մի շարք դատաբժշկական ձեռնարկներ, այդ թվում նաև՝ նույն Վ. Ադամյանի կենտրոնի տնօրեն, ակադեմիկոս Շոթա Վարդանյանի «Դատաբժշկություն» դասագիրքը, որում, ի թիվս այլոց, խոսվում է հետմահու դիակային փոփոխությունների մասին: Այս գլխում բացարձակապես չի խոսվում այն մասին, թե որոշակի պայմաններում դիակի մոտ մեկ, երկու, նույնիսկ՝ երեք օր անց կարող են նման, վերնամաշկից զուրկ, հատվածներ առաջանալ: Այսինքն՝ Վ. Ադամյանի ներկայացրած վարկածը որևէ գիտական հիմնավորում չունի: Ելնելով վերոհիշյալից՝ գալիս ենք հետևության, որ չնայած դատաբժշկական փորձաքննությամբ ապացուցված, վերնամաշկից զուրկ հատվածներն առաջացել են Ա. Նազարյանի մահից

հետո, սակայն դրանց առաջացման պատճառները չի կարելի փնտրել դիակային բնական փոփոխությունների համատեքստում, դրանք առաջացել են նախաքննության մարմնին անհայտ (միգուցե նախաքննական մարմնին հայտնի, բայց չլուսաբանված) ճանապարհով և պետք է դասվեն մարմնական վնասվածքների շարքին:

Դատաբժշկական եզրակացության կեղծում

-12- Իր ցուցմունքով զորամասի բժիշկ Ա. Բ. Ավայանը (նյութեր թ. 26-30) խոստովանում է, որ իր ախտորոշումն ու երկու օր շարունակ կատարած բուժումը սխալ է եղել: Այս մասին են վկայում նաև վերոհիշյալ դատաբժշկական եզրակացության «Հետևություններ» բաժինը, որում որպես մահվան պատճառ է նշվում աթերոսկլերոզ հիվանդությունը: Չնայած այս փաստին, քննիչ Խալաթյանն այս դեպքում ևս Ա. Բ. Ավայանի գործողություններում հանցակազմ չի տեսնում: Այս անգամ բժիշկները՝ նույն ՀՀ ԱՆ դատական բժշկության գիտագործնական կենտրոնի (ԴԲԳԳԿ) կազմ. մեթոդ բաժնի վարիչ, դոցենտ Գ. Կ. Հարությունյանը և նույն կառույցի փորձագետ Ռ. Կ. Վարդանյանը ՀՀ ԱՆ ԱԱԻ-ի կլինիկական սրտաբանության ամբիոնի դոցենտ Ա. Վ. Դավթյանի հետ մեկտեղ, գրում են թիվ 45/հձ փորձագիտական եզրակացությունը, համաձայն որի զորամասի բժիշկ Ա. Բ. Ավայանը, իրոք, սխալ է ախտորոշել Անդրանիկի հիվանդությունը, սխալ բուժում է կատարել, բայց և այնպես Ավայանը մեղավոր չէ, մեղավոր է նույն ինքը՝ Անդրանիկ Սարգսյանը, որն իր գանգատով (ցավեր որովայնի շրջանում) ապակողմնորոշել է բժշկին: Սույն եզրակացությունն էլ հիմք է տվել Խալաթյանին՝ մերժելու բժշկի նկատմամբ քրեական գործի հարուցումը:

Դատաբժշկական եզրակացության հետևությունների անտեսում

Բոլոր այն դեպքերում, երբ դատաբժշկական եզրակացության տվյալները հակասում են կեղծ նախաքննությանը, սակայն դրանք այնքան ակնհայտ են, որ այլևս հնարավոր չէ փոխել կամ կոծկել, նախաքննական մարմինն ու դատարանները, որպես կանոն, դրանք անտեսում են. դրանց շուրջ քննություն չի կատարվում, դրանք մեղադրանքի կամ դատավճռի հիմքում չեն դրվում:

-4- Արթուր Ղազարյանի դիակի դատաբժշկական թիվ 1159/54 փորձաքննության «Դիակի ներքին ուսումնասիրություն» բաժնում դատաբժիշկը նշում է, որ հանգուցյալի գլխի գագաթնային և կողմնագագաթնային շրջաններում հայտնաբերվել են վնասվածքներ: Մեջբերում. «Գլխի մաշկի տակ, գագաթնային շրջաններում, ընդգրկելով վիրահատական վերքերի պրոեկցիաները, առկա է անկանոն ձևի, մուգ և բաց, իսկ կողմնագագաթային շրջանում՝ մուգ կարմրավուն, անհամասեռ ընդհանուր 15,5×9,0 սմ չափի արյունազեղում, որը տեղ-տեղ ընդգրկում է ապոնևրոզի ամբողջ հաստությունը (գ.հ.1, թ.189)»: Միաժամանակ «…աջ երիկամի դրունքի շրջանում, հետին մակերեսին, պատյանի տակ, առանց վերջինիս ամբողջության խախտման, առկա է անկանոն ձևի 1,2×0,8×0,21սմ չափսի, կարմիր գույնի արյունազեղում»: Չնայած այս փաստին՝ եզրակացության հետևություններ մասում գրված է. «Քաղ. Ա. Ղազարյանի մոտ դատաբժշկական փորձաքննության ժամանակ մարմնական վնասվածքների օբյեկտիվ հատկանիշներ չեն հայտնաբերվել»: Ընդ որում՝ այս կապակցությամբ եզրակացության մեջ որևէ պարզաբանում չկա:

-4- Դատաբժիշկը, խուսափելով պատասխանել քննիչի առաջադրած թիվ 3 հարցին, այն է՝ «Ե՞րբ է վրա հասել Ա. Ղազարյանի մահը», եզրակացության «Հետևություններ» մասում գրում է. «Համաձայն քաղ. Ա. Ղազարյանի անվամբ լրացված հիվանդության տվյալների, նրա մահը վրա է հասել 21.12.2010թ. ժ.00:30-ին»: Եթե օրենքը թույլ տար հիմնվել հիվանդության պատմության տվյալների վրա, ապա անհրաժեշտ չէր լինի կատարել դատաբժշկական դիազննություն և նման հարց ուղղել դատաբժշկին:

Ռազմական բժիշկների կողմից տրված ախտորոշումների անտեսում՝ դատաբժշկական փորձագիտական եզրակացություններ գրելիս

-17- Ստեփանակերտի ռազմական հոսպիտալի բժիշկները Գեղամ Սերգոյանի մոտ հայտնաբերել էին ծնոտի կոտրվածք, սակայն ԴԲԳԿ-ի նախկին տնօրեն Շոթա Վարդանյանի կառույցում կոտրվածքը «անհետացել» է:

ՀՀ Առողջապահության նախարարության Հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոնում վարվող արատավոր կադրային քաղաքականությունը

Պետական միևնույն կառույցում ընդունված չէ, չի խրախուսվում սերտ ազգակցական կապերի մեջ գտնվող անձանց համատեղ աշխատանքը, մինչդեռ Շոթա Վարդանյանի հետ մեկտեղ նույն կառույցում էին աշխատում և աշխատում են Աշոտ Դալլաքյանը՝ Շոթայի քրոջ որդին (որպես դատաբժիշկ), Շոթա Վարդանյանի դուստրը՝ որպես լաբորատորիայի աշխատակից, ինչպես նաև նրա փեսան՝ Արսեն Բաբայանը (որպես դատաբժիշկ): Բնականաբար, այսպիսի իրավիճակը մեծապես նպաստում է կոռուպցիոն ռիսկերի առաջացմանը:

Բուժում իրականացնող բժշկի ներգրավումը հանձնաժողովային փորձաքննության մեջ

Եթե անձը, ըստ քննիչի վարկածի, մահացել է հիվանդությունից, ապա որպես կանոն գործով կատարվում է հանձնաժողովային փորձաքննություն, և ըստ օրենքի նշված հանձնաժողովի մեջ պետք է ներգրավվեն բժշկական կոնկրետ մասնագիտացում ունեցող Հայաստանի հայտնի և լավագույն բժիշկները: Նման դեպքերում անթույլատրելի է մասնակցությունն այն բժիշկների կամ բժշկի, ովքեր իրականացրել են հիվանդի բուժումը, ինչից հետո հիվանդը մահացել է (իմա՝ ովքեր առնվազն տեսականորեն կարող են մեղավոր լինել անձի մահվան մեջ): Նշված բժիշկը նշված գործով կարող է հանդես գալ միմիայն որպես վկա:

-4- Որպես դատաբժշկական եզրակացության համահեղինակ են ճանաչվել ՀՀ ՊՆ կենտրոնական կայազորային զորակոչային հանձնաժողովի (ԿԿԶՀ) աշխատակիցներ Ա. Հակոբյանը, Հ. Մելիքյանը և Գ. Անժելովը, ինչն անթույլատրելի է, քանի որ նրանք են իրականացրել վիրահատությունը և հանդիսանում են շահագրգիռ կողմ: Միևնույն ժամանակ անհասկանալի է, թե ո՞րն է կոնկրետ նրանց դերը սույն եզրակացության մեջ: Դատաբժշկի կողմից չի նշվում, թե նրանք կոնկրետ ո՞ր մասով են պատասխանատու սույն եզրակացության համար. նրանց կարծիքն ու տեսակետն առանձին չի ներկայացվել:

Այս գործով կարելի է համոզված ասել, որ դատաբժիշկը խախտել է ՀՀ քր. դատ. օր.-ի 85-րդ և քր. օր.-ի 338-րդ հոդվածները: Հենց սա է պատճառը, որ երկու տարվա փորձագիտական ստաժ ունեցող սկսնակ փորձագետ Ի. Ֆ. Մելքոնյանն ու նրա ղեկավար Ծոթա Վարդանյանը չեն ցանկացել ստորագրել սույն կեղծիքի տակ: Այս առումով պետք է հաշվի առնել, որ սպանված զինվորի մայրը՝ Ի. Ղազարյանը, Ծ. Վարդանյանի ազգականն է, վերջինս գիտի այդ կնոջ արդարամիտ բնավորությունը, համոզված է, որ անպատիժ չի մնա: Դրանում նա լրացուցիչ համոզվեց, երբ դեպքից օրեր անց մայրը գնաց դատաբժշկական կենտրոն և մեծ աղմուկ բարձրացրեց: Հենց այս պատճառով էլ Ծ. Վարդանյանը, չցանկանալով, որպեսզի հարվածն ընկնի իր կառույցի վրա, որպես մասնագետներ ներգրավեց հետևյալ անձանց՝ ՊՆ ԿԿՀՀ-ի նյարդավիրաբուժության բաժնի պետ Ա. Հակոբյանին, ՊՆ ԿԿՀՀ-ի նյարդավիրաբույժ Հ. Մելիքյանին և ՊՆ ռազմաբժշկական վարչության (ՌԲՎ) գլխավոր անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ Գ. Անժելովին և ստիպեց նրանց ստորագրել նշված եզրակացության տակ, ինչի իրավունքը չուներ: Եթե նա ուզում էր ստանալ մասնագետների եզրակացությունը, ապա նա կարող էր և պարտավոր էր նշանակել հանձնաժողովային փորձաքննություն, սակայն առաջնային եզրակացությունը պետք է տար միմիայն փորձագետ Ի. Ֆ. Մելքոնյանը: Ինչպես նշում են այս գործին քաջածանոթ մասնագետները՝ սա առաջին դեպքն է, երբ առաջնային փորձաքննությունը վերածվում է հանձնաժողովայինի: Այսինքն, ամենայն հավանականությամբ, ի սկզբանե, վերը նշված պատճառով, դատաբժիշկը չի ցանկացել կամ հրաժարվել է իր վրա վերցնել կեղծ եզրակացության պատասխանատվությունը եւ օրենքի խախտմամբ ստեղծվել է կեղծ հանձնաժողով, որպեսզի պատասխանատվությունը տարածվի նշված հանձնաժողովականների վրա, կիսվի նրանց միջեւ:

Դատաբժշկական փորձաքննության մեջ չեն նշվում բոլոր վնասվածքները

-3- Դատաբժիշկ Ս. Ֆ. Սևոյանը փորձաքննությամբ չի հայտնաբերել նույնիսկ այն վնասվածքները, որոնք հայտնաբերվել են դիակի արտաքին զննությամբ:

-1- Դիակի դատաբժշկական զննությամբ Ա. Նազարյանի գլխի շրջանում հայտնաբերվել են բազմաթիվ կոտրվածքներ և ճաքեր: Ընդ որում, դրանց մի զգալի մասը տեղակայված է գլխի այն շրջաններում, որոնք կապ չունեն հրազենային վերքի խողովակի հետ և չէին կարող առաջանալ նաև կրակոցի լրացուցիչ արգասիք հանդիսացող գազերի ճնշման պատճառով: Այլ կերպ ասած՝ Նազարյանի գլխի շրջանում առկա էին վնասվածքներ, որոնք առաջացել էին ոչ թե կրակոցների, այլ այդ շրջաններում հասցված մեխանիկական վնասվածքների արդյունքում: Մյուս մնացած այլ փաստերի հետ մեկտեղ հուշում էր այն մասին, որ մինչ հրազենային կրակոցը Արտակ Նազարյանը ծեծի և խոշտանգումների, այդ թվում՝ նաև գլխի շրջանում բութ առարկաներով հասցված հարվածների արդյունքում, հայտնվել էր մահամերձ վիճակում, գտնվել է կոմայի մեջ: Եթե հանցագործները թույլ տային, որպեսզի նա մահանա այդ վնասվածքներից, ապա նրանց պատիժը կլիներ անխուսափելի: Այդ իսկ պատճառով, տեսնելով, որ Արտակ Նազարյանը մահանում է, կրակել են նրա բերանի մեջ, որպեսզի ինքնասպանության պատրանք ստեղծվի: Ասվածից հասկանալի է հարցի կարևորությունը և նաև գործով շահագրգիռ դատաբժիշկ Ադամյանի արձագանքը գլխի շրջանում հայտնաբերված վերը նշված կոտրվածքների և ճաքերի վերաբերյալ: Նա այս բոլոր կոտրվածքները ներկայացնում է որպես կրակոցի լրացուցիչ գործոնների հետևանք: Հաշվի առնելով, որ տուժող կողմը չէր կարող նման

պայմաններում ապացուցել իր ասածի հիմնավորվածությունը, քանի որ, ըստ օրենքի, մասնագետն Ադամյանն էր, և միայն նա կարող էր տալ եզրակացություն այս վնասվածքների շուրջ, տուժող կողմը որոշեց չանդրադառնալ՝ համոզված լինելով, որ անարդյունավետ կլինի:

-21- Դատաբժշկական փորձաքննությամբ չեն արձանագրվել մարմնի վրա առկա բոլոր վնասվածքները: Նշված չէր, որ Օհանջանյանի ձախ ականջը վնասված էր, ուռած, կարմրած և տարբերվում էր աջից: Նշված չէր, որ մահացածի մատերը ափի կողմից կապտած էին: Բացի այդ, բանակ զորակոչվելիս, Օհանջանյանը չուներ առջևի կտրող ատամներից մեկը, սակայն դատաբժիշկն արձանագրել էր, որ վերևի ատամնաշարն, իբր, ամբողջական է:

Անկախ փորձաքննության մերժում նախաքննական մարմնի և դատարանի կողմից

Հաշվի առնենք, որ ըստ օրենքի գործով կողմերը իրավունք ունեն անկախ փորձաքննության՝ դատաձգաբանական, դատաքիմիական, դատակենսաբանական, դատահետքաբանական և այլն: Առավել հաճախ անհրաժեշտություն է առաջանում անկախ դատաբժշկական փորձաքննությունների, սակայն մինչ օրս բոլոր նմանատիպ միջնորդությունները դատարանների կողմից կտրականորեն մերժվել են, եթե այդ նախաձեռնությունը չի եկել դատահրավական համակարգի կողմից: Սրանով նախաքննական մարմինը և դատարանը կոպտորեն ոտնահարում են կողմերի իրավունքները:

Դատահոգեբանական եզրակացությունը հակասական է և կրկնակի փորձաքննություն չի նշանակվում

Անհրաժեշտ է հայտնել, որ Հայաստանում շուրջ տասնհինգ տարի է, ինչ գործում է Էլդա Գրինի կողմից ստեղծված Դատահոգեբանական կենտրոնը: Այս ընթացքում նա տվել է հարյուրավոր հետմահու դատահոգեբանական եզրակացություններ: Դրանցում հայտնի չէ գոնե մեկ դեպք, որ նրա տված եզրակացությունները հակասեն նախաքննական մարմնի կողմից ներկայացված հետևություններին, այսինքն, նախաքննական մարմնի բոլոր վարկածները «հաստատվում» են Էլդա Գրինի եզրակացությամբ: Միայն այս պահի դրությամբ քննվող գործերից երեքով (Արտակ Նազարյանի, Թորգոմ Սարուխանյանի, Վալերիկ Մուրադյանի) նշված փորձագետը տվել է նույնաբովանդակ դրական եզրակացություն:

-1- Ըստ Արտակ Նազարյանի դիակի դատաբժշկական զննության «Հետևություններ» բաժնի թիվ 11 կետի. «Դատաքիմիական ուսումնասիրությամբ Ա. Նազարյանի դիակից վերցված արյան նմուշում հայտնաբերվել է 1,8 պրոմիլե էթիլ սպիրտ, մեզում՝ 0,7 պրոմիլե, որը համապատասխանում է միջին աստիճանի ալկոհոլային խմածությանը: Ելնելով արյան և մեզի նմուշներում հայտնաբերված էթիլ սպիրտի քանակական փոխհարաբերությունից, այն գտնվում է էլիմինացիայի՝ արտաթորման փուլում, և հանգուցյալն այն ընդունել է մահը վրա հասնելուց մոտ 1-1,5 ժամ առաջ»: Այս փորձաքննության կապակցությամբ, ինչպես տուժող, այնպես էլ պաշտպանվող կողմը միասնական միջնորդություններ են արել.

ա. փորձագետ Է. Գրինին որպես վկա հրավիրել դատարան և հարցաքննել.
բ. նշանակել կրկնակի հետմահու դատահոգեբանական փորձաքննություն:

Նախագահող դատավոր Մարդանյանը մերժել է կողմերի այս երկու միջնորդությունները: Միաժամանակ, կողմերը դատարանի ուշադրությունը հրավիրեցին այն փաստի վրա, որ միջին աստիճանի հարբածություն ունեցող անձի հոգեվիճակը (տվյալ դեպքում՝ Ա. Նազարյանի հոգեվիճակը) հնարավոր չէ որոշել՝ համապատասխան գիտական մեթոդների բացակայության պատճառով: Ամբաստանյալ Հ. Մանուկյանի փաստաբան Գեւորգյանը դատարանին ներկայացրեց վերը նշվածը հիմնավորող փաստաթուղթ՝ տրված մեկ այլ փորձագիտական կենտրոնի կողմից: Դատավորի մերժումն ստանալուց հետո, փաստաբաններ Գեւորգյանն ու Ղասաբողլյանն իրենք նույն հարցումով դիմեցին Էլդա Գրինին.

«Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածով և հաշվի առնելով Ձեր գիտական փորձը և այդ բնագավառում Ձեր ունեցած հեղինակությունը, խնդրում եմ հայտնել, արդյոք հնարավոր է պարզել կամ կա՞, արդյոք, գիտական մեթոդիկա՝ միջին ծանրության և ծանր աստիճանի ալկոհոլային հարբածության վիճակում գտնվող անձի հոգեվիճակը պարզելու համար»:

Ի պատասխան հարցմանը՝ ստացվեց հետևյալ գրությունը.

«Ի պատասխան Ձեր 19.03.2013թ-ի համար 1/1 a գրության՝ հայտնում եմ հետևյալը. միջին և ծանր աստիճանի հարբածության վիճակում գտնվող անձի մոտ բացառվում է աֆեկտի ախտորոշումը, քանի որ ալկոհոլի ազդեցության տակ փոխվում են գործընթացների դինամիկան: Եթե հանցագործությունը կատարվել է միջին և ծանր աստիճանի հարբածության ֆոնի վրա, աֆեկտի ախտորոշման հարցը քննարկելն առնվազն անգրագիտություն է»:

Իրավահաջորդի ներկայացուցիչ Ռ. Մարտիրոսյանը դատարանում պաշտոնապես հայտարարեց, որ սույն գործով Էլդա Գրինը տվել է բացահայտ հանցավոր եզրակացություն՝ մի շարք կետերով: Այս մասին հայտարարվեց նաեւ մամուլի ասուլիսի ժամանակ: Առ այսօր Էլդա Գրինը չի արձագանքել ո՛չ մեղադրանքներին, ո՛չ էլ իր անգրագիտության վերաբերյալ իր իսկ կողմից տրված տեղեկանքին: Է. Գրինի տված եզրակացությունը կենտրոնական, հիմնարար փաստաթուղթ էր այս գործում, որի հիման վրա դատարանը ապացուցված համարեց պատճառահետեւանքային կապը 5 ամբաստանյալների գործողությունների եւ Արտակ Նազարյանի ենթադրյալ ինքնասպանության միջեւ եւ նրանց դատապարտեց տարբեր տարիների ազատազրկման: Այս պարագայում այն, որ դատավորը չցանկացավ որպես վկա լսել փորձագետ Է. Գրինին՝ աղաղակող անօրինականության եւ անարդարության օրինակ է: Սա միաժամանակ ցույց է տալիս, որ դատավորը շատ լավ տեղյակ էր, որ այդ փաստաթուղթը կեղծ է եւ, որ նրան դատարան հրավիրելու դեպքում գործը կտապալվի:

Քրեական գործով չեն կատարվել հանցագործության բացահայտման առումով խիստ կարևոր նշանակություն ունեցող անհրաժեշտ այլ փորձաքննություններ, որոնց արդյունքները կարող են էապես հակասել կեղծ նախաքննությանը

-3- Փորձագետները Տիգրան Համբարձումյանի խմածության աստիճանը որոշելիս էապես նահանջել են ընդունված կարգից. դատաքիմիական անալիզի են ենթարկել ոչ թե հանգուցյալի արյունը և մեզը, այլ միայն մկանը և դրանում հայտաբերել են 0,7 պրոմիլլե էթիլ սպիրտ, ինչի հիման վրա եզրակացրել են՝ թեթև աստիճանի խմածություն: Նման հետևությունը չի պատասխանում հետևյալ հարցին. եթե մկաններում հայտնաբերվել է նման չափի սպիրտի պարունակություն, ապա որքա՞ն է եղել սպիրտի պարունակությունը նրա արյան և մեզի մեջ: Անհասկանալի է, թե ինչու՞ են ՀԴԲԳԿ-ի աշխատակիցները արյան համապատասխան չափաքանակի առկայությամբ շեղվել ընդունված կանոններից և անալիզ վերցրել մկանից:

-1- Շուրջ մեկ տարի տևած նախաքննության ընթացքում քր. գործով չի կատարվել կարևորագույն փորձաքննություններից մեկը՝ Ա. Նազարյանի հագուստը չի ուղարկվել դատաքիմիական-դատակենսաբանական փորձաքննության: Այս միտումնավոր բացը պետք է անհապաղ շտկել: Նազարյանի հագուստը, այդ թվում նաև՝ ներքնազգեստը, կոշիկները, գլխարկը և գուլպաները, պետք է ուղարկել վերոհիշյալ փորձաքննության մասնագետներին՝ պարզելու համար.

ա. Կա՞ն արդյոք հագուստի վրա արյան հետքեր, թե՞ ոչ: Եթե այո, ապա ի՞նչ խմբի են պատկանում, կարո՞ղ էին արդյոք պատկանել Ա. Նազարյանին, հագուստի ո՞ր մասում են դրանք տեղակայված:
բ. Կա՞ն արդյոք հագուստի վրա փսխման հետքեր,
գ. Կա՞ն արդյոք հագուստի վրա ուղեղանյութի հետքեր,
դ. Կա՞ն արդյոք Ա. Նազարյանի գուլպաների վրա բուսականության հետ շփման հետքեր,
ե. Էլի ի՞նչ հետքեր կան Ա. Նազարյանի հագուստի վրա:

Բացի դա, ըստ զորամասի իրավաբան լեյտենանտ Հ. Ուդումյանի ցուցմունքի (գ.հ.8, 2.4), Ա. Նազարյանը մշտապես զրահաբաճկոնով էր դիտակետ բարձրանում: Վկայի համար տարօրինակ է, որ նրա դիակը հայտնաբերել են առանց զրահաբաճկոնի: Ելնելով վերոհիշյալից՝ զրահաբաճկոնն առգրավելու, զննելու, դատահետքաբանական-ձգաբանական-քիմիական-կենսաբանական փորձաքննությունների ուղարկելու տուժող կողմի միջնորդությունը պետք է բավարարվեր, սակայն մերժվել է:

-2- Թիվ 07941103 (զենքի) և թիվ 07731103 (հագուստի ձգաբանական) փորձագիտական եզրակացությունները գրվել են 4 երկար ամիսների ընթացքում: Դրանք իրենց մեջ պարունակում են մի շարք հակասություններ.

ա. Դեպքի վայրում, դիակից ոչ հեռու հայտնաբերվել է արյան խմբի էմբլեմ, որում նշված է, թե իբր հանգուցյալի արյունը պատկանել է 2-րդ խմբին: Մինչդեռ ըստ դատաբժշկական կենտրոնի տված եզրակացության՝ Թ. Սարուխանյանն ունեցել է 3-րդ խմբի արյուն,

բ. Անհասկանալի է, թե ինչպե՞ս է արյան խմբի էմբլեմը հայտնվել դիակից հեռու: Ո՞վ է այն պոկել հանգուցյալի հագուստից: Իր ցուցմունքում (գ.հ.4, թ.61-62) դատաձգաբան-փորձագետ Հրայր Ղուկասյանը ենթադրում է, թե էմբլեմը կարող էր պոկվել կրակոցից առաջացած գազերի ճնշման հետևանքով: Սակայն, փորձագետ Ղուկասյանն իրավունք չուներ պատասխանել այս հարցին, քանի որ դրա պատասխանը մտնում է դատահետքաբանական փորձագետի իրավասության ոլորտում: Նման պայմաններում քննիչը պարտավոր էր Թորգոմ Սարուխանյանի ենթադրյալ հագուստը ուղարկել դատահետքաբանական փորձաքննության՝ պարզելու համար ոչ միայն այս հարցը, այլև այն, թե կայի՞ն արդյոք հագուստի վրա մեխանիկական կամ այլ կարգի վնասվածքների հետքեր և որո՞նք էին դրանց առաջացման մեխանիզմները, ի՞նչ վաղեմություն ունեին այդ վնասվածքները, ինչը, սակայն, չի արվել:

գ. Չնայած տուժող կողմի միջնորդությանը, Թորգոմ Սարուխանյանի հագուստը դատաքիմիական-դատակենսաբանական փորձաքննության չուղարկվեց՝ պարզելու համար, թե կա՞ն արդյոք հանգուցյալի հագուստի վրա արյան հետքեր, մարդու են պատկանում դրանք, թե՞ կենդանու, եթե մարդկային արյան հետքեր են, ապա ո՞ր խմբին են պատկանում, կարո՞ղ էին արդյոք պատկանել Թորգոմ Սարուխանյանին, որտե՞ղ են դրանք տեղակայված, վկայու՞մ են արդյոք այն մասին, որ սպանությունից հետո Սարուխանյանի մարմինը տեղաշարժվել է: Կա՞ն արդյոք Թորգոմ Սարուխանյանի հագուստի վրա այլ արյան հետքեր, ո՞ր խմբին են պատկանում, գործով անցնող, կամ գումարտակի զինծառայողներից ո՞ւմ արյան հետ են համընկնում:

Ակնհայտ ծեծի հետքերը թաքցնելու համար վերցվում են բազմաթիվ վկաների ցուցմունքներ

Գրեթե բոլոր սպանության գործերով դատաբժիշկը դիակի զննությամբ հայտնաբերում է մարմնական վնասվածքներ՝ քերծվածքներ, կապտուկներ, արյունազեղումներ, որոնք հանգուցյալին են պատճառվել կենդանության օրոք՝ սահմանափակ մակերես ունեցող առարկաներով (բռունցք, քար, փայտ, երկաթի կտոր և այլն): Գրեթե միշտ այս վնասվածքները հակասում են նախաքննական մարմնի կողմից կատարված կեղծ քննությանը, այդ իսկ պատճառով քննիչները տարբեր ճանապարհներով ազատվում են այդ փաստերից: Մի դեպքում գրում են, թե իբր այդ վնասվածքները կարող էին առաջանալ այն պահին, երբ հանգուցյալը կրակոցից հետո վայր է ընկնում, մեկ այլ դեպքում ենթադրվում է, թե կարող էին առաջանալ աշխատելիս, երրորդ դեպքում, թե իբր վնասվածքները առաջացել են վիրավոր զինվորին օգնություն ցույց տալու նպատակով արագ և անփութորեն տեղափոխելիս և այլն: Իսկ այն դեպքերում, երբ այս վարկածները օգտագործել հնարավոր չէ, քննիչն ընդամենը դրանց շուրջ քննություն չի կատարում:

-12- Անդրանիկ Սարգսյանի մարմնի վրա դատաբժշկական դիազննությամբ հայտնաբերված վնասվածքների իրական պատճառները կոծկելու նպատակով քննիչը ցուցմունքներ է կորզել ուղեկցող զինվորներից և մեքենայի վարորդից, թե մեքենայի նստատեղին և կողային պատերի վրա կային բազմաթիվ անհարթություններ, որոնց

դիպչելով, հարվածելով կարող էին առաջանալ նման վնասվածքները: Տուժող կողմի բոլոր պնդումները և բողոքները, թե նման բան չէր կարող լիներ, պահանջները, որպեսզի այս հարցի շուրջ հարցաքննվի դատաբժիշկը, որպեսզի դրա պարզաբանման համար ստեղծվի անկախ բժշկական հանձնաժողով, մինչև վերջ կտրականապես մերժվեցին քննիչի կողմից:

-20- Ըստ բազմաթիվ վկաների, կապտուկները առաջացել են, օրինակ, դիակը դեպքի վայրից տեղափոխելիս:

Դատախազի ցուցումները չեն կատարվել կամ կատարվել են զգալի ուշացմամբ

Իրականում որևէ քննիչ չի կարող չկատարել վերադաս դատախազի ցուցումները կամ կատարել ուշացմամբ: Եվ նշված դեպքերում դատախազը ընդամենը առաջնորդվում է երկակի չափանիշներով կամ տուժողի աչքին «թոզ փչելով»: Նա գրավոր ցուցում է տալիս քննիչին, սակայն բանավոր հրամայում է չկատարել իր իսկ տված ցուցումը: Սա է պատճառը, որ դատախազները երբեք քննիչներին չեն պատժում իրենց ցուցումը չկատարելու կամ ուշ կատարելու համար:

-8- Դատախազ Թևան Միրզաբեկյանը մերժել է պաշտպանի միջնորդությունը՝ մերժումը չհիմնավորելով (գ.հ.2, թ.151-152): Սակայն կարճ ժամանակ անց, այնուամենայնիվ, ներքին կարգով հրամայել է փոխել քննիչին, ինչն էլ կատարել է 6-րդ ՔԾ բաժնի պետ Վ. Սմբատյանը (գ.հ.2, թ.155): Հասկանալով, որ Իգնատ Ենգիբարյանի ցուցմունքները կարող են մեծ վտանգ ներկայացնել իր համար՝ նույն Թ. Միրզաբեկյանն իրեն ապահովագրելու նպատակով 14.05.2012թ.-ին ցուցում է տալիս նախաքննական մարմնին: Բացի փամփուշտների հետ կապված կետից դատախազն անդրադառնում է նաև հետևյալին. «Վկա Ռ. Սաֆարյանը ցուցմունք է տվել, որ «Վահրամաժայռ» հենակետին տրամադրվել է ընդամենը 20 լ կամ քիչ ավելի դիզվառելիք, և այն վերջանալուց հետո ստիպված են եղել այլ հենակետից վառելիք ձեռք բերել: Անհրաժեշտ է այդ ուղղությամբ ևս կատարել քննություն և պարզել, թե ի՞նչ կարգով է մատակարարվել դիզվառելիքը և արդյո՞ք այդ հարցում չարաշահումներ չեն կատարվել»: Դատախազի այս ցուցմունքը քննիչը չի կատարել: Դատախազը կարգադրում է նաև հարցաքննել վաշտի հրամանատար Ն. Նամալյանին, ով «սպանության դեպքից մի քանի րոպե առաջ գտնվել է «Հակոբասար» մարտական հենակետում»: Քննիչը դատախազի այս ցուցումը կատարում է միայն դրանից 4 ամիս անց, սպանությունից 7 ամիս անց, երբ սպանությունն արդեն կոծկված էր:

Կողմերի հայտարարությունները հանցագործությունների մասին քննում են այն անձինք, ում կողմից արվել են հանցագործությունը

-13- Հարազատի բողոքին ի պատասխան, նրան հրավիրեցին զինդատախազություն, սակայն այնտեղ դիմավորեց ոչ թե դատախազը, այլ Գորիսի կայազորի զինդատախազ պրն. Մանուշակյանը, ով, ըստ հարազատի, հենց Նարեկ Գալստյանի սպանության գործի գլխավոր կոծկողն է: Վերջինս ագրեսիվ պահվածքով հարձակվեց դիմողի վրա և փորձեց վախեցնել, ինչից հետո նա ստիպված եղավ լքել զինդատախազության շենքը: Այլ հանդիպումներ պահանջելուց հետո Կոստանյանը հրաժարվել է նրա հետ քննարկել սպանության մանրամասները՝ պատճառաբանելով, որ ծանոթ չէ քր. գործին:

-11- Համաձայն Քր. դատ. օր.-ի 190 հոդվածի՝ նշված հաղորդումը պետք է քննության առնվեր ՀՔԾ կողմից, սակայն, կոպտորեն խախտելով օրենքը, ՀՀ գլխավոր դատախազն այն ուղարկել է թիվ 2 կայազորի զինվորական դատախազ Ա. Պետրոսյանին, այսինքն՝ այն անձին, որի հսկողության տակ է կատարվել տուժողի կողմից նշված հանցագործությունը, այն անձին, ով համահեղինակն է նշված հանցագործության:

-1- , -2- Այս գործերով տուժողի կողմի ՀՀ գլխավոր դատախազին ուղարկած մի քանի տասնյակ հաղորդումները 2010թ. սպանված Արտակ Նազարյանի և 2011թ.-ին սպանված Թորգոմ Սարուխանյանի գործերով հանցագործության մասին նույն կերպ, ապօրինաբար ուղարկվել են հանցագործություն կատարած մարմնին կամ դատարան, որը իրավասու չէ հարուցել քրեական գործ:

Գրեթե բոլոր գործերով նախաքննական մարմինը, տուժող կողմի միջնորդությունների հետ կապված, կամայականություններ է դրսևորում

Այսպես, մի դեպքում բավարարվում է տուժողի իրավահաջորդի պահանջը գործը Երևանում ՀԿԳ բաժնի կողմից քննելու վերաբերյալ, մեկ այլ դեպքում՝ ոչ: Մի դեպքում նախաքննության ընթացքում տուժող կողմին է տրամադրում ըստ էության գործի բոլոր նյութերը՝ փորձագիտական եզրակացություններ, որոշումներ, ցուցմունքներ, իսկ մեկ այլ դեպքում դրանցից և ոչ մեկը չի տրամադրում: Այս կամայականությունն ակնհայտորեն կախված է նրանից, թե նշված փաստաթղթերը որքանով են բացահայտում նախաքննության կեղծ ընթացքը, որքանով կարող են խոչընդոտել, որպեսզի նախաքննական մարմինը մինչև վերջ տանի իր կեղծ քննությունը: Նշենք, որ ըստ Քր. դատ. օր.-ի քննիչը պարտավոր է տուժողին տրամադրել գործով կայացված, տուժող կողմին առնչվող որոշումների պատճենները:

-6- Այս գործով 2012թ. հոկտեմբերի 18-ին քննիչ Հ. Մարգարյանը, ապացուցված համարելով, թե իբր զինվորը սպանվել է հակառակորդի կրակոցից, որոշում է կայացրել քրեական գործի կասեցման վերաբերյալ: Այդ ժամանակվանից ի վեր տուժողի իրավահաջորդը տասնյակ միջնորդություններ, դիմում-բողոքներ է ուղարկել բոլոր պատկան ատյաններին՝ միջնորդելով իրեն տրամադրել սույն որոշման պատճեն, որպեսզի նա հնարավորություն ստանա անհրաժեշտության դեպքում այն բողոքարկել: Եվ միայն ութ ամիս անց ի վերջո նրան հաջողվեց այդ փաստաթուղթը ստանալ: Այս անօրինականությունը այնքան աղաղակող էր, որ նույնիսկ ՄԻՊ-ը անդրադարձավ դրան՝ իր 18.07.2013թ. հայտարարության մեջ նշելով. «Զինծառայող Զ. Մարգարյանի մայրը՝ Ալվինա Մարգարյանը, ցանկացել է բողոքարկել իր որդու քրեական գործով վարույթի կասեցման որոշումը, սակայն դրա պատճեն նրան չի տրամադրվել»: Նույն օրը դրան ի պատասխան օրինազանց աշխատողին պատժելու փոխարեն գլխավոր դատախազ Ա. Հովսեփյանը հանձնարարական է ստորագրել «քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենը տուժողին, նրա ներկայացուցչին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին և այլն տրամադրելու վերաբերյալ»՝ ընդամենը կրկնելով օրենքի նորմը, որը նրա աշխատողները կոպտորեն և պարբերաբար խախտում են:

Սեռական բռնությամբ կամ գործողությամբ ահաբեկելը

Հաճախ սպանության գործերը կոծկելու նպատակով նախաքննական մարմինը այս կամ այն վկայի ցուցմունքների օգնությամբ «ձեռք է բերում» տվյալներ այս կամ այն սպանված զինվորի ենթադրյալ նույնասեռականության կամ տղամարդ-տղամարդ հարաբերություններ ունենալու վերաբերյալ: Հաշվի առնելով հասարակության մեծամասնության խտրական վերաբերմունքը սեռական բազմազանության նկատմամբ, նախաքննական մարմինը շանտաժի է ենթարկում սպանվածի ծնողին՝ ստիպելով, որ նա չբարձրաձայնի նախաքննության թույլ տված անօրինականությունների մասին: Ընդ որում, բոլոր այս դեպքերում քննիչները հենվում են միմիայն ենթադրությունների վրա:

-5- Դատաբժիշկ Բաբայանը հետևություններ մասում, մասնավորապես, գրում է՝ որ Ա. Հակոբյանի «դիակի բերանի խոռոչի և հետանցքի շրջանի պարունակություններից վերցված 4 պատրաստված քսուկների դատակենսաբանական ուսումնասիրությամբ սերմնէակներ չեն հայտնաբերվել, սակայն վերջիններիս բացակայությունը չի բացառում սեռական բնույթի գործողությունների կատարումը»: Այսինքն՝ դատաբժիշկն առաջ է քաշում վարկած՝ իր ձեռքի տակ չունենալով փաստ, հիմնվելով իր մերկապարանոց ենթադրությունների վրա: Ավելին, նախաքննական մարմնի շուրթերում բժշկի «չի բացառվում» արտահայտությունը վեր է ածվում անհերքելի փաստի: Ծնողի խոսքից. «Շուրջ 12 տարի շարունակ քննիչներն ու նրանց վերադասները ձգտում են ինձ շանտաժի ենթարկել, նվաստացնել, խեղդել իմ բողոքի ձայնը անօրինական և հավերժ ձգվող նախաքննության դեմ՝ հայտարարելով, թե իբր իմ որդու հանդեպ կատարվել է սեռական բռնություն, ընդ որում՝ նույն քննիչները 12 տարի ձգվող քննության ընթացքում այդպես էլ չեն բացահայտել իրենց կողմից շահարկվող «սեռական բռնության» փաստը»:

Տուժողի իրավահաջորդ ոչ ոք չի ճանաչվել

-13- Ն. Գալստյանի հարազատներից ոչ ոք տուժողի իրավահաջորդ չի ճանաչվել:

-12- Անդրանիկ Սարգսյանի գործով տուժող ոչ ոք չի ճանաչվել: 22.06.2010թ.-ին ՀՀ ՊՆ 9-րդ կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ Գ. Խ. Խալաթյանն իր որոշումով մերժել է նյութերով քր. գործի հարուցումը՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Տուժողի իրավահաջորդին չեն տեղեկացրել գործի ընթացքի մասին

-6- Մեկ ամիս որևէ պաշտոնական տեղեկություն ծնողը չի ստացել այն մասին, թե ե՞րբ, ովքե՞ր և ինչո՞ւ են սպանել որդուն: Նաև տեղյակ չէ, թե ի՞նչ փորձաքննություններ են նշանակվել, չի տրամադրվել դիակի դատաբժշկական դիազննման եզրակացության պատճեն: Նախաքննության սկզբում քր. գործով (թիվ 90753912) տուժողի իրավահաջորդ է ճանաչվել Զորիկ Մարգարյանի եղբայրը՝ Գարիկ Մարգարյանը: Քանի որ նա ներկայումս գտնվում է ՌԴ-ում, իր դիմումի համաձայն, իրավահաջորդ է ճանաչվել սպանված զինվորի մայր Ալվինա Աշոտի Մարգարյանը: Վերջինս միջնորդել է, որպեսզի իրեն տրամադրվեն գործով կատարված դատաբժշկական, դատաձգաբանական և դատակենսաբանական փորձագիտական եզրակացությունների պատճեները: Նախաքննական մարմինը մերժել է նրա միջնորդությունը՝ պատճառաբանելով, որ անցյալում դրանց ծանոթացել է նրա

որդին: Տվյալ դեպքում տուժող կողմը մասնակցել էր Զորիկ Մարգարյանի դատաբժշկական դիահերձմանը, սակայն նույնիսկ այդ փաստաթղթի պատճեն նախաքննական մարմինը չցանկացավ տրամադրել՝ խախտելով օրենքը: Ներկայումս այս գործով ստեղծվել է անելանելի իրավիճակ. քննիչ Մարգարյանն իր 2384 (առ 18.10.2012թ.) գրությամբ տուժողի իրավահաջորդին տեղեկացնում է, որ քր. գործով նախաքննությունը կասեցվել է՝ համաձայն քր. դատ. օր-ի հոդված 31-ի 1-ին մասի 5-րդ կետի: Միաժամանակ քննիչը տեղեկացնում է տուժող կողմին, որ նա կարող է բողոքարկել իր այս որոշումը: Սակայն, տուժող կողմը չի կարող բողոքարկել այն, քանի որ գործի մասին չունի տեղեկություն, այսինքն՝ չգիտի ոչինչ և հայտնվել է անելանելի վիճակում:

Տուժողի հարազատները հնարավորություն չեն ունեցել ծանոթանալ գործի նյութերի հետ

-13- Տուժողի հարազատները հնարավորություն չեն ունեցել ծանոթանալ դատաբժշկական եզրակացությանը և քր. գործով կատարված մյուս փորձագիտական եզրակացություններին ու քննչական գործողություններին:

-7- Նախաքննական մարմնի կողմից մերժվեց իրավահաջորդին գործում առկա լուսանկարների կրկնօրինակները տրամադրելու, համալիր հանձնաժողովային փորձաքննություն կատարելու միջնորդությունները:

-5- Օրենքը խախտելով՝ մինչ օրս քննիչը հորը չի ներկայացրել քր. գործով կատարված փորձագիտական եզրակացությունների պատճենները և քր. գործի նյութերը՝ դրանով իսկ զրկելով իր ապօրինի կասեցումները բողոքարկելու հնարավորությունից:

-4- ՀՀ ՊՆ քննչական ծառայության աշխատակիցները մերժում են տրամադրել Ա. Ղազարյանի ԿՏ-ի (համակարգչային հետազոտման) սկավառակի կրկնօրինակը: Սա այն կարևորագույն հետազոտումն է, որի միջոցով բժիշկներն իբր բացահայտել են տղայի գլխի մեջ ուռուցքն ու կատարել վիրահատություն, որից հետո, սակայն, նա մահացել է: Աշխատակիցները հայտարարում են, որ, քանի որ հետազոտումը կատարվել է Էրեբունի բժշկական կենտրոնի աշխատակիցների կողմից, մայրը պետք է դիմի հենց նրանց: Մինչդեռ, համաձայն քր. գործի, (գ.հ.2, թ.122)՝ «Նախաքննության ընթացքում բոլոր բուժծառայություններից պահանջվել, ստացվել և քր. գործին են կցվել Ա. Ղազարյանի վերաբերյալ բոլոր հիվանդության նկարագրությունները, նաև ռենտգեն և համակարգչային տոմոգրաֆիայի նկարները...»:

Տուժողի հարազատներին չեն տեղեկացրել գործին առնչվող դատական նիստերի մասին

-13- 22.09.2008թ. քր. գործով մեղադրանք է ներկայացվել թիվ 50869 ՁՄ-ի 2-րդ ՀԳ-ի շտաբի պետ կապիտան Արամ Սոկրատի Հարոյանին ՀՀ քր. օր.-ի 314 հոդվածով, սակայն տուժողի հարազատները տեղյակ չեն եղել այդ դատերի մասին:

Տուժողի հարազատներից դատախազության աշխատակիցները գումար են պահանջել

-13- Դատախազության աշխատակիցները տուժողի հարազատից պահանջել են գնել քրեական գործը՝ 3 հատորի դիմաց (750 էջ) վճարելով 75.500 դրամ գումար:

Տուժողի իրավահաջորդի ահաբեկում

-7- Ըստ Վալերիկ Մուրադյանի մոր՝ Նանա Մուրադյանի խոսքերի. «Զինդատախազության միջանցքում հանդիպելով ինձ, Հարություն Հարությունյանը ոչ թե փորձեց հավաստիացնել, որ իրենք աշխատում են ամեն գնով բացահայտել կատարված հանցագործությունը, այլ ուղիղ տեքստով ահաբեկեց՝ ասելով. «Մի մոռացեք, որ դուք մի հատ էլ աղջիկ ունեք»»:

Տուժողի հանդեպ բռնության կիրառում

-4- ՀՀ ՊՆ քննչական ծառայության կենտրոնական բաժնի պետ Յուրիկ Բաղալյանը, տուժողի իրավահաջորդին վիրավորելով և ֆիզիկական ուժ գործադրելով, դուրս է հրել ՔԾ շենքից 01.11.2012թ.-ին: Ի պատասխան՝ ՀՀ ՊՆ ՔԾ պետ Ա. Հարությունյանը գրում է, թե իբր փաստի առթիվ կատարվել է ծառայական քննություն, և Բաղալյանը ենթարկվել է կարգապահական տույժի: Սակայն, չարաշահելով պաշտոնական դիրքը, Ա. Հարությունյանը հրաժարվում է տուժողի իրավահաջորդին տրամադրել սույն տույժի վերաբերյալ կայացված որոշումը: Դրանից հետո, ըստ տուժողի իրավահաջորդի. «20.04.2013թ.-ին ես ամուսնուս հետ գնացել էի ՀՀ ԱՆ դատաբժշկական կենտրոն, որպեսզի տեղեկություն ստանամ դրանից `մեկ օր առաջ ԼՂՀ ՊԲ-ում զոհված զինծառայող Ռաֆֆի Մարաշլյանի մահվան կապակցությամբ: Ինձ տեսնելով՝ անմիջապես սույն խուլիգանը ագրեսիվ և արհամարհական տոնով հարցրեց, թե ո՞վ է ինձ կանչել այնտեղ, ես ո՛վ եմ, որ եկել եմ: Մեր միջև ծագեց վիճաբանություն, որի ընթացքում հարձակվեց իմ վրա, սկսեց հայհոյանքներ տեղալ, բարձրացրեց ձեռքը, որպեսզի ինձ հարվածի: Նրան ուղղակի հետ պահեցին՝ թույլ չտալով, որ խփի:»

Քննիչի դեմ քրեական գործի հարուցման մերժումը

Կոռուպցիոն փաստ է նաև այն, որ ոչ մի գործով դատախազները չեն միջնորդում քրգործ հարուցել այն քննիչների դեմ, որոնց նախաքննության ընթացքում կատարած հանցանքները միանշանակ են և ապացուցված: Պատճառը ոչ թե այն է, որ չգրված ներքին օրենքի համաձայն անպատվաբեր է նույն համակարգի աշխատակցին քրեական պատասխանատվության ենթարկելը, այլ, որ բոլոր քննիչներն, առանց բացառության, հանցագործություն են կատարում միմիայն վերադասների գիտությամբ և ցուցումով, որոնք էլ հանցավոր հրամանները տալով երաշխավորում են, որ քննիչը կմնա անպատիժ:

Դատաքննական փուլ

Դատապաշտպանի անգործություն

Լինում են դեպքեր, երբ դատապաշտպաններն արհամարհում են իրենց ուղղակի պարտականությունները, չեն մասնակցում դատական նիստերին, չեն անում իրենց պաշտպանյալների շահերից բխող կարևոր միջնորդություններ, չեն մասնակցում գործով կատարվող կարևոր փորձարարություններին, թույլ են տալիս, որպեսզի իրենց ներկայությամբ իրենց պաշտպանյալներին ահաբեկեն, հայհոյեն, նսեմացնեն և այլն:

-9- Դատապաշտպանը չի միջնորդել, որ հագուստը ուղարկվի փորձաքննության: Տուժողը պետք է միջնորդեր և ստանար դիակի լուսանկարի կրկնօրինակները, որոնք թույլ կտային առավել պարզ տեսնել Ս. Մանուկյանի վնասվածքները, հասկանալ դրանց առաջացման մեխանիզմները, ինչը ևս չի արվել: Դրա փոխարեն սպանվածի մայր Լ. Մանուկյանը և նրա փաստաբանը թե՛ վերաքննիչ և թե՛ վճռաբեկ դատարաններում միջնորդել են գործով մեղադրվող, իբր Ս. Մանուկյանին ինքնասպանության հասցրած, 3 սպաներին տալ առավելագույն պատիժ, ինչով անուղղակիորեն օրինականացրել են նախաքննական և դատաքննական մարմինների կողմից ներկայացրած ինքնասպանության կեղծ վարկածը: Սույն գործով անհրաժեշտ է կատարել նոր քննություն, սակայն, ըստ օրենքի, այս պահին դա արդեն անհնար է, քանի որ գործն անցել է բոլոր փուլերով, որոնց ընթացքում տուժողը չի արել անհրաժեշտ քայլեր: Տվյալ պահին այս անհրաժեշտ միջնորդությունը կարելի է դատախազություն ուղարկել միայն այն դեպքում, եթե տուժող կողմը ներկայացնի նոր ի հայտ եկած հանգամանքներ:

-2- Թորգոմ Սարուխանյանի գործով ամբաստանյալ Հրանտ Կարապետյանին և Ռոբերտ Բաղալյանին ապօրինաբար տրամադրվել են փաստաբաններ ԼՂՀ հանրային պաշտպանի գրասենյակից՝ Ազատ Ավագիմյանը և Մարինա Հակոբյանը, ովքեր իրավունք չունեին պաշտպանել ՀՀ քաղաքացիների: Ըստ էության, սրանք այն փաստաբաններն են, որոնց բոլոր զինվորական սպանության գործերով ներգրավում են ԼՂՀ-ում գործող ՀՀ ՊՆ ՔԾ մարմինները: Այս անձինք բացարձակապես չեն պաշտպանում իրենց պաշտպանյալներին: Հայտնի չէ որևէ դեպք, երբ նրանք բողոք ներկայացնեն նախաքննական մարմնի կողմից կատարված անօրինականությունների դեմ, որոնք բազմաթիվ են: Որպես աղաղակող օրինակ պետք է բերել դատական նիստը, երբ վերոնշյալ երկու ամբաստանյալները հայտարարեցին, որ չորս կարևոր վկաներին, ովքեր խուսափում են գալ դատարան և տալ ցուցմունք, պետք է բերման ենթարկեն: Ամբաստանյալները միաժամանակ հայտարարեցին, որ նշված վկաները իրենց դեմ տվել են ակնհայտ կեղծ ցուցմունքներ, և նրանց դատարան ներկայանալը խիստ կարևոր է: Ասենք, որ, որպես կանոն, նման միջնորդություններ անելու պարտականությունը հենց փաստաբաններին է: Սակայն այս դեպքում նշված փաստաբանները նույնիսկ չմիացան իրենց պաշտպանյալների միջնորդությանը. նրանք հայտարարեցին, որ վկաներին դատարան բերել-չբերելու հարցը թողնում են դատարանի հայեցողությանը:

Անցանկալի վկաներին դատարան չհրավիրելը

Շատ հաճախ դատավորները դատարան չեն հրավիրում անցանկալի վկաներին: Անցանկալի են այն վկաները, որոնցից նախաքննության ժամանակ բռնությամբ, հոգեբանական ճնշմամբ, շանտաժի միջոցով կորզվել են ցանկալի, սակայն իրականությանը չհամապատասխանող ցուցմունքներ: Սակայն, նրանց մոտ վառ արտահայտված է արդարության զգացումը և նրանք դատարանում կարող են մասամբ կամ ամբողջությամբ պատմել ճշմարտությունը, ինչը վտանգավոր է գործը կոծկողների համար: Հաճախ նման վկաներին քննիչը ուղղակի ներքին կարգով հրամայում է ծանուցագրերը ստանալուց հետո դատարան չներկայանալ և նաև խոչընդոտում է այդ վկաներին օրենքով սահմանված կարգով բերման ենթարկելուն: Նման վկաներ դատարան չներկայացան Արտակ Նազարյանի, Թորգոմ Սարուխանյանի գործերով:

-1- Դատարանը մերժել է որպես վկա հարցաքննության հրավիրել Արթուր Մկրտչյանին, ով Բերդ քաղաքի ՌՈ բաժանմունքում ազատազրկման մեջ է պահվել սույն գործի շրջանակներում՝ չլինելով տվյալ հենակետի եւ տվյալ վաշտի զինծառայող: Նրա հարցաքննությունը կարող էր լրացուցիչ կերպով հիմնավորել զինծառայողների ազատազրկման ապօրինության փաստը:

Դատավճռի հիմքում ընկած է միմիայն ինքնախոստովանական ցուցմունքը՝ առանց այլ ապացույցների

-8- Վճիռ կայացնելիս դատարանն առաջին հերթին և միայն հիմնվել է Իգնատ Ենգիբարյանի «ինքնախոստովանական» ցուցմունքի վրա (գ.հ.1, թ.67-73), որում, մասնավորապես, նշվում է, որ Ա. Ադիբեկյանը դեպքից առաջ դիտակետ է եկել իր հագած հանդերձանքը թափթփված վիճակում, զրահաբաճկոնի ամրակները քանդված. «...նրա մոտ շարքային Տ. Մարտիկյանի ինքնաձիգն էր»: Ա. Ադիբեկյանը բղավել է գետնատնակի ուղղությամբ, պահանջել, որպեսզի իրեն հաց ու ծխախոտ բերեն: Դրանից հետո «...Ա. Ադիբեկյանը վերադարձավ կրակակետ, նրա դեմքի արտահայտությունը մի տեսակ էր, կարծես ինչ-որ բանից նեղված լիներ, բայց չհասկացա, թե ինչ»: Նա այդ ժամանակ էլ Իգնատին «խորապես» վիրավորեց՝ ասելով «Իգուլիկ»: Իգնատը պահանջել է իրեն այդ կերպ չդիմել, ինչից հետո Ադիբեկյանն սկսել է հայհոյել Իգնատին: Այս ամենից հետո, ըստ Իգնատի, ինքը կրակել և սպանել է Ադիբեկյանին՝ իրեն ծաղրելու և վիրավորելու համար: Իր հաջորդ ցուցմունքում արդեն Իգնատ Ենգիբարյանը հրաժարվում է նախորդ ցուցմունքից՝ հայտարարելով, որ դեպքի օրն իրեն Բերդ քաղաքի ՌՈ բաժանմունք տեղափոխելուց հետո ծեծել են և ստիպել, որպեսզի նա գրի ինքնախոստովանական ցուցմունք: Նախքան Ենգիբարյանի ցուցմունք տալը նրա շահերի պաշտպան, փաստաբան Սամվել Շարբաթյանը հանդես է եկել գործով քննիչ Մադաթյանի դեմ բացարկի միջնորդությամբ, որը ներկայացրել է գործը հսկող դատախազ Միրզաբեկյանին (գ.հ.2, թ.148-150), որում, մասնավորապես, նշում է, որ իր պաշտպանյալն իր հետ առանձնազրույցի ժամանակ պատմել է, որ դեպքից մեկ օր առաջ Ա. Ադիբեկյանը վիճաբանության մեջ է մտել դիրքի ավագի օգնական, կրտսեր սերժանտ Գոռ Խաչատրյանի հետ: Այդ վիճաբանությունը վեր է աճվել ծեծկռտուքի: Նրանք միմյանց փոխադարձ հարվածներ են հասցրել, որի ընթացքում Ադիբեկյանը դեմքի տարբեր հատվածներում ստացել է մարմնական վնասվածքներ: Այս մասին Շարբաթյանը պատմել է քննիչ Մադաթյանին, ով սակայն նրան պատասխանել է, որ նշված վնասվածքներն

առաջացել են ոչ թե կռվի, այլ կրակոցից հետո վայր ընկնելու հետևանքով: Բերենք հատված Ա. Ադիբեկյանի դիակի թիվ 178/7 եզրակացությունից. «Քաղաքացի Ա. Ադիբեկյանի դիակի դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերվել են նաև քերծվածքներ՝ աջ ճակատային, այտային աջ դաստակի առաջին մատի շրջաններում, որոնք ևս պատճառվել են կենդանության օրոք՝ բութ առարկաներով»: 25.02.2012թ.-ին նա հեռախոսակապով կապվել է քննիչի հետ և տեղեկացրել, որ Ենգիբարյանի ծնողների խնդրանքով այսուհետև ինքն է իրականացնելու նրա պաշտպանությունը եւ հաջորդ օրը պետք է հանդիպի իր պաշտպանյալի հետ: Քննիչը պատասխանել է, որ հաջորդ օրն առավոտյան լինելու է Ծամշադինի Բերդ քաղաքում և միայն կեսօրից հետո կվերադառնա: Հաջորդ օրը Շարբաթյանը ժամը 13:00-ի սահմաններում արդեն գտնվել է Իջևանի զինվորական ոստիկանությունում, որտեղ պարզել է, որ մինչև իր հասնելը քննիչը նույն օրը հապշտապ կերպով հարցաքննել է Ենգիբարյանին որպես կասկածյալ և կատարել դեպքի վայրը մատնացույց անելու քննչական գործողությունը, այնինչ նա այդ ժամին դեռևս պետք է գտնվելիս լիներ Բերդ քաղաքում:

Ներկայացնելով այս հիմքերը՝ պաշտպան Շարբաթյանը բացարկ է հայտնում քննիչ Մադաթյանին և միջնորդում է քր. գործը տալ այլ քննիչի վարույթ:

Դատաքննության ընթացքում հանցագործության մասին հայտարարությունները չեն քննվում

Այսպես, տուժողի կողմից հաղորդումներ են ուղարկվում ՀՔԾ նախաքննական մարմնի կողմից կատարված հանցանքների վերաբերյալ: Այս հաղորդումները ՀՔԾ-ն օրենքով սահմանված կարգով ստուգելու և, հիմքեր լինելու դեպքում, քրգործ հարուցելու փոխարեն, հաղորդումներն ուղարկում է գլխավոր դատախազին, վերջինս՝ զինդատախազին, իսկ նա՝ գործով դատավորին, որն իրավասու չէ քրգործ հարուցել, այլ ընդամենը պարտավոր է նյութեր ուղարկել նույն ՀՔԾ-ին: Սակայն, դատավորը երբեք նման քայլի չի դիմում, իր գործընկերներին չի ցանկանում պատժել, և հաղորդումներն այդպես էլ մնում են առանց քննության, ինչն էլ որոշված է ի սկզբանե: Այսինքն, բոլոր հաղորդումները մտնում են փակուղի:

-1- Տուժող կողմը միջնորդեց, հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը և 184 հոդվածը, ՀՀ ՊՆ 21127 զորամասի նախկին հրամանատար Սեյրան Ղազարյանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 133 հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, այն է՝ մարդուն ազատությունից ապօրինի զրկելը, որն առևանգելու հետ կապված չէ և կատարվել է երկու կամ ավելի անձանց նկատմամբ (տվյալ դեպքում՝ 14 անձանց նկատմամբ), և 309 հոդվածի 1-ին մասով քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելու միջնորդությամբ դիմել ՀՀ գլխավոր դատախազին: Սակայն, դա չարվեց:

-1- Գործով վկաներ Ռաֆայել Էվոյանը և Սմբատ Սարգսյանը դատարանում հրաժարվեցին իրենց նախաքննական ցուցմունքից և հայտնեցին, որ գործով քննիչ Լևոն Պետրոսյանն իրենցից խաբեությամբ կորզել է կեղծ ցուցմունք. նրանք հայտնեցին դատարանին, որ քննիչը արձանագրել է, ոչ թե այն, ինչ պատմել են իրենք, այլ այն, ինչն իրենք չեն ասել: Քննիչը ցուցմունքում ներկայացրել է կեղծ փաստեր, որոնց մասին վկաները տեղեկություն

չեն ունեցել, չեն տեսել և չեն լսել: Քննիչը կարգադրել է իրենց ցուցմունքի տակ գրել, թե իբր ընթերցել են ցուցմունքը, գրված է իրենց բառերից, ճիշտ է, ինչի համար իրենք ստորագրել են, սակայն իրականում քննիչը նրանց չի տրամադրել հարցաքննության արձանագրությունը՝ ընթերցելու համար: Համաձայն Քրեական դատավարության օրենսգրքի 41 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, 184 հոդվածի՝ նախագահող դատավոր Ս. Մարդանյանը պարտավոր էր միջնորդել դատախազությանը, որպեսզի փաստով հարուցվեր քրեական գործ, սակայն դատավորը, ակնհայտորեն ձգտելով կոծկել նախաքննական մարմնի կողմից կատարված այս և մի շարք այլ հանցագործությունները, դա չի արել:

Ա. Նազարյանի գործով տուժող կողմը ՀՔԾ-ին շուրջ երկու տասնյակ հաղորդում է ուղարկել հանցագործության մասին, որոնք բոլորը ուղարկվել են դատավոր Մարդանյանին:

Վերջինս տուժող կողմի հարցմանը, թե ի՞նչ ճակատագիր է սպասում իր հաղորդումներին, պատասխանել է, որ դրանց կանդրադառնա խորհրդակցական սենյակում վճիռ կայացնելիս: Սակայն իրականում նա խաբել է, և նրա վճռի մեջ այս հանցագործություններից և ոչ մեկով մասնավոր որոշում չի կայացվել, ոչ մի հանցագործության շուրջ դատավորը պատկան մարմիններին քննություն կատարելու շուրջ միջնորդություն չի ներկայացրել:

Դատավճիռը խմբագրում է դատաքննության տվյալները

-1- Վերջնական դատական ակտում դատարանը կատարել է օրինախախտում՝ դատաբժիշկ Վիգեն Ադամյանի դատաքննական ցուցմունքի հիման վրա «վերախմբագրելով» նույն Ադամյանի կողմից տրված թիվ 704/34 դատաբժշական փորձաքննության եզրակացությունը, ինչի իրավունքը չուներ: Մասնավորապես, դատավճիռ կայացնելիս հիմք է ընդունել Ադամյանի խոսքերը, թե «մեխանիկական վրիպակ է» եղել 16-ի փոխարեն՝ 19 լուսանկար մատնանշելը, եւ նույնպիսի վրիպակ է Նազարյանի մահից առաջ ստացված վնասվածքների խմբավորումն՝ ըստ ժամկետների:

-1- Մեղադրող կողմի միջնորդությամբ որպես վկա դատակոչելով դատաբժիշկ-փորձագետ Վիգեն Ադամյանին, թույլ է տվել ցուցմունքում վերաձեւակերպել նրա իսկ տված թիվ 704/34 դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը, եւ այդ ցուցմունքն է հիմք ընդունել իր դատավճռում: Ընդ որում, դատարանն անտեսել է, որ մասնավորապես մաշկից զերծ տեղամասերի առաջացման պատճառները մեկնաբանելիս՝ Վ. Ադամյանը չի կարողացել բերել գիտական հիմնավորում:

Դատարանը ընտրովի է մոտենում ապացույցներին՝ դատական վերջնական ակտ կայացնելիս

-1- Դատաբժիշկ-փորձագետ Վիգեն Ադամյանի կազմած թիվ 704/34 դատաբժշական փորձաքննության եզրակացությունը Արտակ Նազարյանի մարմնի վրա հայտնաբերված մարմնական վնասվածքները ժամանակային առումով բաժանել է 3 խմբի՝ (1) մահվանից մոտ 3-5 օր առաջ, (2) մահվանից մինչև մոտ 6 ժամ առաջ, (3) մահվանից ոչ շատ առաջ: Դատարանը վերջնական դատական ակտ կայացնելիս անտեսել է, որ քննություն չի

կատարվել եւ չի բացահայտվել Նազարյանի մահից ոչ շատ առաջ եւ մահից մինչեւ մոտ 6 ժամ առաջ պատճառված մարմնական վնասվածքների ծագումն ու պատճառման հանգամանքները: Դատարանը անտեսել է այն հանգամանքը, որ չլուսաբանված է մնացել, թե որտե՞ղ, ի՞նչ, ինչո՞ւ և ո՞ւմ հետ է խմել լեյտենանտ Ա. Նազարյանը սպանությունից 1-1,5 ժամ առաջ, ինչի մասին վկայում է դատաբժշկական փորձաքննության թիվ 704/34 եզրակացությունը: Դատավճիռ կայացնելիս անտեսվել է այն հանգամանքը, որ մահից առաջ Ա. Նազարյանը ստացել է 120 փամփուշտ, իսկ մահից հետո բոլոր 120 փամփուշտները տեղում են եղել, ուստի Նազարյանի ինքնաձիգը չէր կարող լինել մահվան գործիքը: Դատարանը քայլեր չի ձեռնարկել պարզելու, թե ի՞նչ զենքից է կրակվել Նազարյանի վրա եւ անթույլատրելի չի ճանաչել տեսողական զննության արդյունքում քննիչի արած եզրակացությունը, թե հենակետի այլ զենքերից չեն կրակվել, մի եզրակացություն, որը չի կարող ապացուցողական նշանակություն ունենալ, քանի որ չի արվել համապատասխան դատաձգաբան-փորձագետի կողմից: Ինչպես դատաքննության ընթացքում, այնպես էլ՝ դատավճիռ կայացնելիս, դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Նազարյանի զենքի վրա մատնահետքեր չեն հայտնաբերվել: Անտեսել է այն հանգամանքը, որ դեպքի վայրում հայտնաբերված պարկուճի փոխարեն դատաձգաբանական փորձաքննության է ենթարկվել մեկ այլ համարի պարկուճ: Անտեսել է այն հանգամանքը, որ «Ղոզլու» մարտական հենակետի զինծառայողներից յոթը, ըստ խծուծների դատաձգաբանական փորձաքննության, ներկա են եղել Նազարյանի վրա արձակված կրակոցի ժամանակ, ինչի մասին վկայում են նրանց վրա մնացած կրակոցի արգասիքները. վկաների եւ ամբաստանյալների դատաքննական ցուցմունքներով այդ օրերին այլ կրակոցներ չեն հնչել: Դատարանն անտեսել է նաեւ, որ նախաքննական մարմինն է անտեսել փորձաքննության այս արդյունքները եւ այդ ուղղությամբ քննություն չի կատարել: Դատարանն անտեսել է, որ դեպքի վայր համարվող ժայռաբեկորի վրա, որին հենված է գտնվել Ա. Նազարյանի մարմինը, չեն հայտնաբերվել արյան հետքեր, թեեւ գնդակի ելքի անցքը եղել է Նազարյանի ծոծրակային մասում: Դատարանն անտեսել է տուժողի իրավահաջորդների ցուցմունքներն այն մասին, որ նախաքննական մարմնի մոտ պահվող Նազարյանի գլխարկը սկզբում արյունոտ չի եղել եւ միայն նախաքննության ավարտին է ներկայացվել՝ ամբողջությամբ արնանման նյութի մեջ շաղախված: Դատարանը մերժեց Նազարյանի զրահաբաճկոնը դատաձգաբանական փորձաքննության ուղարկելու միջնորդությունը՝ դրա վրա հայտնաբերված մեխանիկական պատռվածքների ծագումը պարզելու համար: Դատարանը անտեսել է այն հանգամանքը, որ առնվազն երկու վկա՝ Ռաֆայել Էվոյանը եւ Սմբատ Սարգսյանը, փաստել են, որ քննիչ Լ. Պետրոսյանը իրենցից ցուցմունք է վերցրել խաբեությամբ՝ իրենց պատմածի փոխարեն բոլորովին այլ բան գրի առնելով, ուստի արժանահավատ չեն կարող լինել Լ. Պետրոսյանի վերցրած այլ ցուցմունքներ եւս: Դատարանը անտեսել է Գ. Ուդումյանի կողմից Նազարյանի դեմ նրա մահից ժամեր առաջ հնչեցրած հայհոյանքն ու սպառնալիքը եւ դատավճիռ կայացնելիս հիմնվել է Նազարյանի եւ այլ զինծառայողների միջեւ օրեր առաջ տեղի ունեցած ընդհարումների վրա:

Մեղադրյալին կալանավորելու մասին որոշում կայացնելու միջնորդության մերժում

-20- Քանի որ դատավորը մերժեց կալանավորելու պահանջով տուժողի միջնորդությունը, իսկ ամբաստանյալը հասկացավ, որ դատավճռով իր հանդեպ պետք է կիրառվի կալանք (անզգույշ սպանության հոդվածը կարող է փոխարինվել դիտավորյալ սպանության

հոդվածով), դիմեց փախուստի: Մեղադրյալին հնարավոր եղավ Ռուսաստանից բերման ենթարկել միայն 2012թ. ձմռանը: Երբ 2013թ. սկսվեց դատաքննությունը, պարզվեց, որ բոլոր կարևորագույն վկաները Հայաստանից բացակայում են: Նրանցից մեկը, որը դեպքի պահին կատարել էր քրեական հանցագործություն և պետք է ենթարկվեր պատասխանատվության, Հայաստանից փախավ ճիշտ այն օրը, երբ նրան հրավիրեցին դատարան: Դրա մասին է վկայում սահմանապահ զորքերի կողմից տրված տեղեկանքը:

Կիրառված պատիժները հիմնականում մեղմ են, կամ կիրառվում է համաներում

Հաճախ դատարանները կայացնում են կամայական վճիռներ՝ հօգուտ ամբաստանյալների, հաշվի չառնելով կատարված հանցանքի ծանրությունն ու տուժող կողմի բողոքները: Ամբաստանյալներին առաջարկում են սուտ ցուցմունքներ տալ՝ խոստանալով, որ դատաքննության վերջում նրանք կազատվեն կալանքից և, որպես կանոն, կատարում են իրենց այս խոստումը:

- 19- Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանը 31.07.2009 թ-ին կայացրել է դատավճիռ, համաձայն որի Է. Ավետիսյանը ճանաչվել է մեղավոր և դատապարտվել ազատազրկման 4 տարի 6 ամիս ժամանակով, իսկ Ա. Պետրոսյանը ճանաչվել է մեղավոր և դատապարտվել ազատազրկման 3 տարի 3 ամիս ժամկետով: Պատիժը նրանք պետք է կրեին ՀՀ ԱՆ համապատասխան քրեակատարողական հիմնարկում: 20.10.2009 թ-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը ամբաստանյալների վերաքննիչ բողոքի հիման վրա վերաքննության կարգով քննելով քրեական գործը, որոշել է ամբաստանյալներ Է. Ավետիսյանի և Ա. Պետրոսյանի վերաքննիչ բողոքները մերժել՝ թողնելով անփոփոխ 31.07.2009 թ-ի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի դատավճիռը: Ամբաստանյալներ Է. Ավետիսյանն ու Ա. Պետրոսյանը վճռաբեկության կարգով բողոքարկել են նաև ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը: 22.12.2009 թ-ին ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը որոշում է կայացրել Էդգար Ավետիսյանի պաշտպանի և Արթուր Պետրոսյանի վճռաբեկ բողոքները վերադարձնելու, ինչպես նաև անօրինական որոշում կայացրել Էդգար Ավետիսյանի նկատմամբ համաներում կիրառելու և կալանքից անհապաղ ազատելու մասին:

-13- Դատը տևեց մի քանի րոպե (ըստ փաստաթղթերի): Կատարվեց արագացված դատաքննություն: Ըստ էության, ոչ ոք չպատժվեց. Արամ Սոկրատի Հարոյանին, որի մեղքը ապացուցված չէր, ով ընդամենը քննիչ Հակոբջանյանի անձնական հակակրանքի զոհն էր, պատժեցին 200.000 դրամ տուգանքով, իսկ Ավետիս Ավետիսյանի դեպքում կիրառվեց համաներում:

Դատաքննության ընթացքում անտեսվում են քրգործի համար կարևոր նշանակություն ունեցող փաստերը

-1- 09.08.2010թ. գումարտակի հրամանատար Միշա Գաբրիելյանը նախաքննական մարմնին է ներկայացրել Արտակ Նազարյանի նոթատետրը, որում թերթեր են բացակայել (պատռվել): Դրանում առկա է եղել մեկ պատռված թերթ, որի վրա եղել է գրություն՝ «Էս քայլին դիմում եմ» բառերով սկսվող: Նախաքննական մարմնի ձեռք բերած ցուցմունքներով, որոնք նույն վկաները հաստատեցին նաեւ դատարանի դահլիճում,

Նազարյանի մահվան լուրը լսելուց հետո վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ Գագիկ Ուդումյանն է հրահանգել Նազարյանի մարմնի մոտ գտնվող կապիտան Մանուկյանին թաքցնել նոթատետրը՝ այն փոխանցելով գումարտակի շտաբի պետ Միհրան Նաջարյանին: Նաջարյանը գումարտակի հրամանատար Միշա Գաբրիելյանի հանձնարարությամբ թաքցրել է այն: Իսկ դեպքից 13 օր հետո Գաբրիելյանը նախաքննական մարմնին է փոխանցել նոթատետրն ու կից գրությունը: Քննություն չի կատարվել՝ պարզելու նոթատետրի ամբողջ շարժը, էջեր անհետանալու եւ գրություն հայտնվելու հանգամանքը, գրությունը թաքցնելու մեջ այն թաքցնողների անձնական շահագրգռությունը:

26.03.2013թ. դատական ճառում տուժողի իրավահաջորդ Ծովինար Նազարյանը միջնորդել է անթույլատրելի ապացույց ճանաչել Արտակ Նազարյանի նոթատետրը եւ «Էս քայլին դիմում եմ» բառերով սկսվող կից գրությունը՝ հիմնավորելով, որ քննությամբ պարզված չէ, թե որտե՞ղ է գտնվել նոթատետրն Արտակ Նազարյանի մահվանից մինչեւ նախաքննական մարմնին հանձնելն ընկած 13 օրերի ընթացքում, ինչպե՞ս են պատռվել նոթատետրի միջից Նազարյանի օրագրային գրառումները, ինչպե՞ս է այնտեղ հայտնվել Նազարյանին վերագրվող «Էս քայլին դիմում եմ» բառերով սկսվող գրությունը, ինչպիսի՞ շահագրգռություն են ունեցել նոթատետրը նախաքննական մարմնից 13 օր թաքցնելու հարցում՝ այն թաքցրած Գ. Ուդումյանը, Մ. Նաջարյանը եւ Մ. Գաբրիելյանը: Դատավճռում այս միջնորդությանն անդրադարձ չի եղել:

-1- Դատաքննության ընթացքում դատարանը հետաձգել կամ մերժել է բազմաթիվ միջնորդություններ՝ խոստանալով դրանց անդրադառնալ խորհրդակցական սենյակում վերջնական դատական ակտ կայացնելիս: Սակայն, վերջնական ակտում դատավորն ավելորդ է համարել մերժված միջնորդություններին անդրադառնալը՝ նշելով. «*Դատարանը, խորհրդակցական սենյակում գնահատելով գործով ձեռք բերված եւ պատշաճ ընթացակարգի շրջանակներում հետազոտված յուրաքանչյուր ապացույց՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն՝ իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, գտնում է, որ նշված միջնորդություններին կրկին անդրադառնալու անհրաժեշտություն չկա:*» (Վճիռ, էջ 83):

Դատարանը գործը քննում է փաթեթով

Դատարանը, միտված լինելով չմեկնաբանել իր որոշումները, քանի որ չունի մերժման համար շատ թե քիչ տրամաբանական հիմքեր, հաճախ մի խումբ միջնորդությունները մերժում է փաթեթով, առանց մեկնաբանության՝ ըստ կոնկրետ կետերի:

-1- Հետաձգելով տուժող կողմի միջնորդությունները՝ քրեական գործի քննությամբ ձեռք բերված ապացույցներով հիմնավորված եւ քրեական գործի քննությունն իրականացրած անձանց օրինախախտումներում հանցակազմի առկայության փաստով քրեական հետապնդման ենթարկելու մի շարք անձանց՝ Գ. Ուդումյան, Է. Գրին-Աբրահամյան, Ս. Ղազարյան, Ա. Մնացականյան, դատարանը վերջնական դատական ակտում առանձին-առանձին քննության չի առել յուրաքանչյուր անձի հետ կապված հանցակազմի առկայության հանգամանքը, այլ դրանք բոլորը մերժել է մեկ նախադասությամբ՝ փաթեթով. «Անդրադառնալով դատավարության մասնակիցների՝ մի շարք անձանց

նկատմամբ քրեական գործ հարուցելու նպատակով դատախազին դիմելու վերաբերյալ միջնորդություններին՝ դատարանն արձանագրում է, որ սույն քրեական գործի դատաքննության ընթացքում ի հայտ չեն եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հիմք են տալիս դատարանին հիշյալ միջնորդություններում մատնանշված անձանց կամ փաստերի վերաբերյալ դիմել դատախազին: Ուստի այդ միջնորդությունները եւս ենթակա են մերժման»: (Վճիռ, էջ 83)

Ակնհայտ համագործակցություն դատավորի և դատախազի միջև

Դատարանն իր որոշումները կայացնելու ճնշող մեծամասնության դեպքում հենվում է մեղադրող կողմի կարծիքի վրա, որը գրեթե բոլոր դեպքերում հակառակ է լինում դատավարության կողմ հանդիսացող մյուս մասնակիցների կարծիքին: Նշենք, որ այս համագործակցությունն առավել ակնհայտ է դառնում այն դեպքերում, երբ կողմերը հանդես են գալիս նոր փորձաքննություն նշանակելու կամ դատարան նոր վկաներ հրավիրելու միջնորդություններով: Որպես կանոն, մեղադրողը դեմ է հանդես գալիս նման միջնորդություններին, ինչը, կարծես, քողարկված հրաման է դատավորի համար, և նա միջնորդությունները մերժելու որոշում է կայացնում: Նկատենք նաև, որ նրանց գործողությունները էապես հակասում են օրենքի՝ բազմակողմանի և խորացված քննություն կատարելու պահանջին:

- 20- Հանցանք չկատարած Դումիկյանը դատարանում հրաժարվեց իրեն առաջադրված մեղադրանքից և սպառնաց հայտնել մարդասպանի անունն ու պատմել սպանության դրդապատճառների մասին, ինչից հետո դատը ընդհատվեց: Արդյունքում՝ Դումիկյանը փախավ և մինչ օրս՝ ավելի քան 6 տարի, ոչ ոք չի պատժվել Խ. Մելիքյանի սպանության, ինչպես նաև նախաքննության և դատաքննության ընթացքում կատարված հանցագործությունների համար:

Եզրակացություններ

Այսպիսով, հայկական բանակը հսկող դատաիրավական համակարգը ամբողջապես կոռումպացված է, դրա մաս կազմող բոլոր երեք գերատեսչությունները՝ ՀՀ ՊՆ ՔԾ, ՀՀ ՊՆ ՌՈ, ՀՀ զինդատախազություն, որոնք կոչված են բանակում կարգ ու կանոն հաստատել, հսկել և կանխարգելել հանցագործությունները, ներկայում դարձել են բանակի համար մեծագույն չարիք: Նրանց կողմից կատարվող կեղծ քննությունները, գործերի կոծկումներն էապես նպաստում են բանակում կոռուպցիոն ռիսկերի ահագնանալուն: Ամփոփելով վերը նշվածը՝ ստորեւ բերում ենք այդ արատավոր երևույթներին առավել նպաստող գործոնները.

- *Տուժողը ո՛չ նախաքննական, ո՛չ էլ դատաքննական փուլում չունի գործող մեխանիզմ՝ բացարկ հայտնելու միջոցով ազատվելու օրինախախտ դատավորից և մեղադրողից: Դատավորին հայտնած բացարկը քննվում է նույն դատավորի կողմից:*

- *Հանրապետության նախագահին իշխանության գալու և իշխանությունը պահելու գործընթացում մեծապես հենվում է բանակի բարձրագույն սպայակույտի աջակցության վրա, վերջինս էլ, ըստ էության, կանգնած է օրենքից վեր: Մինչ օրս բարձրագույն սպայակույտի անդամներից որևէ մեկն իր կատարած հանցանքների համար չի պատժվել:*

- *Պաշտպանության նախարարությունը ֆինանսական առումով թափանցիկ չէ. այն և՛ պատվիրատու է, և՛ արտադրող, և՛ սպառող: Կոռուպցիոն ռիսկեր կան հետևյալ բնագավառներում. զինվորական հագուստ, հանդերձանք, ռազմական շինարարություն, ռազմական տեխնիկա, զենք-զինամթերք, ծառայական մեքենաներ և վառելիք, պահեստամասեր և այլն: Բացի այդ, ՊՆ-ի բյուջեն թափանցիկ, հասարակության կողմից վերահսկելի չէ: Եթե հաշվի առնենք, որ զինդատախազությունը քաջատեղյակ է այն բոլոր նյութական չարաշահումներին, որոնք տիրում են այս համակարգում և կարող է քրգործ հարուցել օրինախախտների դեմ՝ ընդհուպ մինչև նախարար, հասկանալի կդառնա, որ պաշտպանության նախարարը, ինչպես նաեւ վերը նշված ՊՆ բոլոր կառույցները, գտնվում են ՀՀ գլխավոր դատախազից եւ զինդատախազից ուղղակի կախվածության մեջ և անկարող են բողոքել այս մարմինների թույլ տված անօրինականությունների դեմ: Արդյունքում՝ ՊՆ ՔԾ-ն և ՌՈ-ն ամբողջապես գտնվում են զինդատախազի և գլխավոր դատախազի ճնշման, վերահսկողության տակ:*

- *ՀՀ բանակում ժամկետային զինծառայողը գտնվում է իրավական առումով անպաշտպան, ստրկական վիճակում: Որպես կանոն, զինվորները ծեծվում են, նվաստացվում են հրամանատարների կողմից: Բողոքի դեպքում զինվորը հայտնվում է ավելի վատ վիճակում, քանի որ զորամասերում գոյություն ունեն նույն սպաների կողմից նշանակված և նրանց կողմից հսկվող «հեղինակություններ», ովքեր առաջին իսկ հրամանով ինքնադատաստան են տեսնում «ստուկաչ» զինվորների հետ:*

- *Վկա հանդիսացող զինվորներին ՌՈ-ում կալանքի տակ պահելը քրեորեն պատժվող հանցագործություն է, և այս առաջին հանցագործությանը՝ զինվորին ապօրինաբար ազատությունից զրկելուն, շղթայաբար հետեւում են մյուս հանցագործությունները. ծեծ, խոշտանգում, նվաստացում և այլն: Այն պահից, երբ քրեական գործ է հարուցվում զինվորի դեմ, գործի են հրավիրվում հանրային պաշտպանները՝ քննիչներին ցանկալի փաստաբանները, որոնք մշտապես հանդես են գալիս բոլոր գործերով:*

- *Բանակում հանցագործությունների թվի աճին մեծապես նպաստում է այն հանգամանքը, որ ՀՀ զինվորներին ծառայության են հանձնում ԼՂՀ ՊԲ-ին. ստեղծվում են օրենսդրական բազմաթիվ բացեր:*

- *Այն, որ փորձագիտական կենտրոններն օժտված են մենաշնորհներով, և նրանց հսկող որևէ մարմին չկա, էապես մեծացնում է կոռուպցիոն ռիսկերը: Առողջապահության նախարարությունն անկարող է վերահսկել, առավելևս՝ պատժել իր ենթակայության տակ գտնվող դատաբժշկական կենտրոնին այն պարզ պատճառով, որ այս կառույցը անվերապահորեն կատարում է դատախազության հանցավոր հրամանները և գտնվում է նրա ուղղակի հովանավորչության ներքո:*

- *Դատավորները լիովին գտնվում են ՀՀ Նախագահի ենթակայության տակ: Այս ինստիտուտը գործնականում գտնվում է բացարձակապես կախյալ վիճակում, քանի որ, օրինակ, յուրաքանչյուր տարի Նախագահն է իր հրամանագրով վերահաստատում դատավորներին իրենց պաշտոններում:*

- *Չի գործում կողմերի հավասարության իրավունքը, օրինակ, եթե նախաքննական մարմինը պարտավոր է մեղադրյալին ներկայացնել քրգործի պատճեն՝ ծանոթանալու համար, ապա տուժողին ներկայացնում է միայն վերջինիս դիմումի համաձայն: Եթե դատարանը պարտավոր է ամբաստանյալին ներկայացնել դատավճռի պատճեն, ապա տուժող կողմին ներկայացնում է միայն վերջինիս դիմումի համաձայն: Եթե դատարանն ըստ օրենքի իրավունք չունի նիստ սկսել ամբաստանյալի կամ նրա պաշտպանի բացակայության պայմաններում, ապա իրավունք ունի նիստ անցկացնել տուժողի բացակայության պայմաններում՝ հիմք ընդունելով այն տեսական ենթադրությունը, թե իբր մեղադրող կողմը ներկայացնում է տուժողը շահերը, ինչը գործնականում չի համապատասխանում իրականությանը:*

- *Քննության իրականացման համար Հայաստանում, ըստ օրենքի, պատասխանատու է վերահսկող դատախազությունը՝ որպես նախաքննությունը վերահսկող մարմին, սակայն գործնականում նա ունի բոլոր լծակները՝ քննիչի և ՌՈ վրա ճնշում գործադրելու եւ իր կամքը թելադրելու համար: Այլ կերպ ասած՝ քննիչը ոչ մի հնարավորություն չունի կեղծ կամ օբյեկտիվ քննություն կատարելու՝ առանց դատախազության (իմա՝ վերադասի) գիտության եւ ցուցումի, հանցավոր հրամանի:*

- *Տուժողը ո՛չ նախաքննական, ո՛չ էլ դատաքննական փուլում չունի գործող մեխանիզմ՝ բացարկ հայտնելու միջոցով ազատվելու օրինախախտ դատավորից և մեղադրողից: Դատավորին հայտնված բացարկը քննվում է նույն դատավորի կողմից:*

Հավելվածներ

Գործերի համառոտ նկարագրությունները՝ 2013թ. օգոստոսի դրությամբ

1. Արտակ Նազարյան

Արտակ Նազարյան

Ըստ պաշտոնական վարկածի՝ 27.07.2010թ., ժամը 07:50-ի սահմաններում ՀՀ ՊՆ թիվ 21127 Զ/Մ-ի հսկողությանը հանձնված թիվ 12 «Ղոզլու» կոչվող մարտական հենակետում որպես հենակետի ավագ ծառայության նշանակված լեյտենանտ Արտակ Սինարի Նազարյանն իր հաստիքային ԱԿ-74 տեսակի 1093977 համարի ինքնաձիգով բերանի խոռոչի շրջանում իրեն հրազենային վնասվածք է հասցրել և տեղում մահացել: Բազմաթիվ փաստերը ցույց են տալիս, որ քր. գործով կատարվել է միակողմանի, ընթացել է կեղծ նախաքննություն, որն ուղեկցվել է Քրեական դատավարական օրենսգրքի բազմաթիվ ու բազմապիսի խախտումներով, ինչի արդյունքում ակնհայտ դիտավորյալ սպանությունը վերածվել է «ինքնասպանության»: Այս կեղծ վարկածով կալանավորվել է 5 զինծառայող: Նախաքննական խախտումները բազմաթիվ են ու բազմապիսի. իրեղեն ապացույցների ոչնչացում, սպանության գործիք ինքնաձիգի վրայից մատնահետքերի ոչնչացում, կեղծ արձանագրությունների ստեղծում, վկաների ցուցմունքները ձեռք են բերվել ճնշման ու խոշտանգման արդյունքում և էապես հակասում են գործով ձեռք բերված ապացույցներին, փորձագիտական եզրակացություններին: 2011թ.-ի աշնանն սկսված դատաքննությունը ոչ միայն չհարթեց գործում առկա հակասություններն, այլև դրանց գումարվեցին նորերը. պարզվեցին վկայից խաբեությամբ ցուցմունք կորզելու, վկա զինվորներին շուրջ 23 օր ազատազրկման մեջ պահելու, մի շարք այլ կեղծ արձանագրություններ և փաստաթղթեր կազմելու փաստեր: Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը (նախագահող՝ Ս. Մարդանյան) շուրջ 1 տարի տասն ամիս ընթացող դատաքննության ընթացքում ամեն կերպ ջանում էր կոծկել նախաքննության ընթացքում կատարված մեծ ու փոքր հանցագործությունները: Այս ամենն ավարտվեց մեղադրական դատավճռով, չնայած կողմերը պահանջում էին արդարացման վճիռ: Ծաղրանքը կայանում է նրանում, որ այդ դատավճռում ամբողջապես ներկայացված էր մեղադրական եզրակացությունը, կարծես թե չէր եղել շուրջ երկու տարվա դատաքննությունը, չէին բացահայտվել նախաքննական մարմնի կատարած հանցագործությունները: Վերաքննիչ դատարանը գործը վարույթ ընդունելուց հետո որոշում է կայացրել գործը քննել վճռաբեկության կարգով, ինչը նշանակում է, որ դատարանը հրաժարվում է լսել վկաների ցուցմունքներ, հետազոտել ապացույցներ: Վերաքննիչ դատարանը Ս. Մարդանյանի կայացրած վճիռը թողեց անփոփոխ. տարբեր տարիների ազատազրկման դատապարտվեցին հինգ զինծառայողներ: Կողմերի հայտարարության համաձայն՝ իրենք պատրաստվում են դիմել Վճռաբեկ, իսկ այնուհետև՝ Եվրոպական դատարան:

2. Թորգոմ Սարուխանյան

Թորգոմ Սարուխանյան

12.02.2011թ.-ին ՊԲ թիվ 46677 Զ/Մ-ում սպանվել է Թորգոմ Սարուխանյանը: Սկզբից ևեթ նախաքննական մարմինը որպես միակ վարկած է ընդունել այն, որ Թորգոմ Սարուխանյանն ինքնասպանություն է գործել: Փաստով հարուցվել է թիվ 91000511 քր. գործը: Քր. գործով կատարվել է ակնհայտ կեղծ հանցագործություններով ուղեկցված նախաքննություն: Ներկայում, գործով Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Համլետ Դավթյանի կողմից կայացվել է մեղադրական դատավճիռ, որով տարբեր տարիների ազատազրկման են դատապարտվել երեք նախկին զինծառայողներ՝ ենթասպա Վիլիելմ Ենգիբարյանը, ժամկետային զինծառայողներ՝ Ռոբերտ Բաղալյանը և Հրանտ Կարապետյանը, ովքեր իբր դեպքից շուրջ երկու շաբաթ առաջ ապտակել են Թ. Սարուխանյանին, նվաստացրել նրան, հայհոյել և հասցրել ինքնասպանության: Գործով դիակի արտաքին զննությունը կատարած թիվ 186/10 դատաբժշկական եզրակացության հեղինակ Ա. Դալլաքյանը որոշում է միանձնյա պատասխանել հրազենային կրակոցի հեռավորությանն առնչվող հարցին, որի իրավունքը չուներ: Ավելին, այս հարցի շուրջ նա տվել է ակնհայտ կեղծ եզրակացություն, համաձայն որի Թ. Սարուխանյանին սպանել են հեռվից արձակած ընդհուպ կրակոցով, այսինքն նախադասության առաջին մասում դատաբժիշկը բերում է փաստեր, որ կրակոցը կատարվել է հեռու տարածությունից, իսկ երկրորդում անում է հետեւություն՝ հակասելով իր իսկ նշած փաստերին: Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչը Դալլաքյանի կողմից կատարված հանցագործության կապակցությամբ հաղորդում ուղարկեց ՀՔԾ և գլխավոր դատախազին, սակայն քննություն կատարելու միջնորդությունը նրանց կողմից մերժվեց առանց որևէ հիմնավոր պարզաբանման: Այս գործով չեն կատարվել անհրաժեշտ փորձաքննություններ, զենքի վրա չեն հայտնաբերվել հանգուցյալի մատնահետքերը, չնայած նշվում է, որ նա ինքնասպան է եղել:

30.08.2012թ.-ի իր ցուցմունքում գործով առանցքային վկա Սևակ Ավանեսյանը հրաժարվեց նախաքննական ցուցմունքից և դատարանին պատմեց հետևյալը. դեպքի օրը Թ. Սարուխանյանի վաշտի բոլոր 24 զինծառայողներին, այդ թվում՝ նաև վկային, տեղափոխել են Ստեփանակերտի ՌՈ բաժին: Վկա Սևակ Ավանեսյանին վերցրել են կալանքի տակ և պահել 7 օր, ինչից հետո, մեկուսարանի հակասանիտարական վիճակով պայմանավորված, նրա մոտ առաջացել է մաշկային հիվանդություն, ինչի պատճառով նրան տեղափոխել են զինվորական հոսպիտալ: Ըստ վկայի՝ մեկուսարանում պահվելու առաջին 4-5 օրերին իրեն հարցաքննել են ՌՈ և քաղաքացիական հագուստներով իրեն անհայտ անձինք, վախեցրել են, ծեծել, խոշտանգել և ստիպել են տալ ակնհայտ կեղծ ցուցմունքներ, որոնց մի մասը նա այդպես էլ չի գրել: Այսուհանդերձ, վկան այդ օրերին գրել է 4-5 ցուցմունք, որոնցից սակայն միայն մեկն է դրվել քր. գործի հիմքում, որից էլ վկան դատարանում հրաժարվեց: Վկայի պատմած իրադարձություններն իրենց մեջ պարունակում են քրեորեն պատժելի մի շարք արարքներ: Չնայած տուժող կողմը օրենքով սահմանված կարգով դիմել էր դատարանին՝ միջնորդելով, որպեսզի օրենքով սահմանված կարգով իրեն տրամադրվի դատավճռի պատճեն, սակայն, դատավոր Դավթյանն ակնհայտ դիտավորությամբ, կոպտորեն խախտելով օրենքը, պատճեն այդպես էլ չուղարկեց: Վերաքննիչ դատարանը, լսելով տուժող կողմի այս խնդրի շուրջ բողոքը, երկու շաբաթ տրամադրեց, որպեսզի

տուժողը ծանոթանա վճռին և ներկայացնի իր վերաքննիչ բողոքը: Սակայն, երբ այս որոշմանը համաձայն տուժող կողմը երկու շաբաթ անց ներկայացրեց իր բողոքը, նախագահող Կարինե Ղազարյանը հրաժարվեց այն ընդունել՝ հայտարարելով, որ օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը անցել է, և կայացրեց վճիռ, որով անփոփոխ թողեց Դավթյանի վճիռը: Նախագահը չառարկեց, որ մեղավորը դատավոր Դավթյանն է, և առաջարկեց բողոք բերել դրա կապակցությամբ, ինչից հետո, միգուցե, նրանք բավարարեն և լսվի տուժողի վերաքննիչ բողոքը: Երկու շաբաթ անց, սակայն, մերժվեց նաև այս բողոքը:

3. Տիգրան Համբարձումյան

Տիգրան Համբարձումյան

Համաձայն քր. գործի՝ ՀՀ ՊՆ 54809 զ/մ-ի պարտադիր ժամկետային զինծառայող շարքային Տիգրան Բենիկի Համբարձումյանը 2011թ.-ի հունիսի 28-ին, ժամը 18:30-ի սահմաններում ինքնակամ լքել է զորամասը: Կատարված որոնողական աշխատանքների ժամանակ, հունիսի 29-ին՝ ժամը 13:15-ին, շարքային Տիգրան Համբարձումյանի դիակը հայտնաբերվել է զորամասին հարակից անտառում՝ զորամասից մոտ 100մ հեռավորության վրա: Ավելի քան մեկ տարի տևող նախաքննությունն ընթանում է միակողմանի ու թերի: Առաջին իսկ օրը, չունենալով որևէ շատ թե քիչ հիմնավոր փաստ, նախաքնական մարմինը քրեական գործ է հարուցել ոչ թե քր. օր.-ի 105, այլ քր. օր.-ի 110 հոդվածի առաջին մասով՝ կատարվածը որակելով որպես ինքնասպանություն: Դեպքն ինքնասպանություն որակելիս՝ քննիչը հիմնվել է միմիայն զինվորների տված ցուցմունքների վրա, թե իբր վերջին օրերին Համբարձումյանն եղել է ինքնամփոփ և սրտնեղած՝ հաշվի չառնելով այս ցուցմունքներին հակասող բազմաթիվ փաստերը: Ձգտելով դեպքը ներկայացնել որպես ինքնասպանություն՝ քննիչը և նրա վերադասները մինչ օրս չեն քննել այն կարևորագույն փաստերը, որոնք հակասում են վերոհիշյալ կեղծ վարկածին: Դրանք ի հայտ են եկել մի շարք փորձագիտական եզրակացություններից: Թիվ 610/19 դատաբժշկական փորձագիտական եզրակացությամբ պարզվել է, որ դեպքից առաջ Համբարձումյանը օգտագործել է խմիչք, որ դեպքից առաջ նրան հասցրել են մարմնական վնասվածքներ, սակայն նախաքննական մարմինը չի ցանկանում քննությամբ պարզել գործին էապես առնչվող այս հանգամանքները: Դեպքը ներկայացնելով որպես ինքնասպանություն՝ քննիչը մինչ օրս անկարող է ներկայացնել ինքնասպանության կատարման մեխանիզմը: Չնայած քր. գործով մինչ օրս կատարված փորձագիտական եզրակացությունները բերում են միանշանակ հետևության, որ Տ. Համբարձումյանը չէր կարող ինքնասպան լինել, որ նրան սպանել է անհայտ անձը (կամ անձինք), սակայն նախաքննական մարմինը շարունակում է պնդել իր վարկածը: Շարունակում է պնդել նույնիսկ այն բանից հետո, երբ գործով կատարվեց հետմահու դատահոգեբանական փորձաքննություն, որի

հեղինակները եկան եզրակացության, որ քննիչի կողմից նշված հանգամանքներում Տ. Համբարձումյանը չէր կարող ինքնասպանություն գործել: Մինչ օրս գործով չկան ձերբակալվածներ. ոչ մեկին մեղադրանք չի ներկայացվել Տ. Համբարձումյանի սպանելու կամ ինքնասպանության հասցնելու հոդվածով: Նախաքննական մարմինը հայտնվել է փակուղում, իսկ վերադաս դատախազությունը պարբերաբար մերժում է տուժող կողմի բացարկը նախաքննական մարմնին և միջնորդությունը, որպեսզի քր. գործը տրվի այլ քննչական մարմնի:

4. Արթուր Ղազարյան

Արթուր Ղազարյան

Ըստ պաշտոնական տվյալների՝ ԼՂՀ ՊԲ թիվ 38401 զորամասի զինծառայող Արթուր Սմբատի Ղազարյանը 15.12.2010թ. իրեն վատ է զգացել, շուրջ 36 ժամ անց կորցրել է գիտակցությունը, տեղափոխվել է ՀՀ ՊՆ ԿԿՀՀ, 17.12.2010թ. վիրահատվել է, 21.12.2010թ. մահացել՝ այդպես էլ գիտակցության չգալով: Ըստ բժիշկների՝ Ա. Ղազարյանի մահվան պատճառը «գլխուղեղի խառը անոթային մալֆորմացիան է՝ առավելապես կավեռնոզ հեմանգիոմայի տիպի, սուր օկլյուզիոն հիդրոցեֆալիա, գլխուղեղի այտուց, սուբարախնոիդալ արյունազեղում»: Նման հետևության գալով՝ քննիչ Ս. Ս. Գասպարյանը 15.07.2011թ. քր. գործը կարճել է՝ մեղավոր անձանց բացակայության պատճառաբանությամբ: Սակայն, Արթուր Ղազարյանի դիակի դատաբժշկական թիվ 1159/54 փորձաքննության «Դիակի ներքին ուսումնասիրություն» բաժնում դատաբժիշկը նշում է, որ հանգուցյալի գլխի գագաթնային և կողմնագագաթնային շրջաններում հայտնաբերվել են վնասվածքներ: Մեջբերում ենք. «Գլխի մաշկի տակ, գագաթնային շրջաններում, ընդգրկելով վիրահատական վերքերի պրոեկցիաները, առկա է անկանոն ձևի, մուգ և բաց, իսկ կողմնագագաթային շրջանում՝ մուգ կարմրավուն, անհամասեռ ընդհանուր 15,5×9,0 սմ չափսի արյունազեղում, որը տեղ-տեղ ընդգրկում է ապոնևռոզի ամբողջ հաստությունը»: Նույն մասում դատաբժիշկը գրում է՝ մեջբերում ենք. «Աջ երիկամի դրունքի շրջանում, հետին մակերեսին, պատյանի տակ, առանց վերջինիս ամբողջականության խախտման, առկա է անկանոն ձևի 1,2 0,8 0,21 սմ չափսի, կարմիր գույնի արյունազեղում»: Չնայած այս 2 անհերքելի փաստերին՝ փորձաքննության հեղինակը եզրակացության «Հետևություններ» մասում նշում է, թե դիազնևությամբ Ա. Ղազարյանի մարմնի վրա վնասվածքներին հատուկ օբյեկտիվ հատկանիշներ չեն հայտնաբերվել: Բացի այդ, դատաբժիշկը, խախտելով օրենքը, խուսափում է պատասխանել քննիչի թիվ 5 հարցին. «Ե՞րբ է վրա հասել Ա. Ղազարյանի մահը»: Նա այս հարցին պատասխանում է հետևյալ կերպ. «Համաձայն քաղ. Ա. Ղազարյանի անվամբ լրացված հիվանդության տվյալների, նրա մահը վրա է հասել 21.12.2010թ. ժ.-00:30-ին»: Հայտարարելով, թե Ա. Ղազարյանի գլխին փորձաքննությամբ հայտնաբերվել է ուռուցք՝ փորձագետն այդ ուռուցքը չի լուսանկարել, լաբորատոր հետազոտության չի ենթարկել և չի պարզել դրա բնույթը, առաջացման մեխանիզմը: Նախաքննական մարմինը որպես ապացույց մատնանշում է ռենտգեն և ԿՏ լուսանկարները, սակայն մերժում է դրանք ներկայացնելու տուժողի միջնորդությունը՝ պատճառաբանելով, որ իրենք չունեն այդ լուսանկարները: Դրանով իսկ քննչական մարմինը զրկում է

տուժողին գործով նոր քննություն կատարելու լիարժեք միջնորդություն անելու հնարավորությունից: Տուժող կողմը շուրջ մեկ տարի առաջ գլխավոր դատախազին է ներկայացրել շուրջ մեկ տասնյակ կետից բաղկացած ծավալուն միջնորդություն, որով կետ առ կետ ապացուցում է, որ գործով կատարվել է ակնհայտ կեղծ քննություն և պահանջում է կատարել նոր քննություն: Չնայած տասնյակ բողոքներին՝ դատախազությունը, զինդատախազությունը, քննչական ծառայությունն այդպես էլ չեն անդրադառնում տուժողի ներկայացրած փաստերին: Նրանք այս ընթացքում ուղարկել են շուրջ հիսուն նույնաբովանդակ պատասխան, թե իբր գործով կատարվել է օբյեկտիվ և բազմակողմանի քննություն, և նոր քննություն կատարելու հիմքեր չկան: Մերժվել է նաև տուժողի պահանջը՝ իր բողոքին պատասխանել ըստ էության, բողոքում ներկայացված կոնկրետ փաստերի շուրջ: 2013թ. հուլիսին տուժողի իրավահաջորդին ընդունեց ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը, լսեց նրա բողոքը և հայտարարեց, որ իբր ինքը տեղյակ չէ այս ամենից, որ կկարգադրի իր աշխատակիցներին բավարարել տուժողի պահանջը, եթե կան հիմքեր՝ նոր քննություն կկատարվի, եթե չկան՝ հիմնավոր պատասխան կտրվի տուժողի միջնորդությանը՝ նրա առաջ քաշած հարցերի շուրջ: Սակայն Ա. Հովսեփյանը օգոստոսի սկզբին ուղարկեց նույն պատասխանը, ինչը տրվել է երկու նախորդ տարիներին՝ այդպես էլ կոնկրետ փաստերին պատասխան չտալով:

5. Արման Հակոբյան

25.09.2000թ.-ին ՀՀ ՊՆ թիվ 54122 զ/մ-ում սպանվել է Արման Վարդանի Հակոբյանը: Նախաքննական մարմինը ապացուցված է համարել, որ նշված օրը, ժամը 03:40-ի սահմաններում Ա. Հակոբյանը ՀԱԿ-ում պահակային ծառայություն իրականացնելիս ԱԿ 74 տեսակի 1181849 համարի ինքնաձիգից մեկ կրակոց է արձակել, ստացել գլխի ճակատային մասում հրազենային վնասվածք և մահացել է հոսպիտալ տեղափոխելու ճանապարհին: 15.09.2001թ.-ին քր. գործը կասեցվել է հանցագործություն կատարած անձանց անհայտ լինելու պատճառաբանությամբ: 11.11.2008թ.-ին քր. գործը կասեցումից հանվել է և կատարվել է լրացուցիչ քննություն: 11.04.2009թ.-ին քր. գործը կրկին կասեցվել է նույն պատճառաբանությամբ: Շուրջ 12 տարի քր. գործով կատարվել է միակողմանի թերի, կեղծ նախաքննություն, որն ուղեկցվել է քր. դատ. օր.-ի կոպիտ խախտումներով: Համաձայն N23870003 դատաձգաբանական-դատահետքաբանական՝ զենքի ու գլխարկի փորձաքննության «Մատնադրոշմային հետազոտություն» կետի՝ սպանության գործիք հանդիսացող N1181849 ինքնաձիգի և նրա պահունակի վրա մատնահետքեր չեն հայտնաբերվել: Այս փաստն արժանի իրավական գնահատականի չի արժանացել նախաքննական մարմնի կողմից, չնայած այն բանին, որ վկայում է ինքնասպանության վարկածի կեղծ լինելու մասին: Նույն փորձաքննությունից պարզ է դառնում, որ քննիչը փորձագետին է ներկայացրել ոչ թե Արմանի գլխարկը, այլ մեկ այլ գլխարկ, որի վրա առկա է "ВАЧО, ДШБ, 2000թ." գրառումը: Նախաքննական մարմինը գնահատական չի տվել և խորացված քննություն չի կատարել նաև այս փաստով: Համաձայն Ա. Հակոբյանի դիակի դատաբժշկական թիվ 762/4 եզրակացության՝ դատաբժիշկ Արսեն Բաբայանը նրա մարմնի վրա հայտնաբերել է «քթի, մեջքի, պարանոցի

աջ կողմնային մակերեսի, ձախ նախաբազկի, ձախ դաստակի 4-րդ մատի, աջ զստոսկրի, աջ և ձախ հետույքների, աջ և ձախ ազդրերի վերին երկրորդականների, աջ սրունքի միջին երրորդականի, աջ սրունք-թաթային շրջանների բազմաթիվ քերծվածքներ, աջ ուսային հոդի շրջանի քերծվածք և արյունազեղում, որոնք պատճառվել են բութ առարկաների ներգործությամբ, ... մահվանից 12-24 ժամ առաջ»: Նախաքննական մարմինը չի պատասխանել այն կարևորագույն հարցերին, թե ովքե՞ր, որտե՞ղ և ի՞նչ պատճառով են ծեծել ու խոշտանգել Արման Հակոբյանին: Խախտելով քր. օր.-ի 196-197 հոդվածները՝ դատաբժիշկ Ա. Բաբայանը չի պատասխանել քննիչի որոշման մեջ տեղ գտած թիվ 4 հարցին. «...վնասվածքները ստանալուց որքա՞ն ժամանակ հետո է վրա հասել մահը»: Նախաքննական մարմինը չի արձագանքել այս անօրինականությանը՝ հիմք ընդունելով վկաների այն ցուցմունքները, թե իբր Ա. Հակոբյանի մահը վրա է հասել հոսպիտալ տեղափոխելու ճանապարհին: Մինչդեռ ըստ դատաբժշկի՝ Հակոբյանի մահվան պատճառ է դարձել առջևից ետ, վերից վար, աջից ձախ ուղղությամբ 1 հրազենային կրակոցը, որի հետևանքով Հակոբյանը ստացել է «գանգի թաղի և հիմի ոսկրերի բազմաբեկոր կոտրվածքներ, վերքային խողովակի ընթացքով ուղեղանյութի ջնջխումով, տարածում ենթակարծրենային և ենթաոստայնային արյունազեղումների, ուղեղի փորոքներում հեղուկ արյան առկայություններով»: Դատելով այս ծանր վնասվածքներից՝ Արման Հակոբյանի մահը պետք է վրա հասներ դրանից անմիջապես հետո, սակայն ինչ-ինչ պատճառներով նախաքննական մարմնին ձեռնտու է եղել կեղծ վարկածը: Փորձաքննության մեջ նշվում է փորձագետին ներկայացված պաշտպանական գույնի բաճկոնի ներսի մակերեսին (աստառին) կատարված է «ՈՒՊԱԳ, ՊԵՏՐՈՍՅԱՆ Է. Ռ.» գրառումը, այսինքն՝ Արման Հակոբյանը չուներ ո՛չ գլխարկ, ո՛չ կոշիկներ, ո՛չ բաճկոն: Նրա բոլոր հագուստները պատկանել են այլ զինվորների, ինչն առավել քան կասկածելի է: Գործով քննիչները պարտավոր էին պարզել, թե ով է Է. Ռ. Պետրոսյանը, ինչու է նրա բաճկոնը, ըստ նախաքննական մարմնի, հայտնվել Հակոբյանի հագին, ի վերջո, որտեղ են Հակոբյանի գլխարկը, զինվորական կոշիկները, բաճկոնը և մյուս հանդերձանքները: Քրեական գործը կասեցնելու որոշման մեջ քննիչը գրում է. «Նախաքննության ընթացքում ընդհանուր առմամբ հարցաքննվել է 88 անձ, սակայն հնարավոր չի եղել պարզել, թե ինչպե՞ս և ի՞նչ հանգամանքներում է մահացել Ա. Հակոբյանը»: Սա պետք է պատշաճ գնահատականի արժանանար գործը հսկող դատախազների կողմից, թե ինչո՞ւ, այնուամենայնիվ, այս բոլոր տասներկու տարիների ընթացքում քննել են մեկ և միևնույն, կեղծ ու մերկապարանոց, ինքնասպանություն վարկածը: Գործով վկայի ցուցմունքի համաձայն՝ զինծառայողները Արման Հակոբյանին ծեծել են՝ նրան մեղադրելով, որ հենց նրա ցուցմունքի պատճառով են դատապարտվել երկու զինծառայող: Նախաքննական մարմինը չի քննել այս վարկածը, կամ չի ցանկացել քննել և պարզել, թե որքանո՞վ է վերոհիշյալ զինծառայողներին հասցեագրվող արարքը համապատասխանում իրականությանը: Շուրջ երկու տարի անընդմեջ տուժողի իրավահաջորդը ՀՀ գլխավոր դատախազին է ներկայացնում ծավալուն միջնորդություն, որում բերվում են վերը նշված փաստերը և մի շարք այլ փաստեր, որոնց հիման վրա տուժողը միջնորդում է գործով կատարել մի նոր քննություն: Սակայն, ինչպես և Ա. Ղազարյանի սպանության գործով, այս դեպքում ևս գլխավոր դատախազը, չհերքելով բերված փաստերը, հրաժարվում է միջնորդությանը պատասխանել ըստ էության, այլ ուղարկում է նույնաբովանդակ գրություններ, թե իբր գործով կատարվել է օբյեկտիվ քննություն և այն կասեցումից հանելու հիմքեր չկան:

6. Զորիկ Մարգարյան

18.04.2012 թ.-ին ՀՀ ՊՆ թիվ 21127 զորամասում սպանել են Զորիկ Մերուժանի Մարգարյանին: Ըստ գործի տվյալների՝ 18.04.2012թ-ին «Խուբան 5» մարտական հենակետում Զորիկ Մարգարյանն ստացել է մահացու հրազենային վնասվածք, իսկ մեկ այլ զինծառայող՝ Կարեն Մովսիսյանը, հրազենային վնասվածք ծնկի շրջանում: Չնայած զինծառայող Կարեն Մովսիսյանի ծնկի շրջանի հրազենային վնասվածքը եւ հանգուցյալ Զորիկ Մարգարյանի ձեռքին հայտնաբերված արյունազեղումը միանշանակ վկայությունն են նրա, որ կրակոցները Մարգարյանի և Մովսիսյանի վրա կատարվել են համածառայողների կողմից, մինչ օրս նախաքննական մարմինը չի հրաժարվել այն կեղծ վարկածից, թե իբր Զ. Մարգարյանը սպանվել է հակառակորդի գնդակից: Մինչդեռ դա կարելի էր պարզել հենց դեպքի օրը տուժող Մովսիսյանի և «Խուբան 5» մարտական հենակետում ծառայող զինվորների հարցաքննություններից: Նշենք, որ ոտքի հրազենային վնասվածք ստացած Կ. Մովսիսյանը ծառայում էր այլ հենակետում և «Խուբան 5» է եկել՝ կոպտորեն խախտելով մարտական հերթապահության կանոնները: Բացի այդ, հայտնի է նաև, որ մինչ սպանության դեպքը «տղաները խմել էին»: Համաձայն քր. օր-ի՝ այս պահի դրությամբ պետք է քրեական հետապնդում սկսվեր առնվազն 4 զինծառայողների՝ «Խուբան 5»-ի ավագի, Մովսիսյանի դիրքի ավագի, Մովսիսյանի և այս դիրքերի համար պատասխանատու սպաների հանդեպ, որոնց գործողությունները բերել են ծանր հետևանքների: Բայց նախաքննական մարմինը, առաջ քաշելով վարկած, թե իբր Զ.Մարգարյանին սպանել է հակառակորդը՝ մոտենալով մարտական հենակետին, այս մահը չի կապում մարտական հենակետում տիրող բարձիթողի իրավիճակի հետ և, որքան էլ տարօրինակ է, մինչ օրս գործով կասկածյալներ չկան: Միաժամանակ, նախաքննական մարմինը, ոտնահարելով տուժողի իրավունքները, չի ցանկանում նրան ներկայացնել գործով կատարված փորձագիտական եզրակացությունների պատճենները՝ դրանով իսկ նրան զրկելով օրենքով իրեն վերապահված գործառույթներն իրականացնելու հնարավորությունից: 2012թ. հոկտեմբերին գործը կասեցվել է այն պատճառաբանությամբ, որ ժամանակավորապես հնարավոր չէ պատասխանատվության ենթարկել ադրբեջանցի անհայտ զինծառայողին:

7. Վալերիկ Մուրադյան

2010թ.-ի մարտի 15-ին, ժամը 00:35-ի սահմաններում ՊԲ թիվ 39138 զորամասի վերանորոգման վաշտի սպայական սենյակի հետնամասում պարանի միջոցով երկաթե ձողից կախված վիճակում հայտնաբերվել է նույն զորամասի վերանորոգման վաշտի վարորդ, պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Վալերիկ Ազատի Մուրադյանի դիակը: Փաստի առթիվ 15.05.2010թ.-ին ՀՀ ՊՆ քննչական ծառայության առաջին կայազորային քննչական բաժնում ՀՀ քր. օր.-ի 110 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 90951310 քրեական գործը և կատարվում է նախաքննություն: Սակայն, մի շարք փաստեր ցույց են տալիս, որ կատարվել ու կատարվում է կեղծ, միակողմանի նախաքննություն, ինչի օգնությամբ քննչական մարմինը ձգտում

Վալերիկ Մուրադյան

է ակնհայտ սպանությունը ներկայացնել որպես ինքնասպանություն: Այսպես, հանգուցյալի վրա դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերված, բութ առարկայով հասցված մարմնական վնասվածքները և հանգուցյալի պարանոցի շրջանում հայտնաբերված երկու ճմլման ակոսների առկայությունը միանշանակ հակասում են ինքնասպանության վարկածին: Այս երկրորդ փաստը վկայությունն է այն բանի, որ Վ. Մուրադյանին նախ խեղդել են և հետո միայն բարձրացրել կախաղան: Չնայած նախաքննական մարմինն «ապացուցված է համարել», թե իբր Վ. Մուրադյանին հասցրել են ինքնասպանության, սակայն մինչ օրս գործում չկան կասկածյալներ կամ կալանվածներ: Ըստ էության, նախաքննական մարմինը մտել է փակուղի, քանի որ միայն սպանության վարկածով քննությունն է, որ կարող է հասցնել տրամաբանական ավարտի:

8. Ալբերտ Ադիբեկյան

23.02.2012թ.-ին ՀՀ ՊՆ թիվ 21127 զ/մ-ում (Մեհրաբներ) սպանվել է ժամկետային զինծառայող Ալբերտ Արմենակի Ադիբեկյանը: Նույն օրը փաստով հարուցվել է թիվ 90751912 քր. գործը: Ըստ նախնական պաշտոնական վարկածի՝ Ադիբեկյանը մահացել է 23.02.2012թ.-ին, ժամը 13:50-ի սահմաններում, «Հակոբասար» մարտական հենակետում՝ հակառակորդի կողմից գլխի շրջանում ստացած հրազենային վնասվածքից: Նախաքննական մարմինը հիմնավորված է համարել հետևյալը. ծառայության ընթացքում Ա.Ադիբեկյանը պարբերաբար ծաղրում էր իր ծառայակից, նույն հենակետի զինվոր Իգնատ Ենգիբարյանին, նրան անվանում էր «Իգուլիկ» և «Իգնատովիչ»: Վերջինս, չդիմանալով ծաղրին ու նվաստացմանը, վերը նշված ժամին գտնվելով թիվ 3-րդ դիտակետում, մոտեցել է իրենից մի քանի մետր հեռու գտնվող, իր հետ մեկտեղ թիվ 1 դիտակետում հերթապահություն իրականացնող Ալբերտ Ադիբեկյանին և շուրջ 4 `մ հեռավորությունից կրակել նրա ուղղությամբ: Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանն՝ ի դեմ դատավոր Ռաֆիկ Մելիքյանի, կայացրել է հանցավոր վճիռ. Իգնատ Ենգիբարյանին ազատազրկման է դատապարտել 10 տարի ժամկետով՝ նրան մեղավոր ճանաչելով Ա. Ադիբեկյանի սպանության մեջ (չնայած գործում առկա բազմաթիվ հակասություններին): Վճիռ կայացնելիս դատարանն առաջին հերթին և միայն հիմնվել է Իգնատ Ենգիբարյանի «ինքնախոստովանական» ցուցմունքի վրա (գ.հ.1, թ.67-73): Հաջորդ ցուցմունքում արդեն Իգնատ Ենգիբարյանը հրաժարվում է իր նախորդ ցուցմունքից՝ հայտարարելով, որ դեպքի օրն իրեն Բերդ քաղաքի ՌՈ բաժանմունք տեղափոխելուց հետո ծեծել են և ստիպել, որպեսզի նա գրի ինքնախոստովանական ցուցմունք: Նախքան Ենգիբարյանի ցուցմունք տալը՝ նրա շահերի պաշտպան, փաստաբան Սամվել Ծարբաթյանը հանդես է եկել գործով քննիչ Մադաթյանի դեմ բացարկի միջնորդությամբ, որը ներկայացրել է գործը հսկող դատախազ Միրզաբեկյանին (գ.հ.2, թ.148-150): Վերջինում, մասնավորապես, նշում է, որ իր պաշտպանյալն իր հետ առանձնազրույցի ժամանակ պատմել է, որ դեպքից մեկ օր առաջ Ա. Ադիբեկյանը վիճաբանության մեջ է մտել դիրքի ավագի օգնական, կրտսեր սերժանտ Գոռ Խաչատրյանի հետ: Այդ վիճաբանությունը վեր է ածվել ծեծկռտուքի: Նրանք միմյանց փոխադարձ հարվածներ են հասցրել, ինչի արդյունքում Ադիբեկյանը

դեմքի տարբեր հատվածներում ստացել է մարմնական վնասվածքներ: Այս մասին Շարբաթյանը պատմել է քննիչ Մադաթյանին, ով, սակայն, նրան պատասխանել է, որ նշված վնասվածքներն առաջացել են ոչ թե կռվի, այլ կրակոցից հետո վայր ընկնելու հետևանքով: Բերենք հատված Ա. Ադիբեկյանի դիակի թիվ 178/7 եզրակացությունից. «Քաղաքացի Ա. Ադիբեկյանի դիակի դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերվել են նաև քերծվածքներ՝ աջ ճակատային, այտային, աջ դաստակի առաջին մատի շրջաններում, որոնք ևս պատճառվել են կենդանության օրոք բութ առարկաներով»: Վկաներից ցուցմունքները վերցվել են օրենքի խախտումով: Վկաներին պահել են Բերդ քաղաքի ՌՈ-ում: Այս փաստը կոծկելու նպատակով քննիչները գրում են, թե իբր վկային հարցաքննել են Բերդ քաղաքում, թե կոնկրետ որտեղ՝ չեն նշում, ինչն անօրինականություն է: Ավելին, ցուցմունքը գրել է քննիչը, իսկ հետո ստիպել, որպեսզի զինվորներն այն ստորագրեն: Իգնատ Ենգիբարյանը նախաքննության ընթացքում նշել է, որ իրեն ծեծել են, խոշտանգել, ստիպել են ասել ու գրել, թե իբր ինքն է սպանել Ա.Ադիբեկյանին: Իգնատը տալիս է կոնկրետ իրեն ծեծած, խոշտանգած անձանց անունները: Դրանք են՝ կապիտան Էդմոն Մեհրաբյանը և կապիտան Արմենակ Ղազարյանը: Չնայած քննիչը ապացուցված է համարել, որ նման բան տեղի չի ունեցել, որ Ենգիբարյանի հետ «աշխատել են», բայց չեն ծեծել, սակայն գործում կա արձանագրություն՝ կազմված Իջևանի ՌՈ բաժնում բժիշկ Վ.Դովլաթյանի կողմից, համաձայն որի Իգնատ Ենգիբարյանի մարմնի արտաքին զննությամբ նրա թիկունքի մասում կան սպիացած և ոչ սպիացած վերքեր՝ թիակների վերևի, ձախ բազկի, աջ բազկի շրջանում, պոչուկի վերևի մասում՝ ձախ և աջ ձեռքերի վրա (գ.հ.3, թ.129): Սա ապացույցն է այն բանի, որ զինվորին, իրոք, ծեծել և խոշտանգել են: Համաձայն թիվ 04611203 դատաձգաբանական փորձագիտական եզրակացության (գ.հ.2, թ. 143-146)՝ Ա. Ադիբեկյանի շապիկի ձախակողմյան հատվածը թևատակից 16 սմ երկարությամբ պատռված է: Նախաքննական մարմինն այս փաստի շուրջ քննություն չի կատարել: Չի պարզել, թե արդյո՞ք այն չի պատռվել Ադիբեկյանի և Գոռ Խաչատրյանի կռվի արդյունքում և (կամ) մեկ այլ կռվի պատճառով: Բացի այդ, քննիչը ոչնչացրել է իրեղեն ապացույց հանդիսացող ինքնաձիգի պահունակը: 2013թ. հուլիսին Վերաքննիչ դատարանը վճիռը թողել է անփոփոխ:

9. Սերգեյ Մանուկյան

10.11.2009թ., ըստ պաշտոնական վարկածի՝ ժամը 16:00-ի սահմաններում, սպանվել է ՀՀ ՊՆ թիվ 20666 զ/մ-ի զինծառայող Սերգեյ Զավիկի Մանուկյանը: Գտնվելով վերակարգում՝ որպես հերթապահ, Ս. Մանուկյանն իրեն ամրակցված AKS-74 թիվ 368460 ինքնաձիգով ինքնասպան է եղել: Սակայն, գործում առկա բազմաթիվ տվյալները խոսում են այլ բանի մասին: Համաձայն Մանուկյանի դիակի թիվ 978/52 դատաբժշկական եզրակացության՝ հանգուցյալի դիակի վրա, գլխի ճակատային մասում ստացած հրազենային վնասվածքից բացի, հայտնաբերվել են նաև «ձախից կզակի շրջանի սալջարդ վերք», «ձախ ուսահոդի, աջ թիակի աջ նախաբազուկ-դաստակային հոդի, աջ դաստակի 5-րդ մատի շրջանների քերծվածքներ, որոնք առաջացել են մահվանից ոչ շատ առաջ»: Փաստորեն, այս փաստը պարզորոշ ցույց է տալիս,

որ Մանուկյանին սպանել են ծեծելուց և խոշտանգելուց անմիջապես հետո՝ մի քանի րոպե կամ մի քանի վայրկյան տարբերությամբ: Մինչդեռ ո՛չ նախաքննական մարմինը, ո՛չ 3 ատյանի դատարանները հաշվի չեն առել այս կարևորագույն հանգամանքը: Ըստ նախաքննական տվյալների՝ մահվանից առաջ Մանուկյանի դեմքին բռունցքով հարվածել է զ/մ-ի նախկին հրամանատար Գեղամ Հրանտիկի Ասատրյանը: Այս կերպ են քննիչները հիմնավորել Մանուկյանի կզակի ձախ մասում հայտնաբերված սալջարդ վերքը: Սակայն, հաշվի առնելով, որ վերքն ունի 1,5×0,2սմ չափսեր և 0,4սմ խորություն՝ կարող ենք միանշանակ պնդել, որ այն չէր կարող հանդիսանալ բռունցքի հարվածի հետևանք: Եվ բացի այդ, նշված դրվագը ոչ մի կերպ չի բացատրում, թե ի՞նչ մեխանիզմով են առաջացել վերը նշված մյուս մարմնական վնասվածքները: Նախաքննական մարմինը բացարձակապես անտեսել է մի կարևորագույն փաստ. դեպքի վայրից 16 մետր հեռու՝ երկաթյա դարպասների վրա, հայտնաբերվել են Ս. Մանուկյանի արյան հետքերը: Թե ո՞րն է դրանց առաջացման մեխանիզմը՝ այդպես էլ չի պարզվել: Սպանության մասին է վկայում նաև թիվ 092428 դատաձգաբանական-դատահետքաբանական եզրակացությունը, համաձայն որի՝ Ս. Մանուկյանին ամրակցված թիվ 368460 ինքնաձիգի վրա մատնահետքեր չեն հայտնաբերվել: Գործում նշված հանգամանքներում մատնահետքերը կարող էր ոչնչացնել կա՛մ քննիչը, կա՛մ մարդասպանը: Դեպքին նախորդած ժամերին Մանուկյանից խլել և կոտրել են նրան պատկանող SIEMENS տեսակի բջջային հեռախոսը: Նախաքննական մարմինն «այդպես էլ չի կարողացել պարզել, թե ովքեր են կոտրել նշված հեռախոսը»:

Սպանվածի հագուստը չի ուղարկվել փորձաքննության՝ ո՛չ դատաձգաբանական-դատահետքաբանական, ո՛չ դատաքիմիական-դատակենսաբանական: Տուժողը պետք է միջնորդեր և ստանար դիակի լուսանկարի կրկնօրինակները, որոնք թույլ կտային առավել պարզ տեսնել Ս. Մանուկյանի վնասվածքները, հասկանալ դրանց առաջացման մեխանիզմներն, ինչը ևս չի արվել: Դրա փոխարեն սպանվածի մայր Լ. Մանուկյանը և նրա փաստաբանը թե՛ վերաքննիչ և թե՛ վճռաբեկ դատարաններում միջնորդել են գործով մեղադրվող (Ս. Մանուկյանին իբր ինքնասպանության հասցրած) 3 սպաներին տալ առավելագույն պատիժ, ինչով անուղղակիորեն օրինականացրել են նախաքննական և դատաքննական մարմինների կողմից ներկայացրած ինքնասպանության կեղծ վարկածը: Սույն գործով անհրաժեշտ է կատարել նոր քննություն, սակայն, ըստ օրենքի, դա արդեն անհնար է. գործն անցել է բոլոր փուլերով, որոնց ընթացքում տուժողը չի արել անհրաժեշտ քայլեր:

10. Մնացական Մնացականյան

Համաձայն քննիչի որոշման՝ պարզվել է, որ 2012թ.-ի հոկտեմբերի 1-ին, ժամը 06:50-ի սահմաններում երկու ժամկետային զինծառայողներ զորանոցի լվացարանին կից պահասենյակում հայտնաբերել են թիվ 51556 զորամասի ժամկետային զինծառայող Մնացական Մնացականյանի դիակը՝ սավանի միջոցով կախված վիճակում: 02.10.2012թ.-ին զինվորի դատաբժշկական դիահերձման արդյունքում պարզվեց, որ իրոք զինվորի պարանոցի հատվածում առկա է խիստ արյունազեղված ճմլման ակոս, որը բնորոշ է

Մնացական Մնացականյան

կախվելու միջոցով մահվան վնասվածքներին: Միաժամանակ պարզվեց, որ այն պահին, երբ Մնացականյանին իջեցրել են կախված դիրքից, նա դեռ ողջ է եղել. դրա մասին է վկայում այն, որ զինվորի մոտ հայտնաբերված դիակային բծերը հայտնաբերվել են նրա մարմնի հետնային (թիկունքային) մասում, ինչն ապացուցում է, որ նրա մահը վրա է հասել ոչ թե կախված վիճակում գտնվելիս, այլ ավելի ուշ, երբ նա գտնվել է թիկունքի վրա պառկած վիճակում: Զինվորի դիակի արտաքին և ներքին զննությամբ չհայտնաբերվեցին փաստեր, որոնք վկայեին կամ հուշեին նրա նկատմամբ կատարված բռնության մասին, այդ իսկ պատճառով ներկա պահին հնարավոր չէ ասել՝ զինվորին կախել են, թե նա ինքն է կախվել: Այս հարցի պատասխանը պետք է տա քննությունը, մասնավորապես, Մնացականյանի հագուստի դատահետքաբանական, դատաքիմիական, դատակենսաբանական փորձաքննությունը: Չի բացառվում, որ բռնության հետքեր հայտնաբերվեն հենց զինծառայողի հագուստի վրա:

Ըստ դատաբժշկի նախնական հաղորդման՝ Մնացականյանի մահը վրա է հասել դիահերձումից 24 ժամ առաջ: Եթե հաշվի առնենք, որ դիահերձումը սկսել է 02.10.2012թ.-ի ժամը 11:30-ի սահմաններում, ապա պետք է ֆիքսենք, որ մահը կարող էր վրա հասնել 01.10.2012թ.-ի ժամը 11:30-15:30-ի սահմաններում, այլ ոչ ժամը 07:00-ի սահմաններում, ինչպես նշում է նախաքննական մարմինը: Սակայն, հաշվի առնելով, որ փորձառու դատաբժիշկ Շավարշ Գևորգյանը լրացուցիչ պետք է նախաքննական մարմնից պահանջի դեպքի վայրի զննության արձանագրության պատճեն, պետք է լրացուցիչ հետազոտման ենթարկվեն հանգուցյալի ներքին օրգանները, այս պահին դեռ չի կարելի վերը նշված հակասությունը դիտել որպես հիմնավոր: Համաձայն դիակը Երևան ուղեկցած զորամասի հրամանատարի տեղակալ փոխգնդապետի բանավոր պատմածի՝ ծառայության վերջին շրջանում Մնացական Մնացականյանը եղել է ինքնամփոփ, գտնվել դեպրեսիվ վիճակում: Փոխգնդապետը, այս փաստից անհանգստացած, զրույցներ է ունեցել Մնացականյանի հետ, բայց վերջինս լռել է, չի ցանկացել խոսել իր այդ հոգեվիճակի պատճառների մասին: Ըստ փոխգնդապետի՝ նա միջնորդել է, որպեսզի Մնացականը ստուգվի հոգեբան-հոգեբույժի մոտ: Ըստ զ/մ-ի հրամանատարի տեղակալի՝ այս ստուգումը ևս արդյունք չի տվել. մասնագետ(ներ)ը Մնացականյանի մոտ որևէ շեղում չեն հայտնաբերել: Սա հակասում է զոհվածի մոր կողմից Հելսինկյան ասոցիացիայի աշխատակից Արման Վեզիրյանին պատմածին, համաձայն որի՝ մայրը որդու հետ խոսել է մահվան նախօրեին, ժամը 22:00-ի սահմաններում: Ըստ մոր՝ խոսակցության պահին որդին ունեցել է բարձր տրամադրություն, որևէ դժգոհություն ծառայությունից չի հայտնել, կատակել է և ծիծաղել:

11. Էդվարդ Ալավերդյան

2011թ.-ի հուլիսի 29-ին ՊԲ 38401 զորամասի թիվ 121 մարտական դիրքում սպանվել է Էդվարդ Սեմյոնի Ալավերդյանը: 2011թ. հուլիսի 29-ին, ժամը 7:22-ի սահմաններում Ստեփանակերտի ՌՈ բաժնի Հադրութի ՌՈ բաժանմունքից հեռախոսագիր է ստացվել այն մասին, որ նույն օրը ժամը 6:45-ի սահմաններում ՊԲ 38401 զորամասի թիվ 121 մարտական դիրքում հայտնաբերվել է նույն զորամասի ժամկետային զինծառայող, շարքային Էդվարդ Սեյմոնի Ալավերդյանի դիակը՝ կզակային շրջանում հրազենային

գնդակային միջանցիկ վնասվածքով: Փաստի առթիվ 2011թ. հուլիսի 29-ին ՀՀ ՊՆ 2-րդ կայազորային քննչական բաժնում ՀՀ Քր. օր.-ի 110 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 91255111 քրեական գործը: Այնուհետև, գործով որպես մեղադրյալներ ներգրավվել են Սահակ Ասիլբեկյանը և Ալիկ Հակոբջանյանը, որոնց մեղադրանքներ է առաջադրվել ՀՀ Քր. օր.-ի 359 հոդվածի 3-րդ մասով, 182 հոդվածի 1-ին և 376 հոդվածի 1-ին մասով, որն ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան: Քր. գործով կատարվել է միակողմանի, կեղծ նախաքննություն, որն ուղեկցվել է ՀՀ Քր. օր.-ի և ՀՀ Քր. դատ. օր-ի կոպիտ խախտումներով, ինչի արդյունքում դիտավորյալ սպանությունը ներկայացվել է որպես ինքնասպանություն: Էդվարդ Ալավերդյանի սպանությունից հետո նրա համածառայակիցներից ոմանց տեղափոխել են Ստեփանակերտի ՌՈ բաժին և շուրջ 10 օր պահել անազատության մեջ: Այս պահին գործը գտնվում է դատաքննության փուլում:

12. Անդրանիկ Սարգսյան

Անդրանիկ Սարգսյան

01.02.2010թ. ՀՀ ՊՆ թիվ 12798 Զ/Մ-ում մահացել է Անդրանիկ Սարգսի Սարգսյանը: Նույն օրը թիվ 15-10 նյութերով սկսվել է հետաքննություն: 22.06.2010թ.-ին ՀՀ ՊՆ 9-րդ կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ Գ. Խ. Խալաթյանն իր որոշումով մերժել է նյութերով քր. գործի հարուցումը՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ: Ըստ նյութերի, Անդրանիկ Սարգսի Սարգսյանը, սույն թվի հունվարի 30-ին դիմել է զորամասի բուժմաս՝ բողոքելով որովայնի շրջանում ցավերից: Զորամասի բժիշկ Ա. Բ. Ավայանը հիվանդի մոտ ախտորոշել է «աղեստամոքսային տրակտի ֆունկցիոնալ խանգարում» և նշանակել համապատասխան բուժում: Երկու օր բուժում ստանալուց հետո Անդրանիկ Սարգսյանի առողջական վիճակը ոչ միայն չի բարելավվել, այլ էլ ավելի է վատթարացել: Փետրվարի 1-ին տեսնելով, որ Ա. Սարգսյանը մահամերձ է, Ա. Բ. Ավայանը նրան տեղափոխել է Սիսիանի զինհոսպիտալ, սակայն Անդրանիկը ճանապարհին մահացել է: Ըստ դատաբժշկական թիվ 112/7 եզրակացության՝ դատաբժշկական դիազննությամբ Սարգսյանի մոտ հայտնաբերվել է «գլխի աջից վերհոնքային շրջանի և ճակատային շրջանի քերծվածքներ, կրծքավանդակի շրջանի և աջից գոտկային շրջանի քերծվածքներ, աջից և ձախից հետույքային շրջանների քերծվածքներ, որոնք պատճառվել են կենդանության օրոք բութ առարկաներով, մահվանից կարճ ժամանակ առաջ...»: Քննիչ Խալաթյանը, չցանկանալով պարզել, թե ովքե՞ր, ե՞րբ, որտե՞ղ և ինչի՞ համար են Անդրանիկ Սարգսյանին հասցրել վերը նշված վնասվածքները, քննությունը տարել է կեղծ ուղով, ձգտելով «ապացուցել», թե իբր վնասվածքների առաջացման պատճառը ՈՒԱԶ տեսակի ավտոմեքենայի անհարթ մասերն են, որոնց տղան դիպել է հոսպիտալ տեղափոխվելու ճանապարհին: Քննիչը հաշվի չի առել, որ Անդրանիկ Սարգսյանի հագին եղել է ձմեռային զինվորական տաբատ և բուշլատ: Նա Անդրանիկ Սարգսյանի հագուստները փորձաքննության չի ուղարկել: Իր ցուցմունքով, զորամասի բժիշկ Ա. Բ. Ավայանը (նյութեր թ. 26-30) խոստովանում է, որ իր ախտորոշումն ու երկու օր շարունակ կատարած բուժումը սխալ են եղել: Այս մասին են վկայում նաև վերոհիշյալ դատաբժշկական եզրակացության «Հետևություններ» բաժինը, որում որպես մահվան պատճառ է նշվում «աթերոսկլերոզ» հիվանդությունը: Չնայած այս փաստին, քննիչ Խալաթյանը այս դեպքում ևս Ա. Բ. Ավայանի

գործողություններում հանցակազմ չի տեսնում: ՀՀ ԱՆ ԴԲԳԳԿ-ի կազմ. մեթոդ. բաժնի վարիչ, դոցենտ Գ. Կ. Հարությունյանը և նույն կառույցի փորձագետ Ռ. Կ. Վարդանյանը, ՀՀ ԱՆ ԱԱԻ-ի կլինիկական սրտաբանության ամբիոնի դոցենտ Ա. Վ. Դավթյանի հետ մեկտեղ, նշում են թիվ 45/հձ փորձագիտական եզրակացության մեջ, որ զորամասի բժիշկ Ա. Բ. Ավայանը, իրոք, սխալ է ախտորոշել Անդրանիկի հիվանդությունը, սխալ բուժում է կատարել, բայց և այնպես Ավայանը մեղավոր չէ, մեղավոր է նույն ինքը՝ Անդրանիկ Սարգսյանը, որն իր գանգատով (ցավեր որովայնի շրջանում) ապակողմնորոշել է միամիտ ու անմեղ բժշկին: Սույն եզրակացությունն էլ հիմք է տվել Խալաթյանին մերժել բժշկի նկատմամբ քրեական գործի հարուցումը: Անդրանիկի ծնողները դիմում-բողոքներում և ցուցմունքներում նշել են, որ իրենց որդին՝ Անդրանիկ Սարգսյանը, ծառայության վերջին ամիսների ընթացքում կոնֆլիկտ է ունեցել իր վաշտի հրամանատար Վարդանյանի հետ, ով մշտապես հետապնդել, նվաստացրել և ահաբեկել է Անդրանիկին: Սակայն, անշեղորեն տանելով փաստերը կոծկելու իր գործելաոճը, քննիչ Խալաթյանը այս դեպքում ևս «չի կարողացել» բացահայտել ճշմարտությունը և գտնել Անդրանիկ Սարգսյանին մարմնական վնասվածքներ հասցրած անձին կամ անձանց: Մինչ այժմ Անդրանիկ Սարգսյանի սպանության փաստով քր. գործ հարուցված չէ, Անդրանիկ Սարգսյանը տուժող ճանաչված չէ:

13. Նարեկ Գալստյան

Ըստ պաշտոնական վարկածի՝ 2008թ. մայիսի 9-ի՝ լույս 10-ի գիշերը թիվ 50869 զորամասի զինծառայող Նարեկ Գալստյանը բենզին հափշտակելու նպատակով մտել է ավտոհավաքակայանում տեղակայված բենզինի հորի մեջ և մահացել: Սակայն, քրեական գործով կատարվել է միակողմանի և մակերեսային նախաքննություն, որն ուղեկցվել է քրեական դատավարության օրենսգրքի կոպիտ խախտումներով: Նախաքննական մարմինը չի պատասխանել այն հարցին, թե ե՞րբ է տեղի ունեցել դեպքը: Քրեական գործի հարուցման որոշման մեջ (գ. հ. 1, թ.1) նշվում է, թե Նարեկ Գալստյանը բենզինի հորի մեջ է մտել մայիսի 10-ին, ժամը 02:00-ի սահմաններում, սակայն հաջորդ էջում (գ.հ. 1, թ. 2) զետեղված հեռախոսագիրը փաստում է, որ դա եղել է «ժամը 03:00-ի սահմաններում»: Նշված հակասությունը շարունակվում է մինչև նախաքննության ավարտը և այդպես էլ չի հարթվում: Համաձայն դեպքի վայրի զննության արձանագրության (գ.հ. 1, թ. 3)՝ բենզինի հորը դատարկ էր, այնտեղ կար ընդամենը «տեղ-տեղ 2.5սմ բարձրությամբ» բենզին: Գործով վկա Արմենակ Սիմոնյանը, որը դեպքի գիշերը զանգել է ռազմական ոստիկանություն և հայտնել դեպքի մասին ու ավելացրել, թե իբր հորում կա 20 սմ բարձրությամբ բենզին, իր ցուցմունքում (գ.հ. 2, թ. 111-112) նշում է, թե ինքն այդ պահին եղել է շփոթված ու սխալ տեղեկություն է հաղորդել, որ, իրականում, «հորում բենզին չկար»: Ստացվում է, որ, ըստ քննիչի ու նրա վերադասների, Նարեկ Գալստյանը ցանկանում էր բենզին գողանալ մի հորից, որում բենզին չկար: Քրեական գործով տեղազննությունն ու դիակի արտաքին զննությունը կատարվել են օրենքի կոպիտ խախտումներով. նախաքննական մարմինը, ըստ էության, թաքցրել է բոլոր իրեղեն ապացույցները: Դեպքի վայրում՝ բենզինի հորի մեջ, հայտնաբերվել է հակագազ: Քննիչ Հակոբջանյանն

այդպես էլ չի պարզել, թե որտեղի՞ց է հայտնվել հակագազը, ու՞մ է պատկանում և, որ ամենակարևորն է, պիտանի՞ է արդյոք օգտագործման համար, թե՞ ոչ: Առավել հավանական է, որ հակագազը հորի մեջ է գցվել սպանությունից հետո՝ դժբախտ պատահարի իմիտացիա ստեղծելու նպատակով: Ո՛չ դեպքի վայրում, ո՛չ Նարեկ Գալստյանի ավտոմեքենայի մեջ զինվորական հագուստ չի հայտնաբերվել, սակայն քննիչը, չգիտես որտեղից, բերել և լուսանկարել է Նարեկ Գալստյանի զինվորական համազգեստը (գ.հ 1, թ. 10, լուսանկար №11): Ըստ վկա Ավետիսյանի ցուցմունքների՝ համազգեստը դեպքի պահին եղել է Նարեկ Գալստյանի հագին, իսկ թե ե՞րբ, ո՞ւմ կողմից է այն հանվել՝ պարզ չէ: Գործով անհայտ է մնում համազգեստի հետագա ճակատագիրը: Ըստ օրենքի, քննիչը պարտավոր էր այն զննել, ճանաչել որպես իրեղեն ապացույց և ուղարկել փորձաքննության, ինչը չի արել: Դիակի արտաքին զննությունը քննիչ Հակոբջանյանը սկսում է դիակի նկարագրությունից: Ո՛չ դրանից առաջ, ո՛չ հետո չի նշում, թե ի՞նչ կար զինվորի հագին, հագուստի գրպաններում: Իսկ, եթե Նարեկ Գալստյանն այդ պահին եղել է մերկ, ապա որտե՞ղ է նրա հագուստը: Քննիչն արձանագրության մեջ չի նշում, թե որտե՞ղ է կատարում զննությունը, ո՞ր ժամին: Ակնհայտ հակասություն կա դեպքի վայրի և Նարեկ Գալստյանի դիակի վրա հայտնաբերված վնասվածքների միջև: Դատաբժշկական թիվ 461/21 եզրակացության մեջ (գ.հ. թ, թ. 28-32) նշվում է, որ «…դիակի դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերվել են դեմքի, պարանոցի, իրանի վերին և ստորին վերջույթների շրջաններում շերտազատման տեղամասեր, որոնք քիմիական այրվածքներ են, առաջացել են բենզինի և նրա գոլորշիների անմիջական ազդեցության հետևանքով…»: Դիակի կրծքավանդակի հետին-կողային շրջանում հայտնաբերվել է 45×23.5սմ չափսի մաշկազերծված տեղամաս: Քիչ հավանական է, որ այս ծավալուն ամբողջական վնասվածքն առաջանար «տեղ-տեղ 2.5սմ բարձրությամբ» բենզին պարունակող հորի մեջ ընկնելու հետևանքով: Անհասկանալի է ու տարօրինակ նաև այն, որ Նարեկ Գալստյանի մարմինը քայքայվել է թե՛ մարմնի դիմային, թե՛ հետին մասերում: Բացի այդ, Նարեկ Գալստյանին հորից հանելուց հետո վկան սրտի անուղղակի մերսում է կատարել, ինչի արդյունքում տուժածի «բերանից (շնչուղիներից) բենզին էր թափվում»: Անհավանական է, որ այդ բենզինը Նարեկ Գալստյանի շնչուղիներում հայտնվեր բենզինի դատարկ հորում ընկած վիճակում: Գործով տուժողի իրավահաջորդը ներկայացրել է շուրջ երկու տասնյակ կետերից բաղկացած միջնորդություն, որով, հենվելով դրանցում առկա փաստերի վրա, միջնորդում է գործով կատարել նոր քննություն: Սակայն գլխավոր դատախազն ու զինդատախազը, ցույց տալով իրենց ակնհայտ շահագրգռվածությունը, որևէ կերպ չհիմնավորելով, մերժում են տուժողի պահանջը: Գործը կարճված է, քանի որ, ըստ քննության, կատարվածը դժբախտ դեպք է և դրանում մեղավորներ չկան:

14. Ռաֆֆի Մարաշլյան

2013թ. ապրիլի 19-ին, ժամը 11.40-ի սահմաններում ՊԲ հյուսիս-արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական դիրքում մահացու հրազենային վիրավորում է ստացել և տեղում մահացել 1994թ. ծնված Ռաֆֆի Լևոնի Մարաշլյանը: Գնդի հրամանատար Գրիգորյանի պատմածի համաձայն՝ նշված օրը, նշված ժամին իրականացվում էր հերթափոխ: Գումարտակի զինվորները, որոնցից էր նաև Ր.

Ռաֆֆի Մարաշլյան

Մարաշլյանը, երկշաբաթյա հերթապահությունից հետո վերադառնում էին զորամաս, իսկ նրանց պետք է փոխարինեին մեկ այլ գումարտակի զինվորներ: Ըստ Գրիգորյանի՝ զինվորները մեկ առ մեկ միմյանցից մոտ 40 մ հեռավորությամբ խրամուղով շարժվում էին դեպի մեքենան: Այդ ժամանակ էլ լսվել է կրակոց, բոլորը մոտ են վազել և տեսել են արդեն մահացած զինվորին: Քանի որ խրամուղին ոլորաններով է, կրակոցի պահին ոչ ոք Ռաֆֆիին չէր տեսել, այսինքն՝ դեպքի ականատեսներ, ըստ Գրիգորյանի, չկան: Սակայն, ըստ լուրերի, դեպքը եղել է ոչ թե խրամուղում, այլ ավտոբուսում: 30.04.2013-ին լուր ստացվեց այն մասին, որ վիճաբանություն է տեղի ունեցել Ռաֆֆու և նրա գումարտակի հրամանատարի միջև, որի անունը Սմբատ է: Սմբատը հայհոյանքներ է տվել Ռաֆֆուն և հայտարարել, որ «նա տղա չէ»: Ռաֆֆին նույն ոճով պատասխան է տվել հրամանատարին: Դրանից հետո նրանք առանձնացել են՝ հարաբերություններ պարզելու նպատակով: Որոշ ժամանակ անց խրամուղուց լսվել է կրակոցի ձայն: Դրանից քիչ ժամանակ անց, վերադառնալով, Սմբատը հայտարարել է. «Ստիպեցի՝ իրան խփեց»: Նախաքննությունը շարունակվում է:

15. Աղասի Աբրահամյան



Աղասի Աբրահամյան

Թիվ 38862զ/մ-ի (Եղնիկներ) զինծառայող, 3-րդ ՀԳ-ի 9-րդ վաշտի 2-րդ դասակի վարորդ Ա. Աբրահամյանը ծանր մարմնական վնասվածքներ է ստացել: Օգոստոսի 26-ին առավոտյան գումարտակից տեղափոխվել է զ/մ-ի բուժկետ, այստեղ պատշաճ բուժօգնություն չի ստացել, ավելին՝ զ/մ-ի բուժծառայության պետը մի քանի անգամ ապտակել է կոմայի մեջ գտնվող Աբրահամյանին: Նույն օրը ժամը 21:00-ի սահմաններում նրան տեղափոխել են Ալաշանի առանձին բժշկական ջոկատ, որտեղ էլ՝ ժամը 22:25-ին մահացել է՝այդպես էլ գիտակցության չգալով: Գործով կատարված դիակի դատաբժշկական թիվ 807/30 փորձաքննության համաձայն՝ Ա.Աբրահամյանը մահացել է փակ, բութ գանգուղեղային վնասվածքից: Նրա գլխի մասում հայտնաբերվել են շուրջ երկու տասնյակ տարածուն և մանրօջախային արյունազեղումներ, վնասվածքներ, որոնք անհամատեղելի էին կյանքի հետ և որոնք էլ բերել են Ա. Աբրահամյանի մահվան: Դատաբժշկական փորձաքննությամբ Աբրահամյանի դիակի տարբեր մասերում հայտնաբերվել են թվով առնվազն 84 մարմնական վնասվածքներ: Ընդ որում, հաշվի առնելով դրանց տեղակայումն ու չափսերը, կարելի է համոզված ասել, որ վնասվածքների առնվազն մի զգալի մասը չէին կարող առաջանալ ձեռքի ափով կամ բռունցքով հարված հասցնելու հետևանքով:

Դեպքից երեք օր անց, Ա. Աբրահամյանի վաշտի զինծառայող Վահե Հարությունյանն «ինքնախոստովանական» ցուցմունք է տալիս այն մասին, թե իբր օգոստոսի 26-ի գիշերը ժամը 03:20-ից մինչև 03:25-ն ընկած ժամանակահատվածում ինքը ծեծել է Ա. Աբրահամյանին, 4-5 հարված հասցրել նրա մարմնի տարբեր հատվածներին, ինչից 10-15 րոպե անց Աբրահամյանը վատացել է և նրան շտապօգնության մեքենայով տարել են (գ.հ.1, թ.152-154): Նախաքննական մարմինն այս ցուցմունքով ապացուցված է համարել, որ Վահե Հարությունյանը կարող էր առավելագույնը 5 հարված հասցնելով՝ հանգուցյալ Ա.Աբրահամյանին հասցնել 84 մարմնական վնասվածք: Հաշվի առնենք, որ հենվելով նույն Հարությունյանի՝ տարբեր

ժամանակահատվածներում տված ցուցմունքների վրա, նախաքննական մարմինն ապացուցված է համարել, որ վերջինիս հագին Ա. Աբրահամյանին ծեծելու պահին եղել է 8-10 կիլոգրամանոց զրահաբաճկոն, գլխին՝ 3-4 կիլոգրամանոց սաղավարտ, ուսին գցած ինքնաձիգը, կողքից կախված դաշտային պայուսակը՝ փամփշտակներով և այլ զինվորական իրերով: Այսինքն, իբր այս վիճակում Վահե Հարությունյանը ոչ միայն կարող էր անկաշկանդ շարժվել, այլև մահացու հարվածներ հասցնել Աբրահամյանին: Չնայած Վահեն իր ցուցմունքում հայտնում է, որ Ա. Աբրահամյանը ևս իրեն մարմնական վնասվածքներ է հասցրել, սակայն նրա վրա որևէ վնասվածք չի հայտնաբերվել: Վահեն ոչ միայն ցուցմունք է տալիս ինքն իր դեմ, այլև մասնագիտորեն հարթում է իր ցուցմունքի հետ կապված մի շարք հակասություններ և հավատ չներշնչող պահեր: Այսպես, կասկածյալը համոզված է, որ իրեն ոչ ոք չի տեսել, որովհետև ինքն այդ ժամանակ ոչ մեկին չի տեսել՝ իրենց կողքով անցնելիս: Կասկածյալը համոզված է, որ իրենց ձայնը ոչ ոք չի լսել, քանի որ իրենք չէին գոռում, չէին աղմկում, միայն լուռ հարվածում էին միմյանց: Վահեն համոզված է, որ հենց իր կողմից հասցված հարվածների պատճառով է Աբրահամյանը վատացել, քանի որ իր հարվածներից 10-15 րոպե անց Վահեին տարել են գումարտակի բուժկետ, իսկ այդ րոպեների ընթացքում նրան այլևս ոչ ոք չի հարվածել: Դեպքից շուրջ մեկ ամիս անց տված ցուցմունքում (գ.հ.3, թ.238-241) մեղադրյալ Վահե Հարությունյանը կտրականապես հրաժարվում է իր տված ցուցմունքից՝ հայտարարելով, որ ինքը հանգուցյալի հետ որևէ կոնֆլիկտ չի ունեցել, որևէ հարված չի հասցրել նրան: Քննիչի հարցին ի պատասխան, թե ինչու՞ է այդ դեպքում ինքն իր դեմ կեղծ ցուցմունք տվել, Վահեն պատասխանում է, որ երբ ինքը գտնվում էր Ստեփանակերտի ՌՈ բաժնում, ոստիկանները միայն իրեն էին կասկածում, և նման ցուցմունք է տվել «...հետագա անախորժություններից խուսափելու նպատակով»: Բնականաբար, ցուցմունքում մեղադրյալի խոսքը ենթարկվել է գրաքննության: «Ծեծել» բառը քննիչը փոխարինել է «կասկածում էին» բառով: Սպանության մասով քրգործը կասեցված է:

16. Տիգրան Վարյան

Ըստ ՊՆ քննչական ծառայության՝ 2012թ. փետրվարի 29-ին, ժամը 09:30-10:00-ի սահմաններում, ՊԲ Եղնիկներ զորամասի դիտակետում ծառայություն իրականացնող շարքային Տիգրան Վանոյի Վարյանը իրեն ամրակցված ինքնաձիգից կրակոց է արձակել իր վրա և տեղում մահացել:

Տիգրան Վարյան

Դիակի արտաքին զննության ժամանակ պարզվեց, որ զինվորը մահացել է ծնոտի ներքևի մասից (մուտքի անցք) կատարված հրազենային միջանցիկ 1 կրակոցի արդյունքում, որը գլխի առանցքի նկատմամբ ունի վարից վեր ուղղվածություն: Փորձաքննությամբ հանգուցյալի մարմնի գլխի շրջանում հայտնաբերվեցին նաև քերծվածքներ՝ ծնոտից ներքև, պարանոցի դիմային մակերեսին, հրազենային մուտքի անցքից մի քանի սմ ներքև, քերծվածքներ՝ բերանի աջ և ձախ անկյուններում, վնասվածքներ՝ քթի հիմնի շրջանում, քթի աջ և ձախ կողմերում, որոնք պատճառվել են կենդանության օրոք՝ սահմանափակ մակերես ունեցող առարկա(ներ)ով, մահվանից կարճ ժամանակ (վայրկյաններ) առաջ, ինչը վկայում է նրա մասին, որ զինվորին ծեծել, խոշտանգել են, հարվածել դեմքի տարբեր մասերին: Հարվածներից

մեկի հետևանքով (ամենայն հավանականությամբ՝ ինքնաձիգի խզակոթով. դրա մասին են հուշում վնասվածքների չափսերը) զինվորն ընկել է հատակին, ինչից հետո մարդասպանների խումբն սպանել է Վարյանին: Ծնոտի տակ առկա քերծվածքները վկայում են, որ զինվորը փորձել է դիմադրել. նման վնասվածքներ կարող էին առաջանալ ինքնաձիգի փողի հետ կոնտակտի արդյունքում, այն ժամանակ, երբ Տ. Վարյանը փորձում էր մի կողմ հրել ինքնաձիգը: Այս նույն փաստը վկայում է, որ սպանությանը մասնակցել են 3 և ավելի հանցագործներ: Դատաքննությունն ավարտվել է: Կան անձիք, որոնք դատապարտվել են նրան ինքնասպանության հասցնելու համար:

17. Գեղամ Սերգոյան

Գեղամ Սերգոյան

Ըստ պաշտոնական վարկածի՝ ՀՀ ՊԲ թիվ 37673 զորամասի դասակի հրամանատար Հ. Գրիգորյանը 2007թ. ապրիլի 15-ին, ժամը 21:40-ին, առանց թույլտվության հերթապահության սենյակ մտնելու համար դիտողություն է արել նույն զորամասի զինծառայող Գեղամ Սերգոյանին, ով հեռուստացույցով ցուցադրվող հաղորդման առթիվ փորձել է իր հետ կատակել: Չնայած Գ. Սերգոյանի կողմից դիտողությունն ընդունելու և սենյակից դուրս գալու փորձին, նրա կատակը որպես վիրավորանք ընկալելով, դասակի հրամանատար Հ. Գրիգորյանը անցել է պաշտոնական լիազորությունների սահմանը, հայհոյանքներ է տվել Գեղամ Սերգոյանի հասցեին, բռնություն գործադրելով՝ հրել է դեպի սենյակի պատը, պատյանից հանել է «Մակարով» տիպի ատրճանակը, լիցքավորել այն և կրակոց արձակել Գեղամ Սերգոյանի ստորին ծնոտի ձախ կեսի անկյան շրջանին՝ նրան զրկելով կյանքից: Փաստի առթիվ ՀՀ ՔՕ 104 հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով (խուլիգանական դրդումներով կատարված դիտավորյալ սպանություն) և 375 հոդվածի 1-ին մասով (իշխանություն չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը) կայացվել և ուժի մեջ է մտել դատավճիռ:

Դատական երեք ատյաններում քննվելուց հետո Հ. Գրիգորյանը դատապարտվել է 15 տարի ազատազրկման:

Ըստ Գեղամ Սերգոյանի հոր, իր տղայի սպանությունը կատարվել է մի խումբ անձանց կողմից, հետևաբար հանցագործությունը ամբողջովին բացահայտված չէ: Ըստ նրա, նախաքննությունը չի անդրադարձել ծնոտի կոտրվածքին, որի մասին Ստեփանակերտի հոսպիտալի պետը նշել է քննիչին ուղղված գրության մեջ: Բացի այդ, Գեղամ Սերգոյանի հիվանդության պատմության մեջ նշված որոշ փաստեր կեղծված են: Ատրճանակը և մարմնից հանած գնդակը փորձագիտական կենտրոն ուղարկելիս պատշաճ ձևակերպված և փաթեթավորված, որպես իրեղեն ապացույց չեն ներկայացվել:

Թե՛ դատաբժշկական գիտագործնական կենտրոնում, թե՛ նախաքննության ընթացքում, անդրադարձ չի կատարվել երեք ռենտգեն լուսանկարներին, որոնց մասին նշված է քննիչի դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ: Դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ:

18. Արման Ղարախանյան

1980թ. ծնված ժամկետային զինծառայող Արման Արմենի Ղարախանյանը սպանվել է 03.08.1999 թվականին, Տավուշի մարզի զորամասերից մեկում: Դեպքին հաջորդած առաջին օրերին զինվորական դատախազությունն իր պաշտոնական տեղեկագրում նշում է, թե իբր մահվան պատճառը «սրտի պայթյունն է»: Ավելի ուշ նույն կառույցը, փաստերի ճնշման տակ, ստիպված էր խոստովանել, որ կատարվածն սպանություն է (դատաբժշկական փորձաքննությամբ հանգուցյալ Ղարախանյանի ներքին օրգաններում հայտնաբերվել ու հանվել էր 7.62 տրամաչափի գնդակ): Առաջին իսկ օրվանից զինդատախազությունն ամեն կերպ ձգտում էր կոծկել այն փաստը, որ Ղարախանյանին սպանել են ծառայակիցները և, փաստերի ճնշման տակ ստիպված լինելով հրաժարվել կեղծ վարկածից, առաջ քաշեցին մի նոր, ոչ պակաս անհեթեթ վարկած. «սպանություն հակառակորդի արձակած գնդակից»: 2001թ. տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչը դիմել է ՀՀ Նախագահին կից Մարդու իրավունքների հանձնաժողովին, որը գլխավորում էր Պ. Հայրիկյանը, և ներկայացրել է թվով տասնվեց սպանությունների և երկու ծանր մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքեր՝ մեղադրելով զինդատախազությանը նշված գործերով հանցագործություն կատարելու մեջ: Ի թիվս այլոց, ներկայացրել է նաև Ղարախանյանի գործը: Գլխավոր դատախազության դատախազ Փարսադանյանի հետ համատեղ ուսումնասիրելով քր. գործի նյութերը՝ տուժողի իրավահաջորդ Ռ. Մարտիրոսյանը պարզեց, որ կատարվել է նոր հանցագործություն. գործով քննիչ Մ. Հախվերդյանը և դիակի դատաբժշկական եզրակացության հեղինակ Աշոտ Դալլաքյանը ոչնչացրել են գործում առկա իրական եզրակացությունը, գրել և տեղն են դրել նորը: Եթե առաջին եզրակացության մեջ նշվում էր, որ գնդակը դիպել էր երրորդ և չորրորդ ողոսկրերին և նոր միայն ներթափանցել Ղարախանյանի որովայնի խոռոչը, ապա երկրորդում դա հանվել էր և դրանով հիմնավորվել էր վերը նշված կեղծ վարկածը, համաձայն որի հակառակորդի կրակոցից հետո գնդակը դիպել էր քարին և անդրադարձով մտել որովայնի խոռոչը: Գլխավոր դատախազ Թամազյանը փաստերի ճնշման տակ ստիպված էր գործը կասեցումից հանել և նշանակել նոր քննություն, սակայն Ա. Հովսեփյանի և Գ. Ջհանգիրյանի պահանջով գործը կրկին հանձնվեց զինդատախազությանը: Այս մարմինն իր հերթին գործը հանձնեց Գուգարքի կայազորի զինդատախազությանը և ի վերջո գործով քննիչ նշանակվեց Մարտուն Հախվերդյանը, նույն այն անձը, որն արդեն իսկ այս գործով կատարել էր հանցագործություն:

Քրեական գործը մինչ օրս մնում է կարճված, սպանությունը՝ չբացահայտված:

19. Անդրանիկ Հայրապետյան

2008թ. մայիսի 15-ին ՊԲ թիվ 49971 զորամասում սպանվել է հրաձգային գումարտակի ժամկետային զինծառայող Անդրանիկ Հայրապետյանը: Գտնվելով մարտական հերթապահության մեջ, Հայրապետյանը ստացել է աջ գոտկային շրջանի հրազենային վնասվածք և մահացել: Նույն օրը փաստի առթիվ թիվ 3 կայազորի զինվորական դատախազությունում ՀՀ քր. օր.-ի 104

Անդրանիկ Հայրապետյան

հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 90800708 քրեական գործը, որի նախաքննությունը հանձնարարվել է ՀՀ ՊՆ ՔՎ Ստեփանակերտի քննչական բաժնին: Շուրջ 3 ամիս քննիչ Յու. Դանիելյանը քր. գործով կատարել է միակողմանի նախաքննություն, որը միտված է եղել ոչ թե իրականության բացահայտմանը, այլ կատարվածի նենգափոխմանը: Չեն կատարվել անհրաժեշտ քննչական գործողություններ, ոչնչացվել են կարևորագույն իրեղեն ապացույցներ, նախաքննության ընթացքում պատշաճ որևէ քննչական գործողություն չի իրականացվել, դեռ ավելին, հնարավոր ապացույցներն էլ վերացվել են, ինչը միանշանակ ապացուցվում է քրեական գործի նյութերով: Նախաքննական մարմինը քրեական գործի նախաքննությամբ հիմնավորել է, որ նույն զորամասի 1-ին հրաձգային գումարտակի 3-րդ վաշտի 1-ին դասակի 1-ին ջոկի հրամանատար Էդգար Ավետիսյանը 08.05.08թ.-ից մինչև 16.05.08թ. մարտական հերթապահության նշանակվելով թիվ 150 մարտական դիրքում որպես դիրքի ավագ, անփույթ և անբարեխիղճ վերաբերմունք է դրսևորել մարտական հերթապահություն կրելու կանոնների նկատմամբ, որն առաջացրել է ծանր հետևանք: Վերջինիս առաջադրել են մեղադրանք ՀՀ քրեական օրենսգրքի 365 հոդվածի 2-րդ մասով:

Նախաքննությամբ հիմնավորվել է, որ զորամասի 1-ին գումարտակի հրամանատարը՝ փոխգնդապետ Արթուր Պետրոսյանը, անձնական և այլ շահագրգռվածությունից ելնելով, ինքնահաստատման և որպես պետ իր առավելությունը դրսևորելու նպատակով, չարաշահել է պաշտոնական լիազորությունների սահմանը՝ 2008թ.-ի մայիսի սկզբներին ծեծի ենթարկելով Ա. Հայրապետյանին, այնուհետև դեպքից հետո նույն նկատառումներով, բռնություն է կիրառել Վ. Սիմոնյանի և Հ. Ավետիսյանի նկատմամբ: Այս փաստի առթիվ վերջինիս մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր.-ի 375 հոդվածի 1-ին մասով: Քրեական գործի նյութերից ապացուցվում է, որ ուղղակի ապացույցները վերցվել և հետագայում վերացվել են քննիչ Յու. Դանիելյանի կողմից (հատոր 1 գ.թ 10). դիակի զննում կատարելու արձանագրության մեջ արձանագրված է, որ Ա. Հայրապետյանի հագին գտնվող տաբատը, գոտին, գուլպաները, հողաթափերը 15.05.2008թ. վերցվել են քննիչ Յու. Դանիելյանի կողմից՝ դիակի զննում կատարելիս, սակայն, հետագայում, բացի շապիկից, թվարկած իրերն անհետացել են և գործով իրեղեն ապացույց չեն ճանաչվել: Քրեական գործով պարզված չէ դեպքի վայրը, և որևէ գործողություն չի իրականացվել այն պարզելու ուղղությամբ, գործում առկա է դեպքի վայրի լուսանկար, որը զննելիս՝ դեպքին առնչվող ոչինչ չի հայտնաբերվել: Այս մասին են վկայում զննության արձանագրությունը և դրան կից լուսանկարները (հ. 1 գ.թ 9), ընդ որում՝ բետոնե կառույցի մոտ, չգիտես որտեղից, լուսանկարվել է ծանր մուրճ՝ «կվալտ», իսկ բաների, ինչպես նաև «կվալտի» մասին արձանագրության մեջ որևէ նշում չկա: Այն, որ դեպքի վայրը չի պարզվել, քննիչը նշել է իր կողմից կազմված տեղեկանքում (հատ. 1 գ.թ.134): Քրեական գործով հիմնավորվում է, որ Անդրանիկի մարմնից հանված գնդակը փոխվել է և այլ գնդակ է ուղարկվել փորձաքննության, քանի որ նյութերից միանշանակ ապացուցվում է, որ համաձայն 18.05.2008թ.-ի կայացրած որոշման (հատ. 1, գ.թ. 33) գնդակը 22.05.2008թ.-ին Երևանից առգրավվել և 26.05.2008թ.-ին մուտք է եղել Ստեփանակերտի քննչական բաժին (հատ. 1, գ.թ. 44), սակայն գնդակը ստանալուց 2 օր առաջ՝ 24.05.2008թ.-ին (հատ. 1, գ.թ. 49) քննիչ Յու. Դանիելյանը ինչ-որ գնդակ ուղարկում է կրկին Երևան՝ փորձաքննության:

Անհետացել է դեպքի պահին Անդրանիկի հագին գտնվող տաբատը, հետագայում քննիչը պահանջել և որպես իրեղեն ապացույց քրեական գործին է կցել Անդրանիկին պատկանող, սակայն զորամասում գտնվող հագուստը, ընդ որում՝ համեմատելով անդրավարտիքի զննության և փորձաքննության ուղարկված անդրավարտիքի արձանագրությունները, կրկին ապացուցվում է, որ դրանք փոփոխման են ենթարկվել՝(հատ 1, գ.թ. 188) նշված է, որ անդրավարտիքի վրա խոնավությունից տեղ-տեղ հետքեր են երևում և զգացվում է խոնավության հոտ: Այն կոճկվում է 3 կոճակներով և զսպանակով, որոնք լրիվությամբ առկա են: Իսկ փորձագետը, նկարագրելով անդրավարտիքը, նշում է, որ անդրավարտիքը կոճկվում է 4 կոճակներով և մետաղյա կեռիկով, որոնք առկա են, այն օգտագործված է, աղտոտված: Այն, որ դա դեպքի պահին Անդրանիկի հագին գտնվող տաբատը չէ, ապացուցվում է նաև նրանով, որ դրա վրա եթե ոչ արյան, ապա գոնե հողի հետք պետք է լիներ:

Աննկարագրելի հակասական և իրարամերժ են բոլոր վկաների, ամբաստանյալների և տուժողների ցուցմունքները: Այս ամենով հանդերձ, քրեական գործը ավարտվել է, հանցագործները 1 ամիս անցկացրել են բանտում և ազատվել՝ խուսափելով պատասխանատվությունից:

20. Խաչատուր Մելիքյան

2005թ.-ի մարտի 15-ին ԼՂՀ ՊԲ թիվ 46492 զորամասում սպանվել է ՀՀ քաղաքացի, զինծառայող Խաչատուր Մելիքյանը: Դեպքի կապակցությամբ քրեական գործ անմիջապես չի հարուցվել, քանի որ, ըստ նախնական պաշտոնական վարկածի, Խաչատուր Մելիքյանը զոհվել էր ադրբեջանցիների հետ սահմանակցող մարտական հենակետում՝ վերջիններիս կողմից արձակված հրազենային կրակոցից: Ավելին, ԼՂՀ նախագահի կողմից Խ. Մելիքյանը հետմահու պարգևատրվել էր «Արիության համար» շքանշանով: Ավելի ուշ զին. դատախազությունը փաստերի ճմշման տակ ստիպված եղավ հարուցել թիվ 91001105 քր. գործը՝ ըստ որի 2005թ.-ի մարտի 15-ին, ժամը 23:00-ի սահմաններում, զինծառայող Միշա Դումիկյանը, խախտելով հեթապահության կանոնները, գնացել է թիվ 145 դիրքի N5 դիտակետը, պահանջել է հերթապահի ԱԿ 74 թիվ 2445696 ինքնաձիգը և, երեք մեկական, իսկ այնուհետև՝ մեկ կրակահերթ ուղղելով N4 դիտակետի ուղղությամբ, անզգուշությամբ սպանել է Մելիքյանին:

Նախաքննական մարմինը նման եզրակացության է հանգել՝ նենգափոխելով փաստերը, կատարելով միակողմանի, կեղծ, իր հիմքում՝ հանցավոր քննություն: Ոչնչացվել է դեպքի վայրը: Կեղծ ցուցմունքների հիման վրա քննիչ Ադամյանը ապացուցված է համարել, որ սպանության պահին Մելիքյանը գտնվել է N4 դիտակետում, ինչը հակասում է գործով ձեռքբերված այլ տվյալներին, որ բոլոր վկաների ցուցմունքներին համաձայն՝ N4 դիտակետը անսարք վիճակում էր, այնտեղ հերթապահություն չէր իրականացվում և զինծառայողն այնտեղ գտնվել չէր կարող: Ըստ գործով կատարված դիակի դատաբժշկական թիվ 226/14 եզրակացության՝ Մելիքյանը մահացել է գլխի շրջանում ստացած հրազենային վնասվածքից, ինչի արդյունքում արյան մեծ կորուստ է ունեցել: Մինչդեռ, նախաքննության կողմից ճանաչված դեպքի վայրում արյան լճակ չի հայտնաբերվել: Բացի այդ, չնայած նախաքննական մարմինն ապացուցված է համարել, որ Դումիկյանը Մելիքյանի վրա կրակել է թիվ 5 դիտակետից, սակայն

այդ դիտակետում ոչ մի պարկուճ չի հայնաբերվել: Սա նշանակում է, որ դեպքի վայրը ոչնչացվել էր, սակայն քննիչն այս վարկածով ևս քննություն չի կատարել: Արդեն հիշատակված դիակի դատաբժշկական փորձաքննությամբ պարզվել է, որ Մելիքյանը մահվանից առաջ ոգելից խմիչք է օգտագործել: Որպես վկա հարցաքննված Մ. Դումիկյանն իր ցուցմունքում նշել և կապիտան Ս. Սահակյանի հետ առերեսման ժամանակ պնդել է, որ սպանությունից մեկից երկու ժամ առաջ կապիտանը, պատրաստվելով իր սպա ընկերների հետ ընթրել, գետնատնակի սեղանին է դրել մեկ լիտրանոց պլաստմասսայե տարայով տնական թունդ օղի: Չնայած այս փաստին՝ քննիչն ապացուցված է համարել, որ սույն մարտական հենակետում խմիչք չի եղել և ոչ ոք, այդ թվում Մելիքյանը, չի խմել: Նույն դիակի դատաբժշկական փորձաքննությամբ Մելիքյանի մարմնի տարբեր մասերի՝ ձեռքերի, ոտքերի, կրծքավանդակի և թիկունքի վրա հայտնաբերվել են քերծվածքներ, կապտուկներ և արնազեղումներ, որոնք առաջացել են մահվանից 0-10 րոպե առաջ: Չցանկանալով արձանագրել ակնհայտ ծեծի և խոշտանգման փաստը՝ քննիչը վկաներից ցուցմունքներ է վերցրել, համաձայն որոնց զինվորներից ոչ մեկը չէր կարող ծեծել Մելիքյանին, քանի որ վերջինս ֆիզիկապես բոլորից ուժեղ էր, ըմբշամարտիկ էր, սպորտի վարպետ, նշված վնասվածքները կարող էին առաջանալ մահամերձ Մելիքյանին վազքով դիտակետից խրամատ տեղափոխելու ճանապարհին՝ խրամուղու պատերին դիպչելու արդյունքում: Զոհվածի հագուստի թիվ 13920502 փորձագիտական եզրակացության մեջ նշվում է, որ արյան հետքեր են հայտնաբերվել Մելիքյանի ներքնազգեստի վրա, սակայն, չեն հայտնաբերվել ձմեռային բաճկոնի վրա, որը, ըստ ցուցմունքների, եղել է նրա հագին: Նման թերի և միակողմանի նախաքննության տրամաբանական շարունակությունը դարձավ սույն գործով դատավոր Լեռնիկ Աթանյանի նախագահությամբ Ստեփանակերտ քաղաքում ընթացած դատաքննությունը: Թվարկված փաստերից և ոչ մեկը Աթանյանի կողմից դատաքննության առարկա չդարձան:

2013թ. հունիս ամսին Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ նախագահությամբ Մանուշակ Պետրոսյանի, ըստ որի անզգույշ սպանության համար Մ. Դումիկյանը դատապարտվել է երեք տարի ազատազրկման, թողեց անփոփոխ:

21. Տիգրան Օհանջանյան

Ըստ պաշտոնական վարկածի՝ 2007թ. օգոստոսի 30-ին, 22:45-ի սահմաններում, զորամասի կապի հանգույցի մոտ զինծառայող Տիգրան Օհանջանյանը, հպվելով ռադիոռելեային կայանը պահող ձգալարին, էլեկտրահարվել է և տեղում մահացել: Փաստի առթիվ ՀՀ քր. օր-ի 376 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով (անփույթ վերաբերմունք ծառայության նկատմամբ, որն առաջացրել է ծանր հետևանքներ) հարուցվել է քրեական գործ և մեղադրանք է առաջարդվել երկու զինծառայողի նկատմամբ:

Շուրջ երեք տարի նախաքննություն իրականացնելուց հետո, 2010թ. հունվարին, դատարանի դատավճռով, նշված երկու զինծառայողների նկատմամբ հետապնդումը դադարեցվել է, քրեական գործի նյութերը հետ են ուղղարկվել ՀՀ զինդատախազություն՝ հանցանք կատարած անձին հայտնաբերելու և նրան մեղադրանք առաջադրելու նպատակով: 2011թ.

Տիգրան Օհանջանյան

հունվարին ՀՀ զինդատախազի ցուցումով հանձնարարվել է ՀՀ ՊՆ քննչական ծառայությանը՝ նոր քննություն իրականացնել: Ներկայումս քրեական գործի քննությունը շարունակվում է: Գործով ձերբակալվածներ և կալանավորվածներ չկան:

Ըստ Տիգրան Օհանջանյանի ծնողների, իրենց տղայի սպանությունը կատարվել է բանակային կորպուսի նախկին հրամանատար, ներկայումս ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի տեղակալ Հայկազ Բաղմանյանի «թիկնապահների» կողմից, որոնց որևէ կերպ չեն ներգրավել քրեական գործի շրջանակներում: Անտեսվել է այն փաստը, որ նշված անձանց հանգստյան սենյակը գտնվում է դեպքի վայրից ընդամենը 1,5 մետր հեռավորության վրա, հետևաբար նրանք տեղեկացված եղել են կատարվածի մասին:

Տիգրան Օհանջանյանի հագուստը պատառոտված վիճակում է եղել, սակայն շուրջ երկու ամիս ուշացումով փորձաքննության է ուղարկվել բոլորովին այլ հագուստ, որը պատառոտված չի եղել: Ձգալարը, որին հպվել է Տ. Օհանջանյանը, չի առգրավվել, մինչդեռ ընթերականերով քննիչը կազմել է արձանագրություն՝ ձգալարը առգրավելու մասին: Քննիչի կողմից կեղծվել է դեպքի վայրը: Նշանակված առաջին դատաէլեկտրոտեխնիկական փորձաքննությունն իրականացնելիս, փորձագետը փորձաքննությունն իրականացրել է առանց համապատասխան սարքավորումների: Վկա Արմեն Գալստյանն ինչպես նախաքննության ընթացքում, այնպես էլ ՀՀ զինդատախազի և ՀՀ ՊՆ քննչական ծառայության պետի մոտ հանդիպման ժամանակ տվել է իրարամերժ և հակասական ցուցմունքներ ու բացատրություններ, որոնք քննիչի պատշաճ ուշադրությանը չեն արժանացել: Ակնհայտ կեղծումներ են տեղի ունեցել դատական բժիշկ Վիգեն Ադամյանի կողմից. դատաբժշկի կողմից չեն արձանագրվել աչքի, ծնոտի, գլխի հատվածներում առկա վնասվածքները, ձեռքի ափի կապտուկները: Առկա են հանգուցյալի նկարները մինչև դիահերձումը: Բացի այդ, Տ. Օհանջանյանը բանակ է զորակոչվել առանց առջևի վերին կտրող ատամի, մինչդեռ փորձաքննության եզրակացության մեջ նշված է, որ վերին ատամնաշարը բնական է և ամբողջական:

Նախաքննական մարմնի կատարած մի շարք հանցագործությունների հետևանքով քրգործը մտել է փակուղի և լրացուցիչ քննությունը, ինչպես այդ մասին վկայում են բազմաթիվ փաստեր, կրում է ձևական բնույթ, մասնավորապես, զինդատախազ նշանակվելուց օրեր անց Գեւորգ Կոստանյանը սպանված զինվորի ծնողների հետ այցելեց նշված զորամաս, ուսումնասիրեց դեպքի վայրը եւ հայտարարեց, որ քննիչի կողմից նշված հանգամանքներում Տիգրանը չէր կարող հոսանքահարվել: Սակայն դրանից հետո նա իր ասածին համահունչ որեւէ հրաման չտվեց նախաքննական մարմնին եւ մինչ օրս, ինչպես եւ նախկինում, ուժի մեջ է նույն կեղծ վարկածը:

22. Արայիկ Ավետիսյան

Ըստ պաշտոնական վարկածի՝ 2001թ. հոկտեմբերի 30-ին, ժամը 21:00-ի սահմաններում, Վայք քաղաքում տեղակայված զորամասի գումարտակի շտաբի պետի աշխատասենյակում, Կարեն Սարգսյանը սեղանի վրայից վերցրել է գումարտակի հրամանատարին պատկանող «Մակարով» տեսակի, փամփուշտներով լիցքավորված ատրճանակը, իջեցրել է ապահովիչը, այն բերել է



Արայիկ Ավետիսյան

մարտական վիճակի, փողն ուղղել Արայիկ Ավետիսյանի վրա և սեղմել ձգանը, ինչի հետևանքով անզգուշորեն սպանել է Արայիկ Ավետիսյանին: Հարուցվել է քրեական գործ ՔՕ 259.1 հոդվածի գ. հատկանիշներով. «Անփույթ վերաբերմունք ծառայության նկատմամբ, որն առաջացրել է ծանր հետևանքներ»: Գործը Վայոց Ձորի առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններից երեք անգամ ուղղարկվել է լրացուցիչ քննության:

Նախաքննությունն իրականացվել է դատախազության տարբեր քննիչների կողմից, որի ընթացքում արարքը վերաորակավորվել է որպես սպանություն: Ներկայումս քրեական գործի վարույթը կասեցված է՝ սպանություն կատարող անձի չհայտնաբերելու, անհայտության պաճառաբանությամբ:

Նախնական վարկածով մեղադրանք է առաջադրվել համածառայակից Կարեն Սարգսյանին, սակայն մոր՝ Անահիտ Մկրտչյանի կողմից վերադասության կարգով բողոքարկումների արդյունքում, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է: Դրանից հետո նախաքննության մարմնի կողմից կայացվել է որոշում քրեական գործի վարույթը կասեցնելու մասին: Սույն քրեական գործով, սակայն, այլ հոդվածներով դատապարտվել են գումարտակի հրամանատար Միեր Ստեփանյանը, հրամանատարի տեղակալ Սամվել Հովսեփյանը և գումարտակի գրագիր Սարգիս Մխեյանը:

Գործում առկա են բազմաթիվ հակասություններ և հանցավոր բացթողումներ: Չնայած Արայիկ Ավետիսյանի գլխի հատվածի ոչ հրազենային վնասվածքների առկայությանը, վարույթն իրականացնող մարմինը պատշաճ կերպով չի կարողացել պարզել առաջացած վնասվածքների պատճառը: Բացի այդ, նախաքննության մարմինը որևէ կերպ չի անդրադարձել Միեր Ստեփանյանի կողմից գումար պահանջելու հարցին, մինչդեռ այլ վկաները նույնպես ցուցմունք են տվել, որ հրամանատարը գումար է պահանջել: Հիմնական չպարզված հանգամանքներից մեկի՝ իրեղեն ապացույց ճանաչված զենքի գնդակի տրամաչափը, չի համապատասխանում տուժողի գլխի գանգաթաղի կոտրվածքի տրամաչափին, այսինքն՝ սպանել են ուրիշ զենքով: Քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը՝ «սպանություն կատարող անձը հայտնի չլինելու» պաճառաբանությամբ, անգամ ծիծաղելի է, քանի որ սպանությունը կատարվել է 9 քմ. մակերեսով տարածքում՝ հինգ հոգու ներկայությամբ:

Տպագրված է **«Խաղաղության երկխոսություն»**
հասարակական կազմակերպության
«Ապահով զինվորներ՝ անվտանգ Հայաստանին»
ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է
նիդեռլանդական **IKV Pax Christi** կազմակերպության աջակցությամբ:

© 2013, «Խաղաղության երկխոսություն» ՀԿ
Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, 2002,
ք. Վանաձոր; Մյասնիկյան 12, բն. 40, «ԽԵ» գրասենյակ;
Հեռ.՝ +374 (322) 21340;
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632
Էլ. փոստ՝ ekhachatryan@peacedialogue.am;
mailbox@peacedialogue.am
URL: http://www.peacedialogue.am;
http://www.safesoldiers.am

Վանաձոր 2013

Նյութում տեղ գտած կարծիքները եւ ձեւակերպումները պատկանում են
հեղինակներին եւ կարող են չհամընկնել IKV Pax Christi կազմակերպության
մոտեցումների եւ ընկալումների հետ: